



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>







Մարգարուց մէկ օճակ
Բայրութիւն պատճեն
ՊԵՏՈՒԹԻՒՆ


ՀԱՅԱՍՏԱՆ ԵԱՅՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԵ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
ՅԱՐԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԵ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎՐԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԵԶՄԻԱԶՆԻ
Տ. Տ. Գ. Ի. Ո Ր Գ. Ը. Յ

Կ Ե Հ Ա Փ Ա Ռ Կ Ա Թ Ո Ղ Դ Կ Ո Ս Ւ



ՀՐԱՄԱՆ

ԱՏՐԻԱՐՔԻ ՄՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

S. Ե Ս Ա Յ Ե Ա Յ

ՄՐԲՈՑԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՐ Ի ՉԱՅՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼԽՈՑ

S. ՄԿՐՏՉ

ՄՐԲՈՑԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Յ Ե Ր Ո Ւ Ս Ա Դ Ե Մ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎՐԵԱՆՑ

1872

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grae
GLEN
325
Pult

GRAD
EREN
325
11.01.98

Ի ԹԻՇԱՏԱԿ

ՀՈԳԻՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ
ԵՐԱՄԱՅ ԵՒ ՀՈՒՓՍԻՄԵԱՅ

ԵՒ ՀՕՐԵՎԲՈՐ ՏՐՈՈՅ

ԿԱՐԱՊԵՏԻ

ՏՊԱԳՐԵՑԱՒ ՄԱՏԵԱՆՍ

ԱՐԴԵԱՄԲՔ


ԲԱՐԵՊԱՀՏ ՄԱՀՏԵՍԻ ԿԻՐԱԿՈՍԻ

ՔԱՐՈՒԿԵԱՆՑ ԲԻՆԿԵԱՆՑԻՈՑ

ՅՈԳՈՒՏ ԵՒ Ի ՊԱՅՃԱԹՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԽԱՆՑ



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաջ մեծի թարեցուք . բանդի եթող
մղ շնորհք գթութեանն գրիստոսի զոռորք
Եկեղեցին Հայաստանեայց . զաւակ կենդա-
նաթեան և ուրմա աղնաւական աճման պր-
բռթեան . զկոյան միշտ զշառաւ և զեալյա-
նախա արմասոյն և զղաւակերեալն 'ի նմին
իսկ 'ի գրելեն :

Միշտայն Առաջ . 'ի Ճառին Քահանայանին :

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ առաքելական սուրբ | ;
կեղեցւոյ պատմական կեանքն , որ , իւր նախ-
նականութեամբ և բազմադարեան արիա-
կան նահատակութեամբ , մեծ և նշանաւոր
տեղ կը գրաւէ հանուր Քրիստոնէութեան
մէջ , խիստ սակաւ ուսումնասիրուած է խո-
րագննին մտադրութեամբ : Հայաստանեայց
| ; կեղեցւոյ քրիստոնէական զինուորութեան
պատմութիւնն , որ իւրաքանչիւր Հայ զա-
ւակի համար ամենակարեւոր ուսումն պի-
տի լինէր , տակաւին և ոչ ուսանելեաց կար-

գրն անցած է Վ'լլպային 'Վարողաց մեջ : Վ'լլը
տիսուր անտարբերութիւններ վաղաց արդ էն
գրաւած էր մեր ու շաղրաւ թիւններ , ու ստի :
Երբ 1867 ին պիճակիեցաւ մեզ , Ո , Վ'լլու պա
վա անդաւորաց Վ արժարանի մեջ , կրծնա,
կան ու սմանց դասախոսութիւններ պարզանեցաւ
ըել , անհրաժեշտ պարագ համարեցինք , թէ
'ի սեր մայրենի կ չկեղեցր զին և թէ 'ի սեր Ճառ
ու անող աւորութիւննեց , Հին և Վրբակարանաց
պատմութիւններ ու պատմութիւնների մեջ , մի կող
մէն դաս առ զատ աշխատասիրել ու զին եկեղեցին
ցական պատմութիւններ ու մի ու կողմէն առ սեն
դել աշխակերտերոց : Եցեած աշխատասիրութիւններ
է ահան , զոր սպառ , աստարաւ թիւնների բարե-
պաշտ Վ'ահառեսի Վ'լլիկանիսի Վ'լլիկեանից պա ,
կրծառատարելով յաղուտ ու Վ'լլպային 'Վարողաց ի
'ի վայելու համարեն զատ ակաց Հայուսաւամնեաց
Եկեղեցր ոյ : Եթէ խոհանութենիք արդարեւ :
որ մեծ զորու ցէ մեր աշխատասիրութիւններ , և ոչ ամենայն մասամբ մենամերի , առակութե կրծ
խոհանութենիքը բնոր նոմին , որ կործ որ է սեն
պայմանն և . ովտակոր ամեն ցաւիու : և համ-
ատիլ :

Խորապես բնոր երցադք պիտի նշմարեն
անցուցու , որ մեր պահպայու աշխատասիրութիւններ , թիւններ
մէջ , և կեղեցր պահպայու պահպայու թիւններ կերտ մեն-
անցնատ կուպուի , շագան նուկու ու Ան Ռատու-
ապապայու ցազարացնե : Տառենաց ցարկոն 'իր-

շանաւոր անցից և վաստակոյ պատմութիւննե
Այս ընթացքն յառաջ եկած է թիգնին, ոչ
թէ մեր մասնական կամքէն, այլ ազգային ե-
կեղեցական, քաղաքական և մատենագրա-
կան կենաց սերտ կապակցութենէն : Այս ե-
րեւոյթն այնչափ տեսանելի և զգալի է մեր
ազգային կենաց մէջ, որ Քրիստոնէութեան
սկզբնաւորութենէն 'ի վեր, մեր Հայրենեաց
և Ազգի անցքերն առաւել եկեղեցական
պատմութեան տիպար կը կրենքան թէ քա-
ղաքական ։ Հետեւալոյէս, յուսով եմք, որ
մեր աշխատասիրութիւնն պիտի կարող լինի
ոչ միայն եկեղեցական, այլ և ազգային քա-
ղաքական և գրական կենաց նկատմամբ, ըդ-
գալի օգուտ մատակարարել ուսանողներուն,
թէ և չենք ժխտեր բնաւ պատմութեան նոյն
Ճիւղերու առաւել բնդարձակ և առանձին
աւանդութեան կարեւորութիւնն :

Պիտի նշմարեն ընթերցողք, որ մեր աշ-
խատասիրութիւնն նկարագիր մ' է Հայաս-
տանեայց Ակեղեցւոյ կենդանի զինուորու-
թեան . իսկ ծխսից և արարողութեանց վերա-
բերեալ մասն, այն է իւրաքանչիւր տօնա-
կատարութեանց և ժամակարգութեան մէն
մի մատանց նախնական սկզբնաւորութեան,
հաստատութեան և գործադրութեան ժա-
մանակագրական պատմութիւնն, մեր փափա-
քանաց և հետազօտութեան համեմատ, չը

յաջողեցանք լիովին աւանդել : Եւպահի . յիշ
չեալ պատմական ճիւղին նկատմամբ , մեր
աշխատասիրութեան մէջ գտնուածնեցէն ար-
տաքրոյ , ով որ կարող լինի ստոյգ տեղեկու-
թիւններ հաղորդել մեզ վաւերական ժա-
մանակագրութեամբ հանդերձ , կը խոստա-
նամք սիրով և չնորհակարութեամբ ընդու-
նել և ամփափելով ու կանոնաւորելով գու-
տարակել , կամ առանձին և կամ մեր երկրորդ
պայքարութեան մէջ . վասն զի մեք եւս մեր
կզլմէն պիտի աշխատիմք , որչափ հնար և ,
սոյն կէտն առանց հետազօտութեան չը թռ
Չուլ:

Ո՞ք արդէն , մեր սոյն գրաւոր գործը
բարեխիղձ կերպիւ կատարելու համար , ջա-
նացած եմք ամեն առ ձեռն գտնուած նախ-
նի և արդի պատմական աղբիւրներն հետա-
զօտելով օգուտ քաղել եւ կարեւորներն
քաղուածել , մերթ համառօտելով և մերթ
ընդարձակելով : Եւ այս նկատմամբ , մեր
նախնի մատենագրութիւններէն զատ , ար-
դեան պատմական երկասիրութեանց մէջ ,
յաւէտ նպաստած են մեզ՝ ։ Յ. Գաթըր-
ձեանի Տիեղերական , և ։ Գ. Օ. Աշտային
Դարրամբեան Պատմութիւններն , որոնք , բաց
ի պապական խմորէն , որով գմբաղդաբար
խմբուած են մատամբ , ուսումնասիրութեան
արժանի գործքեր են իրենց տեսակին մէջ :

Հումկ ուրեմն, կը պարտաւորիմք յայն
նել, որ մեր սցն աշխատասիրութիւնն գիր-
ուածէ առաւելզ զգայուն լեզուաւ, զոր դե-
ցէ ոմանք անպնտշաճ դատին պատմագիւ-
թեան . սակայն մենք փորձով դիտած եմք,
որ ուսանողաց միտքն ու սիրտն համանգաւ-
մայն զարգացնելու համար, խիստ արգասա-
ւոր ազդեցութիւն ունին պատմական ճշշ-
մարտութիւններն , երբ զուգախառն են
կենդանի զգացմանց հետ : || անաւանդ երմեր
գրուածոյն մէջ, ոչ թէ բռնազբօսեալ, այլ
ինքնաբուղիս է սոյն եղանակն և յահաջ ե-
կած է այն նուիրական սիրոյ զգացումէն,
զոր ունիմք առ || այրն մեր || . Եկեղե-
ցի, զոր 'ի մանկութենէ սիրած եմք և կը
փափաքիմք 'ի բոլոր սրտէ, որ ամենեքեան
սիրեն և ձանաշեն զնա՝ որպէս ՅՈՒԱԿԱՊ
ԱԶԳԱՅԻՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՄՈՒԹԵՍԱՆ, որպէս ՍԵՐՄՆ
ԱԶՆՈՒԱԿԱՆ ԱՅՄԱՆ ԱՐԲՈՒԹԵՍԱՆ և որպէս
ՇՆՈՐՀՔ ԳԹՈՒԹԵՍԱՆ ՔՐԻՍՈՍԻ, ՊԵՏՎԵՐԵՍԱՆ Ի
ՆՄԻՆ ԻՍԿ Ի ՓՐԿԵՆ :

Մ. Վ. Մ.

Վ ասն զի՞ ուղղափառ Հաւատոյ քո լսյա՝
ով Աշկեղեցի Հայոց, ոչ նուազեցաւ . ՚ի բա-
րի սերմանս ցորենոց՝ որոմն ոչ խառնեցաւ .
զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղ-
տաղտուկ ջուր օտարտոի ուսմանց ոչ պըղ-
տորեաց . ՚ի ստուգութեան և ՚ի ճշմարտու-
թեան հացն քո կենդանական՝ մեռելական
խմոր և հերձուած քացախութեան չարու-
թեանն ոչ զանգեցաւ . յոսկի անրին Հաւա-
տոյն և յարծաթ լուսատեսիլ Շանին՝ պղինձ
ժանդահոտ և կապար սեւաթոյր ոչ գտաւ .

Յովհան Աշուղյի :





Երեքորբեան մի տերութիւն,
Սիոն բնութեամբ Աստուածութիւն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ

ԱՐԱՔԵԼԱԿԱՆ ԾՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՆԱԽԱՑԱԿԻԴԱ

Ա.

Վահակ և ավելացւթիւն մարդկութեան . — Ճնշունք
Յիսուսի Քրիստոսի . — Կեակը նկատ . Վարդապետու .
Թիւն և Վերացուն :

Յ ԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ մարդեղութեանէն
առաջ մարդկութիւնը խորին խաւարի մէջ
էր . Հեթանոտութիւնը կ'առաջնորդուէր
ըսկ ընական լուսով . իսկ Հոգեւթիւնը ընդ
նմին և օրինական յայտնութեամբ : Այսպայն
մարդկութիւնը անկարող էր ինքնին իւր հա-
մար փրկութեան ճանապարհ պատրաստել,
առանց առոռուածային բարութեան , դիմո-
թեան և իմաստութեան : Եւ յս պատճառուաւ
մարդկասթեան մինակը տիսուր էր և թշուառ,
և նցն ինքն մարդն իւր արժանաւորութե-
նէն ընկած և անասնոց հոււառարած : Հը-
ռավմէական կայսերութիւնը , որ Խզիւատէն

մինչեւ Դանուբ և Հռենոս կը տարածուէր
 և իւր մեծութեամբ կը պարծէր, զեղծեալ
 էր ամենաստեսակ ապականութեամբ և կը
 ծառայէր ոչ միայն իւրոց՝ այլ և իւր տիրա-
 պետեալ ազգաց ամենաստեսակ մոլորութեց,
 այն է եգիպտական անսանապաշտութեան,
 քաղդէական և փիւնիկեան աստեղապաշ-
 տութեան և մոդակրօնութեան։ Առևերա-
 մարտկաց կռիւը ուրախութիւն էր դարձած
 ժողովրդեան։ Ամեն տեղ կանգնած էին Ասո-
 ղկան և այլ չաստուածոց լկտի պատկերները
 Ամեն տեղ թէատրոնաց անամօթ իւաղերը
 մարդը գրգռած էին յանբանութիւն։ Յու-
 նաստան, որ իւր փիլիսոփայութեամբ կը պար-
 ծէր, և որպէս թէ բազմաստուածութիւնը
 կործանած էր, հանդիսարան դարձած էր
 բարուց ապականութեան և պղծութեան։
 Ա ան զի, Ատայիկեանց բարոյականը, թէ պէտ
 և շատերը կը զարմացնէր, բայց նմանողներ
 ունենալու անկտր էր, ըստ որումնոցն իսկ
 փիլիսոփայից վարքը հակառակ էր իւրեանց
 վարդապետութեան։ Առաւել վատ էր և
 միւս հեթանոս ազգաց վիճակն։ Իսկ Հռէից
 ազգը, որ աստուածապաշտութեան աւտնդա-
 պահ կոչուած էր, կը ճնանէր արդարեւ իւր
 ծոցէն Ճմարիս աստուածապաշտներ և շատ
 անդամ նմանողութեան օրինակ կուտար ո-
 մանց բարեբարոց հեթանոսաց, բայց մեծաւ

մասամբ շեղած էր յաւղութենէ։ Կային, արդարեւ, կագապտոսի Անրիսեան ըստ բը նակաղ Հրեայք, Թերապեւտք կոչեցեալ, ու բանք իրենց անձը նստիրած էին վարուց ըստ գաստութեան, կը կերակրէին հացիւ ու ջրով և կը կրթէին 'ի պահս ։ Կային Անռեալ Շու վու Եզերքը բնակող Աստացի Հրեայք, սրճնք կը պարապէին 'ի կրթութիւն վարուց, 'ի մը շախութիւն, 'ի հավառութիւն, 'ի ձեռագործա, և հեռացած էին զոհից պաշտամունք։ Բայց կային ընդ նմին և Փարիսեցիք ու Աադու- կեցիք, որոց առաջինները, առանց հոգեւորի, լսկարտաքին պաշտամանց էին նախանձաւորք, իւրեանց անձը կավերով Ա. Դրոյց լսկ նշանա- գիրներու հետ ։ իսկ վերջինները կ'ուրա՞ւ, ային անմահութիւնը, յարութեան յոյար և ընդ նմին վարձքն և պատիտ յետ մահուան։ Այս թուզունք թօւել Հրեւութեան բազմադիմք պահսկութիւնները որ գաղվածականութենէ, հեթանուական ընօւանութենէ և գերու- թենէ, յառաջապած էին ։

Այսպէս եք ահա մարդկութեան պահանջ
թէ շատէից և թէ անընդառաց մէջ քրիս-
տոնի մարդեցրելենին առաջ ու իշխանութէ և
Առաջնանձնութէն։ Ի այս գործառ պահ են առաջ և
նորոգութեան կուրօնութիւնը զբարի եղան
եք և և խաւութէ մէջն արդիութեան ամենին
լութիւնը կը նշանաւեցած այս կուրօնութէն

շփոթութեանց և քաղաքային հարստահարութեանց ենթարկուած՝ լաւագոյն փոփոխութեան կը սպասէին և ժամանակը հաստե կը համարէին, թէպէտ և շատերը երկրաւոր փառաւորութեան ակնկալութեամբ։ Հեթանոսաց մէջէն շատերը, իւրեանց ժամանակի ապականութիւնն ու մնջորութիւնն մարդկային ձեռքսվ ուղղուիցն անհնարին համարելով գոկցես երկնաւոր օժանդակութեան կարստութիւն կը պային։ Պատռոն կ'առէր աԱյնչեւ երկնքէն մէկը չիջնէ, առնհնարին է որ մարդկութիւնն աւղղուիցն է իրագիլիոս եկած հասած կը համարէր այն երջանիկ դարը, ուրում կը փաստաքէր կրումէացի Ախրիլլան։

Արդ՝ այն միսիթարութիւնը և աւետարիքը, որ խոստացուած էր մարդկութեան առաջին նախահօրն և նախամօրն, այն՝ որ երկրորդ աւած էր Աքրահամբն, Ասհակին և Յակոբին, այն՝ որ Ամրդարէը յաճախ և յայտնապէտ գուշակած էին, ժաղավուրդը բարութեան յուսով միսիթարելու համար, ահա այն երան նախան և միսիթարական աւետիքը կատապուեցաւ։ Դանդասր Անտումու և Փրկչւ Փետրան Վրաստանու Վրաստու։ Ասուած բնան յայտնուեցաւ մարդուն, որովհետեւ Պատուի առանին պէս։ «Անհնարին էր մարդուն գլուխուած գանել, և մանաւ անդ գանելին զինի առնենուն նախաթացնել։»

Օնաւ այն զարմանալի Ա'անուկը . զբ
մարգարէն անուանած էր Ա'ստուած , Հզոր .
Հզոր հանդերձելոց յասիտենին և Խշան
խաղաղութեան (1)։ Ծնաւ Ե'թթվէհէմի մը
սուրին մէջ Ա'պրիամ սուրբ Կրւսէն, որ Դաւ
թի տունէն էր, Ա'ազարէմ գեղէն, խօսեցած
էր Յովսեփից հետ, և կանխապէս աւետիք
ընդունած էր հրեշտակէն՝ Հոգւով Արդին Խառուն
ծնանելու համար . Օնաւ Արդին Խառուն
ի կնոջը և մասւ օրինաց տակ, որ օրինաց
տակ եղածները որդեգրութիւն ստանան .
Ա'նհառանելի էր աստուածային Ա'անկան ծը
նունդը, վասն որոյ և հրեշտակները երեւե-
ցան ի գոհութիւն գրկութեան, որ անհառ
էր մեղաւորաց (2), և աւետարանեցին երկնքի
և երկրի մէջ հաստառուած նորոգ խաղաղու-
թիւնը և հաղորդութիւնը (3) . Հրէ աստանի
համբաները և Ա'յժմւելից խմատունները եկին
հասին և նրկիր պատին նորածին Փրկչին (4) .
Ա'յսպէս, Հրէ այք և Ե'թանոսք — բոլոր
մարդկաւթիւնն Ա'յառունց Արդւոյ որբանին
չուրը հրեւեցան և իրենց փրկութիւնն
ողբացու բեցցին :

Քրիստոս ամենայնիւ իւր Եղարցը նշ
մանեցու համար՝ թղթառաւեցաւ ութերորդ

(1) Եացի . Բ . 6 .

(2) Գյուկ . Բ . 9 .

— Եաց . Ա . 6 .

(3) Յաշ . Ա . 32 .

(4) Սբա . Բ . 11 .

— Եաց . Բ . 16 .

օրը և կոչուեցաւ ՅԻՍՈՒՍ (օգնութիւն լ'ու տուծոյ)։ Արդարն և երկիւղածն Ախմէօն խւր գիրկն առաւ Ա'անուկն տաճարի մէջ որպէս Փրկիչ Խարայէլի և լ օյս հեթանսաց, յայտնելով որ նա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց⁽¹⁾։ Ա'արիսամ և (Յօվաէփ Հգիսդ տոս փախուցին մանուկը Հերովդէսի մոլեգնութենէն ապրեցընելու համար, (որ իւր թագաւորութեան նախանձորդ համարելով հետամուտ էր սպաննելու և Ի՞եթղէ հէմի մանեկանց հետ արդէն սպանած կը կարծէր+) և հրեշտակի ակնարկութեամբ դարձան կազարէթ⁽²⁾։ {Յիսուս, իւր 12 ամեայ հասակին մէջ ցոլացոյց արդէն մաճարին մէջ իւր առառածեղէն իմաստութեան ճառագայթը, որով զարմացած մնացին Դպիրները և կարծուած Իմաստունները։ Արչափ աճեցաւ հասակաւ, այնչափ առաւել շողացոյց իւր իմաստութեան, ճշմարտութեան և շնորհաց ճաճանչը⁽³⁾։

Հրէական ազգը մարդարէռութեան զօրութեամբ հաւատուացած էր, որ Ա'եպիստի գալստենէն առաջ Լզիա մարդարին պիտք է պայ նորա արքայութիւնը պատրաստիլու համար⁽⁴⁾։ Լւ արդարեւ Նըմանոցու Աղիսա յանձն Յովհաննու, որոց ծնունդն աւետե-

(1) Առակ. Բ. 21—58.

(2) Մատ. Բ. 10—20.

(3) Առակ. Բ. 40—51.

(4) Մատ. Պ. 2—6.

յաւ . Քրիստոսի ծննդենէն առաջ : Քրիստոսի
երեւելէն առաջ կանխեց և առպարէզ ելաւ
Յովհաննէս , իւր 30 ամեայ հասակի մէջ , և
Տիբերեայ կայտեր թագաւորութեան ժա-
մանակ հրապարակաւ կ'աւսուցանէր , որպէս
վարդապետ ժողովրդեան , քարոզելով ապաշ-
խարութիւն և երկնից արքայութեան մեր
ձենալն , ջանալով հրէական թիւր կարծիքը
ուղղել , որ Քրիստոսի թագաւորութիւնը
աշխարհական փառաւորութեամբ կը կար-
ծէին : Ինքն անազասներու մէջ կը բնափէր
և խոտամբեր կեռոք կը վարէր . կը խոտու
վանեց , որ իրմէն զինի եկազն իրմէն առաջ
եւ և առ բնքն դիմողները կը մկրտէր ջրով :
Ծխուս ինքն եւս եկաւ մկրտւելու Յավ-
հաննիսէն (Յորդանանու մէջ : Երկնքէն հայ-
րական յաւիտենական բարբառը վկայեց՝ Առ-
բա սիրելի որդիւթիւնը : Հոքին Առւրբ ըզ-
գօն աղաւնոյ կերպարանաւ իջաւ ՚ որա վր-
բայ , և այսպէս Կատուածութեան Արրողուու-
թիւնը յացտնուեցաւ մարդկութեան : Յավ-
հաննէս յայտնեց այնուհետեւ որ ինքը պի-
տի մեղմանայ և (Յխուս սիրտի աճի⁽¹⁾ : Եւ-
արդարեւ , շատ ժամանակ շանցաւ , Նկատվ-
ուել չարբարդապետը բանտը դրսա զի՞րվ-
հաննէս , յարմէ յանդիմանուած էր իւր եղ-
բօր Վիլիպպոսի Ներովդիադա կինը յափէ-

տակելուն համար, և Հերովդիայի նենգու-
թեամբ գլխատել առւաւ :

(Յիսուս մկրտութենէն յետոյ մեկնեցաւ
յանապատ տեղի, իւր եղբարց — մարդկանց
— նման փորձուեցաւ 40 օր սատանացէն և
յաղթեց, ցայց տալով մարդկութեան՝ փոք
ձանաց յաղթելու ամենամեծ օրինակ : Այս
սկսաւ հրապարակաւ քարտել հրեական
վարդապետաց նման :

Այս կը քարոզէր ապաշխարութիւն :
պայէս և (Յավհաննէս, բայց յետոյ մի առ մի
միաւ յացտնել իւր գալուանեան նորառակը :
Ակսաւ քարոզել, որ ինքն եկած է օրէնքը
լուսանելու, յատակելու, լուսաւորագոյն
գործելու. և տարածելու համար (1) :

Այս ճշմարտութիւնները և պատառեր
ները կ'ուսուցանէք (Յիսուս Քրիստոս իւր
վարդապետաւթեամբ :

Յիսուս Քրիստոս կ'ուսուցանէր : որ Աստուած հոգի է.
ասօի և պարտ է որ երկրպագուները հոգւով և չշմոր.
ագսթեամբ երկրպագունեն Աստուածոյ (2) : Աստուած մի-
ոյն բարի է : պարտ է սիրել զայ յամենայն սրան : յամե-
նայն անձնեւ և յամենայն զօրութենէ (3) :

Յիսուս Քրիստոս կ'ուսուցանէր՝ թէ չայր Աստուած
իւ նուժացի մարդկան պիտոյ քը, կը հոգայ նոցա համեմոր : կը
ըստ նոցա ազգեցը : կը թագա նոցա մեղքը (4), և պահաժի կը

(1) Մատ. Ե-4:

(2) Յավ. Դ. 23-24.

(3) Մատ. ԻԲ. 38-39.

(4) Մատ. 2. 7-14-23

-34-

սիրեւ . որ իւր Միամին Որդին առևա նոցա գրկութեան համար (1) . Իսկ իւր անձին համար կ'ասեր . որ ինքն ճշմարփա Արդի Աստուծոյ է . մի և փառակից ընդ չօր (2) . և ՚ի նման առ առեալ յաշխարհ : կ'ասեր . որ իւր խօսքերը՝ չ որ Աստուծոյ խօսքիցն են . և նորա պատուերներն են, զորո թիգն կը կատարեւ երկրի վրայ ճշմարփաւթեամբ . մարդկանց ոգամի և բարութեան համար : Եւ պիտի գայ միւսանդամ յարուցանել . և իւրաքանչիւրին հատուցանել ըստ գործոց (3) . Միավ բանիւ կ'ասեր որ ինքն է մը Կերմակուրը . մը Լողիւ . մը Վարդիւ Պազեթը . մը Հոգիւ Իւը . մը ՃԱՆԱՊԱՐՀԸ . ՃԸՄԱՐՑՈՒԹԻՒՆԸ . ԿԵՍՆՔԸ . և մը ԹԱՐԵԿԱՄԸ (4) . Իսկ Հոգւցին Արքս համար կ'ու առցաներ . թե Հոգին է նու ճշմարփաւթեան . որ աշխարհու կարող չէ առնել . բայց պիտի գայ և ենայ իւր աշխերաց հետ . Պիտի թարգման լինի վարդապետաւթեան և ուսուցիչ ամենայն ճշմարփաւթեան . վառաւորիչ իւր փառակիցն և կը շամբիչ աշխարհի (5) . և առանց օգնութեան և նորոգութեան Հոգւցին Առգւ Շից ՚ի լաւ անգր փախիլ (6) :

Յիշու . Քիխոսոս կ'ու առցաներ մարդկային աղդի նախ . կին պիտիկի հանգամանեցը . նորա անկառին . նորա վերստին կանգն . նորոյ միջոցն . նորա վախճանը և պարորը . նորա մայրութեանց պատճառ ները և ամենալութեան հաստատաւթիւնը . ամենը թե աշխարհս ագարակ է . որուն մեջ Աստուծոյ կողմէն ցանուած է սերին բարի . իսկ շարութեան կողմէն պատի . բայց բարին և շարու խռուն պիտի ամբին մինչեւ հոտեմի ժամանակը (կատարած աշխարհի) . և այն ժաման . առկ պիտի և պրշութին . ցարեան (բարին) ՚ի շատեմարան Շատեմանց . իսկ պրտի (շարին) ՚ի նոց կրոյն (7) :

- | | |
|---------------------------|---------------------------|
| (1) Յով. գ. • 16. | — Ճ. 11. 14.—ՃԱ. 25. |
| (2) Յով. Ժ. • 30. | — ՃԴ. Յու—ՃԱ. 13. 14. |
| (3) Յով. Ե. • 19—30. | (5) Յով. ԺԴ. • 10—17. 26. |
| — Զ. • 37—40. | — ՃԵ. 26—ՃԶ. 7—15. |
| — Ը. • 40—42. | (6) Յով. Գ. • 5. |
| (4) Յով. Զ. • 35. 38. 45. | (7) ՄՊԿ. • ՃԳ. • 24—30. |
| 48. 51.—Ը. • 12. 35. 51. | — 50—53. |

Յիսուս Քրիստոս կ'աւսուցաներ գարձեալ՝ թէ Երկնաւոր Նօր կատարելութիւնը մարդկային կատարելութեան շափն է : Այսինքն աստուածային պատկերը և նմանութիւնը պետք է կատարելագործուած լինի մարդոց մէջ (1) : Պարաինք անշուշտ խոնարհ և անմեղ մանկան միաց ունենալ Երկնային արդրայութիւնը մտնելու համար (2) : Պարաինք մեր անձին տկարութիւնը ճանաչել : որ է հիմն ճշմարիտ մեծութեան (3) : և իմանալ որ արդարութեան ցանկալն և փափաքին աւետարեկ հրեշտակ է : և անշուշտ այն փափաքն պիտի կատարուի : Պարաինք սրտի սրբութիւն ունենալ Աստուծոյ ընտանի լինելու համար : խազաղասիրութիւն ունենալ , որ նշանակ և նրգիսութեան Աստուծոյ : Պարտինք ընկերին ողորմիլ , որով Աստուծոյ գութը կը դրաւենք : Պարտինք Աստուծոյ սիրոց համար համբերել հայածանաց : որ է գրաւական միջմարտութեան Աստուծոյ և երանաւութեան յերկինս (4) :

Յիսուս Քրիստոս կ'աւսուցաներ ևս՝ թէ Եղբայրսիրու . թիւնն նորա աշակերտաց կնիքն է . նորա պատուեթեմերը ճշգրտիւ կատարելն՝ զիկն սիրելու ցոյցն է (5) . թշնամիներուն՝ ի բարձր սրտի բարձրացելն՝ թշնամիներին կրած, զարկանաց միակ և գեղեցիկ հասուցումն է (6) . Եղբայրսիրութեան պատուեթեն հաւատար և աստուածաիրութեան պատուերին (7) : Առանց ցոյցի առաջ առուցն : ի մարդկանե մնանե աղջմին : զուարթ երեսոց պահքն՝ գեղեցիկ միջերք ևն հասուցման մեծի առուր համար ամբարուած (8) :

Յիսուս Քրիստոս կ'աւսուցաներ՝ թէ ցանկանալու նպատական հային շնութիւնն է : սիրութիւնն՝ Եղբայրուածութեան . թիւն : որով սիրան պղծութեան ազգիւր կը լինի (9) : ուստի թերութիւնները խստիւ գատելն՝ մեր անձը գատառանժի ենթարկել է : ասել և շառնելն՝ լուլ և գործ շը գնելն՝ մեծ

- (1) Մատ. Ե. 14—16. 45. 48.
- (2) Մատ. Ճ. 1. 3.
- (3) Մատ. Ե. 3.
- (4) Մատ. Ե. 3—12.
- (5) Յով. Ճ. 10—15. 17.
- (6) Մատ. Ե. 45—44.

- (7) Մատ. Ի. 37—40.
- (8) Մատ. Զ. 1—7. 10—21.
- (9) Մատ. Ե. 28—29. —Ճ. 19:

յիմարտութիւն է, որպէս թէ մարդ աւազոյ կման վրայ առւն շնչած լինի (1): Դարձեալ թէ՝ թէթեւամսութիւնն և արծաթոյ ու կերակուրի վրայ սաստիկ հոգալն առաքի. նութեանց սերմանկը կ'ողաւցանող փուշեր են (2): Մեղքը՝ բռւն ծառապաթիւն է և գերութիւն, չպրագքաթութիւնն՝ որ զիսթիւն է սատանայի, որ խոկզրանէ մարդասպան է, սուս է և հայր ստութեան (3):

Ծիսուս գրիստոս կ'ուսուցանէր՝ թէ իրրեւ աշակերտ գրիստոսի մեր կրած բռզր վատերը մշտնշնաւոր ուրախու. թեան երկունք են, և թէ՝ աղօթքավ կարող ենք ստանալ ամեն բան. ինչ որ նորա կամոց համեմատ կը խնդրե՛մ և կատարեալ վատահութիւն կ'ունենանք նորա վրայ (4): Գը. րիստոս զիկըն ճշմարիտ որթոյ կը նմանեցնէ և բարեբարոյ քրիստոնեացք՝ պազարեր բարունակներու, այլոցեա որ նորա կամըը կատարողները կ'արժանանան նորա բարեկամութեանը աղդականութեանը, երենաւոր չօր որդիութեանը և միւս կենաց մէջ կը վայելցանան նորա մանրմանեամբ (5):

Այս բարձր և փրկարար վարդապետութիւնը կ'ուսուցանէր (Ճիսուս Քրիստոս բանիւ և գործով, կը հաստատէր մեծամեծ նըշաններով): Այս հրաշքները կը գործէր գործակցութեամբ Հօր (6), որ աշխարհ ամենայն ՚ի միտ առնու, որ նա է Անեսիայն (7): (Ճիսուսի միակ կամեցողաւթեամբ ջուրը իւր բնութիւնը փախեց և գինի եղաւ կանայի:

(1) Մաս. Ե. 1—5. 21. 26. 27.

(2) Մաս. Ժ. Գ. 3—7. 19

—22.

(3) Յով. Բ. 34—44.

(4) Յով. Ժ. 20—27.

(5) Յով. Ժ. 1—10.

—Ճ. 21—23.

(6) Յով. Ժ. 38—Ժ. Ա. 41.

—Ճ. 10—12.

(7) Յով. Ե. 38—Ժ. 25.

Հարսանեաց մէջ⁽¹⁾։ Առա բարութեամք և
աճեցնող օրհնութեամք միանգամ հինգ և
միւս անգամ եւթն նկանակն այնչափ բազ-
մացան, որ 4—5000 արք կերան, յագեցան,
թողունք ասել կանայքն ու մանուկները⁽²⁾։
Առա բանիւ շատ հիւանդութիւններ բը-
ժկուեցան⁽³⁾ և մարդասիրութեամք շատ
հոգեւոր ախտեր դարձմանուեցան⁽⁴⁾։ Առա
ամենազօր ձայնով մահը իւր աւարը յետ
տաւաւ⁽⁵⁾։ Առջմերը և ալիքները հնազան-
դեցան⁽⁶⁾։ Չար այսերը հալածական եղան
դիւահարներէն, սարսափելով և խոստովանե-
լով՝ որ նաև Արդի Աստուծոյ⁽⁷⁾։ Բարձրագոյն
մարդարէութիւն փայլեցոց իւր մարդարէական
պատիւն, վասն զի քաջ գիտեր մարդկան խոր-
հուրդները⁽⁸⁾։ Յայտնապէս պատմեց իւր ա-
շակերտացն ինչ որ պիտի կրէր ինքն և ինչ որ
պիտի կրէին նշքա իւր վարդապէտութեան

(1) Յով. Բ. 1—11.

(2) Մատ. Ժ.Դ. 18—21.

—ՃԵ. 29—39.

—Մարկ. Զ. 34—44.

—Ը. 1—9.

(3) Մատ. Դ. 23—24.

—Ը. 5—13. 2—15.

—Թ. 20—30.—ՃԲ. 10—15.

47—52.—Յով. Դ. 10—15.

—Թ. 9.

(4) Մատ. Թ. 3—7.

(5) Մատ. Թ. 18—25.

—Ղուկ. Ե. 11—17.

—Յով. ԺԱ. 11—44.

—Մատ. ԺԱ. 5—12.

16—17.—Եաց. ԼԵ. 3:

(6) Մատ. Ը. 23—27.

(7) Մատ. Ը. 28—34.

—Մարկ. Ա. 23—28.

—Ե. 1—7.—Ղուկ. Թ. 38—43.

(8) Մատ. Թ. 4.—Յով.

ԺԶ. 30:

Համար (1) : Արդարէացաւ Եշեղեցւոյ հաւ
լածանաց և տարածման անցքերուն համար (2)
նոյնպէս և հրէական տերութեան կործան-
ման համար, Երուառաղէմի տաճարին աւեր-
ման և խառն ընդ նոսին վերջին դատաստո-
նին համար (3) : Պատճեց նաև ինչպէս իւր ա-
շտիերուաց, նոյնպէս և իւր թշնամեաց կամ
հաղածչաց (4) ամեն բան, ինչ որ մօտ ժամա-
նակին մէջ պիտի կրէր (5) :

Թէպէտ և (6) առուսի պիրիստասի զարդն
ըստ ամենայնի համառայն էր իւր վարդապե-
տութեան, հեզ էր ինքն՝ և խոնարհ որտիւ,
և ոչ ոք կարէր յանդիմանել զնա վառն մե-
ղաց (6) : Թէպէտ և տեղ չը մնաց, որ նորա-
երախտիքը չը վայելէր, այն ինչ ինքն գլուխ
դնելու տեղ անգամ չունէր (7) : Թէպէտ
անհռոն մարդասիրութեամբ մեղռաքաց
էր կը նստէր և կ'ուտէր յուղութիւն ա-
ծելու համար (8) : Սակայն խոտասիրու և ա-
նոպայ Հրէաները չը հաւատացին, և մանա-

- (1) Մ—. Ժ. 10—25.
—Ցով. Ժ. 18—21.
—Ժ. 2. 1—4.
(2) Մաս. Ժ. 31—33.
—Իբ. 2—10.—Ղ. ա. 4.
Ժ. 9. 27—30.—Ժ. 1.
16—24.
(3) Մաս. Ի. 1. 2. 18—36.
—Մարկ. Ժ. 9.:

- (4) Ցով. Բ. 19—22.
(5) Մաս. Ժ. 21—22.
(6) Մաս. Ժ. Ա. 29.
—Ցով. Ը. 46.
(7) Մաս. Ը. 20.
(8) Մաս. Թ. 11—13.
—Ղ. ա. 4. է. 50—48.
—Ժ. 6.

ւանդ Փարիսեցիք խոր խոցեցան իւրեանց
կեղծաւորութիւնը ստէպ ստէպ յանդիմա-
նելուն և կշտամբելուն համար (1) : Բւատի
շատ անդամ՝ գարսն գործեցին և 'ի վերջոյ
չորեցօրեայ մեռեալ (2) ազարոսն յարուցա-
նելուն համար՝ հաստատապէս սահմանեցին
սպանանել գիշուռ (3) : Արդարեւ՝ Յիսուս
Փարիսեցիները չէր գրգռեր բնաւ ՚ի սպա-
նութիւնն, բայց և երբէք ճշմարտութիւնը
խօսելէն չէր խուսափեր : Պատեքատոնին Լ-
րուսագէմ չոքաւ և առաւել քան զառաջինն
սկսաւ յայտնապէս խօսիլ իւր մահուան և
երեքօրեայ յարութեան վրայ (4) : Ստուգա-
պէս գիտէր ինչպէս իւր մահը, նոյնպէս և
իւր գործոյն տեւականութիւնը և յաւիտե-
նականութիւնը, ուստի Օ ատիկն ուտեղու-
ժամանակ ցոյց տուաւ իւր անհուն ուրը և
խոնարհութիւնը . ցոյց տուաւ որ ամենէն
մեծը ամենուն սպասաւորն է . ցոյց տուաւ,
որ թագաւորք, իշխանք, մեծամեծք, իմաս-
տունք և օրէնսդիրք, ամենքն առ հասարակ
պարտք ունին ժաղովըդին—իւրեանց եղար-
ցը—սպասաւորելու և ոչ թէ հրամայելու

(1) Մ—. Ե. 20.—ՃԲ. 24—42.—ՃԵ. 1—20.
(2) Մ—. ՃԲ. 14—15.
—Ղ. ու կ. ԺԱ. 53. 54.
—Ցու. Ե. 32—48.

—ՃԱ. 46—56.
(3) Մ—. ՃԵ. 21—22.
—Ի. 18—19.—Մարկ.
Ճ. 33. 34.—Ղ. ու կ.
ԺԲ. 31—32.

և իշխելու . ուստի անպատռմ խօնարհութեամբ լրւաց աշակերտաց ոտքերը յօրինակ մարդկան , հաստատեց Գոհութեան կամ Հաղորդութեան խորհուրդը , որպէս իւր յիշատակ և նշան ՚Նոր Կտորակարանի (1) . որպէս զի մինչեւ ՚ի կատարած աշխարհի նոյն խորհրդով ժողովուին իւր աշակերտները և հաղորդութիւն ունենան իւր հետ հոգւով և կեանքով , ինչպէս որ առաջ ասած էր թէ՝ «Ո՞ւրմին իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի» (2) :

(Յիսուս ՚Քրիստոս թէ ՚ի սկզբան իւր վարդապետութեան և թէ ՚ի կատարածին , փորձեցաւ մարմնոց ակարութենէն , բայց միշտ յաղթող հանդիսացաւ : Օրախօսուեցաւ Փարիսեցիներէն , Հրէից խորհրդականներէն և նոցա դրդմամբ ամբաստանուեցաւ ժողովրդէն (տգէտ և իւր բարերարն ու թշնամին ըրճանազող ժողովրդէն) որպէս հայհոյիչ օրինաց և որպէս վնասակար կայսեր : Ո՞ւտնուեցաւ իւր մի աշակերտէն , երիցս ուրացուեցաւ միւսէն , լքեալ մնաց մնացեալ աշակերտներէն , ոլորն ոլորն արտասուք թափեց անմեղն և անարաան , քա-

(1) Մաս . Ի. 26—28.—Մարկ . Ժ. 22—24.—Ղուկ . Ի. 7—20.—Յով . Զ. 81—89.—Ճ. Գ. 1.—Մազաք . Ա. 11.—Երբ . Է. 9.—Ճ. Ճ. Ժ. 18.—Սալ . Ճ. 4.

(2) Յով . Զ. 86 .

**մեց ցամաքեցոյց մարդկային անօրէնութեան
դառն բաժակն , նախատանօք մեռաւ խաչի
մահուամբ , և սակայն միշտ խոստովանեցաւ
Ճշմարտութիւնը , միշտ աղօթեց իւր հալա
ծիշներուն համար . վասն որոյ և երբոր մարդ-
կութիւնը անզգայացաւ և ապերախտ գը-
տաւ , անմըռունչ բնութիւնը սարսեցաւ և
շարժեցաւ , ՚ի միջօրէի խաւար կալաւ զաշ-
խարհ և հին օրինաց վարագոյրը պատառե-
ցաւ , դժոխքը իւր աւարը դարձաց և բե-
րան հեթանոսի խոստովանեցաւ թէ՝ « Ար-
դարեւ՝ այրս այս արդար էր և Արդի Լա-
տուծոյ : »**

**Այսպէս կնքեց Յիսուս իւր կեանքը —
արդարութեամբ , Ճշմարտութեամբ , մար-
դասիրութեամբ , ներողութեամբ — Յավէփ
Արեմաթացիի ձեռքով թաղուեցաւ նորա-
փոր գերեզմանի մէջ , յաղթեց մահու , և ե-
րեք օրէնյետոյ յարութիւն առնելով երեւ-
ցաւ աշակերտաց և ընդ նոսին բովանդակաշ-
խարհի : Քաջալերեց իւր աշակերտները ,
Գնացէք , ասաց , յաշխարհ ամենայն , քա-
րոզեցէք և մկրտեցէք . գնացէք և մի երկըն-
չիք , զի ես յաղթեցի աշխարհի . զի ես ընդ-
ձեզ եմ մինչեւ ՚ի կատարած աշխարհի : Քա-
ջալերեց , օրհնեց և յաղթական փառքով եր-
կինքը վերացաւ :**

Բ.

Գոշուստ Հագւայն Արց . — Նորդաթիւ
մարդկութեան .

ՅԻՍՈՒՍ Կատարեց իւր մարդասիրութեան
ամենամեծ գործը . իսկ Հոգին Խուրբ պէտք
է հաստատէր իւր փառակցի վարդապետած
փրկարար Ճշմարտութիւնները և նորոգէր
մարդկութիւնը : Հոգից Պենտեկոստէի տօ-
նը հասած էր և հանդիսաւոր շքեղութեամբ
կը տօնուէր, որպէս եօթներորդ շաբաթ Պա-
տեքին , որպէս յիշատակ Ախնէական օրէնը տ-
տուութեան և որպէս տարեգլուխ նուիր-
ման նորահաս պտղոց և հնձոց : Առաքեալ-
ները և աշակերտները , Ա' ատաթիւյի ընտ-
րութեամբ լրացուցանելով երկոտասանից
թիւն , 'ի նշան երկոտասան ազգացն Իորայէ-
լի , Ախոն վերնատան մէջ ժողովուած՝ ան-
համբեր կը սպասէին : Հյանկարծ երկնային
հնչիւն մի եղաւ և բոլոր տունը սաստիկ
հողմով լցուեցաւ . Իշաւ Հոգին Խուրբ ժո-
ղովելոց վերայ հրեղէն լեզուաց կերպարա-
նաւ և իւրաքանչիւրին վերայ նստաւ : Այս
նշան էր կատարեալ յստակութեան , զօրու-
թեան և եռանդեան , որով պիտի հաստա-
տուէր Քրիստոնէութիւնը աշխարհիս վրայ :
Անկաւ ուրեմն նորոգութեան երկնային սեր-


մը , սրով պէտք է վերածնուեր մարդկութիւնը հոգեւոր վերածնելութեամբ : Դը տաւ մարդկութիւնը իւր նորագ արարչաւ գործութիւնը , ըստ գեղեցիկ բանի նախնի շարց կամ զեցւոյ : Առաքեալները զօրացան աւետարանական քարոզութեան պաշտօնին մէջ : Հաւատացելոց թիւը օր աւուր սկը սաւ բազմանալով (այն ինչ 120 էր միայն ցգալուստ Ա. Հոգւոյն) :

Յաւզեցաւ և շարժեցաւ մարդկութիւնն ի հիմանց , սրովհետեւ աներեւոյթ , ան պատրաստ և խաւարամած անդունդներուն վրայ շրջող Ա. Հոդին իջաւ սրտերուն խոր քը : Աի կողմէն սրտերը կակղացան , բար քերը քաղցրացան և սիրով ու միաբանութեամբ կապուեցան . իսկ միւս կողմէն հալածանաց փոթորիկները սաստկացան : Աակայն գարնանային հողմերը օգտակար են երկրին քան թէ վնասակար : Նոքա օդը կը մաքրեն , սերմերը կը սփռեն և կը պտղաբերեն : Այսպէս եղան և Քրիստոնէութեան դէմ յուզտւած հալածանաց մրրիկները : Դոքա առաւել տարածեցին աւետարանական սերմերը և զօրացուցին ճշմարտութիւնը : Այսն հալածանաքները սփռեցին առաքեալները յլլիւելս . յլլիւմուտա , ՚ի Հարսւ և ՚ի Հիւսիս,որով և Հրէութիւն ու Հեթանոսութիւննիւնարհեցան Քրիստոնէութեան

անյաղլթ զօրութեան առջեւ , և Փրկչի սքանչելի խօսքը կատարուեցաւ թէ՝ « Ես յաշխեցի աշխարհի ո : Լազմեցան վաղվաղակի քրիստոնէական միաբանութիւններ – Եկեղեցիներ – և Քրիստոսի Խաչը որպէս յաշխական գրօշ փայլեցաւ Հեթանոսութեան աւերակներուն վրայ :

Լոյսպէս հիմնուեցաւ և մեր ՀԱՅԱՏԱՆԵԱՑՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՆԿԵԼԵՑԻՆ . որ շատ նշանաւոր է իւր նախնականութեամբ և Արեւելից մէջ կրած հալածանքներով , ինչպէս պիտի տեսնենք իւր Պատմութենէն :





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ա Թ Ա Զ Ի Ն Շ Ր Ձ Ա Ն

Քրիստոնեակթեան սկզբնաւարաւթենեն մինչեւ Խօրին յացինական տարածումն բացանդակ Հայուստակ մէջ։

34-302

Ա .

Քարոզութիւն Աւետարանին և հաստառաւթիւն չայ-
ստանեաց Եկեղեցւոյ . — Հաղածակու-
թիւնք . — Պատմական աետութիւն ոյն Երեքդարեան
շրջանին նկատմամբ . — Առաքելական պաշտամունք
Եկեղեցւոյ .

ՓԻՐԻՍՈՆԵՈՒԹԻՒՆՆ աւետարանուեցաւ
Հայոց Ազգին Ծաղէոս և Ծարդուղիմէոս
առաքելոց անձնադիր քարոզութեամբ՝ Աք-
դարու և Այնատրուկի թագաւորութեան
ժամանակ : Այս մասին միաբարբառ կը վր-
կայեն , ինչպէս ազգային պատմական յիշա-
տակարանք և աւանդութիւնք , նոյնպէս և
Եկեղեցական ու արտաքին ժամանակագ-

բութիւնք օտարաց : Ուստի և Հայաստանեայց Ակեղեցին կարէ բացարձակ անուանիլ Հեթանոսութեան մէջ հաստատուած Առաջանքուն Քրիստոնէական Եկեղեցի , որոյ ըսկզբնաւորութեան պատմութիւնը այսպէս կ'աւանդեն պատմագիրք , առնլով Աղեսիոց դիւանական մատեաններէն , զորս կարդացած են Առաջանքուն Կեսարացին Գդ դարուն մէջ , իսկ Խորենացին Ծդին մէջ :

Վրիստոսի քարոզութեանց և հրաշագործութեանց միմիթարական աւետիքները կը պատմուին Աբգար Հայոց թագաւորին , և նոտ , անքութելի հիւանդութեամբ , (բորտութեամբ , ըստ ասորական գրոց) վարակուած լինելով՝ հրեշտակութեամբ և թըրթագրութեամբ (1) կը թախանձէ զՅիսուս , գալ իւր աթոռանիստ քաղաքն Աղեսիա , բժշկել զինքն հիւանդութենէ և նոյն քաղաքին մէջ խաղաղական կեանք վարել , հեռի հրէական ատելութենէ և հալածանքէ , որոց ենթարկուած էր Պաղեստինի մէջ : Յիսուս կ'երանէ Աբգարու մեծահաւատ քաղաքանքը , որ առանց տեսնելու կըհաւատայ , և

(1) Աբգարու և Քրիստոսի թզմագրութիւնքը , որոց մասին Խորենացին ընդարձակ կը խսի : Օտարազգի հնախոյզ ներէն սմանց անվաւերական համարեցին . բայց շատ նշանաւոր պատմագետներ եւս , ինչպէս են Տիլմոն գաղղիացի : Քաւե անդղիացի , Վելուէ գերմանացի և այլք , նոյն թըրթաց վաւերականութիւնը արդարացուցին :

կը խոստանայ իւր ՞ամբարձմանէն զկնի իւր
աշակերտներէն մէկը անշուշտ առաքել առ
թագաւորն, նորա հիւանդութիւնը բժշկեւ-
րու և երկնաւոր միտիթարութեամբ միտիթա-
րելու համար⁽¹⁾:

Ը ու տով կը հասնի միտիթարական ժա-
մանակակէտը, և ահա թաղէսս կը մտնէ լո-
գեսիս (որ ՞այոց թագաւորութեան նոյն
ժամանակեայ աթօռանիտան էր, ուր փա-
խուդրուած էին մեհենական գրեանքն ու նաև
խորդ աթոռակալաց դիւանները,) և իւր ա-
ռաքելական քարոզաւթիւնը կը սկսի նոյն խակ
աթրունական պալատէն: Աբգար կը հաւա-
տայ, կը բժշկուի իւր հիւանդութենէն և
կը մկրտուի . նորա օրինակին կը հետեւին
թագաւորական գերդաստանը, իշխանական
արքունիքը նախարարներով հանդերձ, և
նոյն հետ միասին լոգեսիոյ բնակիչները:
Ը ու տով կը փակուին մեհեանները և կուզ
տունները . առեւարանական լցուը կը ճաւ-
ռագայթի սրտերուն մէջ և Վրիատոսի յաղ-
թական դրօշին տակ կը տաղաւարին բաղ-
մութիւնք հաւատացելոց, ջրով և հոգւով
մկրտուած, և հաւատով, յուսով ու սիրով
միացած, որով և կը հաստատուի ՞այաստաւ

(1) Աբգարու քրիստոնէական դարձին վրայ մանրապա-
տում կերպով կը խօսին՝ Ղերութնա Եդեսացին, Առվէս խո-
րենացին, Ճառընատիրը: Այսկատար Վարք պրոց և այն:

նեայց ՚Քրիստոնէական ՚; կեղեցին, որուն և
Տեսուչ կամ ՚; պիսկոպոս կը կարգուի թաւ
գաւորի խոյրարար ՚; դդէն, հաւանաւթեամբ
հաւատացելոց և ձեռնադրութեամբ թաւ
դէսս առաքելոյն :

՚Քրդար այս երկնաւոր այցելութեամբ
զմայլած, իւր գեղեցիկ օրինակին հեսեւորդ
առնելու բաղձանքով՝ կը դրէ թղթեր քանի
մի աթոռակալաց, այն է Տիբերիոսին (եր
կիցս,) Պարթեւաց ՚Քրտաշէս և ՚Ասորեստաւ
նի ՚Ներսէն թագաւորներուն (1). Իսկ ա-
ռաքեալն թագէսս, ՚; դեսիոյ բնակչաց դար-
ձէն զկնի, կ'ուզեւորի Հայաստանի ՚ աւար-
շան կամ ՚Քրտազ գտւառը, ուր կ'իշխէր
՚Քրդարու հօրաքեռ որդին ՚Անատրուկ, որ
պէս հրամանատար զօրաց Հայոց աշխարհին,
և այն տեղեւս քրիստոնէական լուսով լու-
սաւորելով զ՚Անատրուկ, նորա ՚Անդուխտ
գուստրը, նախարարներ և բաւականին ժո-
ղովուրդ, ՚Օսքարիս անունով մէկը եպիս-
կոպոս կը ձեռնադրէ հաւատացելոց վրայ, և
քարոզելով վերին Հայոց մէջէն կ'անցնի ՚
զուանիք և անսոի ՚ի կապադովիկա, ուր և
Տեսուչ կը ձեռնադրէ իւր թէովիկոս աշա-
կերոր :

՚Ինչդեռ թագէսս այսպէս կը շարու-
նակէ իւր առաքելական պաշտօնն, յան-

(1) Խորենացի, Գիրք Բ. Գլ. 1. Գ.:

կարծ իրերը կերպարանափոխ կը լինին : Աբ-
գար իւր գրած թղթերուն տակաւին պա-
տասխան չընդունած՝ կը վախճանի և իւր
Անանէ կամ Անանուն սրգին և Անանառուկ
հօրաքեռ որդին միմեանց հակառակ թագ-
կապելով կ'ուրանան քրիստոնէութիւնը, ո-
րով և կը յսովն երկառակութիւններ քա-
ղաքային կենաց մէջ և հալածանքներ քրիս-
տոնէութեան գէմ : Անանուն նահատակել
կը տաց Ադդէ եպիսկոպոսը , որ յանձն
չառնուր խոյր յօրինել այն գագաթին , որ
չերկարագէր Քրիստոնին — և ինքն յետ տա-
կաւ ժամանակի արքայական պարատը նո-
րոգելու միջոցին սեան տակը հոսելով կը
վախճանի : Անատրուկ կը ալրէ Լշդեսիոյ
այն երդումով , որ նորահաւատ քրիստոնէ-
ից վնաս չը հասցնէ , բայց իւր երդումն
դրժելով շտուերը կը տանջէ և Աբգարու
գերգաստանը սրէ կ'անցընէ , բաց ՚ի աղջիկ-
ներէն և Հեղինէ թագուհիէն (յարմէ շատ
բարիք տեսած էր) որ երթալով իւր ծննդեան
երկիրն իւսան և անտի յլշրտսազէմ , Լշդը
դիսի ժամանակ պատահած սովի միջոցին
կը դարմանէ շատ աղքատներ , և կը թաղուի
հոյակապ շիրմի մէջ , ինչպէս և կը պատմէ
Յավսեպս :

Անատրուկի հալածանաց հրդեհը բոր-
բոքած ժամանակ՝ Աբգարէու իւր առաքելա-

կան այցելութիւնը կը շարունակէր և շատերը կ'աշակերտէր Աւետարանին , 'ի շորս որոց էին և Ասկեանք , որք գեսպանութեամբ Հռովմէն Անատրուկի մօտ գալով կը հանգիպին Թաղէոս առաքելոյն և նորաքարոզութիւնը լսելով կը հաւատան ու կը մկրտին և իւրեանց մեծի անունն Խրիւսի (Ասկի) լինելով՝ ամենքը միասին Ոսկեանք կ'անունին : Սոցա աշակերտներն են Առաքաժանք , որ Աւտաշէսի թագաւորութեան ժամանակ Այս նաց երկրէն եկան Հայաստան Աաթենիկ տիկնոջ աղդականութեան պատճառաւ , և Արտաշատ քաղաքի մէջ յարեցան Ամկեանց քարոզութեանը :

Քրիստոնէութեան տարածման վրայ Աստարուկի զայրոյթն առաւել սաստկանալով՝ կը նահատակէ Շաւարշանի մէջ Թաղէնա առաքեալը , իւր Աանդուխտ դուստը , որոց առաքինական կատարմամբ շատերը կ'ընդունին Քրիստոնէութիւնը , ընդ որտէին Աամուէլ նախարար և Զարմանդուխտ տիկին : Յետ ժամանակաց կը նահատակէ նոյնպէս Բարդուղիմէոս առաքեալը , (մոր Թաղերծ մահուամբ Արեբանոս քաղաքի մէջ) որ Պարսկաստանի , Հնդկաստանի , Երջանիկ Արաբիոյ և Խորասանի մէջ Աւետարանը քարոզելէն զինի՝ դարձած էր Հայաստան , և որպէս ամուլ և պաշտօնակից Թաղէոսի , որ-

պէս հոգեւոր Հայր Հայաստանեաց՝ կը քարոզէր Ա՛եծին Հայոց Վողթան գաււառի և Հերոյ ու Օարեւանդի մէջ և աշակերտած էր շատերուն հետ միասին և Անատրուկի Ոգոնի կամ Թագուհի քսրը, որ նոյնպէս նահատակեցաւ իւր եղագ ձեռքով։

Ինչպէս Թագէոսի և Ամնդխտոյ, նոյն պէս և Բարդուղիմէոսի նահատակութիւնը տռաւել բազմացոց հաւատացելոց թիւը։ վասն զի հալածանաց մէջ է քրիստոնէութեան աճումն, որպէս և ամենայն ճշմարտութեան։

Թագէոսի և Բարդուղիմէոսի Հայաստանի առաքելութեան գործակից կը համարուին Թուվմաս, (Յուդայ-Թագէոս և Ղղիշէ (Յակոբ Տեառնեղբօրէն ձեռնադրուած), որ աւետարանական քարոզութեամբ շատերը աշխակերտելով՝ նահատակեցաւ Աղուանից աշխարհին՝ իւտի գաւառին մէջ, (70 թուականին)։

Այսպէս ուրեմն, եթէ պատկերացնենք մեր առջեւ Հայաստանեաց Ղկեղեցւոյ ըսկզնաւորութեան և հաստատութեան առաջին շրջանին առաջին դարերը, կը տեսնենք ակներեւ, որ Քրիստոնէութիւնը Հայոց թագաւորական արքունիքէն սկսելով փրկարար կերպիւ յեղաշրջած է Հայաստանի երեսր, Ա՛յագէտքէն մինչեւ Աղուանիք և Վողթանէն մինչեւ կապագովիիա, եթէ ոչ համայն ժռ

զովուրդը վերածնելով գէթ աւետարանական հուրը հեթանոսութեան մէջ արկանելով։ Եւ թէպէտ Աքարու յաջորդները հաւածմամբ ընդդէմ զինեցան Քրիստոնէութեայտնի տարածմանը, բայց Քրիստոնէութիւնը անընդհատ շարունակեց իւր զօրաւոր աղդեցութիւնը։ Քանզի ոչ հովիւք պակասեցան Հայաստանէն մինչեւ Տրդատայև Քրիզորի ժամանակները, և ոչ նահատակք, և որչափ որ խստիւ արգիլուած էր եկեղեցական յայտնի համախմբութիւններն ու քարոզութիւնները, դարձեալ կը կարդանք պատմական յիշատակարանաց մէջ հովուական անուններ, որոց մի քանիման արդէն յիշեցինք և մի քանիման եւս արժան կը համարինք յառաջբերել ժամանակագրական կարդաւ։

Օ ագարիս եպիսկոպոս, աշակերտ թագէոսի, Ա'եծ Հայաստանին մէջ (40—70) (1)։

Ծնկովիլս, եպիսկոպոս աշակերտ թագէսի, փաքը Հայաստանի կամ Կապադովիլս մէջ, (40—70) (2)։

Լուսի եպիսկոպոս, Ա'եծ Հայաստանին մէջ. աշակերտ Բարդուղիմէոսի (67—90) (3)։

Բարսումա եպիսկոպոս Եղեսիոյ, Հայկազն (108—120) (4)։

Բաբելոս եպիսկոպոս, յաջորդ Լուսնայ, ՚ի

(1) Վաղք Արքոց։

(2) Վաղք Արքոց։

(3) Օրբէլեան. Պատմ. Սիւնեաց։

(4) Վաղք Արքոց։

Դողթան և ՚ի Արևիս (90—120) (1) :

Ո ՚իլար վանահայր թանահատի վանաց
՚ի Արևիս (150—170) (2) :

Փաշմ եպիսկոպոս Պանտոսի , որ մերձա-
կայ գաւառներէն 40 եպիսկոպոս հրաւիրե-
լով (որոց մէջ կային անշռւշտ և հայ եպիս-
կոպոսներ) ժողով կազմեց 150թուականին (3) :

Օ որիկո եպիսկոպոս Լիմանայ քաղաքի
Հայոց (160—190) (4) :

Ա լեշանդր եպիսկոպոս փոքր Հայաստանի
կամ Լեսարիոյ (210—230) (5) :

Փիրմիշանոս եպիսկոպոս Նոյն քաղաքի (230
—270) (6) :

Ա խալիս եպիսկոպոս Ամեայ կամ Տիգրա-
նակերտի (250—280) (7) :

Ո ՚երուժան եպիսկոպոս մեծ Հայաստանի
(250—280) (8) :

Ա րեւլայս եպիսկոպոս Ո՛իշագետի Հայոց
(260—280) (9) :

Լ իւնիս եպիսկոպոս Լեսարիոյ (272—290) :

Վ լասիս եպիսկոպոս Անբաստիոյ Հայոց
(290—315) (10) :

Կ եռներիս եպիսկոպոս (292) , յորմէ ձեռ-

(1) Օրբելիան, Գատ. Արևիսաց :

(2) Օրբէլ. Գատ. Արևիսաց :

(3) Եւսեբիոս, Գատ. Եկեղ.

(4) Եւսեբիոս, Գատ. Եկեղ.

(5) Եւսեբիոս, Գատ. Եկեղ.

(6) Եւսեբիոս, Գատ. Հայլբ:

(7) Վարք Արքոց :

(8) Եւսեբիոս, Գատ. Եկեղ.

(9) Գաւէ . զեդրի :

(10) Վարք Արքոց :

Նադրեցաւ Գրիգոր | ուսաւորիչ (302) (1) :

Լշմէ մտածենք , որ Քրիստոնէութեան առաջին երեք դարերուն մէջ , (որ մենք առաջին շրջան անուանեցինք) ոչ թէ տաճարներն , այլ տուներն , գետնափորներն , մենաւոր անապատներն և այրերն էին ապաստանարան հաւատացելոց , որով իւրաքանչիւր ոք յանձն իւր եկեղեցի էր , նոյն ինքն քահանաց , մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան և հոգիք նոցուն պատարագ ընդունելի : Լշմէ մնածենք որ նոյն ժամանակ հաւատացեալք շատ անգամ կ'աքսորուեին անապատներ և անմարդաբնակ կղզիներ , որպէս զի իւրեանց կենաց և վարուց հետեւողներ չունենան : Լշմէ մնածենք որ նոյն ժամանակ դպրութիւնը ծաղկած չէր Հայաստանի մէջ , և եղած մեհենական մատեանները և քաղաքացին յիշատակարանաց դիւանները առ հասարակ հալածիչներու ձեռքն էին , որոնք քրիստոնէից յիշատակը ջնջել կը ջանային , քան թէ դիւաններու մէջ մուծանել և անմահացնել : Լշմէ այս ամեն պատմական պարագաները մտարերենք ,

(1) Զարմանալի չէ , որ սոյն հովուաց մէջ կան այնպիսիք : որք հայողգի չեն . բաւական է որ քրիստոնէական հօտին տեսուչ եղած են Հայաստանի գուռաց մէջ , իրենց տեսչական յանորդութիւնը Հայաստանի առաքեալներէն՝ թագէուէն և Բարգու զիմէուէն շարունակելով . որովհետեւ այն ժամանակ քիչստոնէական ազգային եկեղեցեաց բաժանու մեր ընկային :

այն ժամանուկ առելի կը համոզուինք, որ Քը ըբստանէ ութիւնը անընդհատ տեւականութիւն ունեցած է Հայաստանի մէջ, մանաւանդ եղբ որ այն նպհատակութեան և հալածանաց գէպքերը յառաջ բերենք . որոնք Կը յիշուին պատմութեան մէջ մինչեւ Տրդատայ ժամանակը, և որոնք վերոգրեալ հօվտական անուններէն առելի մեծ ապացոյց են Պրիստոնէութեան յարտեւութեանը առաջին շրջանին մէջ :

Ո՞ողոնք Խակեանց և Ալոքիասեանց նահատակութիւնը, որ մուեգինն Շբատաւազդայ թագաւորութեան ժամանակ կատարուած է : Խորենացին , առնըզվ կեսարից Վիրմիլիանոս եպիսկոպոսի Հալածանաց Պատմութիւն առնունով գըքէն , կ'ասէ ար , քրիստոնեայք այնչափ բազմացած էին Հայաստանի մէջ խորավու (հօր Տրդատայ) թագաւորութե ժամանակ , որ նոյն արքայն ստիպուեցաւ սաստիկ հալածանք յարուցանել : Կը վկայէ նոյնպէս և Տերուուղիանութէ՝ 140 թուականին բազմաթիւ քրիստոնեայք կային Հայոց աշխարհին մէջ : Իսկ Տրդատայ համար կը պատմուի թէ՝ այնչափ զայրացած էր քրիստոնէից աճման դէմ (իւր քրիստոնէական գարձէն առաջ ,) որ հալածանաց երկու հրովարտակ հանեց , որ խստիւ արգելուի Պրիստոնէութիւնը :

Այս ամենը յայտնապէս կըցուցնեն ու բեմն, որ թաղէոսի և Բարդուղիմէոսի առաքելական ջանքը և թափած արիւնը անօգուտ չանցան Հայաստանի մէջ . այլ նոցաքարոզած աւետարանական հիման վրայ հաստատուած Հայաստանեայց Լէկեղեցին (Հայքիստոնեայք) և հաւատը անխախտելի մընաց, թէպէտ և երբեմն հալածուելով և երբեմն սրաերու ծածկութեան մէջ ամրանալով: Այս պատճառաւ է, որ մեր Լէկեղեցին իւր հաստատութեան և առաքելականութեան քարինք կ'ընդունի դժաղէոս և զի՞արդուղի մէոս, և նոյն առաքելականութեան մէջ է իւր նախնականութիւնն ու անկախութիւնն: Կը մնայ մեզ ուրեմն մի քանի խօսք եւս նոյն ժամանակեայ քրիստոնէական ներքին սովորութեանց վրայ խօսիլ:

Պատմական յիշատակարանք, Հայաստանեայց Լէկեղեցւոյն նկատմամբ, առանձիննոցինչ չեն աւանդեր քրիստոնէական ներքին սովորութեանց մասին: Իւստի անկատկած պարտինք ընդունել, որ մեր Լէկեղեցին առաջին շրջանին մէջ կը վարուեր առաքելական սովորութեամբ, այն է կը կազմէր որպէս մի քրիստոնէական գերդաստան, որոյ անդամները կապուած էին իրարու հետ հայրական, որդիական և եղբայրական կապով. հպատակելով մի միայն աստուածային կա-

մաց և աւետարանական պատուիրանաց : Առ
մենէն ընդունակները և վարքով ու բարքով
անսարաւոները կ'ընտրուէին Տեսուչ և Ապա-
սաւոր, միւսներուն ուսուցանելու և սպա-
սաւորելու համար : Այս ընտրութիւնը կը
լինէր վկայութեամբ հաւատացելոց, ձեռ-
նադրութեամբ Առաքելոց կամ եպիսկոպո-
սաց ու աղօթիւք ամեննեցուն, հանգոյն ընտ-
րութեան Ա՛ատաթիայի, եօթն սարկաւա-
գաց և այլոց, ինչպէս կ'աւանդէ մեզ Գործք
Առաքելոցն (¹) : Կայելով տեսչութեան և
սպասաւորութեան պաշտօնին ընտրուած-
ները կը կոչուէին Խոխովողոս, Երեց, առիւաւագ, և
շատ անգամ Եպիսկոպոսութիւնը և Երեցութիւնը
անխտրաբար իրարու տեղ կը գործադրուէ-
ին (²), ինչպէս և Առաքեալք անգամ երբե-
մըն երեց կ'անուանին (³) : Ծնտրելոց ան-
պայման պարտքն էր ուսուցանել և առաջ-
նորդել աւետարանական լուսով և կատա-
րել հոգեւոր պիտոյքներ . իսկ հաւատա-
ցելոց պարտքն էր իսպառ հրաժարիլ հեթա-
նոսական պաշտամունքներէ և քրիստոնէա-
կան փրկարար վարդապետութեանը հպա-
տակիլ, որ կը պատուիրէր ազատութիւն ՚ի
մեղաց, սէր, արդարութիւն, ճշմարտութիւն,

(1) Գործ. Ա. 21—26.—Զ.

2—7.

(2) Գործ. Ի. 17. 28.—Ցաւ.

Ա. 5—7.

(3) Ա. Պէտ. Ե. 1—Բ. Յով.

Ա. 1—Դ. Յով. Ա. 1.

ողորմածութիւն, և այլն :

Քրիստոնէութեան մէջ նոր ընդառանութշ
ներէն, ըստ պատմւիբանին Քրիստոսի⁽¹⁾, կը
պահանջուէր կտտարեալ հաւատ, յոյս, սէր
և որդեգրութեան ջերմեռանդն բաղձանք,
և ապա երեք անգամ ընկղմամբ⁽²⁾ ՚ի ջուրս
կը կատարուէր Ակրտութեան խորհուրդը
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Արքոց
՚ի նշան լուացման և ազատութեան ՚ի մե-
զաց և որդեգրութեան ամենասուրբ Լորրոր-
դութեան : Լորր ամբողջ գերդաստաններ
Քրիստոնէութեան ծոցը կը դիմէին, նորա-
ծիններն և նորահասակներն ևս կը մկրտուէ-
ին, այն պայմանաւ որ ընդ զարդացման հա-
սակին անպատճառ կրթուին աւետարանա-
կան պատուիրանաց մէջ, որոյ մասին և կը
պարտաւորուէին ծնողք և կնքահարք և մը-
կրտառղք :

Յետ մկրտութեան հաւատացեալքն կը
դրաշմուէին և կը կնքուէին խորհրդաւոր
Դրոշմով⁽³⁾ . ՚ի նշան զօրութեան և զին-
ուորութեան Քիսուսի Քրիստոսի Այսպիսի
սրբութենէն յետոյ նոքա նա և Առաք կ'ան-
ուանէին, ՚ի նշան որոշման ՚ի հեթանոսաց :

Դնտանեկան կեանքը, որ հիմն է մարդո-
կային ընկերականութեան և վառարան քը

(1) Մատ. Ի. 20:

(2) Յուլ. Զ. 4:

(3) Գործ. Ը. 17—18—ԺԸ.

5—6.—Եբբ. Զ. 2:

թիստոնէական բարեպաշտութեան, կը սրբ-
բուէր Ամուսնական խորհրդով, որ որչափ
եղծուած էր հեթանոսութեան ժամանակ,
ընդհակառակն այնչափ մեծութիւն ստա-
ցաւ Քրիստոնէութեան շնորհիւ, որ կոչե-
ցաւ նշանակ սիրոյն Քրիստոսի առ Եկեղե-
ցի⁽¹⁾: Խսկ կուսութիւնն կամաւոր էր և գո-
վութեան արժանացած էր, մանաւանդ կու-
սութիւնն կատարեալ սրբութեամբ սրտի⁽²⁾:

Կեդրոն ժողովման հաւատացելց էր
Խորհուրդն Հաղորդութեան “ԲՇիանէլ հա-
յին”⁽³⁾, զոր միասին կը կատարէին ՚ի նշան
միութեան ընդ Քրիստոսի և ընդ միմեանս :
Եւ որովհետեւ անհնար է հաղորդութիւնն
ընդ Քրիստոսի առանց սրբութեան, որպէս
և անհնար է միութիւնն ընդ եղբարց, ա-
ռանց կատարեալ սիրոյ . ուստի պարտաւոր-
ուած էին նախ զղջալ, ապաշխարել, սրբիլ,
եղբարց հետ հաշտուիլ և ապա Գոհութեան
հացը բեկանել: Ի նշան կատարեալ սրբու-
թեան և հաշտութեան ողջունելով կը ոսյին
միմեանց համբոյր պիրոյ կամ համբոյր սրբութեան⁽⁴⁾:

Վերոգրեալ բոլոր քրիստոնէական խոր-
հրդաւոր սովորութեանց (զօրս մինչեւ ցարդ
ունի Հայաստանեաց Եկեղեցին) հետ միա-

(1) Ա. Կորն. Ե. 11—39.

(2) Ա. Կորն. Ե. 32. 34. 38.

(3) Գործ. Բ. 42. 46.—ի. 7:

(4) Հառովմ. Ժ. 2. 15:

— Ա. Կորն. Ժ. 2. 20:

սին վառուած էին հաւատացեալքն անմա-
հութեան սիրով, ներկայ կեանքը համարե-
լով միայն բարեգործութեան և առաքինու-
թեան միջոց . ուստի և աշխարհասիրութեան
և ընչասիրութեան ցանկութիւնը մեռու-
ցած էին իւրեանց մէջ : Այս երկնային սէրն
էր, որ կը վառէր հաւատացեաները զոհել
իւրեանց ստացուածքը կարօտեալ եղարց
համար, ուրախութեամբ կրել ամեն հալա-
ծանք ու տանջանք, և քրիստոնէական մահ-
ւամբ նահատակուին՝ համարել կատարեալ
ցնծութիւն :

Այսպէս ուրեմն, ինչպէս Քրիստոսի Ա-
ւետարանը, նոյնպէս և հաւատացելոց կեան-
քը, նոր էր հեթանոսաց համար . վասն որոյ
և անդադար հալածանաց մէջ էին, մանա-
ւանդ թագաւորաց և իշխանաց կողմէն, ո-
րոց առաւել ընդդէմ էր քրիստոնէական
հաւատասարութեան սկզբունքը . վասն զի վար-
ժած էին նոքա ոչ միայն իշխել, այլև ՚ի շարս
աստուածոց դասիլ և ժողովրդէն պաշտօն
առնուլ : Այսպէս Քրիստոնէութեան առաջ
կայսերք և թագաւորք եւս նուաձեցան, ինչ-
պէս պիտի տեսնենք Երկրորդ շրջանին մէջ :



ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Քրիստոնեաւթեան յացթական տարածմանն չայտա-
տանի մէջ մինչեւ Խօրին դիմոմալուաւթիւնը ըրտաշ-
տական մոգակրօնաւթեան :

302—450

Ընդհանուր տեսաթիւն Երկրորդ շրջանին վրայ :

Եկեղեցական ՊԱՏՄՈՒԹԵԱՆ այս Երկրորդ
շրջանը, որ դարու կիսեան ժամանակամիջոց
միայն կը պարունակէ, շատ նշանաւոր է ոչ
միայն Հայաստանեայց Լէկեղեցւոյն նկատ-
մամբ, այլև ընդհանուր Քրիստոնէութեան.
վասն զի՞ Քրիստոնէութեան յաղթութիւնը
հանդիսապէս կատարուած է այս շրջանին
մէջ, թէ՞ ՚ի Հայաստան, և թէ՞ նա և հռով
մէական լայնածաւալ պետութեան մէջ :

Այն Երկնային կրօնքը, որ ըստ պատռուի
րանի և ըստ քաջալերութեան Հիմնադրին,
սկսան քարոզել Երկուասան աննշան և ա-
ռանց դպրութեան մարդիկ, Երեքդարեան
սոսկալի հալածանքներէն յետոյ, յաղթեց աշ-
խարհի գիտութեանը և զօրութեանը : Հե-

Թանոսութիւնը յամենայն զօրութենէ զի՞
 նեցաւ ՚Քրիստոնէութեան դէմ, որ սասանէ
 և բնաջինջ առնէ, բայց անհնարին եղաւ :
 Թողունք Հայաստանի մէջ կատարուած հա-
 լածանքները, թողունք միւս անհատական
 տանջանարանները, տասն հանրական հարա-
 ծանքներ գործ դրուեցան Հռովմէական տա-
 սըն կայսերաց ժամանակ՝ Աներոնի, Դոմիտի-
 անոսի, Տրայանոսի, Վարկոս Աւրելիոսի,
 Սեպտիմ Աեւերոսի, Վաքսիմիանոսի, Դե-
 կոսի, Վաղերիանոսի, Աւրելիանոսի, Դիոկ-
 ղէտիանոսի, Լիկիանոսի և սակայն հուր,
 սուր, բանտ, կախաղան և հստարաւոր տան-
 չանարանք ըրկարացին քրիստոնէական Կրօնի
 տարածմանը արգելք լինիլ, Եւ ահա, այն ինչ
 Հայաստանի մէջ սէ գն Տրդատ կը խոնարհի
 աւետարանական հեղ լծոյն տակ, հռովմէա-
 կան պետութեան մէջ՝ վեհապանն Կրստան-
 դիանոս կը նուաճի, և Շեմդղէհէմի մառըին
 մէջ լաւետարանուած ՚Քրիստոնէութիւնը՝
 արքացական աթոռներուն վրայ կը բարձրա-
 նայ . վասն զի Դողդօմացի վրայ տնկուած
 նախատանաց Խաչը ՚ի վեր քան զարեգակն
 կ՚երեւութանաց Կրստանդիանոսին՝ սոյննշա-
 նարանիւ — Եյու յաղլեւոյն : Մյու է, որ պի-
 տի բռնաւորութիւնը խորտակէ, գերինե-
 րը աղառէ, աղքատները պիովիէ և տկար-
 ները զօրացնէ : Մյու է, որ աշխարհի վայրու-

գութիւնը և զգայական ցանկութիւնները
պիտի սանձահարէ . կռոց պաշտամունքը եղ
ծանէ , անոպայ Նրէութիւնը մեզմէ և հե-
թանոսական կարծեցեալ իմաստութիւնը
ապշեցնէ : Եւ արդարեւ՝ երկրորդ շրջանին
մէջ յազթեցաւ և պարտեցաւ աշխարհ առ-
կարաց մեղմական գգոնութեամբ . յիմարե-
ցաւ աշխարհի իմաստութիւնը . անկան կոր-
ծանեցան Խաչի առջեւ հրէական ժողովը-
գանոցը և հեթանոսական բազմաստուածու-
թիւնը : Ի զաւր էր , որ կը ցրուէին և կը վը-
տարանդէին հաւատացեալները . ՚ի զնւր հե-
զեղի նման կը թափէին քրիստոնէից արիւնը :
Վ տարանդեալները քրիստոնէական աւետեաց
պատգամաւորներ դարձան և մարտիրոսաց
արեւան կաթիլները աերմն՝ Քրիստոնէութեան :
Ը ինական խուղերէն մինչեւ հռովմէական
ինքնակալութեան աթոռը գրաւեց Քրիս-
տոնէութիւնը , բոլոր տիեզերաց մէջ հնչե-
ցաւ . Եւետարանի փրկարար բարբառը և
թագաւորները դայեակ դարձան Քրիստո-
նէութեան , իսկ թագուհիք՝ մանկակալք .
ինչպէս գեղեցիկ գուշակուած էր մարդա-
րէի բերանով – “ Ե՞հաւասիկ ամբարձից ըզ-
ձեռս իմ ՚ի վերայ ազգաց , և ՚ի կղզիս կանգ-
նեցից զնշան իմ . և ածիցեն զորդիս քո ՚ի ծո-
ցըս իւրեանց , և զգստերս քո ՚ի վերայ ուսոց
իւրեանց բարձեալ բերիցէն : Եւ եղիցին

Ըստաւորք Շայեակը առև կանայք նոյս՝ մանկակալը առա⁽¹⁾։

Բայց՝ եթէ մի առ մի հաշուենք թէ բնչ
սոսկալի բռնութեանց և բազմահնար տան-
ջանարանաց տոկաց Քրիստոնէութիւր առա-
ջին երեքդարեան շրջանին մէջ և յաղթեց։
Կը դողսնք և կը սարսուինք. վասն զի, 'ի սկզբա-
նէ աշխարհի մինչեւ ցայսօր, ոչ մի եղեռ-
նագործութեան դէմ այնպիսի տանջանա-
րաններ ըստեանուեցան, ինչ որ քրիստոնէ-
ից անմեղութեան դէմ հնարուեցան. և տա-
կայն ոչ մի ինքնակալ այն փառքը ըստան-
գեց, ինչ որ Ճշմարիտ քրիստոնեայք ժառան-
գեցին։ Խողնենք ընդհանուրը և 'ի մասնա-
ւորի մեր Լէկեղեցւոյն վրայ դարձնենք մեր
նայուածքը։

Քրիստոնէութիւնը մի վսեմ և սբանչե-
լի յաղթանակ կանգնեց մեր Հայոց աշխար-
հին մէջ յլնթացս երկրորդ շրջանին։ Լոր-
ծանեց նա կռապաշտութիւնը, սասանեցոց
քրմութիւնը և ծաւալեց լուսաւորութիւնը։
Այս շրջանին մէջ կը տեսնենք մեր Լէկեղե-
ցականութեան բռւննշանակութիւնը, պար-
տուց ճանաչումն և ժառանգաւորութեան
կոչումն։ Այս շրջանին մէջ կը կատարուին,
ինչպէս ազգային, նոյնպէս և տիեզերական
երեք եկեղեցական յաղովներ։ Այս շրջանին
կը պատկանի հայկական գրոց գիւտը և հայ-

(1) Եայ. Իթ. 22. 23.

բենի դպրութեան ոսկեղինիկ դարու արգա-
սաւորութիւնը : Այս շըջանին մէջ կը կա-
տարուի Աստուածաշունչ Պրոց հայկական
թարգմանութիւնը և կը բեղմնաւորի քրիս-
տոնէական , բարոյական և մտաւոր դասակա-
րակութիւնը : Այս շըջանին մէջ ծնունդ
կ'առնուն քրիստոնէական ոգւով վառուած
մատենագիրներ և ժամանակակից յառաջա-
դիմութեան հետեւող հայ զաւակներ : || իսկ
բանիւ , այս շըջանն է մեր ազգային բարոյա-
կան և մտաւոր կենաց շղթային ամենամեծ
և խորհրդաւոր օղը , որուն վրայ կարեւոր
կը համարինք ընդարձակօրէն խօսիլ , և իւրա-
քանչիւր իրողութեան վրայ ուրոյն ուրոյն
խօսիլ : Իաց որովհետեւ այս վերանորոգու-
թեան և լուսաւորութեան հայրը Պրոգոր
Պլրածեսչն է , այն Աստուծոյ ընտրեալ մար-
դը , որ իրաւամբ Առևսա՛ռուշ կոչուած է ,
ուստի պարտ և արժան է Պրիգորի և իւր
թագաւոր աշակերտ Տրդատայ դարձի պատ-
մութենէն սկսիլ , որ սոյն Արկրորդ շըջանի
դարագլուխը կը կազմէ :

U.

Ճնունդ և դաստիարակութիւն Գրիգորի . — Ճնունդ
կրթութիւն և Թագավորութիւն Տրդատայ . — Տան-
ջանք Գրիգորի . — Գալուստ Հռիփիսիմեան և Գայիք-
նեան կուսանաց և Նահատակիւթիւն նոցա . — Ելք Ա .
Գրիգորի 'ի վիրապեն . — Սիկիզն քարոզութեան և քը-
րիստոնէական վիրանորոգութեան . — Ընտութիւնք
վիշյաբանաց . — Կործանում մէ հենաց .

ԱԱԱՆԵԱՆ Արտաշիր պարսիկ թագաւորի խորհրդով՝ Խակ պահլաւունին Հայաստան գալով դաւադրութեամբ սուսերահար կ'առնէ Հայոց Խոսրով թագաւորը, և մինչդեռ ՚ի փախունտ կ'աճապարէ, պաշարուելով Հայոց զօրքէն՝ գետավէժ կը մեռանի Եղասխայ մէջ, Կորա ընտանիքը և որդիքը Խասրովի հրամանաւ սրով կը կոտրուին, և այս կոտորածէն կ'ազատի միայն Երեքամեայ մանուկ մի, զոր Աստուած պատրաստած էր Թագէսոսի և Բարդուղիմէտախ առաքելութեանը յաջորդ հանդիսանալու և աւետարանական կենդանարար լցոյր համօրէն Հայաստանի մէջ տարածելու համար Այս մանուկը, (որոյ յլութիւնը կ'աւանդեն Արտազու գաւառին մէջ, Թագէսոս առաքելոյն տապանին մօտ և ծնունդն Վաղարշապատ քաղաքին մէջ,) իւր Աստիա անուն հաւատացեալ ստնտուի, սորա եղբայր Եւ-

Շաղիոս Գամբացւոյ և Բուրդար անուն
պարսիկ ամուսնոյն՝ խնամքով կը զերծանի ՚ի
Կեսարիա Խապաղովկացւոց և այն տեղ մկրտ-
տուելով կը ստանայ Գրիգոր անուն :

Յետ սակաւ ժամանակի Արտաշիր Առ-
սանեան գօրանալով կը տիրէ Հայաստանի և
արտմահ կ'առնէ Խոտրովի գերդաստանը. բայց
երկու նախարարք—Արտաւազդ Անդակու-
նի և (Օտայ Ամատունի—կ'աղատեն Խոտրովի
երկու որդիքը. առաջինն կ'առնու զԾրդատ և
կը փախցնէ հռովմէական պետաւթեան մէջ.
իսկ երկրորդն կ'առնու զԽոտրովիդուխտ և
կը տանի Անի ամրոցը : Այսպէս . Տրդատ կը
վարժի զինուորական կրթութեան մէջ | ի-
կիանոս զօրավարի մօտ . իսկ Գրիգոր պահ-
լաւունին կը զարդանայ քրիստոնէական հրա-
հանգօք և իմաստասիրական հմտութեամբ .
Գրիգոր 18 տարեկան հասակին մէջ կ'ա-
մուսնանայ Դաւիթ անունով մէկ մարդոյ
Արիամբ բարեպաշտ գստեր հետ , և կ'ու-
նենայ երկու զաւակ՝ Վրթանէս և Արիստա-
կէս : Յետ ժամանակաց այս չնաշխարհիկ ա-
մուսինները համաձայնութեամբ կը մեկնին
իրարմէ , Արիամբ կ'առնու Արիստակէս և
իւր անձն ողջախոհութեան տալով կը սնու-
ցանէ քրիստոնէական բարեպաշտութեան
մէջ . իսկ Գրիգոր , թողլով զլի բժանէս դայե-
կաց մօտ , կ'ուղեւորի առ Տրդատ . “Օհայ

բենեացն պարտս հատուցանել⁽¹⁾ . վասն զի տեղեկացած էր որ իւր հայրն Անակ սպանած է Տրդատի հայր Խոսրովը : Տրդատ իւր քաջութեամբ փայլելով և մանաւանդ Դր թաց Հռչէ թագաւորին հետ ունեցած մենամարտութեան մէջ յաղթող հանդիսանալով կը պսակուի արքայական թագով և կը դառնայ Հայաստան իւր հօր տեղը թագաւորելու : Երբ կը հասնի Եկեղեցաց Երեզաւանը՝ գոհութեան զոհեր կը մատուցանէ Անահիտին իւր յաղթութեան և արքայական փառաւորութեան համար . ուստի և հրաման կը տայ Դրիգորին (որ իւր զօրաց մէջ կը գտնուէր և քրիստոնէութեամբ յայտնուած էր,) ընթրեաց սեղանի վրայ դրած ծաղկանց պսակներէն առնուլ, նոյնպէս և թաւ ոստեր, և մատուցանել Անահիտ դիցուհւոյն, որ ըստ հեթանոսական հասկացողութեան « Այս էր ամենայն զգաստութեան, և նովաւ կեայր և կենդանութիւն կրէր աշխարհն Հայոց, և էր փառք ազգինու Դրիգոր կը հրաժարի այս հեթանոսական պաշտամունքէն և Տրդատայ զայրոյթը սաստկապէս կը բորբոքի . վասն զի վարժած լինելով Հռովմայ հալածասէր կայսերաց մօտ և հրահանգուելով քրիստոնէութեան թշնաւ

(1) Թռողթ Արտիթեայ . Խոր . Գերք Բ . Գլ . Զ . Ագաթ :

մի գիլիտովայից⁽¹⁾ ոգւով, կը խորշէր ՚Վրիստոն
նէռւթենէ և վնասակար կը համարէր տե-
րութեան⁽²⁾։ Տրդատ ՚Իրիդորի մտաց հաս-
տատութիւնը քայքայելու համար ՚ի գործ
կը դնէ ողբքանք, խոստմունք, սպառնալիք և
հաճութեան նշոյլ անգամ չը տեանելով կը-
կըսի մի զկնի միւսոյ ՚ի կիր արկանել հռով
մէական սարսափելի տանջանարանները և
գուցէ հռովմայեցի լէգեռնաց ձեռքով, ո-
րոնք իւր հետ եկած էին Պարսից դէմ պա-
տերազմելու համար։ Առաւել կը կատաղի
Տրդատ, երբ կ՚իմանաց Տաճատ նախա-
րարէն՝ թէ ՚Իրիդոր Անակայ որդին է, որ
սպանեց զխտարով, և կը հրամայէ արկանել
մահապարտաց գուքն — ՚ի խոր վլրապն Ար-
տաշատու⁽³⁾։ Հրովարտակներ կը հանէ ծա-
ծուկ և կամ յայտնի քրիտոնեայքը որոնել
և չարաշար մահուամբ պատժել և միան-
գամայն կը պատռւիրէ ջերմեռանդն պաշ-
տօն մատուցանել Արամազդին, զգատ Ա-
նահիտին և քաջ Ա ահագնին⁽⁴⁾։

Այս միջոցին յանկարծ Հայաստան կ՚ա-
պատտանի հռավմէական հալածանաց մրրիկ-
ներէն փախած սրբասէր կուսանաց գունդ
մի, գլխաւոր ունենալով զ՚այխանէ և նորա-

(1) Արտ. ։

(2) Արտ. ։

(3) Արտ. ։

(4) Արտ. ։

առաքինութեան ընկերակից Հռիփահմէ ա-
 նուն մատաղ օրիորդը՝ թագակալ տօհմէ, որ
 ինչպէս կը պատմե՞ն, փախած էր Դիտկզէտիւ
 անոսի հետ չը հարսնանալու պատճառաւ :
 Այս կուսանքը կը պատսպարուին Վաղարք
 շապատ առքայանիստ քաղաքի մէկ հնձանին
 մէջ և իւրեանց ձեռաց վատուակով կը կերպակրուին, վասն զի մէկը ապագործութեան
 արուեստ գիտնալով ուլսւնքներ կը յօրինէ և
 զայն վաճառերվ իւրեանց օրական պարէնը
 կը հայթայիթեն : Եթու երկար հետազօտու-
 թեան զբայց կ'ընդունի Տրդառ Հռավելոց
 կայսերէն փախստականաց մասին և որոնե-
 լով կը գտնէ իւր թագաւորական կայսնա-
 քին մէջ : Լորկու օր հետեւակ զաքով առ-
 պարափակ առնելէն զինի, ոսկիապատ գա-
 հաւորակներով, սպասաւորներով և շքեզ
 հանդերձներով իւր արքունիքը բերել կը-
 տայ Հռիփահմէն, և սքանչելի գեղեցկու-
 թեանը վրայ զարժմանալով՝ կը ջանայ նորտ
 անմեղութիւնը զոհել իւր մողեգնութեանը
 Բայց սրբասուն կոյսը կը յաղթահարէ Տըր-
 դատին և կը փախչի պալստէն, գոհութիւն
 մատուցանելով Աստուծոյ, որ պաշտպանն է
 անմեղութեան : Ապա գահձապետն կը հաս-
 նի և դառն տանջանք Հռիփահմէն կեանքէ
 կը զրաւէ, ընդ նմին և նորա ընկերներէն 33
 հոգի, որոց մարմինքն կ'ընկենուն պառաքոյ

Քաղաքին : Այսու օրը իւր երկու ընկերուն
հեաց հետ միասին տանջանքի կը մատնուի
և Պայիանէն, որ առաջ արքայական պալատն
կոչուած էր Հռիփիմէն համոզելու համար,
բայց նա ընդհակառակն քաջալերած էր մա-
տաղօրիսրդը՝ առաւելիւր մարմնաւոր կեան-
քը զոհել, քան թէ իւր կուսական անմեղու-
թիւնը : Եսպէս կը կատարուին 37 կուսանք
և մնացեալները կը փախչին, որք մօտ 40 կը
համարուէին : Այսայն Տրդատ շատ կը տրտմի
Հռիփիմէի մահուան վրայ, որ առանց իւր
հրամանին և գիտութե՛նահատակուած էր :

Ա եց օրէն յետոյ որսի կ'ելնէ Տրդատ
և կը մոլեգնի, որպէս վայրենի անասուն, իս-
պառ կտրուսանելով իւր բանականութիւնն.
Տրդատի զգացատ քոյրը՝ Խոսրովիդուխտ հըն-
գիցս տեսիլ կը տեսնէ, որով կը յայտնուի
թէ : Երտաշատու վիրապին մէջ ձգուած Պա-
րիգորը միայն կարէ բժշկել զՏրդատ, եթէ
հանուի այն գրէն : () տայ նախարարը իսկցն
Երտաշատ կ'ուղարկուի, և նոր Դանիէլն
Հայաստանեայց՝ Պարիգոր, յետ երկարամեայ
կողանաւորութեանն, կենդանւոյն կը հանուի
վիրապէն, մարմինն թխացեալ և սեւացեալ,
և լուացուելով և նոր հագուստներ հագ-
նելով կ'ուղեւորի ՚ի Վաղարշապատ : Վայ-
րենացած թագաւորն ու նորա հետ միասին
բոլոր մոլեգնեալ և փրփրեալ իշխանները և

բազմաթիւ այսահարները Գրիգորի առաջք
կ'ելնեն, որ ծունդ կ'իջնէ, կ'աղօթէ և սաւ
կաւ ինչ կը զգաստացուցանէ : Իսկ երբ
իրենց յանցանաց համար թողութիւն կը
խնդրեն զգաստացածները, Գրիգոր կը յայտ-
նէ, որ ինքն բնութեամբ՝ նոցա հաւասար
մարդ է, ուստի և կը յորդորէ զԱստուած
միայն Ճանաչել Արարիչ Երկնի և Երկրի, զնա
միայն պաշտել և 'ի նմանէ խնդրել թողու-
թիւն և փրկութիւն (1) :

Այս քրիստոնէական յորդորանքէն յետոյ՝
ժողովել կը տայ Գրիգոր նահատակուած կու-
սանաց մարմիններն իւրաքանչիւրն իւր պա-
տառուուն զգեստով, (որ արքունական տա-
նէն բերուած շքեղ պատանքներէն նախա-
մեծար կը համարէր), կը նստի թագաւորի
հնձանին մէջ, ուր վկայուած էին կուսանքն,
և կ'ըսկի 66 օր քարոզել բազմախուռն ժռ-
զովսդին, որոնք ամեն կողմէն կը դիմէին ա-
ւետարանական Ճշմարտութեան կենդանի
ջրով իւրեանց պապակը զովոսցընելու : Այս
քարոզութեամբ կը համոզէ Գրիգոր բոլոր
բազմութիւնը դառնալ 'ի կուապաշտութենէ
'ի Ճշմարիտ Աստուածութիւն, խօսելով
նախ Հօր Աստուծոյ և արարչագործութեան
վրայ, Երկրորդ Արդւոյն Աստուծոյ և նորա
մարմնաւորութեան վրայ, և Երրորդ Հո-

(1) Ագաթ :

գւցն Աստուծոյ և միանդամայն Լակեղեցւոյ
վրայ⁽¹⁾։ Այս քարոզութիւնը կը լինի որպէս
ընծայութիւն կամ պատրաստութիւն մկրր-
տութեան , որով այնչափ կը շարժի ժո-
ղովուրդը , որ համեմատ տեսլեան Գրիգո-
րի իսկոյն կը սկսի շինել սուրբ Կուսանաց
երեք վկայարանները , մէ կը Հռիփսիմէի վք-
կայուած տեղը , միւսը Գայիանէի և երրոր-
դը բնակութեան հնձանին տեղը : Այն վք-
կայարանաց մէջ կ'ամփոփուին կուսանաց մար-
մինները իւրեանց հանդերձներով , թէպէտ
և դիզուած կային Գրիգորի առջեւ անուշ
իւղեր , ազնիւ խունկեր և թագաւորազուն
օրիորդաց ու պատուական կանանց գոյնա-
գոյն նարօտներ , ծիրանիներ և երկնագոյն
ու սպիտակ դիպակներ : Թագաւորն ինքն
կը փորէ տապանաց տեղիքն և Աշխէն թա-
գունին ու Խոսրովիդուխտ օրիորդը իւ-
րեանց հանդերձներով բրած հողը կը կրեն
և դուրս կը թափեն : Տրդատ հրաման կ'առ-
նէ Գրիգորէն , մեծամեծ արձաններ կը բերէ
Ամասիս լեռնէն և իբրեւ կոթող յաղթու-
թեան՝ կը տնկէ : Գրիգորի տեսլեան համե-
մատ կը պատրաստուի և որոմնափակ կը լինի
այն տեղին , ուր պիտի կանգնէր առաջին Լ-
կեղեցին—Ղջջամատ—յանուն Ոիածին Որ-
դւոյն Աստուծոյ , և սեղանատեղւոյն վրայ

(1) Ագաթ :

Խաչի յաղթական նշանը կը բարձրացընեն : Այս տեղ կը դիմէ ժողովուրդը խուռն բազ մութեամբ, որպէս ՚իկեդրոն Հայաստանեայց հոգեոր միութեան և կ'աշակերտի աւետաւ րանական վարդապետութեան : Այս տեղ բազկատարած կը հայցէ Վրիգոր և Աստուած կը բժշկէ հոգւով և մարմնով խօթացեալները, անդամապյջները, ջրդողները, բորոտները և ամեն ախտաժէտները⁽¹⁾ : Վրիստոնէութիւնը կը յաղթանակէ և հոգւով ու ճշմարտութեամբ երկրպագուները կը բազմանան :

Երբոր այսպէս նոր հոգին և նոր կեանքը ամենուն մէջ կ'արծարծի, կը ջանան այնուհետեւ Հեթանոսութիւնը իւր վառարաններուն մէջ շիջուցանել և մեհեանները յեկեղեցի փոխարկել : Աակայն Վրիգոր անպատեհ կը համարի այս հնաբըր, մեհենական շինուածները կը կօրծանէ, և Խաչն միայն իբրեկեդրոն ժողովման՝ զանազան տեղեաց մէջ կը կանգնէ : Տրդատ մեծասատ հրաման կը հանէ, որ դադրին հեթանոսական պաշտամունքները և ամենեքեան Վրիստոսի ամենաքաղցր լծոյն հնազանդին : Կ'առնու նա իւր հետ Վրիգորը, իշխանները և դրանիկ զօրքերը, կը շրջի բոլոր աշխարհին մէջ, կը բրէ կը կործանէ և կը հրդեհէ չաստուածոց մե-

(1) Ագաթ :

հեանները , բագինները և պատկերները ,
այն է Տիւր (Ներմէս) դիցը՝ Արտաշատին
մօտ , Բարշամինայինը՝ Դարանաղեաց թոր-
դանին մէջ . Արամաղդինը՝ Անիի մէջ , Ասկե-
մայր Անահիտինը՝ Ակեղեաց Արէղ աւանի
մէջ . Աանէական դիցն՝ (Աթենաս) թիլն ա-
ւանի մէջ , Աթէրական դիցն՝ (Ափետոս) Բագայառիձի մէջ . Անծագանձ մեհեան-
ներու պարգեւներէն մասն կը հանեն աղ-
քատաց և տառապելոց և քրմաց մանուկ-
ները քրիստոնէական հրահանգաց մէջ կը-
թել կը ջանան :

Բ .

Ընդութիւն Ս . Գրիգորի և հայրապետութիւն . —
Քրմնթեան պատերազմը և Քրիստոնէութեան յաղթա-
նակը . — Սքանչելի տեսարան հայրապետական վերադար-
ձի Ս . Գրիգորի , և մկրտութիւն հաւատացելոց Ավրամ .
— Տարածումն աւետարանական լուսոյ . — Քրիստոնէական
Դպրոցք . — Մենաւորական կեանք Ս . Գրիգորի :

ԵՐԲ ՈՐ Կ'ԵՌ.ԱՐ ԱՅՍՊԷՍ ՀԱՄՕՐԷՆ ԺՈՂՈ-
ՎՈՒՐԴԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍԻՐՈՎ , ԱՅՆՈՒՀԵՄԵԼ
ԿԸ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԻ ԹՎԱԳԱւՈՐԻՆ ՆԱԽԱՐԱՐք ,
Իշխանք և բազմութիւն հաւատացելոց , և
ՀԱՄԱԿԱՄ ԽՈՐՀՐԴՈՎ Եւ ՀԱւանութեամբ
Կ'ՅՆՏՐԵՆ ՀՈՎՈՒԱՓԵՄ ԿԱԳՐԵՍԱՆՆԵԼ ՀԱՄՕՐԷՆ

Հայոց աշխարհին վրայ թագէոսի և Յար-
 դուղիմէոսի պարգեւական զաւակն Պրիգոր,
 որ յետ բազում դիմադարձութեան՝ ի վեր-
 ջոյ կը զիջանի հաւատացելոց աղաչանքին, առ-
 տուածային կամքը տեսնելով ակներեւ իւր
 ընտրութեան մէջ։ Պրիգորի յանձնառու-
 թիւնը անպատում ուրախութեամբ կը լը-
 ցուցանէ հաւատացելոց սիրոը, ուստի և
 վաղվաղակի կը պատրաստուին Հայաստանի
 զանազան գաւառներէն գումարուած երե-
 ւելի նախարարները և կուսակալները—(իշ-
 խանն Անգեղ տան, իշխանն Ազճնեաց, իշխա-
 նըն Արդպետութեան, իշխանն թագակապ
 Ասպետութեան, իշխանն Ապարապետութե-
 և Օօրապետութեան Հայոց աշխարհին, իշ-
 խանն Կորդուաց, իշխանն Օռփաց, իշխանն
 Պարգարացւոց, իշխանն Ուշունեաց, իշ-
 խանն Ուկաց, իշխանն Աիւնեաց, իշխանն
 Օռդէից, իշխանն Աւտիացւոց, իշխանն Շա-
 հապ Հեր և Օարեւանդ գաւառին, իշխա-
 նըն Արծրունեաց աշխարհին)և մեծաւ հան-
 դերձանօք, բազմաթիւ հեծելովք և հրովար-
 տակաւ թագաւորին կը տանին ընտրեալն
 Պրիգոր Վաղարշապատ քաղաքէն Փոքրն
 Հայաստանի Լեսարիա քաղաքն Պամրաց, ուր
 կը ժողովուին եպիսկոպոսներ և քրիստոնէից
 բազմութիւն, և Պրիգոր կը ձեռնադրուի
 Պետոնդիոսէն ՀԱՅՐԱՊԵՏ բովանդակ Հա-

յաստանի, 302 թուականին Փրկչի :

Ո՞եծ Հայրապետն Հայոց կիւսարիայէն կ'անցնի Անբաստիա, իմաստուն գործակից ներ և վարդապետութեան պաշտօնեաներ կ'ընտրէ, և այն տեղէն եպիսկոպոսաց թըզ թով և Յովհաննու Անկրտչի և Աթանագի նեայ վկայի նշխարներով՝ կը դառնայ իւր հօտը միսիթարելու (1) :

Իայց Տիարօն հասած ժամանակ՝ օրհասական Հեթանոսութիւնը զայրագին պատերազմ՝ կը յարուցանէ Քրիստոնէութեան դէմ։ Օ օրացած էին այն ժամանակ Տիարօնց դաւառին մէջ Արձան և Դեմետրէ քրմապետները, որոնք քրմութեան մստալուաբարձումն տեսնելով՝ կը գրգռէին բոլոր քուրմերը և տեղւոյն ժողովուրդը և Քրիստոնէութիւնը հալածել կը ջանային նոյն երկրէն։ Այսկայն երկու արիւնահեղ պատերազմներէն զինի՝ քրմութին ևս, այն հեթանոսական մթութեան խաւարամիտ սպասաւորութիւնը, ամօթահար կը յաղթուի և իւր վերջին շունչն կ'արձակէ (2)։ Հիմնայատակ կը կարծանուին Ա ահագնի, Անահիտայ և Աստղիան մեհեանները և երեքմեհենեան Աշտիշատին մէջ կը հիմնուի Ակեղեցին Աստուծոյ, ուր կ'ամփոփուին կիւսարիայէն բերուած նըշ-

(1) ԱդաԲ :

(2) Զենոբ Գլակ. Պատ. Երկրին Տարօնց :

խարները : Անդանօք կը մկրտուին նոր Հայքապետի ուղեկիցները, նախարարները, զօրքերը և բազմութիւն մարդկան 100 հազար, ուրանօք Ա. Գրիգոր առաջնորդ կը թողուհաւատացելոց համար Օւենոք եպիսկոպոսը, Անտօն ու Կրօնիդէս կրօնաւորները, և ինքն կ'ուղեւորի դէպ ՚ի Արարատեան աշխարհը :

Տրդատ իմանալով Հայրապետի գալուստը՝ արքայական գերդաստանով և զօրքերով դիմաւորելու կը պատրաստուի, և ընդ առաջելնելով կը սպասէ Բագրեւանդ գաւառի Բագուան քաղաքի մէջ : Երբ նոյն քաղաքը կը հասնի Ա. Գրիգոր, անպատում մեծարանօք կ'ընդունուի գունդագունդ բազմութենէն . ամսօրեայ քարոզութիւն կը պատրաստէ բոլոր ժողովուրդը Ակրտութիւնն ընդունելու համար . կը պատուիրէ աղօթել և պահել պահս (Առաջաւորաց պահք), և ապա գումարելով Հայաստանի նոր Յորդանանու — Եփրատայ — ափանց վլույ, կը մկրտէ նոյն գետոյն մէջ զթագաւորն, զլշւէն թագուհին, զլսորովիդուխուն, զօրագունդը և բոլոր բազմութիւնը աւելի քան 4,000,000 հոգի, պատարագ կը մատուցանէ և ամենքը կը հաղորդուին կենարար մարմնոյ և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և կը փայլին լուսով Աւետարանին (1) :

(1) Ագաթ :

Աստէն հաւատացելոց բազմութեամբ
շրջապատուած կը դառնայ Ա. Հայրագետն
Վ. աղարշապատ քաղաքը և սկիզբն կ'առնէ
շինութեան հոյակապ տաճարին Խմիածնի,
որոյ տեղին առաջուց պատած էր որմով։

Այնուհետեւ կը սկսի մեծավաստակ մը-
շակն Հայաստանեաց Խկեղեցւոյ տարածա-
նել սփուել քրիստոնէական վարդապետու-
թեան սերմունքը լայնատարած երկիրներու
մէջ, որոյ քարոզութեանն սահմանք կը լինին
Հիւսիսէն Աստաղ քաղաքը, Խաղտիք, Լա-
զարջք, Ազգգութք և Լասպք. իսկ Հարա-
մէն Ամիդ, Ածրին, Արք Երական, Ահա-
քրտան և Լիրդուք⁽¹⁾։

Այսպէս ահա Առևսաւորիչն Հայոց, բռ-
լոր աշխարհը քրիստոնէական հաւատքով
լուսաւորելէն զկնի, լաւ իմանալով որ ուղիղ
գիտութիւնը երբէք չըհակառակիր Աւետա-
րանին, կը ջանայ նաև հաւատոյ մշտնջենա-
ւորութիւնը և տեւականութիւնը ապահո-
վել գիտութեամբ, ուստի և Տրդատայ օգո-
նութեամբ դպրոցներ կը բանայ զանազան
տեղեր։ Առաջին դպրոցին մէջ կը պարապի
նոյն ինքն Տրդատ և Արշակունեաց տոհմի
որեարն ՚ի վարժս վարդապետութեան, որ
և Բագրատորական Դալլոց կ'անուանուի. իսկ
միւս դպրոցներուն մէջ կ'ուսանին բազմա-

(1) Ագոթ, Սոլ. Եկեղ. Պատ. Գ. 8.

Թիւ մանկունք և պատանիք յօյն և ասորի դպրութեամբ , որոց մէջ մանաւանդ քըրռ մաց որդիքը յառաջասունք և ձեռասունք լինելով || . Դրիգորի , կը կարգուին պաշտօնեայք և սպասաւորք Լէկեղեցւոյ : Այցա կարգէն էր Ալբիանոս , որ արքունական դրան եպիսկոպոս կարգուեցաւ և ապա եպիսկոպոս 'ի կողմանու Եփրատական գետոյն : Դարձեալ սոցա կարգէն էին սոյն եպիսկոպոսները — Լէտաղիոս Բասենոյ , Բասոս , Անվսէս , Լէսերիոս , Յովհաննէս , Ագապէս , Արտիթէս , Արտուրէս , Անտոռէս , Տիրիկէս և Կիրակոս , Թողմ միւս եպիսկոպոսները , որոց թիւը կը հասնէր մինչեւ 400 , և երեցներն ու սարկաւագները , որոց թիւն բազում էր յոյժ :

Հայաստան աշխարհը քրիստոնէական լուսով լուսաւորելէն զինի || . Դրիգոր կ'առանձնանայ մենաւորութեան մէջ աղօթելուիւր հօսի հոգեւոր աճելութեան և քարոզած ճշմարտութեանց արգասաւորութեան ու հաստատութեան համար , և դարձեալ այցելութիւն կ'առնէ հաւատացելոց : Վատընական է սոյն օրինակ կեանքը աւետարանական վաստակաւորաց համար , այն է առժամանակ մի խոյս տալ աշխարհային աղմուկներէն , մենաւորութեան մէջ կազդուրիլ բարձրախոհ մուածութեամբ եւ վերստին

դառնալ առ ժողովուրդն նորոգ զօրութիւն . Դրիգորի մենաւորութեան օմարանը Դարանաղեաց Ախատուհ լեառն էր , Անեայ այրը , ուր ճգնած էր Հրիփախմեանց ընկերակից Անէ կոյաը և 'ի վախճանիլն Ա . Դըրիգորի ձեռամբ թաղուած :

Գ.

Ընարութիւն և Ձեռնադրութիւն Ա . Արիստակիսի . — Ա . Գրիգորի և Տրդատայ չու ովմ' երթարշն վայ . — Ժողով Նիկիո . — Ասինան Երկրաւոր կենաց Ա . Գըրիգորի և Տրդատայ . — Հայրապետութիւն Արիստակիսի . Վրթանիսի . Գրիգորիսի . — Ակիզքն կաթողիկոսութեան Աղուանից և Վյաց . — Յուսիկ և Փառներսէն .

ԹԱԳԱԽՈՐՆ ՏՐԱՏ , որպէս զի ժողովուրդը իւր | ուսաւորչի մենաւորութեան ժամանակ հոգեւոր կարօւութիւններ չը կրէ , քանի մի նախարարաց պատգամաւորութիւն հրաւիրէ Կիսարիայէն Ա . Գրիգորի որդիքը՝ Վրթանէս և Կրիստոակէս , և հաւատացելըց առաջարկութեամբ եպիսկոպոս կը ձեռնադրուի Կրիստոակէս իւր առաքելանման հօրէն և նորան տեղապահ կը կարգուի : Այս միջոցին Անձն կրստանդիանոսի քրիստոնէական դարձի լուրը Հայաստան կը հաս-

նի և Տրդատ խնդակցութեան պատճառաւ կը պատրաստուի Հռովմ Երթալ։ Կ'աւան դուի թէ՛ իւր հետ կ'առնու նաեւ զ ու սաւորիչն Գրիգոր, զ Արիստակէս և զ Աքի անոս (թէպէտ և Գրիգորի մենաւորական կենաց բաղձանքին նայելով) անհաւան կը թուի նորա երթան Տրդատայ հետ ՚ի բազմամբոխն Հռովմ,) և արքայավայել մեծարանք գանելով Կոստանդիանոսէն կը դառնայ ՚ի Հայաստան մեծամեծ ընծաներով։ Բրիստոնէական սէրը և խնդակցութիւնը ամենայն գովութեան արժանի գործ է, մասնաւանդ երկու թագաւորաց մէջ, որոց օրինակը շինող և հաստատողէ ժողովրդեան։ Վակայն վերջին դարուց հռովմէական կղերի իշխանասիրութիւնը ջանահնար եղած է տարօրինակ կերպարանք տալ նախնի դարուց քրիստոնէական եղբայրութեանը, և այս պատճառաւ կարկատած է Դաշնութիւնը⁽¹⁾ անունով գրուած մի Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական անկախութիւնը պա-

(1) Կ. Վ. Հահնազարեան, միաբան Ս. Եղմիածնի, հիմաւոր և բազմակողմանի բանադատութեամբ ցուցած է Դաշնութիւնը եղելով ստութիւնը, հրատարակելով իւր աշխատանիբութիւնը նախ Երեւանուա օրագրի մէջ, և ապա առանձին տետրակով 1862 ին Փարիզ տպագրուած։ Միաթարեան միաբան Հ. Գար, Զ. Նոյնակէս անվաւեր հրատարակած է յիշեալ թուղթը, Պատր. Հայէրնի դպրուալէտն պայտք։ 1863 տի, էլե 121—124։

պական վերացական գլխաւորութեանը հը պատակեցնելու ճարտարամտութեամբ : Աւ կայն որչափ պապականութիւն հեռի է նախ նի հռովմէական եկեղեցւոյ ուղղութենէն , նոյնչափ հեռի է և բաշանց լուղլը ճշմարտութենէ , ինչպէս և Հայաստանեայց եկեղեցին փառամոլութեան հպատակութենէ :

Վինչդեռ Հայաստանեայց Եկեղեցին Քրիստոսի անհաս մարդասիրութեան վրայ կրզմայլի , հռովմէական պետութեան մէջ արիստական աղանդաւորութեան կասկածները կը յուղզին Քրիստոսի աստուածութեան դէմ , և այս մոլորութեան առաջն առնելու համար՝ 325 թուականին Նիկիյ տիեզեղերական յողովը կը գումարուի , 318 հայրապետաց ներկայութեամբ . ուր փոխանակ Գրիգորի՝ ներկայ կրդտնուի Երիստակէս , և նոյն յողովի Հանդանակն ու քանի մի կանոններ Հայաստան կը բերէ : Ինչպէս սոյն Ժողովի , նոյնպէս և Ա. Գրիգորի վարդապետական գրուածոց վրայ առանձին պիտի խօսինք ՚ի կարգին :

Ա. Գրիգոր մենաւորութեան մէջ կը կնքէ իւր բազմարդիւն կեանքը , որոյ մարմինը յեռնական հովիւները գտնելով կը թաղեն , և յետ ժամանակաց կը յայտնուի Գառնիկ Ճգնաւորին , ուստի և Արքոյն նշխարքը կը բերեն ՚ի թորդան և անտի ՚ի Վաղարշապատ :

Իսկ Տրդատ բաւական ժամանակէն յեւաց
առանձնութեան փափաքով անգամ մի կը
հրաժարի իւր թագէն, կրկին կը կոչուի և
կը թախանձուի թագաւորելու և նախարա-
բաց խստաբառութեամբ կը թիւնաւորուի
և կը վախճանի : Այսպէս կը կնքեն իւրեանց
կեանքը Հայոց աշխարհի լուսաւորութեան
երկու մեծ Տածիչները, մինը մենաւորու-
թեան մէջ, իսկ միւսն թիւնաւորուելով:
Հայոց իրեանց անուանքը և արարքը անմահ
կը մնան Հայոց Ազգի և Ակեղեցւոց գոյու-
թեան հետ . վասն զի մարդկութեան բայ-
րերաբաց փառքը և վկայութիւնը ոչ կ'ան-
յայտանան և ոչ կը թիւնաւորին :

Ա. Գրիգորի և Տրդատայ վախճանէն ըդ-
կնի Հայաստան կը տարութերի Հռովմէական
և Պարսկական ազդեցութեան տակ : Այ-
երկու ազդեցութիւն խսպառ կը թուլացնեն
Հայաստանի քաղաքական օյժը և երկու կը
բաժնեն, որով և խռովութիւնք, երկար-
ուակութիւնք և կոտորածք կը յաճախեն :
Ակեղեցւոց հովիւները մեծ դժուարութեան
կը հանդիպին : Այս կողմէն կը պարտաւորին
երկու օտար պետութեանց հարստահարու-
թիւնները մեղմելու միջնորդներ հանդիսա-
նալ, միւս կողմէն կը ստիպուին նախարաբաց
և իշխանաց մոլութեանց գէմ մաքառիլ :
Այսն զի արտաքին հրամարակական կու-

պատշութիւնը բարձուելէն զկնի՝ Քրիստո
Նեռութեան առջեւ պատերազմ կը բացուի
Ներքին մղութեանց հետ, պատերազմ, որ
ոչ թէ միայն նոյն ժամանակի, այլ Քրիստո
Նեռութեան տեւական և իրական պատերազ-
մըն է, որ աշխարհիս կատարածի հետ միայն
կարէ վերջանալ: || Խոտի և ||. Գրիգորի յա-
ջորդները, մեծ մասամբ, իշխանաց մալուկմիւն-
ները կշտամբելու համար կը կատարին մահ-
ուամբ, ինչպէս պիտի տեսնենք յետագայ
պատմութենէն:

||. Երիստակէս (332 ին) հայրապետանա-
լով՝ իւր հօր նման հոգ կը տանի ամենատե-
սակ բարեկարգութեան, կը խրատէ ու կը
ջանայ ու զղել իւր հօտը բարեպաշտութեան
և ճշմարտութեան ճանապարհով, և սակայն
Չորրորդ Հայոց վերակացու Երքեղայոս իշ-
խանի վատ արարքը յանդիմանելու համար
կը սպանուի սրով Ծոփաց գաւառի մէջ, և
կը թաղուի թիւն աւանի մէջ:

||. Վ բժանէս կը յաջորդէ իւր կրտսեր
եղբօրը Երիստակիսին (339) և Եկեղեցոյ
պայծառութեանը նախանձախնդիր կը լինի.
Երուսաղէմի Ամակարիս Պատրիարքէն կանո-
նական թուղթ մի բերել կը տայ և յարմարե-
լով զայն՝ Հայաստանեայց բոլոր եպիսկոպոս
ներուն կ'ուղարկէ: Հատ աշխատանք կը կրէ
Պարսից հարստահարութենէն ազգը զերծ կա-

ցուցանել, և այս առթիւ թուղթ կրգրէ կրու-
տանդին կայսեր և օգնութիւն կ'ընդունի.
և ապա Տիրանայ թագակալութեն ևս պատ-
ճառ կը լինի, ինքնին գնալով առ կրատան-
դին : Ասկայն իւր հայրապետութեան առա-
ջին տարիներուն մէջ նախարարաց թելա-
դրութեամբ յարձակումն կը կրէ լեռնական
ներէն, Տարօնոյ անդրանիկ Ակեղեցւոյ տօ-
նախմբութեան ժամանակ, և հազիւ հազ
սպանութենէ կ'ազատի . նոյնպէս և Տիրա-
նայ ախտամոլութիւնը յանդիմանելու հա-
մար ոչ սակաւ կը նախատուի :

Վ ըթանիսի հայրապետութեան առաջին
տարին Աղուանք կը դիմեն առ Տրդատ և
իւրեանց երկրի համար առաջնորդ կը խընդ-
րեն . ուստի և Վ ըթանէս իւր երէց որդին
մանուկն Գրիգորիս՝ արքեպիսկոպոս կը ձեռ-
նադրէ և Աղուանք կ'ուղարկէ : Ա. Գրիգո-
րիսէն սկիզբն կ'առնու Աղուանից և Վ քաց
կաթողիկոսութիւնը ⁽¹⁾, ուր կանխապէս քա-
րոզուած էր Աւետարանը | ուսաւորչի առա-
քելական խնամատարութեամբ և երկու կող
մանքն եւս Հայաստանի հայրապետական
աթոռէն կ'ընդունէին առաջնորդներ : Վ ը-
րաստանի մէջ քարոզած էր Աւետարանը
Առնէ կոյսը, որ Հռիփափիմեանց նահատա-
կութեան ժամանակ փախած էր Վ քաց ար-

(1) Բուշ. Դպր. Գ. Գլ. Զ.

քայանիստ քաղոքն Ա՛ծխիթա , դարձուցած
էր նոցա Ա՛իհրան իշխանն ՚ի քրիստոնէու-
թիւն , և Ա ռւսաւորչի հրահանգով կործա-
նած էր կոսոց պատկերները , մանաւանդ առ-
պրոպային Ա լրամազդայ պատկերը՝ մայրաքա-
ղաքի հանդէպ եղած լերան վրայ , որոյ տե-
ղը կանգնած էր Խաչի յաղթական նշանը . և
ապա Ա . Գրիգորի դրկած հովիւներու ձեռ-
քով Վ րաստանի բնակիչները ընդունած է-
ին քրիստոնէական մլրտութիւն :

Գրիգորիս բանիւ և իւր առաքինական
կեանքով քարոզիչ կը հանդիսանայ Ա ղուա-
նից երկրին մէջ , ստկայն իշխանները չըկա-
րենալով տանիլ նորա արգար կշտամբանքնե-
րը , ձիու ագիւն կըկապեն և Վ ատնեան գաշ-
տի մէջ գետնաքարշ առնելով կը նահատա-
կեն , որոյ մարմինը իւր ոարկաւագները կը
քերեն և կ'ամփոփեն Ա յունեաց գաւառի Ա ր-
մարաս աւանի մէջ , ուր կանխապէս եկեղե-
ցի կար հիմնուած Ա . Ա ռւսաւորչէն (1) :

Վ րթանիսի հայրապետութեան ժամա-
նակ տառապանքներ կը կրէ նոյնպէս Ա սորոց
Յակովը Ա՛ծբնայ հայրապետը , Ա ռւսաւոր-
չի հօրաքեռորդին , և կ'անիծանէ Հայոց Ա՛ռ-
նաձիհր զօրավարը , իւր սարկաւագները
ծովը ձգելու համար :

(1) Բաւզ . Դոգ . Գ . Գլ . Զ .

Վ րթանիսին կը յաջորդէ իւր կրտսեր որ գին Յուսիկ, (355ին, ունենալով երկու որդի Պապ և Աթանագինէ,) որոյ կաթողիկոսութեան ժամանակ ուրացողն Յուլիանոս իւր պատկերն Հայաստան կ'ուղարկէ, և մինչդեռ Տիրան կ'ուղէ յիշեալ դիւպնկար պատկերը կախել Օոփաց արքունական եկեղեցւոյ մէջ, անվեհեր Հայրապետը ձեռքէն յափրշտակելով կը խորտակէ և Տիրանայ հրամանաւ բրածեն լինելով կը նահատակուի : Դանիէլ Ասորին, որ քահանայ ձեռնադրը ուած էր Խոսաւորչէն և քորեպիսկոպոս կամ հիւպերէտ կարգուած, Տիրանայ արած անգթութիւնը կը կշտամբէ, և այս յանդի մանութեան պատճառաւ խեզդամահ կը մեռանի և կը թաղուի Հացեաց Դրախտ անուն մենարանին մէջ : Խէպէտ և ինքն Տիրան ևս Հռովմայեցւոց ցուցած մտերմաւթեան համար յետ ժամանակաց կը կոչուի Պարսից թագաւորէն, աչքերը կը խարուի և կը բանտարկուի Կրւաշ աւանի մէջ :

Յուսիկի տեղ նախարարաց հաւանութեամբ կ'ընտրուի Փառներսէհ, Տարօնոյ Առտիշատ գիւղէն, և չորեքամեայ կաթուղիկոսութենէն յետոյ կը վախճանի և Տարօնոյ մէջ կը թաղուի գեղեցիկ շիրմի մէջ :

Դ .

Ընտրութիւն և հայրապետութիւն Մեծին Ներսիսի .
—Մարդասիրական արարք նորա և բարեկարգութիւնք .
—Ներսէս Հայրենեաց և ռապութեան մէջ . —Ներսէս
պատերազմի գաշտին մէջ : —Հահակ . —Զաւէն . —
Արդուբակէս :

ՓԱՌՆԵՐՍԵԴԻ ՄԱՀԷՆ յետոյ Հայոց նա-
խարարները , կուսակալները և զօրականները ,
ժողովրդեան մեծ բազմութեամբ հանդերձ ,
կը ժողովուին Արշակ թագաւորի մօտ և մի
աձայն հաւանութեամբ հայրապետ կ'ընտ-
րեն Ա'եծն և սքանչելին Ներսէս , Յուսիկի
թոռն և Ա'թանագինէի ու Տիրան թագա-
ւորի Բ'ամբիշ քրոջ որդին , որ ուսմամբ և
բարեպաշտութեամբ զարգացած լինելով
՚ի կեսարիա , մտած էր զինուորական կարգի
մէջ և կը ծառայէր Հայոց արքունեաց մէջ
որպէս սենեկապետ և զինակիր թագաւորի ,
բարուք քաղցր , հասակաւ բարձր և գե-
ղանձնեայ : Ներսէս այս անակնկալ ընտրու-
թենէն շինութուելով կ'աշխատի հրաժարիլ ,
իւր անձը անարժան համարելով հայրապե-
տական վսեմ կոչման , բայց մեծագումար
ժողովի միաձայն աղաղակը զինքը կը պարտա-
ւորէ : Ուստի նախարարը , կուսակալք և զօ-
րականք կը պատրաստուին և թագաւորի հը-

բովարտակաւ կը տանին զ'Աերսէս 'ի կիւսարիա, ձեռնադրել կը տան հայրապետ և բերելով՝ կը կացուցանեն Հայաստանեայց հօտին վրայ :

'Աերսէս լիովին կը զգայ իւր անձին մէջ ազգի տարտամ վիճակը, որ արտաքուստ յունական և պարսկական ազդեցութենէն կը տագնապէր, և 'ի ներքուստ զեղծմանց և երկպառակութեանց մէջ կը տարուքերէր. ուստի իւր բարձր կոչման համեմատ՝ արտաքնոց առջեւ կը հանդիսանայ տղդային իրաւանց իրաւարար, իսկ Ազգին մէջ պարտուց կատարող հայր և ուղղութեան առաջնորդ. այնպէս որ, երբ Աերսիսի կենաց և արարմանց համառօտագիծ պատկերն ներկայացնենք, կը տեսնենք ակներեւ, որ Աերսէս հայրապետութեան մի գեղեցիկ տիպարէ, և կարեմք ըմբռնել թէ Բնէ է կաթուզի կոսութիւն կամ Հայրապետութիւն :

'Աերսէս ժողով կը գումարէ Տարօնայ Աշտիշատին մէջ համօրէն եպիսկոպոսներէ և բազմաթիւ աշխարհականներէ և կանոնական սահմանադրութեամբ կը ջանայ մարդասիրութիւնը և ողորմածութիլ արմատացնել Հայաստանի մէջ և անդթութեան սրմատը խլել: Ալ շինէ աղքատանոցներ և հիւանդանոցներ ամեն գաւառաց մէջ՝ բորոտներու, ուրուկներու և հաշմերու պատսպարութեան

Համար , որոնք մինչեւ այն ժամանակ պիղն համարուած էին, և անդ թութեա երեսէն փախ չելով ամոցի անապատներու , քարանց ծերպերու և մացառներու մէջ կը բնակէին . և այս աղքատանոցներու և հիւանդանոցներու համար հասոյթ կը նշանակէ աւաններէն , պատղաբեր ագարակներէն և արօստականաց կաթնէն և գեղմանէն , ընդհանուր վերատեսուչ կարգելով իւր խաղ անուն կարնեցի սարկաւագը : Կը շինէ ամեն գիւղերու մէջ վա՞ճեր կամ իջեւաններ , որպէս օտարանոց անծանօթ ձանսապարհորդներու և հիւրերու համար , և որպէս տեղի ապատանի որբոց , ծերոց և կարօտելոց : Կը շինէ զանազան տեղերու մէջ մենաստաններ կամ միանձանց խրճիթներ , ժառանգագույններ ամեն գաւառաց մէջ , յունարէն և ասորերէն դպրութեամբ գիւտութիւն ծաւալելու համար . և տեսուչներ կը կարգէ Շաղիտա , Լաղիփան , Լիփրեմ , Պինդ և այլք , այնպէս որ Ներսէսի բարեգործական և ժառանգագույնական շինուածոց թիւը 2000 էն աւելի կը լինի :

Ներսէս գեղծումները եւ հեթանոսական սովորութիւնները բառնալու համար՝ յորդորանօք և կանոնական սահմանադրութեամբ կ'արգելու մերձաւորաց խնամութիւնք , կամ ամուսնական տոհմակից խառ-

նակութիւնը, որով եղծեալ էին մանաւանդ նախարարները, իւրեանց սեպհական ազատութիւնը և ստացուածքը այլոց չանցը նելու ագահութեամբ . կ'արգելու նոյնպէս մեռելոց վրայ կատարուած յուսահատական կոծումները, սեւազգեստիլն և այլ սնոտիաւ պաշտ ոճիրները, և այսպէս ազգականութիւնը կը սրբէ, ընտանեկան կեանքը կը մաքրէ և քրիստոնէական յուսով կ'ամրապնդէ :

‘Ներսէս կը շրջի գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, գաւառէ գաւառ, և իւր հայրապետական խնամքը հաւասարապէս կը տարածէ ամենուն վրայ, հանապազօր սեղանակից կ'ընդունի ոչ միայն նախարարներ և կուսակալներ, այլ մանաւանդ աղքատներ, օտարականներ, կաղեր, կոյրեր, մարմնահարներ և հաշմեալներ, որոց վէրքերը շատ անգամ իւր ձեռքովը կը լուանայ, կ'օծանէ և կը դարմանէ, գիւղական իրձիթները և տանիքները իւր համար հայրապետական գահոյք առնելով :

‘Ներսէս հայր է հայրենեաց մէջ, իսկ ոտարաց առջեւ՝ պաշտպան հայրենեաց. երբ կը լսէ թէ թէողոս զօրավարն կը դիմէ Հայաստանը աւերելու, ընդ առաջ կ'երանէ, կը զիջուցանէ նորա զայրովթը. կ'երթայ Շիւղանդիոն՝ Հայոց պատանդները յետ կ'առնու Վաղենտիանոսէն, կայսերական

տոհմէն կին կ'ածէ Ողոմնվիադա կոյսը Արշակ թագաւորին, Գնէլը (Արշակայ եղբօրորդին) պատանդութենէ հիւպատոսութեան կ'արժանացնէ, և կը դառնայ ՚ի Հայաստան։

Ներսէս Արշակաւանի բնաջինջ կոտորածէն մատաղ մանուկները կ'ազատէ գոմի մէջ կրելով որթով (կողովով), դայէակներու կը յանձնէ, կը սնուցանէ և կը դարմանէ, յոց և Որթունեաց նախարարութիւնը կը յառաջնայ։

Ներսէս քաջ կը հասկնայ ազգային միութեան խորհուրդը և զօրութիւնը, և երբ Վաղէս Ինւզանդիոնէն, Ըապուհ Պարսկաստանէն և Արշակայ ու նախարարաց երկպառակութիւն Հայաստանէն՝ կործանումն կը սպառնան Ազգին և Աշկեղեցւոյն, կը յորդորէ կը յանդիմանէ, նախարարները թագաւորի հետ կը հաշտեցնէ և ուխտել կուտայ՝ Այ թագաւորը վարուի ուղղաթիամբ և նախարարները ծառային միամբութիամբ (1). Ապա ինքն խաղ սարկաւագեանդայ և Արշարանեաց եպիսկոպոս ձեռնադրելով և Հայոց աշխարհի վերակացութիւնը իրեն յանձնելով երկրորդ անդամ կ'երթայ Ինւզանդիոն Արշակայ թըլթով Վաղէսի սպառնալիքները զիջուցանելու։

(1) Խոր. Հաստած. Գ. Գև. ԻԲ. 1.

Ներսէս հալածանք կը կրէ Ա աղեսէն ,
արիոսականաց առաջարկութիւնը կը մերժէ ,
(օրոնք նորա ամեն խնդիրները կը խոստաւ
նային կատարել հոգեմարտն Ա ակեդոն ե-
պիսկոպոսի ձեռքով և վտանգէ ազատել Ե-
թէ յօժարէր իրենց դաւանակից լինիլ) կ'աքա-
սորուի մի ամայի և անմարդաբնակ կղզւոյ
մէջ , խտաբուտ լինելով և տագնապելով
՚ի սէր ազատութեան հայրենի աշխարհին :

Ներսէս Ա աղէսի մահէն զինի կ'ազատի
աքսորանքէն , կ'արժանանայ Ա Եծին Ծէ՛սոսի
մեծարանացը , կըներկայանայ կոստանդնու-
պօլսոյ տիեզերական յողովն , ուր , 381 թը-
ւականին , գումարուած էին 150 հայրա-
պետք . ապա կը դառնայ ՚ի Հայաստան . կը
լիէ սպանութեանց և անդթութեանց գու-
ժեր , (մանաւանդ Գնէլի սպանումն Արշա-
կայ ձեռքով և Աղոմպիտադայի թիւնաւորին
Փաւանձեմի սադրանք և Արջիւնիկ քահա-
նայի ոճրագործութեամբ ,) սիրաը կը ճմին .
կը յանդիմանէ , կը նախատէ և կը յորդորէ
՚ի սէր և ՚ի միութիւն :

Ներսէս երբ կը տեսնէ թէ՝ Ը ապուհ
Հայաստանը կ'աւերէ , բիւրաւոր քրիստո-
նեայք կը ջարդէ և կը գերէ . իսկ Հայոց
կուսակալներն փոխանակ աւերման առաջն
առնելու՝ Արշակէն կը բողոքեն , ամենքը կը
ժողովէ , կը համոզէ : որ հնազանգ լինին

Հայրենի թագաւորին և միաբան պատերազ
մին մոգեկրօնիկ Շապուհին դէմ, այս նը
շանաւոր խօսքերը աւանդելով. «Եթէ բիւր
չար իցէ Լոշակ, սակայն աստուածապաշտ
է. և եթէ մեղաւոր եւս իցէ, սակայն թա
գաւոր ձեր է»⁽¹⁾ :

Ներսէս կը տեսնէ Հայաստանի աղէտ-
ները, Շապուհի անդժութիւնները, Ո՞ե-
րուժանի ուրացութիւնն, եպիսկոպոսաց
կրտպանքներն, նախարարացուն կանանց խեղ-
գամնահ կախումն բերդերու պարիսպներէն.
սակայն չը յուսահատիր, Պապը կը թագա-
ւորեցնէ Լոշակայ տեղ՝ թէոդոսի օգնակա-
նութեամբ, Հայոց բանակի հետ պատե-
րազմի դաշտն կ'ենէ ՚ի Զիրաւ, ահոելի
ճակատամարտին ժամանակ՝ Կովաս լեռը կը
բարձրանայ Ո՞վսիսի նման, իւր հետ կը տանի
և Պապը. ինքը բազկատարած կ'աղօթէ Հա-
յաստանի փրկութեան համար, և զՊապ նոր
տեսարանով յուղզութիւն ածել կը ջանայ.
Պարսիկը կը յաղթուի, և Ո՞երուժան, փոխա-
նակ թագի, եռացեալ շամփրով կը պսակուի
Ամբատ ասպետէն :

Ներսէս կը կատարէ այսպէս իւր հայրա-
պետական պարտքը, աղքաները սփոփելով
իւրեանց խրճիթներուն մէջ, կայսրները ա-

(1) Բառ. • Դաշ. • Դ. • Գլ. • ԺԱ. •

մեքելով իւրեանց պալատներուն մէջ, զօրականները քաջալերելով պատերազմի դաշտին մէջ, թագաւոր և նախարար խրատելով և կշտամբելով ազգային ժողովներուն մէջ, և 'ի վերջոյ Պապայ ձեռքով կը թիւնաւորուի և կը թաղուի թիւն աւանի մէջ։

Ներսիսի մահէն յետոյ հայրապետ կ'ընտրուի (384ին) Յահակ Անազկերտացի, Ալբիանոսի ազգականութենէն, Հայաստանի մէջ ձեռնադրուելով և ոչ 'ի կիսարիա, վասն զի Ներսիսի ժամանակ համօրէն ազգի հաւանութեամբ արդէն դադրած էր կիսարիոյ մէջ ձեռնադրուելու սովորութիւնը։

Յահակին կը յաջորդէ իւր ազգականն Օաւէն, Արազդատատայ թագաւորութեան ժամանակ։

Օաւէնին կը յաջորդէ իւր ազգականն Ասպուրակէս, այն ազետալի միջոցին, երբ Հայոց թագաւորութիւնը արդէն երկու երբաժնուած, և կ'իշխէին Պապայ երկու որդէք քըն՝ Արշակ և Աղարշակ, մէկը յունական բաժնի մէջ, իսկ միւսն պարսկական։

Ե .

Քաղաքական և կրօնական վիճակ Հայաստանի . — Բըռ-
նաբարութիւն յունական և պարսկական . — Եցիու մեծ
ոխոժանք Եկեղեցւոյ և Հայրենեաց՝ Ասհակ և
Մեղսոց :

Մ Ի Ն Չ Ր Ե Ռ , մի կողմէն Հայաստանի
քաղաքային շէնքը կը տատանի և կը քայքա-
յի յունական և պարսկական քինախնդիր
հարատահարութիւններէն , միւս կողմէն Վշ-
րիստոնէութիւնը իւր փրկարար ազդեցու-
թեամբ հոգեւոր շինութեան հիմունքները
կ'ամրացնէ , Վշակառնի մոլի թագաւորաց և
խռովայոյզ նախարարաց դէմ հանելով ա-
ւետարանական այնպիսի ընտիր Վշակներ ,
որոնք առանց յուսահատելու աղէտներէ և
տագնապներէ , մի կողմէն կ'արտասուեն հայ-
րենեաց իշխանական զօրութեան բաժանման
և անկման վրայ . և միւս կողմէն արտասուք-
ները կը սրբեն և բարոյական ոյժը զօրացնել
կը ջանան : Վշա ընտիր Վշակներուն պա-
րագլուխ կը դասուին Աահակ Պարթեւ և
Վեսրոպ Վշաշտոց , որոնք իբրեւ ամոլք Հա-
յաստանի հոգեւոր մշակութեան , քրտամբք
և արտասուօք կը ցանեն մտաւոր զարգաց-
ման սերմերը և իրենց յաջորդաց համար
առատ և ուրախ հունձ կը պատրաստեն :

Աահակ, Անծին Ներսիսի որդին էր, Իշւ-
ղանդիոնի մէջ հելլենական դպրութեամբ
վարժուած, և համանման իւր հօրը՝ հայրե-
նեաց ցաւը զգացող և լուսոյ ծաւալման հա-
մար խորհող ու աշխատող։ Իսկ Անծորոպ էր
Անծին Ներսիսի աշխակերտը, Տարօնոյ Հա-
յեկաց գիւղէն, Վարդան անուն մի առա-
քինի մարդոյ դաւակ, որ Ներսիսի կենդա-
նութեան ժամանակ նօտար էր հայրապետա-
կան գործքերու . իսկ նորա վախճանէն գինի
Հայոց արքունական գիւանին ատենադպիր
կարգեցաւ, վասն զի գիտակ էր յոյն, ասո-
րի և պարսիկ դպրութեանց, մանաւանդ զի
հմուտ էր նա և աշխարհական կարգաց և
իւր մեծանուն ուսուցչի նման զինուորական
արուեստի մէջ վարժուած :

Աահակ Պարթեւ, Ասպուրակէս կաթու-
ղիկոսի մահէն զինի, Խոսրով գի և Ազգի
հաւանութեամբ հայրապետ կ'ընտրուի. բայց
օրովհետեւ պարսկական մոդակրօնութիւնը
իշխել կը ձգտէր ոչ միայն Հայաստանի քա-
ղաքային վարչութեան, այլ և կրօնականին,
ուստի նորընտիր հայրապետն ոմանց քսու-
թեամբ կ'ամբաստանուի և Խոսրովի հետ մի-
ասին Պարսից Դուռն կը կոչուին . սակայն
կ'ընդդիմանան և չեն երթար. Իշեաց թագա-
ւորն Շապուհ գ. (ըստ այլոց Իշտաշիր Բ.)
կը բարբորի դառնագոյն ցասմամբ և իւր Ար-

տաշիր որդին (ըստ այլոց Վ. ռամ) մեծ զօրքով Հայաստան կ'ուղարկէ . շատ նախարար ներ իշխանութենէ կը հանէ , Ա. Աահակը Հայրապետութենէ կը գագրեցնէ և խոսքովը կապելով՝ կը տանի և Լնյուշ բերդին մէջ կը կալանաւորէ , որոյ տեղը կը թագաւորէ Հայոց՝ իւր եղբայրը Վ. ռամշապտէն կամ Ատահրաշապուհ :

Հապուհին կը յաջորդէ Լրտաշիր , և Ա. Աահակ վերստին իւր հայրապետական պաշտօնը կը շարունակէ և կ'ուղեւորի առ Լրտաշիր՝ Հայաստանի գառն աղէտներուն գարման գտնելու համար : Հատ մեծարանք կը գտնէ Լրտաշիրէն , կամսարական և Լմատունի նախարարութեանց պատիւն կը վերահաստատէ (թէպէտ և նախնի կարգէն ատոր ,) Աամիկոնեան ցեղը նախարարութեան հդ կարգը կը բարձրացնէ , իւր Աահականոյշ գստեր ամուսինն՝ Համազասպ Աամիկոնեան սպարապետութեան կը հասցնէ և Լրտաշիր հրովարտակաւ կը գառնայ ՚ի Հայատան : Աակայն հաշտարարական և խողազափրական պայմանները երկարատեւ և հաստատուն չեն մնար , և չէին կարող մնալ այն տեղ , ուր իւրաքանչիւր նոր թագաւոր նորանոր կրից և փոփոխութեանց էր ենթակայ , առանց օրինաւորութեան հպատակելու . և ուր յունական և պարսկական առ

գեցութիւնները անդադար կը մաքսուէին իրարու ձեռքէ յափշտակել Հայաստանը և կամ իսպառ կործանել։ Պարսիկները կ'աւերէին յայտնի յարձակումներով. իսկ Յոյնք կը պատրէին օգնականութեան սուտ խոստումներով, և Պարսից հետ աւելի կը թըշնամացնէին :

Հայոց գրերու գիւտը կը կատարուի և Յունաց նենգ բարեկամութեան պատրուակը կը բացուի : Այնչդեռ Աահակ և Աեսրոպ Պարսից բաժնի մէջ անարգել վարժարաններ կը բանան հայրենի գալրութիւնը տարածելու, Յունաց բաժնի մէջ կ'արգելուին նոյնն առնելու : Պարսիկները կը կասկածին Հայոց քրիստոնէական կրօնակցութենէն Յունաց հետ, և Յոյնք կը կասկածին Հայոց քաղաքական միտումէն առ Պարսիկս . իսկ Հայք այս երկու կասկածոտ ազգաց մէջ անդադար կը տարութերին :

Վ ռամշապուհ կը մեռնի և Ա. Աահակ Պարսից Դուռը գնալով Խոսրովը կալանաւորութենէ կ'ազատէ և կրկին կը թագաւորեցընէ . բայց հազիւ թէ մի տարի կը տեւէ, կը վսիճանի և տեղը կ'անցնի Պարսիկ իշխան, այն է Յազկերտի որդին Շապուհ, որ քանի մի տարի մնալով իւր հօր հիւանդութեան պատճառաւ Պարսկաստան կը դառնայ և այն տեղ կը սպանուի :

Յազկերտ Աի տեղ կը թագաւորէ Վ ը
ռամ Բ . կը բարեկամանայ Յունաց հետ և
Հայաստանի մէջ կըսկսի հալածանաց հըր-
դեհը . վասն զի , ինչպէս Յունաց և Պարսից
իրարու դէմ ունեցած թշնամութիւնը , նոյն
պէս և իրարու հետ ունեցած ժամանա-
կաւոր բարեկամութիւնը , երկուսն եւս վը-
նասակար էին Հայաստանին . վասն զի թշնա-
մութեան ժամանակ կուսակցութիւններ և
պառակտումներ կը յարուցանէին . իսկ բա-
րեկամութեան ժամանակ՝ երկու տէրու-
թիւնքը իրարմէ ըրկասկածելով՝ առաւել կը
խստանային Հայոց ազգի վրայ , ուրայն ու-
րոյն վրէմխնդիր և քինախնդիր լինելով :

Ա . Աահակ Վ ռամի հալածանքէն խոյս
տալով՝ կ'անցնի Յունաց բաժինը , իւր հայրա-
պետական գործունէութեանը ապահով աս-
պարէզ գտնելու և հայերէն դպրութեան
ծաւալման համար աշխատելու : Աակայն
յունական ոխերիմ ատելութիւնը արգելք
կը լինի նորա հայրենասիրական սուրբ նպա-
տակին : Ա . Աահակ այս կոյր ատելութեան
առաջն առնելու համար՝ կը ստիպուի զլյես-
րոպ և իւր թոռն Վ արդան Ա ամիկոնեան
Բ իւզանդիսն դրկել թղթեր գրելով թէոդոս
կայսեր , Ա տտիկաս Պատրիարքին և Անատօլիս
գորավարին : Ա եսրոպ , որ իւր ճանապարհոր-
դութեանց մէջ անդամ միշտ կ'ուսուցանէր

և աշակերտաց հետ կը շրջագայէր, ներկայ
ուղեւորութեան ժամանակ, նոցա մէկ մասը
կը թողու Ո՞նիտինէի մէջ, օրինաւոր դաստի-
արակներու յանձնելով, իսկ միւս մասով հան-
դերձ կը մտնէ Բիւզանդիոն և կը ներկայա-
նայ Ծէռդոս կայսեր, կանխապէս մեծարանք
ու յանձնարարականներ ընդունելով Անատօ-
լիսէն և Ատտիկոսէն . Ծէռդոս զմայլելով
Ո՞նսրոպի հմտութեան և քաղցրաբարոյութե-
փրայ կը կատարէ նորա խնդիրները, Առաջին
և Գերդգօն Ա արդապետ (Աժիմիկոս կամ Ա-
խոմիք) անուանելով. իսկ զի արդան՝ ստրա-
տելատութեան աստիճանի կը հասցընէ .
Ո՞նսրոպ իւր հետ ունեցած աշակերտնե-
րը կը թողու Բիւզանդիոնի մէջ յունա-
րէն սովորելու համար և կը դառնայ Հա-
յաստան, հետը բերելով Ա . Աահակայ
թզմոց պատասխանները, որոց մէջ Ծէռ-
դոս և Ատտիկոս կը վշտանան և կը ցաւին,
որ հայկական գրոց գիւտի համար Ասորես-
տան դիմած են և նչ ՚ի Բիւզանդիոն, ուր
կը ծաղկէին ուսմունք ու գիտութիւնք և
կ'աթոռակալէր Յովհան Ասկերան :

Ո՞նսրոպ կը սկսի այնուհետեւ վարժա-
րաններ բանալ Արեւմտեան Հայաստանի
մէջ . իսկ Ա . Աահակ կ'անցնի Պարսից մասն,
Ամբատ և Ա արդան նախարարներու հետ,
անցած ազէտներու անյիշտ-թեան դաշնա-

գիր մի կնքել կը տայ վ ուամ՝ Ե ին, և վ ուամ
շապուհի 18 ամեայ որդին Արտաշէս կը
թագաւորեցնէ, որպէս զի չը բարձուի Հա-
յաստանի արքունական թագը :

Յետ ժամանակաց ԱՌորոպն եւս, աշա-
կերտներ թողլով Յունաց բաժնի մէջ, կը
դառնայ Արարատեան գաւառը և անտի ՚ի
Պողին, ուր առաջին անգամ վաստակած էր
վարդապետութեամբ :

Հատ ժամանակ չանցնիր, սաստիկ խոռ-
վութիւն կը յուզի նախարարաց մէջ՝ մանուկ
թագաւորի արարմանց դէմ, որոնք կը ծա-
նան Ա. Հայրապետն եւս մասնակից առ-
նելիւրեանց ազգասպանութեան խորհրդին
և չարախօսել առ թագաւորն Պարսից : Իսպ
հայրենի թագին պաշտպան՝ գթուտ հովիւր,
թէ և կը խոստովանի Արտաշիսի մեղկ և մո-
լի վարքը, սակայն կը յիշեցնէ միանգամայն
և Պարսից գազանութիւնը, կը մերժէ նաև
խարարաց գաւադիր խորհուրդը, այս նշա-
նաւոր խօսքերը արտասանելով. «Ինձ քա՞ւ լի-
ցի մատնել գայլոց զիմ մօլորեալ ոչխար և
ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն,
այլ գահավէժ առնելզ . . . Եւ զիարդ լի-
նիցի սյդ՝ փոխանակել զիմ ախտացեալ ոչ
խար ընդ առողջ գազանի, որոյ առողջու-
թիւնն է մեզ պատուհաս Դ (1) :

(1) Խոր, Գլ. ԿԳ. *

Նախարարները, փոխանակ յետս կասեն
ըստ աղգամատնութեննէ, կը միաբանին՝ թաւ-
գաւորութեան հետ հայրապետութիւնն
եւս գահավէժ առնելով Առուրմակ երեցի հետ
Պարսից դուռոն կ'երթան, կ'ամբաստանեն
թագաւորը և հայրապետը, երկուան եւս
այն տեղ կը կոչեն, և գահընկէց կ'առնեն.
առաջնոյն տեղ Ահա ԱՇխաշապուհ. պարսի
կը Արզպան ընդունելով, իսկ երկրորդին
տեղ՝ Առուրմակ երեցը, ՚ի վարձ իւր չարախօ-
սութեան :

Առուրմակ շուտով կը մերժուի և կը յա-
ջորդէ Շքքիշոյ, յորմէ տաղտկանալով երկու
կը բաժնուին նախարարները, ոմանք վերը
տին Ա. Ահակն կը խնդրեն, և ոմանք ուրիշ-
մէ կը : Պարսից թագաւորը այս երկպառա-
կութեան մէջ իւր յայտնի օգուտը նշմարե-
լով, երկու կուսակցութեան առաջարկու-
թիւնն եւս կը կատարէ : Ա. Ահակը վերը
տին կը հաստատէ այն պայմանաւ, որ միայն
վարդապետական և կրօնական գործերու-
խառնուի, և Շմուէլ անուն մէ կը կը կար-
գէ, որ Արզպանաց հետ այոց աշխարհի
հարկաց ժողովման և դատաստանական քըն-
նութեան մասնակցի :

Ա. Ահակ, Աշխակունի թագաւորու-
թեան բարձման համար սիրտը գառնացած
և հայրապետութեան աղէտներու վրայ կա-

բեվէր խոցուած, պքանչելի կերպիւ կ'ատե-
նաբանէ սյն ամենատխուր տւուր մէջ, ո-
րուն վրայ կրզմայի Վռամ, մոդերով հան-
դերձ, և կը հրամայէ արծաթ տալ ||. Հայ-
րապետին . սակայն նա մերժելով կը մերժէ
և համարձակապէս նախարարաց գահն ու-
պարսիկ մարզպանութեան բարձումն կը պա-
հանջէ: ||. Հայրապետն կը դառնայ ՚ի Հա-
յաստան, և երբ իւր հակաթոռն Շմուել,
մոլութեան ու ագահութեան մատնու ելով
և տաղուկալի դառնալով ժողովրդին, կը վախ-
ճանի, կը կին կը խնդրուի ընդհանուր հայ-
րապետութեան պաշտօնը վարել, բայց նա
յանձն չառնուր և սակաւ ժամանակին յե-
տոյ՝ հիւանդանալով՝ կը վախճանի Շլուր
գիւղի մէջ և կը թաղուի Տարօնոյ Աշտիշատ
աւանին մէջ: ||. Ահակին կը տեղակալէ
Աերտապ . բայց վեց ամսէն զկնի կը փոխի
աշխարհէս, որոյ երկրաւոր նշխարքն ոմանք
կը փափաքին իւր քնագաւառն տանել՝ ՚ի Տա-
րօն և անդ թաղել, ոմանք իւր նախկին վար-
դապետութեան տեղին՝ ՚ի Վողթն, և ոմանք
՚ի Վաղարշապատ, բայց ՚ի վերջոյ. Ահան
Ամատունի կը տանի իւր Օշական գիւղն,
մերձ Վաղարշապատու, և անդ կը հանդու-
ցանէ:

Այսպէս կը կնքեն իւրեանց բազմար-
դիւն կեանքը Հայաստանի Լուսաւորու-

թեան երկու ամողքն՝ Այահակ և Ա՛Եսրոպ։
 որոնք ուսումնասէր Վ ռամշապուհի հետ
 միասին հայրենի դպրութեան տաճարի
 նուիրական Լուստանին կը լինին։ Լ յապէս
 կը ներկայացնէ Այահակայ եւ Ա՛Եսրոպայ
 կենաց չքնաղ պատկերը համառօտաբան
 Խորենացին, Այահակայ համար ասելով։
 «Այահականացու ծնեայ, անմահ զիւրն յիշա-
 տակ եթող. պատուեաց զպատկերն (զաստ-
 ուածանմանութիւնն), պատկառեաց ՚ի կոչ-
 նականէն, փոխանորդեաց զկեանսն, և այս-
 քան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասու-
 թիւն իրիք մասն ՚ի ծերութենէն եղանիլ և
 ոչ յախտից սուընդունելու։ Իսկ Ա՛Եսրոպայ
 համար կը յաւելու թէ, «Դիերազանցեալքան
 զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առա-
 քինիք։ Բանզի ամբարտաւանութիւն և մար-
 դահաճութիւն ՚ի նորա վարա տեղի գտա-
 նել երբէք ոչ կարացին, այլ հեզ և լաւա-
 կամ և բարեխորհուրդ գոլով և երկնայնոցն
 զարդարեալ սովորութեամբք՝ զինքն բոլորից
 ցուցանէրև ասն զի գոյր տեսլեամբ հրեշտա-
 կական, մոտք ծննդական, բանիւք պայծառ,
 գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեար
 սալրասիւք անձառ։ խորհրդակցութեամբ
 մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող,
 սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձ
 բոյթ ու։

իսկ մեք, այսքանը խօսելով Ասհակայ և
ԱՌեսրոպայ այն գործոց վրայ, որոնք աւելի
զուգակից էին Հայրենեաց քաղաքական վի-
ճակին, անցնիք այժմ նոցա առաւել մեծ
սխրագործութեան վրայ խօսելու, այն է հայ-
րենի գրոց գիւտի, վարժարանական հաստա-
տութեանց և թարգմանական մեծարդիւն
պարապմանց :

Զ.

Բանասիրական հարեւանցի ակնարկ էին նշանագրաց
վրայ .—Հայագիր մատենագրութիւն Հայոց՝ որպէս ար-
գասիր կարեւորութեան քրիստոնեական աւաման .—
Պատմութիւն գիւտի Հայկական գրոց .—Քրիստոնէա-
կան և ուսումնասիրական առաքելութիւնք Մեսրոպայ .
—Նշանագիրք Վրաց և Աղուանից, որպէս պտուղ վաս-
տակոց Մեսրոպայ .—Ծարդմանութիւն Աստուածաշռունչ
Գրոց .—Գեղեցիկ տեսարան գաստիարակութեան և
կրթութեան .—Աշակերտք Սահակայ և Մեսրոպայ :

ՓՐԻՍՏՈՒԵԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ կարեւորու-
թիւնը ծնաւ Հայաստանի մէջ հայկական
գրաւոր մատենագրութիւնը, որ ՚Քրիստո-
նէութեան ամենամեծ պարգեւներէն մին է
մեր ազգի համար : Աւետարանական վար-
դապետութեանը հարկաւոր էր տեւակա-
նութիւն և խորարմատ հաստատութիւն,
և տեւականութեան համար հարկաւոր էին

վարժարանք, զորս բացին Ա. Դ'յոֆոր և ԱՇ-
 ծըն Ներսէս Բայց այս հայկական վարժա-
 րաններու իրական յառաջադիմութեան հա-
 մար բաւական չէին յունարձն և ասորե-
 րէն նշանագիրները, հարկաւոր էր անշուշա-
 բնիկ հայեցի գիր և դպրութիւն։ Ահա այս
 մեծ պիտոյքը լցուցին Ահակ և ԱՇերոպ,
 ուսումնասէր Ա ռամշապուհի թագաւորու-
 թեան ժամանակ, հայկական գրերը գտնե-
 լով կամ կանոնաւորելով։ Աակայն պատմա-
 կան բանասիրութիւնը, զանազան փաստե-
 րու վրայ յենլով, շատ հին դարերու մէջ
 անգամ կը խոստովանի հայերէն գրերու գո-
 յութիւն, թէպէտ և այլատարազ և անկա-
 տար։ Պատմական բանասիրութիւնը կը հա-
 ւաստէ, որ Ասիոյ ընդարձակ գաւառները
 գրաւող հին ազգերը՝ գրեթէ Եգիպտոսւոց
 նման խորհրդաւոր նշանագրեր կը բանեցնէ-
 ին, որոց ներկայ ժամանակիս բանասէրները
 Աթայեւ կամ Ինւետայեւ անունը կուտան։
 Եւ որովհետեւ, Հայք եւս նոյն ազգերու
 նման քաղաքականութիւն ունէին, անշուշտ
 նոյն Ինւետայեւ գրերը կը գործածէին։ Այս
 մասին կը վկայէ Փիլիսոփատոս և աշակերտք
 Ա. ԱՇերոպայ՝ Խորենացին, Փարավեցին և
 Կորիւն։ Այն տեսակ նշանագրաց կիրա-
 ռութիւնը Հայաստանի մէջ հաւանաբար
 Ա աղարշակէն առաջ կը համարուի։

Ավակայն այս բարելական կամ փիւնիկեան
նշանագիրքը, զորս շատ ազդեր գործ կըդնէին,
ինչպէս և Հայք, բաւական չէին Հայոց
լեզուի համար, վասն զի քսաներկու հատ
միայն էին : Ուստի և Հայք, մինչեւ Լու-
սաւորչի և ԱՌեարոպայ ժամանակները ստի-
պուած էին քաղաքական դիւանագրութեց
համար Պահլաւացի գրեր գործ դնել (և ոչ
Օենտի, ինչպէս ոմանք կը կարծեն), իսկ
եկեղեցական գրուածոց համար (Յունաց և
Ասորոց տառեր : Հւ սակայն այս ևս բաւա-
կոն չէր Հայոց լեզուի լրական հնչմանց հա-
մար . ուստի սոյն պակասութիւնն էր, որ
ԱՌեարոպ կը խորհէր լրացուցանել :

Այս տեղէն պարզ կը նշմարուի ուրեմն,
որ եթէ նախնի ժամանակաց մէջ Հայոց
գրեր ևս եղած են, անկատարութեան պատ-
ճառաւ իսպառ անգործագիր մնացած են :
Թէպէտ և մեր պատմաբաններէն ոմանք
կ'աւանդեն, որ ԱՌեարոպ միայն ձայնաւոր
գրերը գտած է . ոմանք կ'ասեն, որ նորա ջան
քը գլխաւորապէս մեր այբուբենին կրկնակ
գրերուն համար եղած է, որոնք օտար լե-
զուաց մէջ չեն գտնուիր և մեր լեզուի հնչ
ման ճոխութիւնը կը կազմեն . և ոմանք կ'ա-
սեն, տասն և չորս տառք միայն գտած է : Ա-
կայն այս անուրանալի է որ մեր գրերու ան-
թերի գիւտը, կանոնաւորութիւնը և կատա-

բեալ կիրառութիւնը Ասհակայ և ԱՌես-
րոպայ ջանից արդիւնք են, և այս արդիւնքը
քրիստոնէական ուսման կարեւորութենէն
ծնունդ առած լինելով՝ համարուած է որ-
պէս աստուածային մատանց գործ, որպէս
նուիրական միջոց սրտի և մտքի մշակու-
թեան, որպէս հաստատուն անօթ՝ մարդուն
հոգւոյ և լեզուի ճոխութիւնները երկար
դարեր կրելու և յաւերժացնելու։ Պատ-
մենք ուրեմն, թէ Բնչպէս կատարուած է
այս շահաւետ գիւտը։

ԱՌեսրոպ, շուրջ եօթն տարի, Հայոց ար-
քունեաց մէջ ատենադպրութեան պաշտօն
վարելէն զկնի՝ կ'անցնի Գողթան և Ախւնեաց
գաւառները և ջանադիր կը լինի տեղոյն
վայրենաբարոյ և խուժադուժ ժողովուրդը
կրթել աստուածային ուսման մէջ, բազմա-
թիւ աշակերտներ կը ժողովէ և յաւետ Ըս-
տուածաշունչ Գրոց սւսման մէջ վարժելու
կը ձգնի։ Աակայն Հայկական գրեր չը լինելու
պատճառաւ՝ շատ գժուարութիւններ կը
կրէ և խորին թափանցութեամբ կը տրտմի,
երբ կը տեսնէ թէ Ասորի և Յոյն բարբա-
ռով կը կարդացուի Ա. Գիրքը Հայաստա-
նեայց եկեղեցիներու և վանքերու մէջ։ Պօ-
ղոս առաքեալի հառաջանքները կը հանէ ԱՌե-
սրոպ իւր սրտի խորքէն։ “Աւիսոիւք խընդ-
րէի նզով լինել ՚ի Քրիստոսէ վասն աղդա-

կանաց իմոց և եղբարց ո , և կը փափաքի հայկական գրեր պատրաստել : Եյս սուրբ բաղծանիքով լցուած՝ կը դառնայ ՚ի Վ աղար շապատ , ու Ա . Ա ահակին կը հաղորդէ իւր սրտի իղձը , և նորա սրտին մէջ եւս նոյն եւ աանդը վառուած կը տեսնէ : Ա . Հ այրապետը ժաղսվ կը դռմարէ , խորհրդակցութք ՚ի կատար հանել այս նուիրական գործը , ուր ներկայ կը դանուի և Վ ռամշապուհ ու սումնասէր թագաւորը : Թագաւորը կը պատմէ թէ ինքն Հարէլ անուն մի քահանացէ լածէ , որ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մօտ կը դանուին Հայերէն նշանագիրք : Ճողովը կը խնդրէ թագաւորէն , որ մի մարդ զրկէ Դանիէլ եպիսկոպոսէն ստոյգ տեղեկութիւն ստանալու համար : Եյս նըսպատակաւ թագաւորական տանէն իմաստուն և փութաջան իշխան մի կ'որոշուի Վ ահրիճ անուն , որ թագաւորէն և եպիսկոպոսներէն յանձնարարական թղթեր առնելով , կ'իջնէ Ա իջագետք և այն տեղէն Հարէլ քահանացի հետ միասին կ'երթաց Դանիէլի մօտ : Ալ ստանան Դանիէլեան նըսպատիրքը , որ անշուշտ հին հայկական քսաներկու նշանագիրքն էին , բարելականէն կամ փիւնիկականէն առնուած , և հընչ մունքները սովորելով՝ կը դառնան ՚ի Հ այաւտան և կը ներկայացնեն թագաւորին և Ա .

Աահակին ու Ա'եսրոպին։ Աահակ և Ա'ես-
րոպ թագաւորի խորհրդով մանուկներ կը
ժողովեն և երկու տարի անդհատ կը ջա-
նան նոյն գրերու կիրառութիւնը ընդհան-
րացնել։ սակայն փորձով կը համոզուին, որ
այն գրերը հայկական հնչման չեն յարմա-
րիր, ուստի և կը խորհին, որ Ա'եսրոպ ան-
ձամբ երթայ Դանիէլի մօտ, աւելի տեղե-
կութիւն ստանալու համար։ Ա'եսրոպ իւր
աշակերտներէն աւելի մտավարժները հետը
առնկով կ'ուղեւորի դէպ ՚ի Ա'իջագետք։
Բաւական ժամանակ կը մնայ Դանիէլ եպիս-
կոպոսի մօտ և յուսացած օգուտը ըս կարո-
ղանալով քաղել՝ կը տրտմի ասստիկ մտատան-
ջութեամբ։ Ի՞այց որպէս զի, իւր ուղեւո-
րութիւնն անօգուտ անցած չը լինի, երկու-
կարգ կը բաժնէ իւր աշակերտները և կը
թողու անդ, որ մի կարգը՝ Ա'սորի, իսկ
միւսը՝ Յոյն դպրութեանց մէջ վարժին և
ինքը հետն առնկով իւր աւտոգագոյն աշա-
կերտները՝ Յովհան Եկեղեցացի, և Յովհէփ
Պաղնացի, կը խորհի Հայաստան դառնալ։

Ա'եսրոպ կը լիէ որ Եղեսիա քաղաքին
մէջ Պղատոս անուն մի հանձարեղ և ճարտա-
րամիտ մարդ կայ, քաղաքական դիւանին
վերակացու, որ կարող է իրեն ձեռնտու-
թիւնի Հայկական գրոց գիւտի համար։ Ա'ես-
րոպ ուրախանակով ուղղակի կ'երթայ Պղա-

տոսին մօտ ։ Իւր մոտաց խորհուրդը կը յայտնէ : Պղատոս ԱՌԵԱՐՈՎԱՅ հետ երկար խորհրդակցելէն յետոյ՝ կը խոստովվանի որ իւր կարողութենէն վեր է նորա բաղձանաց կառարումն , ուստի և կ'առաջարկէ իւր վարդապետ ԼԱՎԻՎԻԱՆՈՍԻՆ երթալ , գուցե օգուտ մի քաղեղու . ԱՌԵԱՐՈՎ յանձնարարա կան թղթեր կ'առնու թէ Պղատոսէն և թէ տեղւոյն ԱՏԱԲՈՒԼՅԱ կամ ՀԱՅԱԲԵԼՅԱ եպիսկո պոսէն և կ'իջնէ Փիւնիկաստան , ուր լսելով որ ԼԱՎԻՎԻԱՆՈՍ արդէն վախճանած է , շատ կը տրտմի : Այսկայն , առանց յուսահասութու , այն տեղէն կը դիմէ ԱՄՊՈԱԳԵՌ քաղաքը , ուր մեծ համբաւ ստացած էր ՀԱՌՈՒՎԱ նոս , ԼԱՎԻՎԻԱՆՈՍԻՆ աշակերտը , և դարձեալ յոյսը ունայն Ք'ԵԼՆէ :

ԱՌԵԱՐՈՎ այնուհետև մարդկային հնարա գիտութենէ յոյսը կտրելով՝ միմիայն աստ ուածային օժանդակութեան կը դիմէ . և այս երկիւղած ապաւինութեան ժամանակ , կ'աւանդեն պատմիչք , որ կը յափշտակաւի տեսլեամբ և իւր առաջին քար մի կը տեսնէ , որուն վրայ աներեւոյթ թաթ մի այլ և այլ տառեր կը գրէ , և որոց ձեւերը ԱՌԵԱՐՈՎի սրտին մէջ կը պատկերանան . ԱՌԵԱՐՈՎ իսկոյն կը դիմէ ՀԱՌՈՒՎԱՆՈՍԻՆ , իւր մորքի մէջ տպաւորուած կերպերը կը յայտնէ , և ՀԱՌՈՒՎԱՆՈՍ գրի առնլով վայելուզ ձեւեր կուտայ .

և այսպէս կը կատարուի Հայկական գրոց գիւտը։ Ի՞այց թէ Բնէ մեծութիւն ունի այս տեսլեան կերպաւորութիւն երկիւղած սրտերուն համար, և Բնէ նշանակութիւն բանասիրական հետազօտութեառ առջե, այդ կը թողունք որ իւրաքանչիւր մարդ ինքն խելամուէ։

(1)՝ Եսրոպ հայկական նոր գրերով կը ըսկսի թագմանել Աստուածաշնչէն Առակաց գիւրքը, իրբեւ նախապտուղ իւրքրտնաթոր մը շակութեան և ուրախանալով յաջողաւթեան վրայ՝ կը դառնայ ՚ի Հայաստան (1)։ Առամշապուհ թագաւորն և Այահակ հայրապետն սոյն ուրախական լուրն առնելով կը դիմա-

(1) Մեսրոպեան նշանագիրք։ (Բնշաբէս գիտած է Հ. Գ. Չ. Զ. Հայերէն դոր Պարինիւն մէջ) ըստ ձեւոյն զանազան կերպարանափոխութիւններ կրած են զանազան գարուց մէջ, և պէսպէս անուններ ստացած, որոց գլխաւորներն երեք են, Երիտագիր, Բալրագիր և Կոտրգիր։ Երկաթագիրը որ Մեսրոպայ հնարածն է, տեւած է մինչեւ Ժդ դարը, և Երկաթի գրչով կամ Երկաթի որսիտէ շինուած թանաքով գրուելուն համար Երկաթագիր կոչուած է։ աակայն թադ դարէն վերին և ստորին կողմեր կարճուելով կոչուած է նոյնպէս և Միջն Երիտագիր։ Իսկ նախնականները գլխագրի անդ գործածուած են։ Ընթերցման գիւրութեան համար Ժբարուածիր անուն, որ կամաց կամաց կանոնաւորուելով այժմեան տպագրութեան սովորական գիրն գործած են։ Բարձրագրոյն աւելի գիւրացած ձեւն է Կոտրագիր կամ Կոտրգիրն, որ հասարակ գրութեանց մէջ կը գործածուեր և այժմ կը գործածուի։ Միջն Երիտագիրը հնարուելով յետոյ Երիտագիր գործածութիւնը մասամբ գաղրած է, նոյնպէս և բոլորագրոյն գտնուելով յետոյ՝ Միջն Երիտագիրը խափան։

ւորեն Անսրուպին Խահ գետի ափանց վրայ, քաղմութեամբ նախարարաց և աւագանի մարդկան, կ'ողջագուրեն զնա անպատում հոգեզմայլութեամբ, և ցնծութեան երգերով թագաւորանիստ քաղաքն կը դառնան, ուր քանի մի օր կը տօնեն Տօն ցնծութեան հայկական նորագիւտ նշանագրաց և հայեցի դպրութեան դարագլխոյն համար :

Հրաման կը հանէ այնուհետեւ թագաւորն, հաճութեամբ հայրապետին վարժարաններ հաստատել ամեն տեղ, մանուկներ ժողովել հայերէն դպրութեան և գրչութեան մէջ վարժելու և յունարէն ու ասորերէն գրուած մատեանները հայագիր գաղափարելու : Իսկ Անսրուպ հրաման ընդունելով կ'անցնի Ամրաստան, տեղւոյն անկիրթ ժողովուրդը հրահանգելու, և թէ նոցա և թէ հանուր Հայաստանի օգտին համար ձեռնամուխ կը լինի Աստուածաշունչ Գրոց թարգմանութեանը, օգնական ունենալով Տիրայր Խորձենացին, Առշէ Տարօնացին և այլք, և անտի կ'իջնէ ՚ի Գողթան, իւր նախկին վարդապետութեան տեղին, և Շաբիթ իշխանի ձեռնտուութեամբ

ուած է : բայց Նոր գրի հնարուելէն յետոյ՝ Բողբագիւը ամենեւ ին վերջացած չէ այլ գործադրուած է ընտիր ձեռագրաց մէջ, Մեորուպեան նշանագրաց այս կերպարանափախութիւնը ակներեւ կը նշմուրուի զանազան դարուց ձեռագրաց մէջ :

կըսկսի քարոզել և ուսուցանել։ Գողթանէն կ'անցնի. Այւնեաց աշխարհը, օգնութիւն կը գտնէ Վասակ Այսակեան և Վաղինակ իշխաններէն, կը խրատէ վայրենագոյն ժողովուրդը և Անանիա Եպիսկոպոսը տեսուչ կը թողու այն տեղ կը թութեան խնամք տանելու համար։

Աակաւ ժամանակէն զիմի՝ կ'անցնի Վը բաց աշխարհը, նոցա համար նշանագրեր կը պատրաստէ, իւր աշակերտներէն հետնառնելով կըներկայանայ Վրաց. Բակուր թագաւորին և ԱՌովսէս Եպիսկոպոսին, մեծ ընդունելութի կը գտնէ բոլոր աշխարհէն. Զազայ անուն մէ կը Վրաց լեզուի թարգման որոշելով աշակերտաց բազմութիւն կը ժողովէ և նորա տեսչութեանը կը յանձնէ. իսկ ինքն վերագարձ այցելութիւն առնելով իւր աշակերտած աշխարհներուն, կը դառնայ ՚ի Հայաստան, Յունաց. բաժնի Հայոց համար խորհելու, որոյ պատճառաւ և Բիւզանդիոն կ'երթայ Աահակայ թղթերով, և անտի Հայաստան կը դառնայ, կատարումն ստանալով իւր ինդրուածոցն, որոց վրայ առաջ խօսեցանք արդէն։

Այնչդեռ անձանձրոյթ աշխատութեամբ կ'ուսուցանէ, կը գրէ Ա. Ա'եսրոպ և Եկեղեցական Հարց մատեանները կը թարգմանէ, Աղուանից Երկրէն Բենիստմին անուն

մէկը նորա մօտ կը գայ , որուն . նոր նշանաւ դրեր կ'աւանդէ և իւր Դանան և Ենովք աշակերտները հետը դնելով կրկին Աղուա նից երկիրը կ'ուղեւորէ , որ նոյն աշխարհին մէջ իւրեանց յատուկ գրերով դպրութիւն ծաւալեն : Յետ ժամանակաց Ա'եսրոպ . Յաւ նաց բաժնէն Վ աղարշապատ կուգայ Ա . Ամահակայ և թագաւորին մօտ , և անտի կ'անցնի Աղուանք , կը վարդապետէ և կ'ուսուցանէ , յորդպելով տեղւոյն Երեմիա եւ պիտիուպուը և Աքսվաղէն թագաւորը , որ խընամք տանին դպրութեան և կրթութեան , որոնք իսկոյն արքունի ծախքով դպրոցներ կը բանան , բազմաթիւ մանուկներ կը ժողովեն ուսանելու և ինքն Երեմիա եպիսկոպոսն Ա ստուածաշունչ Գրոց թարգմանութեան . կը պարապի : Ա'եսրոպ իւր Յովիա թան աշակերտը այն տեղ վերատեսուչ թողլով , կ'անցնի Վ բաց աշխարհը և ուղեւորութեան ժամանակնախնարդարդմանից խուրա և ապա Տաշրոց Աշուշա . իշխաններէն ձեռնտութիւննելով կրթարաններկըհաստատէ դպրութեան և ճշմարտութեան տարածման համար , և Ամուել եպիսկոպոսի տեսչութեանը յանձնելով վերատին կը դառնայ ՚ի Հայաստան :

Այնուհետեւ կը միանան Հայաստանի դպրութեան և գրագիտութեան երկու ա-

մոլքն՝ Աահակ և Ա՛եսրոպ, և կըսկաին միասին
գրել և թարգմանել և իւրեանց աշակերտ
ներէն երկուառ՝ Յովսէփ Պաղնացի և Եզնիկ
կողբացի Եղեսիա կ'ուղարկեն, որ ասորա
կան Հարց գրուածները հայերէնի դարձնեն
և եկեղեցական մատենից ընտիր օրինակներ
որոնեն : Բայց նոքա ուսումնասիրութեան
եռանդով վառուած կ'անցնին Իշւզանդիոն,
հելլենական դպրութեամբ և թարգմանու-
թեամբ պարապելու, ուր յառաջադոյն ու-
ղեւորուած էին նյոնպէս Յօվհան և Աքան,
և փոքր ժամանակէն յետոյ Հայաստանէն
կ'ուղեւորին նոյնպէս Դեւոնդ և կորիւն,
իրարու հետ կը միանան, կ'ուսանին մեծ եւ-
ռանդով, և ապա Աստուածաշնչի յունա
կան մի ընտիր օրինակ առնլով, ընդ նմին և
նիկիական և եփեսոսական ժողովոց կանոն
ները, կը դառնան իրենց հայրենիքը և իւ-
րեանց երանելի վարդապետաց կը մատու-
ցանեն նոյն գեղեցիկ աւանդները :

Աահակ և Ա՛եսրոպ Աստուածաշնչի նոր
օրինակն ընդունելով՝ կըսկաին Եզնիկի հետ
վերստին « Թարգմանել զմիանդամ թարգա-
մանեալն ո ընդ նմին և շատ եկեղեցական
գրուածքներ, և որպէս զի իւրեանց յա-
ւերժական աշխատութեան մէջ ամենեւին
թերութիւններ չգտնուին, խորհուրդ կը
կազմեն և աշակերտներ կ'ուղեւորեն Աղէք»

սանդրիա, Ատտիկէ և Մթէնք, ուր կը ծաղ
կէին աղէքսանգրեան և աթենեան իմաստա
սիրութեան հռչակաւոր դպրոցները, որոց
մէջ եօթն տարի կ'ուսանին Հայաստանի
ուսումնախնդիր զաւակները և իմաստափ-
քական ճոխ գանձերով կը դառնան ՚ի Հա-
յաստան . ուր թէպէտ յաշխարհէս փոխ
ռւած կը գտնեն ուսումնասէր Վ ռամշա-
պուհն և երանաշնորհ Աահակն ու Ո'եսրո-
պը, կ'ողբան և կ'արտասուեն, սակացն եր-
բէք չեն յուսահատիր, այլ անխոնջ հետե-
ւելով իւրեանց վարդապետաց շաւզին, կը
թարգմանեն և կը գրեն, և մանաւանդ որ նո-
ցանուիրական իղձը լրուցանելով Ատուա-
ծաշնչի թարգմանութիւնը կը զտեն և կը
կատարելագործեն, քաջ իմանալով որ յա-
ռաջադիմութեան խորհուրդը այն տեղէ,
ուր աշակերտը իւրեանց վարդապետաց՝ և
որդիք իւրեանց հարց՝ կիսակատար թողածը
կը շարունակեն և պսակել կը ջանան :

Հայկական նշանագրաց գիւտէն զինի՝ մի
ուսումնասիրական եռացումն և մուառաւ-
կան շարժումն կը յուզի ոչ միայն Հայաստա-
նի, այլ և Վ ըաց և Ա զուանից աշխարհներուն
մէջ . կը բազմանան վարժարանկ, կ'ամփի զար-
դացումն գպրութեան, կ'աղբերանան թարգ-
մանութիւնք հեղինակութիւնք, և կը ծա-
ւալին բանաւոր և գրաւոր վարդապետու-

թիւն և ուսումն՝ Քրիստոնէութեան, որուն
համար զմայլելով կ'ասէ ականատես պատ-
մագիրն կորիւն . « Յայրարատեան գաւա-
ռին 'ի կայս թագաւորացն և քահանայապե-
տացն բղևեցին Հայոց շնորհք պատուիրա-
նացն Աստուծոյ : Անդ կըթու-
թիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգե-
պատում գրոց : Անդ քաջալերութիւն յոր-
դորական վարդապետութեանն՝ առ 'ի յա-
ռաջադէմ ընտրութեան՝ պսակահաս քրիս-
տոսադիր կիտին : Անդ եռալ հոգւով առ-
տուածապաշտ ծառայութեամբ ո :

Այս ամեն բարեաց աղքերակն այն էր,
որ Վռամշապուհ իւր արքունական գանձը,
ցժը և ազգեցութիւնը աշխարհի յառաջա-
դիմութեան համար կը գործածէր, և Այսակ
ու Անեսրոպ նորա ջանիցն և փութոյն ար-
ժանաւոր կը հանդիսանային « Հայաստանի
վարժարանները բաւական չը համարելով
Հայոց տրամախոհ քաջուշեղ, փափկավանդ
և երկարոգի պատանիները Եղեսիա, կե-
սարիա, Աղքաքանդրիա, Աթէնք, Հռովմ
և Բիւզանդիոն կ'ուղեւորէին (ուր ուսմունք
և գիտութիւնք կը ծաղկէին), և ժամանակին
ուսումնականներուն մէջ համբաւաւոր և շա-
տերէն գերազանց կ'երեւէին Անցաղթն՝ Պա-
տիթ, իւր յունական իմաստասիրութեամբ,
յաղթութեան պարծանքը կը յափշտակէր »

Խոսրով, յոյն եկեղեցականաց մէջ, Ա. Բարս-
զի օրհնութիւնները կը կարդար : Ա' ամբը է
Ասկերերանի ճառերը կ'արտատանէր . իսկ
' լ ազար և այլք այնչափ խորամուխ էին յու-
նական գիտութեան մէջ, որ Ամենացի կոչ-
ուելու պարծանաց կ'արժանանային :

Պատմական յիշատակարանք, երբ Հա-
յաստանի հոգեւոր և մտաւոր վերակենդա-
նութեան պատկերը կը ներկայացնեն, ակ
ներերեւ կը նշմարուի, որ Աահակեան և
Ա' եսրոպեան վարժարաններէն շատ աշա-
կերտներ ծնած են, բայց սակաւուց ա-
նուններն միայն մեզ հասած են, որոնք
թարգմանիչ կ'անուանին և երկու կարգ կը
բաժնուին : Առաջին կարգէն նոքա են, ո-
րոնք նշանագրաց գտնուած ժամանակ բաւ-
ւական հասակաւոր էին և իւրեանց վար-
դապետաց գործակիցք՝ թարգմանութեանց
մէջ : Իսկ երկրորդ կարգէն նոքա են, որոնք
իւրեանց վարդապետաց մօտ վարժուելէն
զինի՝ ուղեւորեցան այլ և այլ բաղաքներ
կատարելագործուելու համար, և շատերը
իւրեանց վարդապետաց մահէն յետոյ դար-
ձան Հայաստան : Առաջնակարգ աշակերտք
կը համարուին՝ Յովսէփի ՚ի Ա սոյս Ձորոյ, Յով-
հան, ' լ եւոնդ երէց ՚ի Ա անանդայ, Եղիշիկ
կողբացի, Կորիւն, Առոշէ Տարօնացի, Տի-
րայր Խորձենացի, Յովսէփ Պաղնացի, Յով-

հան Եշեղեցացի , Ենովք , Դանան , Երեմիա սարկաւագապետ Աահակայ , Թաթիկ , Արձան Արծրունի , Աղան Արծրունի , Դագարիկ կամ Դազիկ , Խսկ կրտսերներն սոքա են Առվակ խորենացի , Ամբրէ Վերծանող՝ Եղբայր նորին , Դաւիթ Այսաղթ , Գիւտ , Յովհան Անդակունի , Եղիշէ . Դազար Փարպեցի , Եղբաս Անգեղացի , Աահակ , Յովհաննէս , Աբրահամ կամ Աբէլ , Անանիա , Յովհաթան , Խաչիկ կամ Խաչատուր , Անգրէաս , Թաթուլ , Վարոս : Երկու դասն եւս գլխաւորապէս աշխատած են Ա . Գրոց և Եկեղեցական գրուածոց թարգմանութեան մէջ : Ամանք իւրեանց վարդապետաց հետ՝ վարժարանաց և հաւատացելոց վերակացութեան պաշտօն վարած են : Ամանք կաթողիկոսութեան անգամ արժանացած . ոմանք ազգային քաղաքական հարատահարեալ ժամանակին՝ հայրենեաց և Եկեղեցւոյ պաշտպան ախոյեաններ դարձած են , և ոմանք ինքնագիր երկասիրութիւններ թողած են : Թարգմանութիւննք առանձինն եւ մէկուն անունը կը կրեն , ուրեմն և մենք ամենուն գործակցութեանը կը նուիրենք զայն . իսկ ինքնագիր հեղինակութեանց վըրայ ուրոյն ուրոյն պիտի խօսինք , որպէս Եկեղեցական մատենագրուց վրայ :

Է .

Աւետարանի իմաստութիւնը մարդկային իմաստութեան
հանգէպ .— Ըարժառիթ եկեղեցական Ժողովոց Շրեք
ափեղերական Ժողովք .— Ազգային Ժողովք հայոց ա-
ռաջին շրջանին մէջ :

Մենք տեսանք արդէն , Եկեղեցական
Պատմութեան առաջին շրջանին մէջ (ըստ
մեր բաժանման) որ հալածանքները կ'արդի-
լէին քրիստոնէից հրապարակական գումա-
րումներ ունենալ , ուստի և միութեան կամ
ժողովման կեդրոն միայն Դոհութեան կամ
Հաղորդութեան խորհուրդն էր , որ այն ևս
շատ անգամ ճաճուկ կը կատարուէր հե-
թանսսական հալածասիրութեան պատճա-
ռաւ : Բայց երբ հոլածիչ ինքնակալները ,
թագաւորները և իշխանները Քրիստոնէու-
թեան հեղ լծոյն տակ խոնարհեցան , այնու-
հետեւ հաւատացեալք իրաւունք ստացան ,
ոչ միայն ազգային մասն ւոր , այլ և տիեզե-
րական համագումար ժողովներ ունենալ զա-
նազան եկեղեցական խնդիրներու պատճա-
ռաւ :

Քրիստոնէութիւնը , պատերազմելով աշ-
խարհի նիւթական զօրութեան դէմ՝ այն է
մարմնաւոր տիրապետութեան , բռնակա-
լութեան և անփրաւութեան , կը դիմագրա-

ւէր մարտիրոսական բիւրաւոր զոհերով և
նահատակութեան արեան հեղեղներով։
Խակ պատերազմեցով մարդկային մտաւոր ու-
ժին դէմ, հարկ էր, որ դիմագրաւէ քրիա-
տոնէական իմաստութեամբ և աւետարա-
նական վարդապետութեամբ։ Առաջին պա-
տերազմը արտաքին էր, Նեթանոսութենէ
արծարծուած, որ փոխանակ տկարացնելու
զի՞րիստոնէութիւնն՝ առաւել կը զօրացնէր
և կ'ամրացնէր հաւատացելոց հոգեւոր կա-
պը, սէր առ Աստուած և սէր առ մարդիկ։
Խակ վերջինը ներքին պատերազմ էր, թե-
րակատար քրիստոնէութենէ կամ վայրա-
պար հետազոտութենէ ծնունդ առած, որ
կը քայքայէր հաւատացելոց միութիւնը և
հակառակութեամբ կը տկարացնէր։ Այս
վերջին պատերազմը կը շարունակուէր մա-
նաւանդ Հյունաստանին մէջ, ուր հեթանո-
սական իմաստասիրութեն և քոյիատոնէական
վարդապետութեան դիմահարութենէն մի
նոր խառնորդ ձեւանալով, շատերու սիրտե-
րը կը յուղէր և կը շփոթէր։ Նեթանոսական
իմաստասիրութեամբ վարժուածներէն ո-
մանք, քրիստոնէութիւնն ընդունելէն և
նաև եկեղեցական բարձր աստիճաններու
հասնելէն զկնի, դարձեալ վայրապար կը հե-
տազօտէին այնպիսի քրիստոնէական խոր-
հուրդներ, որոնք մարդկային մտաց ասհմաւ

Նէն շատ բարձր էին։ Իսկ ողջամիտ Հայրապետաներն և զգայունն Քրիստոնեայքն եւս, յանկալով այս աղէտներու առաջն առնուլ, ժողովներու և հետեւապէս վիճաբանութեանց կը դիմէին, որով աւելի կը զայրանար հակառակութիւնը և տեղի կը տար մեծամեծ խռովութեանց։ Արդարեւ՝ շատ գեղեցիկ յատկութիւն է ճշմարտութեան ծարաւը, ամեն բանի մէջ խոր թափանցելու եռանդը և ամեն բան ճշգրտելու քաղցը։ բայց բան կայ, որ կարող ենք քննել ու դատել, և բան կայ, որ միայն կարող ենք ըզգալ և ոչ քննել։ Վասն զի, ինչպէս մարդուս զգայարանքները (տեսանելիք, լսելիք և այլն) այլ և այլ պաշտօն ունին, նոյնպէս և մեր միւսին ու սիրտն, որոց միոյն պաշտօն միւսին փոխանակելով՝ ամեն բան կը խանգարուի։ Աչ թէ միայն Քրիստոնէութեան նկատմամբ է այս ճշմարտութիւնը, այլ և բնութեան մէջ անդամ՝ այնպիսի գեղեցիկութիւններ կան, որ զգալ միայն կարող ենք և ոչ պատմել կամ բացատրել։ Յունաստանի մէջ յուզուած մոլորութեանց և հակառակութեանց բուն աղբիւրն այն էր, որ սրտի պաշտօնը մտքով կը ջանային կատարեր այն է Աստուածային Արքորդութեան, Քրիստոսի Աարդեղութեան և Հոգւոյն Արքոյ Անորհաբաշխութեան անհաս խորհուրդ-

ները փոխանակ սրտով զգալու և սքանչաւ նալու, մտքով կ'աշխատէին քննել, ուստի և այլանդակ մտածութեանց մէջ կը մոլորէին։ կան, կան արդարեւ . ՚Վրիսաօնէութեան մէջ լուսաւորող ճշմարտութիւններ, գեղեցիկ պատուէրներ և երջանկաւէտ սկրդբունքներ, որոց քննութիւնը մարդուս միտքը կը լուսաւորէ, սիրտը կ'ազնուացնէ, հոգին կը պարարէ անողատում վայելչութեամբ, և աստուածանմանութեան սքանչելի ճաշակ կը մատակարարէ : ՚Կայց կան և գաղտնիքներ, որոնք Աստուծոյ գիտութեանը միայն պահուած են, և որոց քննութիւնը անհասէ մարդկային մտաց, և որչափ ջանաց քննել, այնչափ պիտի շփոթի և տատամնի և ւրաքանչիւր քրիստոնէի պարտքն է խորհիլքնելինչ որ յայտնած է Աստուած մարդկային մտաց լուսաւորութեան և կատարելագործութեան համար . և դարձեալ իւրաքանչիւրի պարտքն է զգալ և խոնարհիլ ամեն խորհուրդներու առջեւ, որոց բանալին Աստուծոյ ձեռքն է, և ոչ մարդկային մտաւոր հետազոտութեան : Ա ասն զի պարզապէս վճռուած է Ա. ՚Վրքի մէջ. « ՚Օածուկքն Տեառն Աստուծոյ մերում՝ և յայտնիքն՝ մեզ և որդւոց մերոց ո (1) : Այս է ա-

Համ Երարշի և արարածի մէջ եղած գեղեցիկ
սահմանը—ծածուկները Եստուծոյն թողուլ,
իսկ յայտնուածները ուսանիլ, ճանաչել և
իւր արդւոցն ուսուցանել։ Ա ասն զի Եստ-
ուած այնքան ճշմարտութիւններ և պատ-
ուերներ յայտնած է, որոնք բաւական են
բովանդակ մարդկութիւնը երջանկացնել։

Եթէ այս սքանչելի սահմանը պահպա-
նուեր, ամենեւին պիտի չը լինէին այն ու-
րացութիւնները, հերետիկոսութիւնները,
աղանդները և հերձուածները, այն հրէշա-
կան մտաց ծնունդները, որոնք Քրիստոնէ-
ութեան դէմ կը յաճախէին և Եկեղեցւոյ
ողջամտութիւնը կը տագնապէին, որով և
քրիստոնէական սէրը և ներողութիւնը կը
նուազէր և ահազին գժտութիւնք, նզովք
և բանադրանք տեղի կ'ունենային։ Ոմանք կը
գլորէին և ոմանք կը կանգնէին, ոմանք կը յի-
մարէին և կը գայթակղէին, և ոմանք կ'իմաստ-
նանային և կը զօրանային։ Ա ասն զի, այնպէս
իսկ էր Քրիստոնէութեան խորհրդաւոր կը
նիբը — Հաւատացելոց համար իմաստու-
թիւն, փրկութիւն և զօրութիւն. իսկ անհա-
ւատից համար՝ յիմարութիւն և գայթակ-
զութիւն։ Ա ասն զի, վաղուց արդէն գու-
շակած էր Աիմէօն Օներունին, գիրկն առ-
նելով Քրիստոնէութեան հիմնադիր Ա ա-
նուկը. «Աս կայ ՚ի գլորումն և ՚ի կանգնումն»

բազմաց Աս կայ ՚ի նշան հակառակութեան ո՝ (1) :

Այս հակառակութիւններ, որ կը յուղուէրէ ՚իրիստոսի Աստուածութեան վրայ և երկար տարիներ կը տեւէր, և գուցէ պիտի տեւէ մինչեւ ՚ի կատարած աշխարհի : Այս հակառակութիւնն էր, որով յունական և հըսովմէական եկեղեցիները կը տագնապէին : Ո՞ի կողմէն հերետիկոսները կը բազմանային, և միւս կողմէն ժողովթերը մի զկնի միւսոյ կը յաջորդէին : Բայց մեք անդէպ համարելով, քանի մի եկեղեցական պատմագրաց նըման, հերետիկոսական մոլորութիւնները մի առ մի թուել, որոնք տաղակալի են լսելեաց, և նոյն իսկ հերետիկոսները, որպէս ուկարամիտ մարդիկ, առաւել կարեկցութեան՝ քան թէ թշնամանաց և դատապարտութեան արժանի, (վասն զի իւրեանց անձաշակ մնալըն ՚իրիստոնէութենէ՝ արդէն մեծ դատապարտութիւն է իւրեանց անձին,) համառօտիւ կամփոփենք մեր խօսքը միայն երեք Տիեզերական Ժողովոց վրայ, որոց գումարմամբ մերժուած են երեք ամենամեծ մոլորութիւնք՝ ՚իրիստոսի Աստուածութեան գէմ, Անձնաւորութեան դէմ և Հոգւոյն Արքոյ Աստուածութեան դէմ :

Առաջին տիեզերական յողովն գումարեցաւ Իշխանացւոց Կիկիա քաղաքին մէջ, 325 թուականին Քրիստոսի, 318 Հայրապետաց ժողովմամբ, ուր մերժեցաւ Արիոսական ուրացութիւնն ընդդէմ աստուածութեան Քրիստոսի, խմբագրուեցաւ Հայություն Հանդանակն և սահմանեցան ինչ ինչ եկեղեցական կանոններ :

Երկրորդ տիեզերական յողովն գումարեցաւ Կ. Պօլիս մայրաքաղաքին մէջ, 381ին, 150 Հայրապետաց ժողովմամբ, ուր հերքուեցաւ Ուակեդոնեան հոգեմարտութիւնը կամ մալուրութիւնն ընդդէմ Հոգւոյն Արքոյ:

Երրորդ տիեզերական յողովն գումարեցաւ Կոփացւոց Կաֆեսսոս քաղաքին մէջ, 431 թուականին Քրիստոսի, 200 Եպիսկոպոսաց ժողովմամբ, ուր մերժուեցաւ Կեստորեան մոլորութիւնն ընդդէմ անձնաւորութեան և որդիութեան Քիսուսի Քրիստոսի :

Հայաստանեայց Եկեղեցին ընդունեց այս ժողովներէն Հաւատոյ Հանդանակն և ինչ ինչ կանոններ Ո. Որիստակիսի, Ուծին Կերպիսի և Թարգմանչաց աշակերտաց ձեռքով, որոց վրայ արդէն խօսած ենք : Բայց որովհետեւ մեր Եկեղեցին իւր առաքելական ուղղութեան վրայ կը յարատեւէր, բալրովին անմասն այն մոլորութիւններէն ուրնք կը յուղուեին այլ և այլ տեզեր և աշ-

խարհ ամենայն կը խոռովովէին, ուստի Նիկիական Հանգանակն ընդունելէն զինի՝ իւր առաքելասարաս | ուստաւորչի ձեռքով յաւելցուց իւր համառօտ և պարզ հանգանակը. — «Իսկ մեք (Հայք) փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով (Արբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն, Հօր և Արդւոյ և Հոգւոյն Արբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ո: Վասն զի առաքելական Հանգանակն եւս այսչափ էր. «Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Արբոյ ո: և Նիկիական Հանգանակի մասունքն զանազան մոլորութեանց դէմ յաւելցած էին, որոնք Յունաստանին մէջ կը յուզուէին և ոչ Հայաստանի: Ճողովական կանոններն եւս յապաւեցան և մեր Եկեղեցւոյ վիճակին յարմարեցան, վասն զի շատ կանոններ այնպիսի իրողութեանց կը վերաբերէին, որք Հայաստանեայց Եկեղեցւոյն նկատմամբ նշանակութիւն չունէին (1):

Նիկիական Ճողովի մէջ, երկար վիճաբանութիւններէն յետոյ, Պատկական տօնախըմբութեան ժամանակն եւս փոխած էին. բայց մեր Եկեղեցին դարձեալ նոյն նախնական աւանդութեան վրայ ընթացաւ, որով

(1) Խոր. Բ. Գեղք. ԳԵ. ԶԹ. Դ:

մինչեւ ցայն վայր ընթացած էր քրիստոնէական բովանդակ Եկեղեցին ըստ առաքելական տովորածթեան :

Բաց ՚ի երեք տիեզերական ժողովներէն, վանագան ժամանակաց մէջ գումարեցան այլ ժողովներ եւս, թէ յլլրեւելս և թէ յլլրեմուտս, որոց շատերը, թէ և Տիեզերական անուն կը կրեն, բայց և ոչ կէս — տիեզերական են, ըստ որում ուղղակի յունական և հռովմէական եկեղեցիներուն կը պատկանին : Այս տեսակ ժողովներուն մէջ նշանաւոր է մանաւանդ Քաղկեդոնի ժողովն, իւր խը ռովայոյզ անցքերով, որ գումարեցաւ Ափեսոսի Ճողովէն յետոյ, 451ին : Այս ժողովի մանրապատում դէպքերը կարգացողը սոսկմամբ կը պաշարուի . վասն զի քրիստոնէական երկիւղածութիւնն չէ, որ կը պայքարի հաւատոյ պաշտպանութեան համար, այլ իշխանասիրութիւնն և գահասիրութիւնը : Նախնի հայրապետաց անփառասէր և ներող ոգին չէ որ կը գործէ, յորմէ մոլորամիտք կը պատկառէին եւ կայսերք անգամ կ'ակնածէին, այլ ոգին գահերէցութեան և ձգտումն հալածասիրութեան, որով ժողովուրդը կը խռովի և ՚ի սիրոյ կը ցամաքի : Այն ժողովի գումարմանց խռովութիւնները տարիներ կը տեւեն, յորոց մէջ զանազան կուսակցութիւններ, այն է ՚ի տակը

բռսեանք , | Եւոնեանք , Փլարիանոսեանք ,
և այլք , մի գմիւսն կը զնովեն , կը մերժեն և
մինչեւ անդամ կ'աքսորեն : Քանի մի թա-
գաւորներ , այն է Ծակողոս Փոքր . (1) արկիա-
նոս , | Եւոն և Օւնոն կը ստիպուին շարու-
նակ , երբեմն այս և երբեմն այն կուսակցու-
թեանը պաշտպան հանդիսանալ : Ճողովի
գումարութերը շատ անդամ զօրախումբով
կը պաշարուին՝ ՚ի շնորհս այս ինչ և այն ինչ
կուսակցութեան , վասն զի , բաց ՚ի աքտորնե-
րէն , սուպանութիւննք եւս կը լինին այս ժողո-
վին պատճառաւ : Երբեմն կ'ընդունուի այս
ժողովը յիշեալ կուսակցութիւններէն , և շատ
անդամ եւս կը մերժուի և կը նզովուի որ-
պէս շեղեալ քրիստոնէական ճշմարիտ հո-
գիէն և ուղղադաշանութենէն (1) : Եւ ահա
այս առթիւ , Հայք ջանացած են միշտ հե-
ռի մմալ Քաղկեդոնի ժողովի մասնակցու-
թենէն :

Եւ եթէ հազիւ ուրեմն մեր վարդա-
պետներէն ոմանք , կամ ՚ի շնորհուկս (Յու-
նաց , կամ քաղաքական օգնութեան ակնկա-
լութեան յուսով , և կամ ձանձրալի թախան-
ձանքէ և ստիպմունքէ բռնադատեալ , հա-

(1) Այս ժողովի խռովայշող անցքերուն վրայ երկարո-
րէն կը խօսին Բարոնիոս , Ֆէօրի և այլ եկեղեցական պատ-
միներ , նմանապէս և Միսիթարեան ուխտէն Հ . Պօղոս
Յովհաննեան , ի Պատմութեան պէտերայն ծովուց :

մակրութիւն ցուցած են Քաղկեդոնի ժողովի մասին, այն եւս միշտ անընդունելի եղած է մեր ընդհանուր Ազգի և Եկեղեցւոյ կողմէն, վասն զի բովանդակ Ազգի կամ Եկեղեցւոյ համակամութենէն չէ բղխած։ Որովհետեւ ակներեւ կը տեսնենք մեր ազգային պատմագրութեան մէջ, որ ոչ թէ միայն բազմաթիւ պատմաբանք (1) զայրութիւ կը խօսին Քաղկեդոնի ժողովին վրայ, այլ և Եկեղեցին զանազան դարսուց մէջ յայտնի ժողովներով մերժած է, որոց վրայ առանձինն պիտի խօսինք՝ ըստ տեղւոյն և ըստ ժամանակին։

Պատմութեան անաշառ դատաստանը կը համոզէ զմեզ խոսուալանիլ, որ Հայաստանեայց Եկեղեցւոյն բոնած գիրքը Քաղկեդոնի ժողովին նկատմամբ խիստ օրինաւոր է։ Կախ՝ որովհետեւ Հայաստանեայց Եկեղեցին իսպառ անմասն լինելով այն մօլորութիւններէն, որոնք Յունաստանի մէջ կը յուղուէին, և իւր առաքելական ուղղութեամբ ընթանալով, հետեւապէս կարօտութիւն չունէր բնաւ Քաղկեդոնեան ժողովի հակառակութեանց մասնակցիլ և այսինչ կամ այն ինչ որոշման հպատակիլ։ Երկ-

(1) Մովսէս կաղանկատուացի, Ստեփանոս Սիւնեցի, Դեւոնդ, Յովհաննէս կաթողիկոս, Թովմայ Արծրունի, Ասողիկ, Մատթէոս Ռուհայեցի, Ուխտանէս և այլք։

լորդ՝ որովհետեւ Քաղկեդոնեան ժողովի
 շարժառիթն քրիստոնէական հաւատոյ և
 վարդապետութեան պաշտպանութիւնն չէր,
 այլ յունական և հոռվմէական եկեղեցաւ
 կանաց գահերեցութեան փառասիրութիւնը,
 որոնք, նախագահելու համար, աշխարհ
 կը յուղէին և քրիստոնէական եղայրսիրութիւնը
 բառական տարրապարտ վիճաբանութեանց կը զօհէին։ Եւ երրորդ՝ որովհետեւ
 արտաքոյ քրիստոնէական ազատասիրութեան,
 Քաղկեդոնեան ժողովն ստացած էր տեսակ
 մի մոլեկրօնական յատկանիշ, ձգտելով նը
 ուաճել այս ինչ կամ այն ինչ եկեղեցւոյ ինք-
 նուրոյն գոյութիւնը և հպատակեցնել ոչ
 թէ Քրիստոսին, այլ Հռովմայ Պապին կամ
 Յունաց Պատրիարքին։ Իուն պատճառն
 այս էր, որ Հայք չը կամեցան երբէք մաս-
 նակցիլ Քաղկեդոնեան ժողովին։ Թէ պէտ
 ոմանք յառաջ կը բերեն, իբր թէ Հայք
 Վարդանանց պատերազմին պատճառաւ էր
 որ չը կարացին իրենց կողմէն վարդապետ
 կամ եպիսկոպոս մի ուղարկել նոյն ժողովն,
 սակայն այս կարծիքը պատմական քննութեան առջեւ ամենեւին արժէք չունի։
 Վասն զի, մի վարդապետի կամ եպիսկոպոսի բացակայութիւնը Վարդանանց պատերազմին արդելք չէր կարող լինիլ, և եթէ
 Համամիտ լինէին նոյն ժողովին, գէթ

պալստրաց գործերուն մէջ իւրեանց համա-
կառմիւնը կը յացանիին, (մանաւանդ որ շաւ-
բաւնակ կը ատիպէին Յաւնաց և Հառվելայից
և ոց կողմէն,) և ոչ թէ մերժելով կը մերժե-
ին ։ Բնշպէս որ մինչեւ ցայսօր ևս կը մերժեն ։

Իաց ի Նիկիոց, կ. Պղսց և Ավեսասի ե.
քեզ տիեզերական ժողովներէն, զգոս կըն-
դունի և կը տօնէ Հայուստանեաց Ակեզեցին
առաջին շրջանին մէջ կատարուած են Հայոց
ազգային առանձին ժողովներ եւս, այն է
կամ կաթողիկոսաց ընտրութեան, կամ Ա-
կեղեցւոց պայծառութեան և կամ որ և ի-
ցէ ազգային կարեւար գործոց համար ։ և
այս ժողովներն եւս գումարուած են Եկե-
զեցականներէ և աշխարհականներէ, առանց
խարութեան ։ Որովհետեւ երբէք մեր Աղ-
դի և Ակեղեցւոց օգուտը իրարմէ շեն բաժ-
նուած, Ակեղեցին Աղդ համացուած է, և
Աղդը Ակեղեցի ։ Խողով կաթողիկոսական
ընտրութեան ժաղովները, որոնք իւրաքան-
չւար կաթողիկոսի ընտրութեան համար կա-
տարուած են, առաջին շրջանին մէջ եղած
ազգային ժողովներն հետեւեալներն են :

1. Վարարշապատու ժողով Ա. որ գու-
մարեցաւ 325ին, Պուաւորչի և Տրդատաց
ժամանակ, Ամիկիական ժողովոց Հանդանակի
և կամոնաց ընդունելութեան և նկատողու-
թեան մասին, ուր. Ա. Հայրապետն՝ Հա

յատանեաց Եկեղեցւոյ հոգւովն կնքեց
Հանդանակը Ախակ մեք փառաւորեսցուքնո,
յաւելցնելով և կանոններն եւս յարժարեցոյց
մեր Եկեղեցւոյ պիճակին:

2. Եշտիշատու ժողով Ա. որ գումարեցաւ 365ին, Ոնծին Եերախի և Եցակաց
ժամանակ, անկեշանոցներ, հիւրանոցներ
վանքեր և մենանոցներ չինելու համար, և
մերձաւորաց ինամութիւնն ու մեռելոց
վրայ եղած հեթանոսական կոծումները վեր-
ջացնելու համար, որոց մասին արդէն ըն-
դարձակ խօսած ենք:

3. Վաղարշապատու ժողով Բ. որ գու-
մարեցաւ դարձեալ Ոնծին Եերախի հայ-
րապետութեան ժամանակ, որով և ասհման-
ուեցաւ որ Հայոց կաթողիկոսն Եղիի եպիս-
կոպոսներէն ձեռնադրուի և ոչ կեսարիոց ե-
պիսկոպոսէն: Ոյ ժողովի մասին կը խօսին
Քաղաք և աւելի ընդարձակօրէն, Եյուլիան-
նէս կաթողիկոս և Եպարքան պատմի, կամո-
զիկոսական դիւաններէն: և գաւաղանագրե-
րէն առնլով:

4. Վաղարշապատու ժողով Գ. որ գու-
մարեցաւ 333ին, Նոյնպէս Ոնծին Եերախի
հայրապետութեան ժամանակ, ուր թագա-
ւորն, նախարարք և իշխանք ուխտեցին սի-
րով և աստուածապաշտութեամբ վարիլ և Եց-
գի ու Եկեղեցւոյ բարօրութիւնը ըլ զահել

անձնական կրիչ , ոյլ իրարու հետ ունեցած պահապահը պարտղերը անթերի կատարելը միտքեան և գորութեան ամբարտակ կանգնել արտաքին թշնամեաց դէմ :

5. Ա աղարշապատու ժողով Դ. որ գումարեցաւ Ա. Ասհակայ հայրապետութեան և Վ. ռամշապուհի թագաւորութեան ժամանակ , 402ին , հայկական նշանագրաց պատրաստութեան համար , որպէս ոչ ազգային գրադիտութիւնը զարգանաց և ծագվել Հայաստանի մէջ , և Հայաստանեաց Լոկողեցին հայկական ընթերցուածներով պայծառանաց :

6. Ա աղարշապատու ժողով Ե. որ գումարեցաւ 426ին , դարձեալ Ա. Ասհակայ հայրապետութեան ժամանակ , ուրը ընդհանուր կրուեցան եպիսկոպոսաց , քորեպիսկոպոտաց և քահանացից , և կանոններ իսկապրուեցան եկեղեցական բարեկարգութեան համար , թէպէտ և այս կանոններէն մի քանիսը Լուսաւորչի ժամանակին կ'ընծայուին :

7. Ե շափշատու ժողով Բ. որ գումարեցաւ 432ին , երբ Ա. Ասհակ դարձաւ Պարսկաստանէն և ցանկացաւ իւր հօտը ապահովել բարեկարգութեամբ : Եյտ ժողովի մէջ կարգացուեցան Լովեսոսի ժողովի կանոններն (զորս բերած էին թարգմանիչ

աշակերտաները) և մերժուեցաւ՝ Ա, Ես առողեանն
մոլորութիւնը :

8. Աշտիշատու ժողով գ. որ գումարեւ-
ցաւ 435 ին, դպրէեալ Ա. Ասհակայ ժաման-
նակ, ժողովունքով՝ Ա, Ես առողեան մօլորութենէ-
զուու շայնելու համար ։ վասն զի Ա, Ես առողի
վարդապետ Թէոդոր Ա. ուստուեատացւոյ և
Դիտքոր Տարսոնոցւոյ գըքերը պարակերէն
ասորերէն և հայերէն թարգմանուելով զա-
նազան տեղեր սփռած եին Ա, Ես առականնք :
Խստի Աշտիշատու ժողովի գումարմամբն աչ-
ռաջն առին, « Օ ի մի ՚ի լուսուոյ վորդա-
պետութիւն ծուխ ինչ սատանայական յա-
րիցեն, ինչպէս կ'ասէ Կորիւն : Այս ժողովի
մէջ մի թուղթ եւս գրուեցաւ Ա. Պօլոց
Նորընտիր Վրուկզ Պատրիարքին և աշակերտաց
ձեռքով ուղարկուեցաւ ՚ի կ. Պօլիս, որոց
մասին գոհանապով յիշեալ պատրիարքին ու-
րախական պատասխան գրեց :

Բ.

Վարդապետութիւն Ց. Գրոց յաղագս Աստուածային
Բնութեան և Ս. Երրորդութեան :

Տիեզերական և աղդային ժողովներու
վրայ այստափ խօսելէն զիսիհ համառօտեննք այ-
ժըմ Ա. Գրոց վարդապետութիւնը Ապուռ-

ծային բնութեան վրայ . քանզի եթէ . ծանր է և
դառն մարդկային . ավարութենէ ծագած մո ,
լորութեանց վրայ խօսիլին ; ընդհակառակն՝
շատ . քաղցր է և միմիթարական . Ա . Գրոց
յայտնած ճշմարտութեանց վրայ ճառելն ,
որ միակ աղբերակն է անտրաստ վարդապե-
տութեան , և որուն միշտ ապաստանած են
եկեղեցական . Ա . Հարք հաւատոց պաշտպա-
նութեան համար :

Խուրք Գիրքը կ'ուսուցանէ Ըստածային
բնութեան վրայ երկու բան . նախ՝ որ Ըստուած
մի է և չը կա այլ Անտուածքաց ՚ի նմանէ . Ա ,
և երկրագունք որ աստուածքացին բնութիւնը
հասարակ է Նոր , Որդւոյ և Նոդւոյն Որրւ
բոյ , և այս երեք անձինք ունին մի Ըստուա-
ծութիւն : Այս է քրիստոնէից հաւատոր .
համածայն բացայացտ քանից . Ա . Գրոց Չ .
Այս Երրորդութիւնն է հիմն քրիստոնէա-
կան հաւատոյ , և երեք անձինք ունին մի
ներգործութիւն մեր փրկութեան համար ,
բայց զանազան կերպով . այն է – հԱՅՐՆ կր
կոչէ զմեզ և կը մօտեցնէ իւր Որդւոյն .
զոր ՚ի յաւիտենից ծնաւ և որոյ գալուստը
պատրաստեց : Որդիւն եկաւ երկնքեն . միա-
ցաւ մարդկային բնութեան հետ , որ մեզ

Ա 8 . Օրին . Զ . 4 - Եփես .

Դ . 6 .

Ջ 8 . Կարն - Ժ Կ - Ա Պ Ե .

Ա . 2 սուս . Ցով . Ե . 7 .

— Մաս . Իլ . 19 .

Ջ 8 . Ցով . Զ . 4 ։

Կ մեզաց փրկէ և մեր հոգւոյն տայ կետք
յաւիտենական (1)։ Եւ չոգին ՍՈՒՐԲ մեր
Նորոգիչն է, որ վերստին հաստուտեց մեր
մէջ Աստուծոյ նմանութիւնը, ընդունակ
առնելով Աստուծոյ տուած փրկութեանը (2)։

Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ, որ ինչպէս
աստուածային բնութիւնը հասարակէ երեք
անձանց, նոյնպէս և աստուածային կատա-
րելութիւնները, այսինքն Հօր ունեցած կա-
տարելութիւնները ունին հաւասարապէս և
Որդին և Սուրբ Հոգին, օրինակի համար՝
(Յաւիտենականութիւն և Անմահութիւնն),
Ամենակարողութիւն (4). Ամենագիտութիւնն,
Ամենուրեքութիւն (6). Արարչագործութիւն (7).
Նախախնամութիւն (8). Անփոփոխութիւնն (9).
Աստուածային պաշտօն (10) և այլն։

Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ, որ Քրիստոս

- | | |
|---|---|
| (1) Յով. ԺԴ. 6: | ՃԼ. 7—8.—Մաս. |
| (2) Յով. ԺԶ. 13—Կոբ.
ԺԲ. 3: | ՃԼ. 20.—ԽԸ. 20. |
| (3) Յով. Ը. 58.—Յայտ.
Ա. 8: | ՃՀ. Ա. 1.—ՍԱՂ. ԼԲ. |
| (4) ՃՀ. ԺԷ. 1.—Մաս. | 9.—ԵՐԻ. ԺԱ. 5.—ՅՈՎ. |
| ԺԹ. 26.—ԵՐԵՄ. ԼԲ.
17.—ՅՈՎ. Ե. 12: | Ա. 3.—ԿԱՂ. Ա. 16.— |
| (5) ԵՐԻ. Դ. 13.—Եայտ.
ԽԴ. 7.—ՅՈՎ. Բ. 25:
ԽԱ. 17.—Յայտ. Բ. 25:
Ա. Կոբ. Բ. 10. 11: | ՃՀ. Ա. 2. |
| (6) ԵՐԵՄ. ԽԳ. 24.—ՍԱՂ. | (8) ԿԱՂ. Ա. 17.—ՅՈՎ. Ե.
17.—ԵՐԻ. Ա. 3: |
| | (9) ՍԱՂ. ՃԱ. 20. 27.—ԵՐԻ.
ԺԳ. 8: |
| | (10) Մաս.—ԽԸ. 19.—Բ. Կոբ.
ԺԳ. 13: |

իւր յաւ իտենական ծննդեան համար չի պարէ՝ կոչուած է Արդի Ապրանց, իսկ ի ժաման նակի մարդեզութեան համար՝ Արդի Ապրանց, եղբայր մարդկան, որով իրաւունք ստացած ենք մենք և ոյք կոչել զի բառածած, և այս պատճառաւ եկեղեցին կը խոստովանի Քրիստոսի անձնաւորութեան մէջ երկու բընութիւնն ։ Ապրանցացին և Ապրդիացին (1) անշփոթ և անբաժանելի մասորութեան ։ Այս Ապրդեզուամեան խորհուրդը՝ պիրոյ մեծ խորհուրդ է ազիապրհի համար (2). և որչափ անիմանալի է և անհաս մարդկային մըտաց, այնքան քնական է աստուածացին սիրոյն և ամենակարօգ քնութեան (3). Այս մեծ խորհրդեան մէջ էր մարդկային ազգի վըրկութիւնը, սմա կըսպասէր բռվանդակ մարդկութիւնը, ուստի և ուվաւ լրան օրէնք և մարդարէք։ Ա ասն զի Քրիստոս, որպէս ճըմարիտ խոստացեալ Անսիա, կատարեց Ապրդարիտական, Քահանայական և Խագաւորական երեք պաշտօն, (որոյ վրայ խօսած էին մարդարէքն,) և եղաւ մեզ համար ճշմարիտ ՄԱԳԱՐԻ (4), ճշմարիտ ՔԱՀԱՆԱԾ (5), և ճշմարիտ

(1) Յով. Ճ. 27.—Ճ. 10.

(2) Տիմ. Ա. Թաղ. Գ. 16—

Հոռով. Ա. 3—Հոռով.

Բ. 3.

(3) Յով. Ա. 14—Կորն. Ա. 10.

Թաղ. Ա. 30.

(4) Դ. ու է. Ի. Պ. 19—Կ. զ.

Բ. 3.

(5) Եպիս. Ե. 2—Յով. Բ.

1—Երբ. Բ. 24. Երբ.

Ե. 28—Երբ. Ե. 10.

ԹԱԳՅԱՒՄ⁽¹⁾, ուսուցանելով փրկարար վարդապետութիւններ, և պարզելով մարդկութեան անցեալն, ներկայն և ապաւնին, քառելով զեղզ և փրկելով իւր անձին պատարագաւը, և թագաւորելով մեր վրայ երկնաւոր և հոգեւոր թագաւորութեամբ :

Սուրբ Վիրքը կ'ուսուցանէ, որ Հոգին Սուրբ կ'թլանէ և կը բղսի ՚ի Հօրէ, ոչ իրարեւ հատարակ դարութիւն Աստուծոյ, այլ որպէս անձն Աշուրորդութեան, նոյնպէս անտահան, յաւիտենական և ճշմարիտ Աստուածած : Իսկ մերաբերելով առ մեզ՝ Հոգին սսւրբն է Աշխար. Աշխաթվան Աստուծոյ ընդմարդկան⁽²⁾. և Նշան, որով քրիստոնեայ կը ճանաչուինք⁽³⁾. վնան զի մենք առանց Հոգւոյն մերմեջ քնակութեան⁽⁴⁾, ոգնութեան և առաջնորդութեան⁽⁵⁾, լոկ շնչառոր մարդիկ ենք միացն⁽⁶⁾; վնան զի Հոգին Սուրբ գործակից է Հօրն և Արդւոյն. մեր փրկութեան համեմ⁽⁷⁾. և ինչպէս Աստուծոյ յայունուիլն աշխարհին Քրիստոսով կը կոչուի Փրկութեան

- (1) Եպայ.-թ. 7:-Ղ. 4. Ա. 32:-Ցով. Ժ. 38:
 (2) Գործ. Ե. 3:-4:-Ցով.
 Ա. Թ. Ե. 7:-Ցով. կորն.
 Բ. Թ. Ե. Ժ. 9:-15:-
 Ա. կորն. Ժ. 4:
 (3) Ա. կորն. Ե. Ա.

- (4) Եփես. Դ. 30:
 (5) Ա. կորն. Գ. 18:
 (6) Հովով. Ը. 9:
 (7) Ա. կորն. Բ. 14:
 (8) Ա. կորն. Ժ. Բ. 11:-Ա. կորն.
 Բ. 12:-Հովով. Ը. 16:

նայնպէս և Աստուծոց յացտնօւին գալուն
տեսմբ պուլոյն՝ կ'անուանի ՆՈՐՈԳԱՒԹԻՒՆՆ
և ԱՐԲԱՔԵՒՆ : Այս է համառուիւ Ա . Գր
ոց յայտնած վարդապետութիւնը ասու
ուաճային բնութեան և երբարդութեան վե
րայ : Երբ մարդ վառ աւած է աստուաճային
պիրով . նորա հանար պարու է և զատաւոր Ա .
Գրոց վարդապետութիւնը . իսկ երբ ցամա
ցած է 'ի սիրոց . այն ժամանակ ամեն բան
մժին է և ազօտ . լաւ որում մաքուր պատե
րը և ուղիղ մոքերը միայն կարեն զգալ . և
աեւմել զ Կառուած և ոչ թէ կասկածանե
րը . և թէքահաւատնեցը :

Բ .

Ա . Գիշ . — Համառօս պարունակրութիւն չին և Նոր
կապարանաց . — Յատկանիշը Ա . Գրոց . — կարեւու
ըստթիւն ու սեն . Ա . Գրոց 'թ գառափակութեան :

Որուչեցեւ եկեղեցական Հյորց . ըն
տիր գրուածները բոլորը բախած են Ա . Գր
ութիւն , ինչպէս ամենաջինջ ապահականեւ . և աւ
մեն տարակուսանք եւս Ա . Գրովկ լուծ
ուած են . եկեղեցական ժողովոց մեջ . ուստի
և մենք հարկ կը համարինք համառուիւ իսու
սիւ Ա . Գրոց վրայ , եկեղեցական պատմու :

Թեան ներկաց շրջանին մէջ, յորում և կա
տարուած է լլ. Գրոց հայկական թարդման
նութիւնը : Ա' եր նպատակը չէ գովաբանել
լլ. Գիրքը, վասն զի իւր Ա'սուածարունչ ա
նունը արդէն ամեն մարդկուցին գովեստնե-
րէ ՚ի վեր է . այլ միայն կամիմք նորա բովան-
դակութեան համառօտ գծերը պատկերա-
ցնել, որոնք ամենահարեւոր են եկեղեցա-
կան մատենագրաց հոգին հատկանալու հա-
մար, որոց վրայ պիտի խօսինք յետագայ գը-
լուխներուն մէջ :

Առուրբ Գիրքը կը տայ մեզ լիուլի ծանօ-
թութիւն Ա'ստուածային կատարելութեանց
վրայ, նորա գործոց և խորհրդոց վրայ, և այն
պիտի վերմ և անթերի ծանօթութիւն, ո-
րուն վրայ մարդուա միտքը կը յափշտակուի
ու կըսքանչանայ և սիրուր կը խանդաղատի ու
կ'ըզմայլի, բաւ ականութիւն գտնելով իւր
ամեն կարուտութեանց : Վ ասն զի, եթէ
արարչագործութեամք յայտնած է Ա'սո-
ւած իւր յաւիտենականութիւնը, ամենա-
կարողութիւնը և աստուածութիւնը . լլ.
Գրքով, աւելի պարզ կերպիւ, յայտնած է
իւր ամեն կատարելութիւնները և մանա-
ւանդ ամենագերագոյնը – Ա'սուած մէր է :

Ա'րդարն զանազան ազգեր, Կ հնուցանոտի
տնին զանազան սաւրը անուանեալ գըքեր .
ինչպէս՝ Զինացիք՝ կնայո անունով, Հնդկա-

շիք՝ Վեդաս . Գարսփկը՝ Օնդր—Լութոս .
[Հարբացիք՝] ուրան, Ականտինաւեանք՝ [Դադա
բայց միայն Եստուաշունչն է միակ Եստու-
ծոյ խօսք , որ կը պարունակէ ճշմարիտ ասու-
ուածպաշտութիւն . իսկ յիշեալ առւրբ կոչ-
ուած գրեանց մէջ մարդկային գաղափարաց
հասարակ զըթան կը նշմարուի , և եթէ քանի
մի ճշմարտութիւններ կը պարունակեն իւ-
րեանց մէջ , այն եւս Եստուածաշնչն առ-
նուած կը համարուի , որով և պարզ կ'երե-
սի , որ աստուածային Դիրքը մարդկային
հանձնարի գործ չէ : Առայի և երկու կարենք
բաժանել աշխարհիս բոլոր գրքերը — Լու-
տածային և մարդկային . Եռաջինն է յայտնու-
թիւն աստուածային կամաց , որուն վաս-
տպաւորուած է Եստուծոյ զօրութիւնք .
իսկ երկրորդն է յայտնութիւն մարդկային
մոաց , որուն վրայ տպաւորուած է մար-
դոյ տկապութիւնը ⁽¹⁾ :

Այուրբ Դիրքն ունի երեք գլխաւոր յատ-
կանիւ — Ընողական , Պարմական և Եպիստեմական
Ա . Դիրքը Ընողական է , այսինքն պայծառա-
ցնող և կանգնեցնող երկրի , վասն զի ակնեա-
րեւ կը տեսնենք . որ ինչ տեղ Եստուարանը
տարածուած է , այն երկիրները լուսաւոր

(1) Պ . Ը . Համաւութիւն Քրիստ . Ուսման Հա-
յոս . Առող . Ս . Եկեղեցւ :

ուած են . իսկ ընդհանրաւակն՝ անքրիստո-
նեաց կամ հեթանոս աշխարհները զբկուած-
են լուսաւորութենէ և յօսա աջաղիմաւթեան
աարրէ . Առւրբ Գիրքը Պապմակն է , վասն
զի (Շննդոց Եղիշի լոյս խօսքէն մինչեւ Յով
հաննու Քայլուածթեան Տեսի Երիբն նոր ներկայ
նոր խօսքը՝ մի մեծ և սրանչելի շզթայ է , ո-
րով աշխարհիս սկիզբը կը կատարուի միւս աշ-
խարհի սկզբան հետ , կամ պյառապէս ասել ,
աշխարհի առեղծագործութեամբ կամ . ճը-
նընդեամբ կը ակաի և կատարածով կը վերջա-
նայ : Ասուծոյ ընտրած ազդը ինքնին կը
պահպանէր աշխարհիս պապմաւթիւնը , այն
է Շնանշըստիւան Աստուծոյ , Արարշադրժութիւն-
նորուն նարդոյ ընդ մեղք և յօս փրկութեան :
Ենա քեզ ամենազմեմ նիւթ առանցութեան
կամ պատասխութեան , որ մայրէ կը օնի : Առւրբ
Գիրքը Արքադրտակն է , որ կատարուած է
և այսօր իսկ կը կատարուի մեր առջեւ : Այ-
սուածային Գրոց մարդարէութեան կենդա-
նի նշան է արդէն Եղբայեցի ազդը . որ մարդու
կային գրկութեան յուսով լրուած Ասուծա-
ծաշունը ձեռքը բռնած՝ տակածիկ կուպու-
սէ գրկութեան : Այս Եղբայեցի ազդը Յը-
րիսամանէութեան համար մարդարէական նոր-
շան է անցեալ ժամանակի . իսկ Բրիստո-
նեայք նշան են ներկայ և ապառնի ժամա-
նակաց մարդարէութեան . որոյ կատարումն

տնրնողհամատ. կը շնորունակի Թիրիատոսի այս
խոռքէն . . . Վնացին , ես ընդ յեղին . . . և թէ՝ Քա
ջալերացարուս , ով էս յաղընեցի աշխարհի (1) : Եւ յս
մարդարէական երկու կէնքանքանի նշանն եւս
— Երբայեցիք և Քփիսատնեացք — պիտի մը
նան մինչեւ աշխարհիք վերջը , և երբ ան
ցեալն և առգառնին միանան , պիտի միասին
վկայեն մարդկացին ցեղին՝ մին անցեալ ժաւ
մանակի մարդարէութեան կատարումն , իսկ
միւսն՝ ապօտնիք . և բնուցին հին ազգը , նցն
պէս և նոր ազգը , պիտի տեսնեն աշխարհիք
քակրումն , այնէ մարդկութեան վերջն :

Առաք Գիրքը գլխաւորապէս կրքամնը
և երկու . . . Հին և Նոր կրտակարան . Եւ աջինն
յայտնուածն է Ուոլսիաով և միւս մարդարէնեւ-
րով , որտնիք գատախարակ են Նոր կրտակարա-
նի . իսկ երկրորդը քաքովաւածն է առաքեալ
ներով . Հին և Նոր կրտակրանքը կը պա-
րունակեն իւրեաւոց մէջ Պատմախան , Բարոյախան
և Ուորդարեախան Գրքեր և այն պատճառաւ կը
կոչուին կրտակարան ; որ Եւուուած կը յայտնէ
նորա մէջ իւր կամքը և կրքաժանէ ամենուն
իւր բաքութիւնը և ողորմութիւնը : Հին
կրտակարանը կը խօսի աստուածային գործաց
վրայ , կրօնի զանազան վիճակի վրայ , ար-
խարհի սկզբէն մինչեւ Փրկչի գալուատը , որ

(1) Յուլ. ԺԶ. 55.

խոստացած էր՝ ՚ի ակզրանէ և յայտնած Եղբայեցւոց ազգին։ ՚Այս վրկութեան ակընէ կալութիւնը և մասնակցութեան յոյսը, այս երանաւէտ բանն ՚Ստուծոյ՝ էր նիւթ հաւատոյ, միփթարութիւն մարդարէից և յոյս Ճշմարիտ աստուածապաշտից⁽¹⁾։ Իսկ ՚Նոր կը տակարանը կը խօսի և կը հաստատէ ամեն բան, ինչ որ ՚Ստուծած Հին կտակարանի մէջ խօսած է իւր գործոց և կամաց համար, որ կատարուեցաւ մարդեղութեամբ խօսուացեալ ՚Ամնին, այսինքն վրկութիւն մեր ՚ի ձեռն Քրիստոսի, և այս պատճառաւ կը կոչ աւի ՚Նեփարան, այսինքն՝ աւետիք բարութեան։

Թէպէտ Հին և ՚Նոր կտակարանքը քարզուած են զանազան ժամանակ և զանազան մարդիկներով, բայց նոյս վարդապետութեան հոգին մի է . վասն զի աստուածային է, և ամեն հաւատով ընդունողներ և կարդացողներ զգացած են նորա մէջ զօրութիւն ՚Ստուծոյ, գտած են կեանք, կերակուր հոգւոյ, խազաղութիւն խղճի, կենդանի յոյս, ճաշակ յաւիտենական կենաց և կարողութիւն համբերելոց նեղութեանց, այնպիսի զգացումներ և հոգեկան վայելչութիւն, որ անհնարին է մարդկային գրքեւ

լիովին ստանալ։ Հին և Կոր կրտակարանքը
կը շինեն մի հաւասար։ զան զի ոչ այլ ինչ
են երկու կրտակարանքը եթե ոչ՝ Նոր շնորհեց
ծածխուած է, և Հինը Կորոյն եղ բայցուած⁽¹⁾, և
Հինը դաստիքարակ է Կորոյն։ Հնով օրէնք
աւանդուած է, իսկ Կորով շնորհեց և ճըր-
մարտութիւն⁽²⁾։

Ուստի և կարենք համարձակ ասել, որ
ինչպէս Քրիստոնէութիւնն մարդկային ազ-
գի երկրաւոր և երկնաւոր ճշմարիտ երջան-
կութեան միակ կրօնքն է, որոնպէս և Աստ-
ուածաշունչը բոլոր աշխարհի միակ Գիրքը,
որ կը պարսւակէ մարդկային մոքեն բարձր
յայտնութիւններ, լուսաւորող ճշմարտու-
թիւններ և փրկաւեւա պատռուէրներ, որոնք
կարեն մարդկային հոգեկան կեանքը ազնը-
ւացնել, կատարելագործել և աստուածա-
նանան առնել։ Այս պատճառաւա է, որ Քրիս-
տոնէական Հակեցեցին, իւր հիմնադրութեան
օրէն ՚ի վեր, առաջին պարագ համարած է Ա.
Քրոց ուսմանքը ծաւալել քարողելով, բա-
յատրելով և այն երկնահոս ազգիւրէն հա-
զարաւորառուակներ հաներով։ Եւ այսօրուան
օրս, գիրք մի չըկայ, յորմէ մոտաւոր աշխար-
հը այնքան լցու և բարիք լինի ստացած մարդ-
կային ընկերականութեան իսկական բարօ-

(1) Օդասինու։

(2) Յուլ. Ա. 17.

ըստ թեան և յառաջադիմութեան համար, ինչպէս Աստուածաշնորհը։ Գիրք մի ըստ կաց և չէ կարող լինիլ, որ այնքան ժաղուներով թարգմանուած և տարածուած լինի, ինչպէս Աստուածաշնորհը։ Այս մեն, կարեւ սորութիւնն էր զոր զգացին և մեր անմահ թարգմանիչքը, և ազգի լուսաւորութեան և զարգացման պուածին քայլախոխը Ա։ Գլուց թարգմանութիւնն ամբ այնքան ջնտիր է, որ ներկաց գարուս Աւրովացի հայագէտ քանասիրաց այլ և այլ գովեստից հետ միացն, կը կոչուի նաև թագուհի թարգմանութիւնը։ Ատկայն այս գովեստն առելի մեծ գովեստ առւած կը լինիք մենք մեր կայսերացը, եթէ Ա։ Գլուց ուստի նոր մեր ժողովողեան մէջ ընդհանրացնենք և գաղտօփարակութեան շնուածը նոյն հաստատուած հիման վրայ կառցանենք։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Յատկական նկարագիր ընդհանուր եկեղեցական ժամե-
նագրութեան Առաջին , Երկրորդ , Երրորդ և Չորրորդ
գարուց . — Ներքին որոշիչ նկարագիր արեւելեան և
արեւմտեան եկեղեցական մատենագրութեան . — Ցե-
սութիւն Հայոց եկեղեցական մատենագրութեան վրայ .

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ցառաջ բերած գլխաւոր
արդասեաց մին է Ա՝ ատենագրութիւնը .
Արովհետեւ Սահակեան և ԱՆԿարոպեան դըպ-
րոցաց վրայ արդէն խօսեցանք , կը մնայ մեզ
արդ՝ խօսիլ նոյն դպրոցներէն ծնած եկեղե-
ցական մատենագրութեան վրայ : Ի՞այց այս
աղդացին եկեղեցական մատենագրութիւնն
և սջդիւ գնահատելու և իւրուց տիպարով
պատկերացնելու համար՝ կարեւոր է նախ
և առաջ , եթէ ոչ մանրազնին (որ մեր մաս
նաւորած ընթացքէն արտաքոյ է,) գէթ հա-
րեւանցի ակնարկ մի ձգել եկեղեցական
ընդհանուր մատենագրութեան ընթացքին
վրայ , որով ընթացած է մինչեւ հինգերորդ
դարը :

Եկեղեցական ընդհանուր մատենագրութիւնն այս յատկական նկարագիրը կը պատկերացնէ մեզ դարական կարգաւու։

Եւս դին դարուն մէջ կ'երեւին միայն հատակութոր թղթեր, գրուած ՚ի յօրդոր և ՚ի խրատ զանազան դիպաց պատճառաւ, որոց մէջ ոչ թէ գիտութեան նշանանք, այլ քրիստոնէական քաղցր օծութիւն և եթ կ'երեւի։

Երկրորդ դարուն մէջ մատենագրութիւնն առաջնոյն պէս միակերպ չէ ։ Ժամանակի հանգամանքները յառաջ կը բերեն նիւթոց պէս պիտութիւն մատենագրութեան մէջ։ Վասն զի ՚Քրիստոնէութիւնը կըսկսի արդէն սոյն դարուն մէջ հալածանքներ կրել ոչ միայն արտաքրուստ Հեթանոսներէն և Հրէաներէն, այլ և ՚ի ներքուստ ազգի ազգի աղանդաւորներէ, որոնք կը զբարանն ՚Քրիստոնէից վարքը և վարդապետութիւնը, և Հռովմէական տէրութիւնն ևս, ինչպէս արտաքրուստ, նոյնպէս և ՚ի ներքուստ օգնական կը լինի ՚Քրիստոնէութեան դէմ պայքարող հալածասէր ոգևոյն։ Խւստի Եկեղեցւոյ պաշտպան վարդապետք կը ստիպուին հասարակ թղթերով չը շատանալ. այլ և պատմական, պատախանատուութեան, մեկնական և վիճական գրաւածներով և Ճառերով ասպարէզ ելնել։

Երբոր բարուն մէջ եկեղեցական մատե-
 նագրութիւնն առաւել բազմակողմանի ըն-
 թացք կրտտանաց, որովհետեւ կարեւորու-
 թիւնը կրտտիպէ Քրիստոնէական ուսմանց
 հետ հետամուտ լինիլ միանգամայն և ար-
 տաքին գիտութեանց : Ա աղուց արդէն հե-
 թանոսական փիլիսոփացութիւնը կը յառա-
 ջէր, բայց Քրիստոնէութեան տարածմանէն
 առաւել զարոյթ ստանալով և շփոխուելով, կը
 ճգնի սոյն դարուն մէջ դիմագրաւել ահա-
 գին յոխորտանօք, երբեմն անթանոսու-
 թեան և Քրիստոնէութեան մէջ համանմա-
 նութիւններ երազելով, երբեմն Քրիստո-
 նէութիւնը յանդէնաբար պախարակելով,
 և երբեմն ձգտելով Քրիստոնէութենէն
 բարձր և եղած հեթանոսականներէն առա-
 ւել նորագոյն կրօնք մի ստեղծաբանել : Եւ
 այս պատճառուաւ որչափ հակառակութիւնն
 ները կը բորբոքին և նորանոր աղքանդոց կամ
 վարդապէտութեանց աեղի կը տան, այնչափ
 Քրիստոնէայք կը սոսկան արտաքին ուսմունք-
 ներէ, մանաւանդ փիլիսոփայականէն, և կը դժ-
 կամակին իւրեանց մանուկները կայսերական
 կամ հասարակաց դպրոցները ուղարկել,
 թիւնաւոր համարելով յունական և հռոմէ
 մէտական դասական մատենադրութիւնը :
 Բայց ժամանակը կրտտիպէ, որ Եկեղեցոյ
 վարդապէտը միայն քրիստոնէական վարչաւ

պետութեամբ չը մաքառին հեթանոսական
մտաւոր ուժին դէմ, այլ և մտաւոր ուժով.
ուստի և օգտաւէտ քան թէ վնասակար կը
համարին դպրոցներ բանալ և այն դպրոց
ներուն մէջ Առւրբ Գրոց ուսման հետ ա-
ւանդել միանգամայն և փիլիսոփայութիւն,
երկրաշախութիւն, քերականութիւն, ճար-
տարախօսութիւն, և այլն :

Այս տեսակ դպրոցներու առաջինն կը
լինի Աղէքսանդրիոյ Երախացկան դպրոցը, ո-
րուն կը հետեւին և ուրիշ շատ տեղեր. և
եթէ չենք սխալիր, այն օրինակ դպրոցնե-
րու մէջ կը վարժին և մեր թարգմանիչ Ա-
շակերտոներն յԱղէքսանդրիա, 'ի հիւզանդի-
նն, յԱթէնս և այլն : Աղէքսանդրիոյ մէջ վա-
ղուց արդէն հռչակաւոր էր գեղեցիկ ուս-
մանց Առաջարանը, ուր կը դիմէր ուսումնա-
սէր մանկութիւն Հռովմէական պետութեան ա-
մեն կողմերէն, և այս կերպով Աղէքսանդ-
րիա համարուած էր իբրեւ Կայսն Գիգութիան
Այս կայանին մէջ ահա կը հաստատուի և
Երախայական դպրոցը, յորմէ ականաւոր
մարդիկ կը յառաջանան, և 'ի տեղիս տեղիս
ականաւոր աշակերտներ կ'ունենան, ինչպէս
են՝ Կղեմէս, Արոգինէս, Գրիգոր Աքանչե-
լագործ, Դիոնէսիոս Աղէքսանդրացի և այլք.
որոնք իւրեանց գրտածներով կը մաքառին
նոյն ժամանակի զանազան փիլիսոփայական

և աւելի ազանդական կարծեաց դէմ:

Ի՞այց եկեղեցական առաւել ընտիր մատենագիրները Չորրորդ բարուն մէջ կ'երեւին, որոց գրուածքները քրիստոնէական աղիւ համեմուած են, և որոնք եկեղեցական մատենագրութեան գլուաւոր և օրինակելի գործքեր կըհամարուին: Այս արժանաւորութիւնն ունին Աթանասի, Իարազի, Գրիգորի Ախտացւոյ, Գրիգորի Աքազիանզացւոյ, Կիւրղի, Ափեմի, Ամբրոսիոսի, Հերոնիմոսի, Ակեբերանի և Օգոստինոսի գրուածքներէն ոմանց (ինչ պէս՝ Իարազի, Ակեբերանի, Օգոստինոսի) քրիստոնէական զգայուն և բարեհամբոյր ճաշակի զարգացմանը օժանդակող եղած է, ոչ սցնքան դպրոցական, որչափ մայրական արդասաւոր կրթութիւնը: Եթէ մեր բըռնած մասնաւոր ընթացքը ըսներեր մեզ ընդարձակօրէն խօսիլ այս ընտիր անձանց մատենագրական աշխատութեան վրայ, գէթ այս չափը կ'ասենք, որ մեր Յարդմանիչները սոցա ժամանակակիցներն կըհամարուին, և նոցա մատենագրական ճաշակը սիրողներ, ինչպէս և նոցա երկասիրութեանց շատերը հայկական թարգմանութեամբ մեզ աւանդած են: Եւ որավհետեւ առանց ժամանակակից անցքերուն տեղեակ լինելու, անհնարինէ հիմնովին ըմբռնել յունական և հռովմէա-

կան երրորդ , չորրորդ և հինգերորդ դարուց եկեղեցական մատենագրութեան հոգին , ուստի կը պարտառորինք գէթ այսչափ ասել , որ մեծ մասամբ գրուած են նոյնժամանակեայ յուզուած խնդիրներուն նկատմամբ , այն է մոլորութեանց , աղանդաւորութեանց և փիլիսոփայական վիճմանց և կարծեաց . վասնորոյ և առաւել այն մասները շինողական են և տեւական , որոնք արտաքոյ են վիճաբանական նպատակէ : Ա`եր նախնեաց թարգմանածները առաւել երկրորդ կարգին կը վերաբերին :

Իսկ ներքին ընդհանրական նկարագիրը , որով կ'որոշուին իրարմէ արեւելեան — յունական և արեւմտեան — հռովմէական եկեղեցական մատենագրութիւնքը , այս համեմատութեան մէջ կը կայանայ , որ յունականին մէջ քրիստոնէութիւնը բացատրուած է առաւել տեսական գիտութեամբ , իսկ հռովմէականին մէջ՝ գործնական գիտութեամբ : Այս նկարագրով կ'որոշուի նոյն իսկ յունական և հռովմէական փիլիսոփայութիւնքը Բայց ընդհանրապէս յունական եկեղեցական մատենագրութիւնը առաւել ճոխ է քան հռովմէականն :

Իսկ Հայոց եկեղեցական երկրորդ շրջանի մատենագրութիւնը (բաց ՚ի յունական Հարց ոմանց ինչ ինչ թարգմանութիւննե-

թէն,) առ հասարակ պարզ յորդորական է և
մեծ մասամբ պատմական, հեռի վիճաբա-
նական ընթացքէ, որով յայտնի կ'երեւի թէ
հայկական մատենագրութիւնը առիթ չէ
ունեցած մոլորամտութեանց դէմ պայքա-
րել, ըստ որում և ոչ իմաստափրական դրա-
բոցներու յուղած խնդիրները կային Հայա-
տանին մէջ և ոչ նոցա դէմ մաքառելու կա-
րեւորութիւնն :

Այսպէս ուրեմն, եթէ առ հասարակ մա-
տենագրութիւնը որ և իցէ ազգի մտաւոր
և բարոյական զարգացման արդար կշիռն է,
եկեղեցական մատենագրութիւնն ևս Եկե-
ղեցւոյ վիճակի և գործունեւութեան ճշգրիտ
պատկերն է : Այն վերանորոգութիւնը, որ
կը կրէ Հայաստան երկրորդ շրջանին մէջ,
թէ քրիստոնէական լուսաւորութեամբ և
թէ մատենագրական զարգացմամբ, այն աղ-
գային պատմական կենաց նշանաւոր գտրա-
գլխոց երեւոյթը գրաւած է բոլոր մատենա-
գրաց մտադրութիւնը, և մանաւանդ Ա. Գը-
րոց թարգմանութեան գեղեցիկ և միաբա-
նական աշխատասիրութիւնն ևս խիստ մեծ
ազդեցութիւն գործած է ամենուն երկասի-
րութեանց մէջ : Քանի մի մատենագիրներ
նոյն շրջանին մէջ խօսած են մի և նոյն նիւ-
թոյն վրայ հաւասար եռանդով և զգաց-
մամբ : Աստենագրութեան պատմական մա-

սրն անգամ առաւել քրիստոնէական նահաւ
տակութեան պատկերներ կը ներկայացնէ,
քան թէ քաղաքական իրողութիւններ : Եւ
պատճառն ոչ թէ հեղինակաց եկեղեցական
լինելնէ, այլ ժամանակը և հայրենեաց վիճաւ
կը այնպէս ազդած են: Ես յսպէս ուրի մն, որչափ
որ ազդային գրադիտական պատմութերը կը
վերաբերի մեր մատենագրաց վրայ խօսիլ,
նոցա գրաւորական արժանաւորութիւնը
գնահատել, ժամանակագրական և պատմա-
կան ճշդութիւնները հետազօտել և լեզուի
յատկութիւնը կշռել, սակայն միւս կողմէն
եւս Եկեղեցական Պատմութիւնը չէ կարող
զանց առնել նոցա յորդարական և վարդա-
պետական կողմները նկատողութեան առ-
նուլ և պատմականին մէջէն գէթ եկեղեցա-
կանին վրայ խօսիլ:

Ակսինք ուրի մն յառաջ բերել թէ մա-
տենագիրները և թէ իւրեանց երկասիրու-
թեանց համառ օտ բովանդակութիւնը, ա-
ռաւել ընդարձակ հետազօտութիւնը գրա-
դիտութեան կամ դպրութեան պատմու-
թեանը թողլով:

Բ.

Մասենագրական երկասիրութիւնք Ա. Գրիգորի Լուսա-
ռոցին . Ագաթանգեղոսի և Զենորայ . — Ներքին նը-
կորագիր պարունակութեան իւրաքանչիւրոց :

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԴՅԱՆ լուսաշխարհիկ
անձն, ինչպէս քրիստոնէական հաւատոյ հաս-
տաատութեան, նոյնպէս և ազգային եկեղե-
ցական մատենագրութեան հայրն է, որոց
քրիստոնէական ուսմունք տարածելու ջա-
նից և առաքելական վաստակոց վրայ արդէն
խօսած ենք, և կը մնայ մեզ այժմ խօսիլ նորա-
գրաւոր երկասիրութեանց վրայ :

Դրիգոր | ուսաւորչի երկասիրութեան
ծնունդ են . Յաճախաղագում գիրքն և Աղա-
թանգեղոսի պատմութեան մէջ գտնուած
Վարդապետինը : Խրա կ'ընծայուին նմա-
նապէս ինչ ինչ կանոններ, թուռվ երեսուն,
(գուցէ այն, զոր յաւելլուց Նիկիական կանո-
նաց վրայ ⁽¹⁾) ինչպէս և Իւղ մէք փառաւորեսցուն,
Հանգանակի վլայ) . յամագրքի մէջ՝ Ապուած-
եծ և Կոչը մաղթանքը, որ կ'աւանդուի թէ
Հրիփսիմեանց և Պայշիանեանց մարմիններն
ամփոփելու ժամանակ ասած է . նմանա-
պէս և երկու աղօթք . — (Ծննդալ է Տարդասի-
բութիւն ու, Տե՛ր իմ . և Աղջկէմ զեղ :

(1) Խոր . Բ . Գիրք . Դ .

Յաճախաղաբուժն , որ ոմանք յունարէն և
 ոմանք աւելի հաւանական , հսցերէն լեզ-
 ուով և յունարէն տառերով գրուած կը հա-
 մարեն (ըստ որում հայկական գրոց գիւտէն
 առաջ է) , կը պարունակէ իւր մէջ քսան
 երեք ձառեր Յօրբորդութեան խորհրդոյն և
 աստուածածանօթութեան վրայ , արարչա-
 կան սիրոյն և անպատում գթութեան վրայ ,
 մարդոյ առաքինական հանդիսից և բարե-
 պաշտութեան վրայ , հովուաց պարտուց և
 արթուն տեսչութեան վրայ , և այլն և այլն
 իսկ Ագաթանգեղոսի մէջ աւանդուած քո-
 րոզութիւնը պարզ և ընտիր վարդապետու-
 թիւն է , Ա . Դրոց պատմական ընթացից
 հետեւողութեամբ , ուր կը խօսուի մարդոյ
 ստեղծագործութեան և պատուիրանազան-
 ցութեան վրայ , աստուածային ու խորհրդի հաս-
 տատութեան և դար առ դար կրկնութեան
 կամ նորոգութեան վրայ , Աստուածային
 անոպայման սիրոյն կամ Բրիստոսի մարդեղու-
 թեան վրայ , ամեն փրկագործ տնօրէնու-
 թեանց վրայ , աշխարհի կատարածի և յա-
 րութեան ու դատաստանի վրայ , Հոգւցն
 Արբոց գալատեան և աշխարհի նորոգութեան
 վրայ , Առաքելոց գործոց և քարոզութեանց
 վրայ , և Բրիստոնէ ական Յէկեղեցւոյ տեւա-
 կանութեան և խաւարի հետ ունեցած պա-
 տերազմին վրայ ։

Վրիգոր | ուստու որչի քարողութեան կամ
 վարդապետութեան բռվանդակութիւնը, թէ
 Ադամանգեղոսի և թէ Յամախաղառումի մէջ,
 սքանչելի պարզութիւն և գեղեցկութիւն
 ունի: Ասացուածները հատու և վճռական,
 դարձուածները առանց սեթեւեթիւնի և պա-
 ճուածնանաց, նմանութիւնները բնական և
 ընտանի, իմաստները սրտաշարժ և զգայուն:
 Ակներեւ կը տեսնուի, որ աստուածային և
 մարդկային սիրով վառուած օրտէ կը բզին
 և ոչ իմաստափրական կարծիքներու մէջ
 տատանով մոլիք: Ու արդապետական եղաւ
 նակը դասախոսական է, և ըստ ամենայնի
 գործնական: Ճամաք իմաստասէր չէ, որ կը
 տրամադրանէ. և ոչ արտւեստակեալ պերճա-
 խօս, որ կը ճարտուարախօսէ, այլ գթոտ հայր,
 որ իւր սրտին մէջ յուղուած բոլոր առ-
 տուածային զգացմունքները կը ջանայ իւր
 սրդւոցը հաղորդել և տկար ու սխալական
 արարածները յորգօրելով ՚ի հաւատ, ՚ի յոյս
 և ՚ի սէր՝ կապել Արարչի հետ, որ ամենակա-
 րողն է և անփոփոխ բարի: Ու ամ զի մի կող
 մէն Աստուծոյ ամենակարողութիւն կը պատկե-
 րացնէ և գթութիւնը, միւս կողմէն մարդոց
 տկարութիւնը և կարօտութիւնը. մի կողմէն
 Աստուծոյ բարութենէն բղխած անթիւ-
 բարիքները, միւս կողմէն մարդկային անձ-
 նիշխանական ազատութեան չարաչար գոր-

ծաղրութենէն բղխաճ չարիքները : Եւ այս-
պէս, աստուածային ամենաբարի կամքը մի-
այն անսացթաք ուղեցաց կ'ընծայէ մարդկա-
յին բոլոր գործողութեանց : Առաքինու-
թիւնը և առաքինիները գոված ժամանակ՝
մարդոյ աստուածանմանութիւնը կըտեսնես,
կրզդաս և կ'աւրախանաս . իսկ մոլութիւնը
և մոլիները պարսաւած ժամանակ՝ մարդոյ
անասնական վիճակը կը տեսնես, կը հառա-
շես ու կ'արտասուես :

Գրիգոր | ուսաւորչի վարդապետութեան
հաստատուն խարիսխը || . Գիրքն է , համո-
գակեր և շարժիչ մասն՝ Աստուծոյ ինամոց
և մարդասիրութեան կենդանի պատկերա-
ցուցումն, իսկ յորդորողն ու քաջալերողն՝ իւր
հսյրագորով սրտի ձայնն : || Իրով բանիւ ,
ժողովուրդ մի քրիստոնէական ուսման մէջ
կրթելու համար ինչ որ կարեւոր է ; ամենը
լիովին կը տեսնուի առաքելանման Հայրա-
պետի քարոզութեան մէջ , որոյ բովանդա-
կութիւնը այսպէս կարող ենք համառօտել .
— Աւր և ինամք Արարչին և պարպառութիւնք արա-
բածոյն :

ԱԳԱԹԱՆԴԵՆՈՍ . Տրդատ թագաւորի ար-
քունի քարտուղարն , ազգաւ հռովմայեցի ,
հռոմարէն և յունարէն դպրութեան հը-

մուտ (1), հրամանաւ Տրդատայ կը դրէ Հայոց քրիստոնէական դարձի պատմութիւնը, այնպիսի ընտիր կարգաբանութեամբ, որ յետագայ դարուց պատմիչք, ոչ միայն կը դռվէն, այլ և շատ տեղ Խորենացին իւր համառօտախօսութեան ուսկասորդը կը յորդարէ, որ ընթերցողք լրացնեն Ագաթանգեղաւանդէն, մանրապատում տեղեկութիւններ քաղելով։ Ագաթանգեղոս գլխաւորապէս (2). Գրիգորի և Տրդատայ կենաց, գործոց և բարեկարգութեանց վրայ կը խօսի, թէ այէտ և իւր պատմութիւնն նոցա ժամանակ պատահած անցքերէն առաջ կը ակաի։ Կը խօսի Հայիանեանց և Գայիանեանց նահատակութեան վրայ, Տրդատայ հալածատիրութեան և քրիստոնէական հրաշալի դարձին վրայ։ Կը նկարագրէ Հայաստանի քրիստոնէական լուսաւորութեան կամ վերակենադանութեան սրտառուչ պատկերը, այն է

(1) Ագաթանգեղոսի թէ՛ հայերէնը կոյ և թէ յունացէնը, և այս պատճառաւ ոմանք կը պնդեն թէ՝ «կզնագիրը» յունարէն գրուած է և ապա թարգմանչաց ձեռքով հայերէն թարգմանուած։ իսկ այլք կը պնդեն թէ՝ Ագաթանգեղոս Հայոց արքունեաց մէջ հայերէն սովորելով հայերէն գրած է։ Այս վերջին կործիքը բառականին հաւանական ցուցած և պաշտպանած է Հ. Գ. Արք. Զ. Արք. իւր. օրինակները իւրառու հետ համեմատելով և սկզբնականութիւնը հայերէնին տալով։

ժողովրդի հոգեւոր յուզմունքը , գունդա-
գունդ խռնումն ՚ի լուր քարոզութեան լ՝
աետարանի, վկայարանաց շինութեան համա-
գործ . հրձուանքը , Հայրապետի ընտրու-
թեան և ձեռնադրութեան համար եղած
գումարումները , և մանաւանդ բիւրաւոր
ժողովրդոց մկրտութեան սքանչելի տեսա-
րանը Եփրատ գետին մէջ , Ա. Գրիգորի հո-
գեպարար քարոզութիւնը և Եղմիածնի տա-
ճարին շինութիւնը , և այլն , որոց վրայ ար-
դէն իւր տեղը խօսած ենք :

Հայաստանի քրիստոնէական վերադար-
ձի գեղեցիկ պատմութիւնը կարդացողը , լ՝
գաֆանգեղեան մատենին մէջ , կրսքանչանաց
աստուածային սքանչելեաց վրայ , կը խան-
դաղնատի ժողովրդի քրիստոնէական եռանց
գագին յուզման և միահաղոյն վերածնելու-
թեան վրայ , և կը յափշտակուի այն երախ-
տագէտ խորհրդածութեամբ , որով Ասկե-
բերան (1) յափշտակեցաւ մարգարէի գե-
ղեցիկ խօսքը կրկնելով Հայոց հոգեւոր ծը-
նընդեան համար . “ Ո՞ ետես , ո լուաւ , ե-
թէ երկնեաց երկիր օր մի , և ծնաւ զազդ մի
ողջոյն ” :

Օ ԵՇՈՔ ԳՂԱՎԵ-ԼՇՂԴԱւ ասորի , առաջնորդ

(1) Ասկեր : Ներբողեան առ Գրիգոր Լուսաւորիչ

և վիճակայր Տարօնց իննակնեան կամ Առւրբ
կարապետի վանուց, ուր կարգուած էր Վրի
դոր | ուսաւորչէն՝ կիսարիայէն դառնալէն
յետոյ :

Օ ենոքայ երկասիրութիւնը, որ Պատմու-
թիւն Տարօնց կը կոչուի, կը պարունակէ իւր
մէջ նախ քանի մի թղթեր և առա Տարօնց
գաւառին մէջ կատարուած քրժական պա-
տերազմին և քրիատոնէական վերանորոգու-
թեան պատմութիւնը, նամակի ձեւով :

Առաջն թուղթն է Վրիդոր | ուսաւորչի
գրածն առ Դեւոնգիս հայրապետ կիսա-
րից, որով շնորհակալ կը լինի Անտօն և Կո-
րօնիդէս կրօնաւորաց համար, և կը խնդրէ
նոցա նման ուրիշներն եւս ուղարկել, մա-
նաւանդ զիմոնթէոս և Եղիսզար, որք նշա-
նաւոր էին սրբութեամբ վարուց :

Երիրրէն է Դեւոնդիոսի պատասխանը,
որով ուրախակից կը լինի | ուսաւորչին, Հա-
յաստանի քրիստոնէական դարձի աստուա-
ծակրաշ հանդիսին համար և կը յայտնէ ոք
խնդրած կրօնաւորները ներկայ չեն, որ ու-
ղարկէ, այլ գնացած են մին ՚ի Հռովմ և
միւսն յերուսաղէմ և անտի ՚ի Բիւղանդիսն:

Երրորդն է Վրիդոր | ուսաւորչի թուղթն
առ Զիմոնթէոս և Եղիսզար, որով կը յիշէ
Հայաստանի հարիւր քսան գաւառաց կա-
րուութիւնը քահանայից և հովաւաց, և կը

**Խոստանսայ նոցա տեսչութեանը յանձնել
Ամիկոնեան երկիրը — Տարօն — եթէ հաճին
գալ :**

Իսկ չըրբե՞ն է խնդրագիր քանի մի ասորի
կրօնաւորաց (Ի՞եկոռի, Վ՞նաստասայ և այ-
լոց) որոնք Բիւղանդիսնի մէջ լոելով Տարօ-
նեցի անձներէ, որ Հայաստան՝ քրիստոնէա-
կան գեղեցիկ կերպարանափոխութեան հան-
դիսարան դարձած է, կը գրեն առ । ու-
աւորիչ և կը թախանձեն, որ բոլոր անցքե-
րու պատմութիւնը գրով իրենց հաղորդէ :
Է՞յս առթիւ Ա. Պրիգոր կը հրամայէ Օ. Ե.
նորին կատարել յիշեալ կրօնաւորաց խրն-
դիրը և Տարօնոյ պատմութիւնը գրով իրենց
հաղորդել :

Այս նամակաձեւ Պատմութեան առա-
ջին պատճենին մէջ կը յիշատակուի համա-
ռօտիւ, Պրիգորի և Տրդատայ ծննդեան
գէպքերը, միոյն չարչարանքը և միւսոյն
դարձը. Արձան և Դեմետրէ քրմապետ իշ-
խանաց յարուցած պատերազմը և պարտու-
թիւնն ՚ի Պրիստոնէութենէ : Իսկ երկրորդ
պատճենին մէջ պատմութիւնը կը շարու-
նակուի և աւաբումամբ լրումն կ'առնու գիր-
քը : Արտաքոյ պատմութեան խիստ հաք-
ցամիրական տեղեկութիւններ. կ'աւան-
գուին գրքի մէջ, մանաւանդ Տարօնոյ գա-
ւառի գեղեցիկ, ջրաւետ, օդագուարձ, խո-

տարուղիս և մեղքաբուղիս գրից վրայ : Օ՞Ե՞
 նորայ գրած պատմութեան մէջ կը յիշա-
 տակուին քանի մի անծանօթ պատմագիրներ
 (Քարդա կամ Շարդեծան և Պիտիդոն թարդ-
 մանիչ), և տեղտեղ կը յորդորէ Օ՞Ե՞նոր իւր
 համառօտ անցածին պակասորդը լրացնել
 նոցա պատմութիւնները կարդաղով : Որպէս
 շարայարութիւն Օ՞Ե՞նորայ պատմութեան,
 Յովհան Ամմիկոննեան վեցերորդ դարուն
 մէջ շարունակած է Տարօնոյ պատմութիւնը,
 որուն վրայ իր ժամանակին պիտի խօսինք :
 Քայց որովհետեւ երկուսի գրաւոր ռձցն
 մէջ համանմանութիւն կը նշմարուի, հաւա-
 նական կը կարծուի որ Օ՞Ե՞նոր իւր պատ-
 մութիւնը ասորերէն գրած լինի (լատ որում
 Ասորիք էին խնդրողները) և յետոց շարայա-
 րիչն թարգմանած լինի : Օ՞Ե՞նորայ և Ադա-
 թանգեղոսի պատմութեան մէջ տեղ տեղ
 տարբերութիւն կը նշմարուի ինչ ինչ անցից
 նկատմամբ, և սորա պատճառն այն է որ ի-
 բարու գրուածք կտրդացած չեն, և Օ՞Ե՞նոր
 ինքն կ'ասէ, որ Ադաթանգեղոսէն առաջ
 գրած է :

¶.

Երկասիրութիւնք լրեծին ներոփափ . Փաւստոսի բիւ .
զանդայ . Սահակայ Գարթեւի և Մեսրոպայ Մաշտոցին
ներքին նկարագիր պարունակութեան իւրաքանչիւրոց .

Լյերսէս ՊԱՐԹԵԴԻ . — Արդէն տեսանք որ
Մեծն Ներսէս շարունակ զբաղած էր Հա-
յաստանի բարեկարգութեամբ , և ազգային
քաղաքական իշխանութեան տկարութեան
պատճառաւ . ստիպուած էր երբեմն յունա-
կան և երբեմն պարսկական արքունեաց մէջ
գեղերիլ . այս պատճառաւ գրաւոր երկասի-
րութեան կողմանէ իրեն ընծայուածները մի
այն քանի մի խրատներ են . Կանոնագրաց մէջ
և քանի մի աղօթքներ . և այն ևս աւանդու-
թեամբ : Խսկ պատմագրութիւնք կը հաւառ-
տեն , որ Ներսիսի ամենամեծ և քաղցր երկա-
սիրութիւնք եղած են ուսուցանել ըանիւ
և իւր կենաց օրինակով . վասն զի այսպէս
կ'ասէ Շիւզանդ . « Վ ասն Ճշմարտութեան
մինչեւ ՚ի մահ մարտանչէր և զաջողակ արդա-
րութեան քաջալերեալ խնդացուցանէր և
իւրով վարդապետութեան անձրեւովն պա-
րարէր : Ռնդէ ամենայն տեղիս սահ-
մանացն Հայոց մեծաց , ընդ որ էր յառաջա-
գոյն նորուն հարցն սերմանեալ զբարոզու-

Թիւն Բանին կենաց, զնոյն և սա ոռոգեաց
անձրեւ ովն Օթադէական Եթուն
միւտանգամ ելից զբոյան աճեցցց,
մշակ հնձող եղեալ գործակից սերմանովաց,
և բազմացոյց զյորդաբռախ արդիւնսն ՚ի
շան մսրանս արքայութեան ՚Նախ ինքն
առնելով առ իւր անձն բարի և ապա այլոց
օրինակ բարեաց դնելով. առ հասարակ վար
դապետական բանիւն զամենեցուն զփա-
կեալ դրունա մտաց. ՚ի բարին յորդորելով
բանայր զամենայն բարի : Եւսուցանէր ըռ
սէր, զյոյս ո զհաւատ, զպրբռւթիւն, ըռ
քաղաքութիւն, զհեզութիւն, զանսիակա-
լութիւն, զինամ ունել գարմանոյ աղքա-
տաց, և այլն և այլն ո (1) :

ՓԱՏՍՑԱՅ ԲԻՒԶԵՆԴ. — Բիւզանդայ գիրքը
բաժնուած է չորս դպրութեան և կո կոչուի
Բիւզանդարան : Պարունակած նիւթն է 29
տարուան Պատմութիւն, իրարով երկրորդի
(որդւոյ Տրոտառայ) ժամանակէն սկսեալ մին-
չեւ Խոսրով երրորդի թագաւորութեան և
Եսպուրակէսի կոթողիկասութեան վերջը :
Եիւզանդ գլուխուորապէս եկեղեցական քան-
թէ քաղաքական իրողութեանոյ վրայ կը
խօսի, և սեղղակի երրորդ դպրութենէն կը

սկսի , գուցէ առաջին և երկրորդ դպրութիւնք համարելավ իրմէն յառաջ եղած պատմաբանից գրածները . և կամ գուցէ ինքնին դրած է առաջին և երկրորդ դպրութիւնքը , բայց կորուսուած են :

Ե՛ բորդ Դպրութիւնը (որով կը սկսի Գիրը) կը պարունակէ Դրիգոր | ուսաւորչի և իւր Որդւոց և Թառանց հայրապետութեան մասնակի պատմութիւնը , մանրապատում և օրինաւոր կարգաբանութեամբ : Չորրորդը (որ առաւել նշանաւոր մասն է) կը պարունակէ գիտաւորապէս Անծին Ներսախի պատմութիւնը , կենսագրական յատկութեամբ , Հայրենեաց և Եկեղեցւոյ շինութեամն համար կատարած սիրագործ առարքները , մարդասիրական և աստուածսիրական յորդորները և նորա ժողովրդասէր և խնամու կենաց մանրանկար պատկերը , որոյ զննութիւնը ընթերցողի սիրտը կը գրաւէ : Հինգերորդ Դպրութիւնը առաւել քաղաքական իրողութիւններ կը պարունակէ և ընդ նմին Անծին Ներսախի մահուան աղետաբեր դէպքը : Իսկ վեցերորդը կը պարունակէ Հայոց թագաւորութեան երկու բաժանուիլն (յունական բաժին և պարսկական) և քանի մի ժամանակակից եպիսկոպոսաց վարքագրութիւններ :

Ի՞իւղանդայ երկասիրութիւնը շատ հե-

տարբնական դէպքեր կը պարունակէ իւր մէջ նախարարութեանց վրայ , ազգային սռ վորութեանց վարուց և աւանդութեան վը բայ . որոց մանրագնեին հետազօտութիւնը բաւականին լուս կարող է տալ նոյն ժամանակեայ ժողովրդային կենաց վրայ : Ասկայն Իշխանութայ անձին և գրաւոր գաստակոց վրայ զանազան կարծիքներ կան . ոմանք զինքը Յոյն կը համարին և պատմութեան ոկզբնագիրը յունորէն , և ապա հայերէն թարգմանուած . ոմանք չայ կը համարին և իւր երկուսիրութիւնը հայերէն յօրինուած , ու մանք Յոյն կը համարին իւր անձը , բայց մի անգամայն և հայոգէտ և հայերէն աշխատասիրուած . և այլն : Այսիօրինակ կարծեաց լուծումն բանասիրութեան և ազգային պատմակ սն գրագիտութեան առարկայ համարելով՝ անդէպ կը համարինք հետազօտել այս տեղ :

ԱԱԱԿ ՊԱՐԹԵՒ . — Այս մեծանուն և մեծագործ անձի վրայ արդէն խօսած ենք , որ պէս հայրենասէր և ուստւ մնասէր հայրապետի վրայ , խօսինք այժմ՝ որպէս եկեղեցական հոգեպատում մատենագրի վրայ : Ա . Աս հակ , իւր գրաւորական աշխատանքը զբհած է գլխաւորապէս այլ և այլ թարգմանութեանց և մանաւանդ թարգմանութեան Առաստա-

ծաշունչ Գրոց , որ ՚ի վեր է քան զամենայն
մատենապրական երկուսիրութիւն : || Ակայն
ունինք նմանապէս Առհակայ քոնի մի ինք-
նագ / թ գրուածքները , այն է կանոն , վեց գլո-
ւուխ բաժնուած , որ ՚ի աղօրշապատու ժո-
ղովէն զինի զբկուած է Հայաստանի զոնա-
զան առաջնորդական գաւառները : || յա
կանոնաց մէջ ամենալուստուոր կերպով քա-
ցարուած է եակիսկոպոսաց , քարեպիսկոպո-
սաց , քահանայից և վանականաց պարուբը առ
ժողովուրդն և ժաղափրոց պարագն սեռ : || ա-
ռուած , առ եկեղեցին և առ իրեարո , ա-
ւանդուած են ուսումնասիրութեան և ո-
զորմածութեան անհրաժեշտոց պատուերներ ,
և ընդհակառակն սաստիկ յանդիմանուած է
ուսումնատեցութիւնը , կաշոռաբեկութիւնը
և անդթութիւնը . բայցարուած է ժողո-
վորոց եկեղեցական նույիրաբերութեան և
եր՝ խոյրեաց հաստատութիւնն ՚ի | տա-
ւորչէն , և ընդ նմին տաճարաց , վանոց և
ինչ ինչ տօնից սկզբնաւորաւթիւնը և նշա-
նակութիւնը , և այլն և այլն :

Հետք թխուղլք , առզլած կ . Պօլսոց Պրոկղ
և Վատաիկոս պատրիարքաց , Փոքր Յէսոդ ոս-
կայսեր , Եկակիոս եպիսկոպոսին և Վատա-
կա զօրավարին : Եղդային եկեղեցական գը-
րոց . կարգուարութեան համար եւս շատ
աշխատած է Ա . Առհակ , և (Օքնութիւնաբեր

ցուցակին մէջ մասնաւորապէս այս խօսքերը
կը յիշուին . “ Ի՞նչ զբանահայոթնեան Ա . Աահա-
կայ գծեաղ՝ յետ քսան և մի ամի արքեպիսկո-
պոսութեան իւրոյ ՚ի ՚յաւասարդ ամսոյ , որ
օր մի էր . և ՚ի քահանայախաղն այլ յաւելեօթն
աւետարան , նոյնպէս և զաղբարենաղն , ՚ի քա-
զաքու գաշտի (այն է ՚ի ՚վաղովուշապատ) ՚ի
վկայարանս Ա . Հարիսիմեանց , յետ հորիւր
և քսան և մի ամին Ա . Գրիգորի , զի մրնշեւ-
ցայն վայր հնովին վարեին ո (1) , Ա . Աահակայ
կընծայուի նմանապէս Եւակ Շաբամթաւ
մէջ երգուած շարականը , որ իւր հոգեւ-
բուղլս իմաստներով և աստուածային բա-
նաստեղծութեան վսեմախոհ և եռանդուն
դարձուածներով բովսնգակ Շարակնոցի
ընաիր ակն կը կաղմէ : Վ ասն զի աստուա-
ծային անհուն մեծաւթեան և մարդասիրա-
կան անհուն խոնարհութեան սքանչելեօք
կըզգածի մարդ , երբ խորհրդազգած հայրա-
պետի հետ կը դիմէ , որ Պարգեւստուն՝
պարգեւ կը խնդրուի , կենսատուն՝ գերեզ-
մանի մէջ կամփոփուի , Ծնմահութեանց Տը-
ւաղն՝ կը խոնարհի ՚ի հող մահու , Արթունն
բնութեամբ՝ մահացելոց մէջ կը ննջէ , բու-

(1) Յովհան իմաստանէր կը խօսի այս մասին և նմանա-
պէս Ա . Աահակայ կընծայէ գիշերային ժամն կարգութեան
ըրու աղօթքները . բայց իւր մէջ բերած աղօթքւերը պիտ-
մաններէն կը տարբեցին :

վանդակ աշխարհի ջնծութիւնը՝ կ'արտասռած
տկար արարածներքն , և այս սքանչելիքը կը
կատարուի ՚ի սէր մարդկային ազգի . որ առ
մեն կերպով մեղանչած է իւր Երարչի և
Փրկչի դէմ :

Ո՞ւսրոգ ՄԱՀՏՈՒԹ. — [Նշպէս լ]. Աահակայ
նայնպէս և Ո՞ւսրոպայ վրայ արդէն խօսած
ենք որպէս Հայաստանեայց դպրութեան և
լուսաւորութեան Հարց վրայ , որպէս Աս-
տուային Գրոց նախկին թարգմանչաց վրայ ,
խօսինք այժմ Ո՞ւսրոպայ մասնաւոր ինքնաւ
գիր երկասիրութեանց վրայ :

Հաւանականօրէն Ո՞ւսրոպայ կ'ընծայուի
մեր ազգային եկեղեցական Ծխարանին սկըզ-
բնաւորական կազմաւորութիւնը , այլ և այլ
ինքնագիր և կամ թարգմանական յօրինուա-
ծով , որ և Ո՞ւալոց անուն կը կրէ . թէպէտ
և վերջին դարերուն մէջ փոփոխութիւն կը-
րած է և մանաւանդ 8դ դարուն մէջ Ո՞ւա-
սոց կաթողիկոսին օրով , որուն վրայ ՚ի ժա-
մանակին պիտի խօսինք : Ո՞ւսրոպայ կ'ըն-
ծայուին նմանապէս քանի մի աղօթքներ և
Ո՞ւեծի Պահոց Աղալխարութեան կարգի շարա-
կանները : Այս շարականները , չընայելով
իմաստից միակերպութեանը , քրիստոնէա-
կան բարեպաշտութեան ամենագեղեցիկ և
ընկական աղեքսանք են : Քրիստոնէայ մի , որ

լիովին կըզգայ մարդկային յանցանքներն ու
աստուածային գիտութիւնը , աշխարհային
փորձանաց վտանգներն ու երկնային խնա
մակալ ռգնութիւնը . մարդկային հոգեւոր
և մարմնաւոր ախտերն ու աստուածային
խնամուտ և բժշկաբար զօրութիւնը , մարդ
կային քարասրտութիւնն ու աստուածային
անհուն սէրր , մարդկային մոլորաւթիւնն ու
աստուածային ամենագիտութիւնը և ճըշ
մարտութիւնը , երբ կըզգայ իւր հեռաւու
րութիւնը և կը փափաքի մօտենալ և միա
նալ Աստուծոյ հետ . ի՞նչ կսկսող է խընդ-
րել , եթէ ոչ գիտութիւն , թողութիւն , օգ-
նութիւն , բժշկութիւն , արտասուզ , գիտու-
թիւն և միութիւն Աստուծոյ հետ : Այս
սրտաշարժ զգացմաւնքներով գեղուն են Ա-
պաշլարութեան շարականները . որոնք աստուա-
ծասէր սրտի խորոց կենդանի և շարժուն
պատկերը կըներկայացնեն , որ երբեմն կրից
ալիքներէն կը ցըզի , կը սասանի և կը հա-
ռաջէ առ Աստուած — | Եր անջին խոյ աղասին +
երբեմն կը սիսալի , կը մօլորի և դառնարու-
բաղձանքով կը գոչէ — ‘Ի՞արձ’ զիւ . երբեմն իւր
զառանցանքները տեսնելով և Աստուծոյ բա-
րութենէն պատկառելով՝ կը խոնարհի և
կ’աղաղակէ . — Ո՛Եղյ . Տէ՛ր , Թղյ . երբեմն
զգալով , որ առ անց Աստուծոյ՝ միշտ կը սոյ-
թաքի , կ’անկանի և կը դալիկանայ , եռանդա-

գին կ'աղերսէ և կը պաղատէ — Ա՛յ Բողըտ
վու, Եպուած իմ, Փ' լսաներ . և երթեմն աշխար-
հի չարիքներն ու աղէտները տեսներով՝ բռ-
լոր մորդկութեան համար կը հայցէ և կը
թախտնէ — Ելլարկիս ողորմեա', Ա'րդասէ՛ք-

Դ.

Երկառիքութիւնք Եզնիկի Կողբացւոյ . Կորիւնի և Դաւ-
թի Անշաղթի . — Ներքին նկարագիր պարունակութեան
խւրաքանչեւրոց :

Եջնակ ԿՈՂԲԱՑԻ . — Եզնիկի վրայ արդէն
խօսած ենք որպէս Ամհակայ և Ա՛նսրոպաց
երիշագոյն տշակերտի վրայ , որ Յովսէփ
պազնացւոյն հետ Եղեսիա ուղեւորեցաւ
ասորական գրքեր թարգմանելու և կամ
հայագիր օրինակելու նպատակաւ , և անոնի
անցաւ Ի՞ւղանդիոնն , ուր իւր ուսմունքը
կատարելագործելէն գինի՝ գարձաւ . ՚ի Հա-
յաստան և գործակից եզաւ Ա . Ամհակին ,
Ա . Դրաց և այլ թարգմանական աշխատու-
թեանց մէջ , խօսինք այժմ նորա ինքնագիր
երկառիքութեան վրայ . Եզնիկ , որ եպիսկո-
պոսական աստիճանի եւս հասաւ և Ի՞ազ-
րեւանդայ վիճակին հովիւ կարգեցաւ և
որ Ա . Յովսէփայ կաթողիկառութեան ժա-

մանակ գումարքւած Աշտիշատի ժողովին
եւս ներկայ գանուեցաւ և ինքն հմաւո էր
Հայ, յայն, պարափկ և ասորի լեզուաց, թռ
ղած է ամենագեղեցիկ ինքնագիր երկասիւ
բռւթիւն մի. Եղջ Աղանդոց անունով, որ իւր
բաղմակողմանի պարանակութեաւիք պրժաւ
նի է խորին մատգրաւթեան :

Եղնիկի երկասիրութիւնը չորս Վ/ՐԲ կը
բաժանուի ի—Եղջ աղանդոց հեթանոսացն. Եղջ ուշին
Պարսից. Եղջ կրօնից Յառհայ իմաստոցն և Եղջ աղան
դոցն Ուրիշունի. Եթէ պատերազմական յաղթու
թիւնը զիմամորա թշնամւոց զօրու. թենէնէն
կը կըս ուի. քննաբանի յաջողութիւն և հմուտ
թիւնն եւ. ս իւր յինաւ թենան առած առար
կոյէն կը շափուի. Ածէ այս համեմատու
թեամբ նկատենիք Եղջնիկի եղծման կամ հերք
ման նիւ թեյը. կը տեսնենիք որ իսկ սա բազ
մափաթոյթ են և գմուարամատոյց—հեթաւ
նուութիւնը իւր բաղմատեսակ ճիւ զերսով.
պարակական քեշը կամ կրօնքը իւր հնարմատ
առարերքով, յաւնական իմաստսափրութեան.
կրօնքը իւր հետաքննին և բաղմակնձիւն
զարգապետութեամբ. և Ուղիսնեան ազոն
զը իւր հրապարիչ և դաշտակղեցուցիչ եւ
բեւութով. Ուկոյն Եղնիկ ամենայն վասա
հութեամբ և յաջողութեամբ քննութեան
և եղծման ելած է այս տարրացած կրօնական
զբութեանց զէմ և իւր վստահութիւնը

իւր բազմակողմանի , հմտութեանց մէջ է ,
որոնք ակներեւ կը տեսնուին իւր նրկասի-
րութենէն :

Եզնիկի երկասիրութեան մէջ կը տես-
նուի Ապուածաբանական խորին և մեկին հրմ-
տութիւն , որով ողջամտօրէն կը խօսի Աս-
տուծոյ գոյութեան վրայ , նորա կատարե-
լու թեանց կամ ստորոգելեաց վրայ , կը բա-
ցատրէ մանաւանդ . Աստուծոյ կանխագի-
տութիւնը խիստ լուսաւոր տեսութեամք
և երկիւղած զգացմունքով և կը ջրէ այն
հեթանոսամիտ և մալար կարծիքները , որով
սմանք տգիտաբար Աստուծոյ ամենաբարու-
թիւնը կը թշնամանեն և մարդ կային անձնիչ
խանութեան չարչաշար գործածութենէն հե-
տեւած չարիքները , աղէտները և պատա-
հարները՝ Աստուծմէ նախասահմանուած կը
կարծեն :

Եզնիկի երկասիրութեան մէջ կը նշմար-
ուի Բնագիտական և Բնապատմական հմտութիւնն,
որով կը ճառէ տարերաց և օդերեւութից
վրայ , եղանակաց վրայ , բուսոց և կենդա-
նեաց յատկութեանց վրայ և սքանչելի կեր-
պով կը բացատրէ՝ թէ Բնչպէս հակառա-
կատարր բնութեան մէջ կը թագաւորէ մի-
անգամայն և զարմանալի կարգաւորութիւն
ու անխռով դաշնակուորութիւն , որ ամե-
նաբարի Արարչապետի ամենակարողս թեան

և նախախնամութեան դործն է :

Եզնիկի երկասիրութեան մէջ կը նշմարուի
Ուսողական հմտութիւն, թէպէտ և քանի մի
սխալներով, որ առաւելիւր ժամանակի ուշ
խալանքը կը համարուին, քան թէ իւր սեպ
հականը : Ժամանակակից դրութեան նայե-
լով՝ Եզնիկի շարժումն արեգական տուած է
և ոչ երկրին, և այս զարմանալի չէ, վասն զի
մենք գիտենք, որ Եզնիկէն յետոյ շատ դա-
րեր հօլոված էին, երբ ուսողական գիտու-
թիւնը պարզեց ինչպէս երկրի շրջանառու-
թիւնը, նոյնպէս և այլ տիեզերախօսական
ճշմարտութիւններ :

Եզնիկի երկասիրութեան մէջ կը տես-
նուի Խմագագրական հմտութիւն, որով Յու-
նաց իմաստնոց — Պիւթագորեանց, “Պատո-
նեանց, Ատայիկեանց և Եպիկուրեանց — վար-
դապետութիւնները համառօտիւ մէջքերե-
լով՝ նոցառւղիղ կամ թիւր տեսութիւնքը կը
զանազանէ, կը գովիզ նոցա ջանքը՝ բնական
լուսով զլամասուած որոնելու համար և կը
պարագու է բաղմաստուածեան մոլորութիւնը:
“Ի խնդրելն զիլիսովիայից (Կ'ասէ) զլամասուած
՚ի բնական օրինաց, որ ՚ի միտան տնկեալ է,
գովութեան արժանի է, բայց ՚ի բազում
աստուածոն անկանել և զաշխարհս նմա մըշ-
տընջենաւորակից դնել, անհնարին ամբարըշ-
տութիւն է ո . և թէ՝ “Օկաման Պատուի

սիրեմ վասն զ լոտուածն խնդրելց և զամբ
բարտաւանութիւնն ոչ գովեմ (1) :

Եղնիկի երկասիրութեանմէջ կըտեսնուի
կրօնագիտական հմտութիւն, ոչ միայն քրիստո
նէական, այլև հեթանոտական բազմատեսակ
կրօնից նկատմամբ, մանաւանդ պարսկական
Քէշին, որոյ վրայ տուոծ լիակատար և ման-
ըապատում ծանօթութիւնքն այժմեան Եւ-
բոպական հետաքննին աշխարհին անգամ (2)
նոր լոյս կրտան պարսկական հին կրօնի վրայ:

Եղնիկի երկասիրութեան մէջ կը տես-
նուի Հնախօսական հմտութիւն, որով կը խօսի
ազգային առասպելոց վրայ (յարալէզի, վե-
շապազմնց, ծովային նհանգաց, ծովացու-
ցի, պայի և բնական աղդեցութեանց), այլև պար-
եկական կրօնի արարողութեանց և առասպե-
լոց վրայ. Օ անտիկ և Անգական կրօնից վր-
այ, նախնի Յունաց, Հերակլեան արձանաց
և գրուածոց վրայ, Հետիոտի, Հոմերոսի և
Պլատոնի վրայ, և այլն :

Եղնիկի երկասիրութեան մէջ կը տես-
նուի Ինչիական հմտութիւն անգամ (որ խիստ
կարեւոր է ժողովրդասէր հովուի համար,)

(1) Եղնիկ . Գիրք Դ . յօդ . Զ . ձէ :

(2) Եղնիկ թարգմանուած է գաղղիարեն և մասաբ-
ընդուաբն և ըստ սերբն :

պրովէ կը բացատրէ քանի մի կենդանեաց և
բուսաց յատկութիւնները, այսահարսութեան
կամ լիկանաց և այլ հիւանդ ութեանց բնաւ
կան պատճառները և կը զգուշացնէ զանա
զան վնասակարութիւններէ :

Այսպէս Եղնիկ իւր բովանդակ քննաւ
բանութեան մէջ՝ մոլորութիւնները և նաև
խապաշարումները եղելու համար՝ ձեռք
առած է երկու ամենամեծ զէնք – Ա. Գիրը
և արտաքին հմտութիւնք . — վասն զի ի՞նքն
Եկեղեցւոյ կողմէն զինած է և նոյնօրինակ
զինուորաթիւնն Ճշմարտութեան համար՝
Եկեղեցւոյ գործ և պաշտօն կը խոստովանի .
“Եւ արդ՝ Եկեղեցւոյ Կատուծոյ գործ այն
է, զարտաքինսն իրօք Ճշմարտութեան տուանց
գրոց յանդիմաննել և զկարծեցեալսն ներքինս
և ոչ Ճշմարտեալս Դրովք Արբովք յանդի
մաննել” ⁽¹⁾ .

Ինչպէս ամեն շահաւետ և ժամանակին
պատշաճ հեղինակութիւնք, նոյնպէս և Եղն
նիկի երկասիրութիւնը ազգուած և գրուած
է ժամանակի սգիւն և ժողովրդի ներքին
վէրբերէն . վասն զի Եղնիկ որպէս զգուշաւ
ցուցիչ և արթուն հովիր գրած է իւր եր
կասիրութիւնը (քանի պատիկ ընդարձակու-
թեամբ արդեօք նոյնը և քանիւ քարոզած չէ)

(1) Եղնիկ . Ա. Գիրք . յօդ . ԽԵ .

այն ժամանակ, երբ մի կողմէն սկսած էր մեր
 Ազգը ծանօթանալ յունական մատենագրու-
 թեան հետ, և երկիւղ կար, որ մի գուցէ
 քրիստոնէական վարդապետութեան տեղ՝
 յունական մատենագրութեան հին դասա-
 կան ոգին ըմբռնէ և լուսոյ փափաքով ծուխ
 գրկախռառնէ . ինչպէս կը պատահի երբեմն
 նոր արթնցած Խողովրդներուն, որ յառա-
 ջադէմ ազգի մի նմանելու եւանդով, շատ
 անգամ, առանց ընտրութեան, խարխափե-
 լով առաքինութիւնները կը թողուն և մո-
 լութիւնները կը գրկեն . միւս կողմէն Պարս-
 կաստան ակած էր ազգել Հայաստանի վը-
 րոյ, և արքայից արքաները հետամուտ էին
 իրենց դէնին դարձնել հպատակ ազգերը,
 ընդ որս և մեր Ազգը . և երրորդ կողմէն
 Արկիոնի աղանդը օր աւուր կը յուղէր մըտ-
 քերը և կը տարածուէր քրիստոնէից շատե-
 րուն մէջ . Իաց Յայսմանէ, արդարեւ, աւ-
 և տարանական փրկորար լոյսը տարածուած
 էր Հայստանի մէջ, բայց հեթանոսական
 կրօնի ներբին նոխապաշտումները, հմայու-
 թեանց և կախարդութեանց հաւատընծաւ
 յութիւնները և մանաւանդ ճակատագրի
 և բախարի խորարմատ տպաւորութիւնները
 տեղ տեղ տակաւին կը ճարակէին :

Եղնիկ իւր կորովի աշքերտով տեսնելով այս
 արտաքին և ներբին վասանգները, և զգալով՝

թէ հեթանոսական նախապաշարումները ո՞ր չափի անարգանք են աստուածային բարութեան և նախախնամութեան և միանդամայն նուաստացոցինքի քրիստոնէական ոգւոյ, ուստի և գրած է իւր անմահ երկասիրութիւնը:

Այսպիսի որչափ պիտի զարմանար և արտասուէր լովնիկ, եթէ յառնէր և տեսնէր, որ իւր ժողովուրդը, 18 դարեան քրիստոնէութենէն զինի, այսօր շատ տեղ բաղդի և ճակատագրի կը հաւատայ, շատ տեղ անմիսիթար կը յուսահատի, որպէս թէ ինքն չար սատղի տակ ծնուած է և իւր ճակտին աղէտք և տառապանք գրուած են, շատ տեղ հմայական պատրանքներով իւր յաջողութիւնը և ծախորդութիւնը կը կշռէ, և կ'ամաչենք ասել, շատ տեղ անմիաբանութիւնը և հետեւապէս ստրկութիւնը Հայուդատապարտութիւն կը խոստովանի, իսկ հատակուտոր քարոզիչներէն շատերն եւս, փոխանակ սոյն օրինակ նախառաշարմանց դէմ զինելու և աստուածային բարութեամբ ըսփոփելու, բայց դժոխացին սպառնալիքներով կը սարսափեցնեն :

Ի՞աց 'ի լող աղանդոց գրքէն, լովնիկին կ'ընծայուին նմանապէս և ընտիր Խրառք զանազան կարգի անձանց և մանաւանդ կրօնաւորաց և առաջնորդաց համար գրուած : Ի՞այց ոմանք նոյն Խրառքները Ո. Նեղոսին կ'ընծայեն

և Եղնիկ միայն Թարգմանիչ կը համարեն.
ինչ ինչ յաւելմամբ :

Կորուն . - Առաջին Թարգմանչաց դասէն
է , որ Իիւզանդիոնի մէջ ուսումն լրացնելէն
յետոյ՝ Ռնձակայ հետ Երուսաղէմ գնաց և
այն տեղէն կիւրղի Երուսաղէմացւոյ ԱպաՀ
իարողարձակիւլու իարժը Հայաստան բերաւ . : Կո-
րիւն ուղեկից գտնուեցաւ Ա'եսրոպայ ու
սումնամիրական և վարդապետական Ճանա-
պարհորդութեանց և Ասհակ հայրապետէն
Ճեռնադրուեցաւ եպիսկոպոս Վրաց : Թարգ-
մանական վաստակէն ՚ի զատ Կորիւն գրած
է Ա'եսրոպայ Պատմութիւնը , Յովսէփ կա-
թողիկոսի և իւր միւս ընկերաց խնդրանօք ,
վասն զի ինքն միշտ ականատես էր իւր
վարդապետի առաքելական վաստակներուն ,
որոյ համար և կ'ասէ . « Ոչ եթէ ՚ի հին համ-
բաւոց տեղեկացեալ , այլ որոց մեր իսկ ա-
կանատես եղեալ կերպարանացն և առ ըն-
թերակաց հոգեւոր գործոցն և լսող շնոր-
հապատում վարդապետութեանն և նոցին
(Ասհակայ և Ա'եսրոպայ) արքանեակք ըստ
առեւտարանական հրամանացն » : Կորիւնի
երկասիրութեան մէջ թէպէտ և կը պակաի
Ա'եսրոպայ կենսագրութեան այն մասը , որ
անցուցած է Հայաստանի արքունեաց մէջ ,
սակայն վարդապետական ընթացից վրայ այն-

այիսի ստուգապատռւմ տեղեկութիւններ
կ'աւանդուին , որ վարդապետական կոչման
և պարտաւորութեան վկայ գաղափար ու
նենալու համար՝ բաւական է միայն Լորիւ-
նի երկասիրութեան մէջ ԱՌեսրոպայ կեանքը
կարդալ , որ այս նշանաբաննը կը պատկերացնէ
մեզ . . Ակրեւ ժողովուրու , զբար ժողովը մէջ , բառ
որպահիւ ու լուսաւորել ժողովուրու և պահպանիւ-
նըն ու խառարը հայածել , որոնք ժողովը ամենավը
բանդաւոր իշխանիներն են .

ԴԱՏԻԹ ԱՆՑԱՆԹԱՆ Տարօնոյ Հայրը գաւառ
ու Հերեթ կամ Հերեան գիւղէն , կամ ըստ
այլոց Աերգիւն աւանէն , և ըստ այնմ
Աերգինացի , ԱՌուսէ Խորենացւոյ քեռոր
դին , կրտսեր թարգմանչաց դասէն , որ իւր
իմաստասիրական և աստուածսիրական հրձ
տութեան և բնաւորութեան համար կը կոչ-
ուի Խմաբանը , Անյաղը , Փիլիպոփայ , Առամեծ
Փիլիպոփայ , Աստրածանը , որ Յունաստանի
մէջ իւր հայկական տաղանդը շահեցնելէն
և փայլեցնելէն զինի դարձաւ Հայաստան .
հայրենեաց դառն վիճակը տեսաւ և աղօթքը
արտասուաց հետ խառնելով և հանձարը
գրոց մեռաւ և թաղուեցաւ Տարօնոյ կ'ա-
զարու վանքին մէջ , որոյ գերեզմաննը կը դիմեն
տակաւին իմաստասիրութեան և ճարտարա-
խօսութե՛ ձիրք ինտրոզները մեծ փափաքով

Դաւիթ երկասիրած է ինքնագիր եւ
թարգմանեալ գրուածքներ։ Ինքնագիր եր-
կասիրութեան մէջ նշանաւորէ Խաչը նորբողը
որ գրած է Գիւտ կաթողիկոսի խնդրանօք,
ինչպէս նոյն կաթողիկոսի նամակը և ձառի
յառաջաբանը կը ցուցնեն, թէպէտ և ո-
մանք կ'ասեն թէ՛ Աթենքի մէջ Խաչի նշա-
նին առջեւ խօսած է սեան կամ աշտարակի
վերեւէն, որպէս աւարտական ցոյց իւր
եօթնամեայ ուսումնառութեան. ոմանք կ'ա-
սեն թէ՛ Աթենքէն Ի՞իւզանդիոն դարձած
ժամանակ Խաչի Վ երացման տօնին խօսած
է իւր ընկերաց խնդրանօք, և ոմանք թէ՛
Երուսաղէմ ։ Խաչին առջեւ խօսած է :

Յիշեալ Ներբողին մէջ գեղեցիկ պեր
Ճախօսութեամբ կը գրուատվի Խաչը որպէս
լրումն հին Լոտակարանին մէջ գտնուած բռ-
լոր օրինակաց, այն է որպէս տունկ, որոց
պտղովն ամենայն տիեզերք լցան, որպէս
կենսաբեր ծառ Ադինայ, ՚ի կենդանութիւն
մահացելոց, որպէս ցուպ և գաւազան միսի-
թարութեան, որպէս տապան և լաստ աւպ-
րեցուցիչ ՚ի ծփական ալեաց աշխարհի, որ-
պէս ծառ Աաբեկայ, յորմէ կախեալ գոհիւն
փրկեցան ծնունդք Ադամայ՝ որպէս սան-
դուխք վերելութեան յերկինս, որպէս գա-
ւազան, որով վիմացեալ սիրտք հոսանուա-
գործին և պատառին ծովք մեղաց, որպէս

այս կրող անտանեցի լուսոյն և հրայն , և այլըն և այլն . Ի՞աց յայսմանէ կը բացատրուի նոյն ներբողին մէջ թէ Բ' նչ զգացմաւնքներ պարտին ունենալ բրիստոնեայք իրաշի նշանին առջեւ . — « Հոգւոյ ակամիք իբր աչօք մարմնոյ յայտնապէս նկատելով՝ հաւատացի իբր թէ այժմիկ իսկ Ա՝ իածինն Նօր բազկատարած ՚ի սմարեւեռեալ տեսանի . և առակաւին իբր թէ ցնցուղ փրկական աղբեր սուրբ արեանն ՚ի կենարար տնօրինեցելոյն կողէ այժմիկ իսկ առաջի աչաց մերոց կայլափացեալ հրաշիւք յաներեւոյիմս զբանաւոր երկիրս առոգելով փրկագործէ . . . ՚Քանզի ուր իրաչ անդ և իրաչեցեալն , և ուր իրաչեցեալն՝ անդ և իրաչելութիւնն . . . ասելով իսաչ՝ աստ իմասցի ՚Պողգոթա և աստէն իրաչելութիւնն , աստ զենումն և ՚ի սմին փրկագործութիւն . . . որ և երկնայնոցն աստանօր յայտնապէս ցուցեալ թարգմանեսցի աստուածութիւնն յերկրի և մարդիկ յերկինաւոյ

իրաչի ներբողէն զատ՝ ՚Դաւթի միւս երկասիրութիւննքն առաւել գիտական են և իմաստասիրական , ուտոի և եկեղեցական պատմութեան հետաղօտութենէն արտաքոյ, ինչպէս են՝ ՚Պատճառ յաղաց յերականութեան . ՚Ակմանաց Գիրք կամ՝ ասկմանք իմաստասիրութեան , որ գրուած է ՚Պիւհռոն յոյն փիլիսոփայի վարդապէտութեան դէմ , որ ամեն բանի

վլայ. տարակուսիլը կամ վարանիլը իմաստու-
 թիւն համարած էր և ստացած էր շատ հե-
 տեւողներ։ Այսմանաց գրքի ցունարէն գրտ-
 նուելու պատճառաւ՝ ոմանք կը կարծեն. թէ
 Դաւիթ նախ յունարէն գրած է և ապա
 հայերէն թարգմանած, ոմանք զԴաւիթ մի-
 այն թարգմանիչ կը համարեն և ոչ հեղինակ,
 որովհետեւ նոյն գրքին վերջին գրտիր Դիր-
 գոր Նիւսացու գործոց մէջ կը տեսնեն և ո-
 մանք սկզբնագիրը Դաւթայ կրտան և թարգ-
 մանութիւնը . նոր դարու գործ կը համարեն։
 Անրաժամանակ Պրէտիւրի, Արքակրութիւն, Արքու-
 թոփէլք, Արքափոփէլք յաղափս մեկնութեան (Պե-
 րիարմենիաս), Անկնութիւն Դաւթի Դ. Վլըլըւծա-
 խան Արքափոփէլք, Արքափոփէլք Առողջուր առ Արքու-
 թոփրու Առաջաւոր յաղափս աշխարհի և յաղափս առա-
 ժինութեան։ Այս ամենը թարգմանութիւնք
 են ինչ ինչ մեկնութեամք, որոց մէջ կ'երե-
 սի Դաւթի յունական իմաստասիրութեան
 հմտութիւնը, բայց դժբաղդաբարձատ տեղ
 իսպառ անհասկանալի են, վասն զի առաւել
 հեղենաբանութեան քան թէ հայաբանու-
 թեան տիպ կը կրեն, նորաստեղծ բառերով
 և գարձուածներով։

Ե .

Երկուիրութիւնք գիւտայ . Յովհանու . Մանդակունաց .
Ալվագուի խորենացույ և Մամբէի Վերծանողի . — Ներ-
քին յատկական նկարագիր պարունակութեան իւրա-
քանչիւրոց :

ԳԻՒՏ . — կրտսեր թարգմանչաց դատէն ,
Տայոց դաւառի , Արահեզզայ գիւղէն , որ
կաթողիկոսութեան աստիճանի ևս հասաւ ,
սակայն կաթողիկոսութեան վրայ երրորդ
Ը ըջանին մէջ կը խօսինք , իսկ այժմ միայն
իւր գրաւոր մնացորդքը նկատենք :

Գիւտ մասնակցութիւն . ունեցած է յա-
մագրոց և հասարակաց աղօթից կարգա-
դրութեան մէջ . վասն զի նոյն գրոց խորա-
գրին մէջ իւր անունը դրոշմուած է . Ունի
թուղթ մի առ Դաւիթ անյաղիթ Խոսկ ներբող
խնդրելու համար (ինչպէս վերը յայտնեցինք)
որոյ ստորագրութիւնը այսպէս կը վերջանայ .
— « Գիւտ դագաշեալ և գերեզման ՚ի գար-
շապար և մահու մերձաւոր . դրուատ հայ-
ցեմ . Հայոց հօտի հովուապետ և վերադի-
տող տանն Արշակունեացու . Ունի գարձեալ
թուղթ մի քրիստոնէական զգացմամբ և
պերճախօսութեամբ զեղուն , որ գրած է
Ազուանից Ա աչե թագաւորին , երբ նա ա-
ռաւելլաւ համարած էր իւր թագը և մո-

գութեան կրօնքը զոհել, քան թէ ուրացութեամբ թագաւորել:

Յովհան ՄԱՆԴԱՊԻԿԻ. — Արշարունեաց
Օախնոտ գաւառէն, Այհակայ և Անսրու
պայ աշակերտներէն, որ եսթանասուն հինգ
տարուան հասակին մէջ Վահան Ամիկունեանի և
աղգի թախանձանքով կաթողիկոսականն
աթոռը նատաւ, որոյ հայրապետական գործոց վրայ խօսիլն երրորդ Ըսթանին
թողլով այժմ՝ միայն կը խօսինք իւր գրաւոր
երկասիրութեան վրայ ։

Աշոտոցի կարգաւորութեան մէջ Յովհան Անդակունիին կ'ընծայուին — Ակրոտութեան կանոնը, խաչ օրհնելու, պատկիւնից հիմնարկէից օրհնուաթիւնը, տաճարի սրբութիւնն և աւազանի օրհնուաթիւնը պատարագամանատուցին մէջ — զանազան քարոզներ և աղօմքներ և Ա. Ամանասի կոչուած պատարագամանատուցը. Ասմագրոց մէջ — գիշերային ժամու. Օպիւոցքալ և Օքէնգունամի, հոգեբուղիս աղօմքները և ճաշուժամու. Երեք քարոզներն և աղօմքները :

Էազար Փարապեցին իւր պատմութեան մէջ աւանդած է Յովհան Անդակունիի մի Ապէնաբանութիւնը, զոր խօսած է Պունայ եկեղեցւոյն մէջ մեծագումար բազմութեան առջեւ Վահան Ամիկոնեանի մարզպա-

նական իշխանութիւն ստանալու ուրախաւ կան հանդիսին առթիւ : (Կերունի հայրապետը այս ատենաբանութեան մէջ երբեմն կըզմայլի և կըհիանայ Աստուծոյ և իւր եկեղեցւոյ սքանչելեաց վլայ՝ հրաւիրելով ըգբազմութիւնն յօրհնութիւն . « Աշկեղեցիս օրհնեցէք զԱստուած և զՏէր յաղերացն Խրայէլի : Ահա սիրեցէք զեկեղեցիս և սիրեցայք յեկեղեցւոյ, զմագաւորս քաղցրացոյց եկեղեցի, զգազանս ընտելացոյց, ըգդայլս գառինս արար, զձեզ պայծառ ացոյց, զմշնամիս ճշմարտութեանս ամաչեցոյց ո . և երբեմն բազկառարած կ'աղաղակէ, որ հայրենեաց երկարատեւ անտէրութենէն և պարսկական հաղածանքէն յետոյ՝ Հայ մարդ սրան կը տեսնէ Հայաստանի վլայ, կ'աղաղակէ գոհութեամբ . « (Կրհնեալ աէր Աստուած Խրայէլի, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս, որ ինձ հաւատացաւ, պատուով շքեղութեամբ պայծառ ացեալ ՚ի Քրիստոսէ ո . և այս աղաղակը արձագանք կըտայ ունկնդրաց սրտին մէջ, որոնք ատենախօսութենէն զինի՝ ինդութիւն և արտասուք իրար խառնելով կ'ողջագուրեն զԱ ահան և կ'ուխտեն ՚ի աէր և ՚ի միաբանական աշխատութիւն :

Ի՞աց ՚ի վերոգրեալ գրաւոր մնացորդներէն, (Յովհան Աանդակունին երկասիրած է

Նոյնպէս աղօթք, կանոնք, խրատք և քսանութիւն չափ խափ խրատական և վարդապետական ճառք կամ քարողք զանազան նիւթոց վրայ, այն է խոսովանութեան, աղքատաց միա թարութեան, սիրոյ, քահանայի տեսչութեան, լկուի տեսաբրանաց կամ խաղուց, գիւթեական հմայից, ոխակալութեան, արբեցութեան և այլ ահոելի մոլութեանց, և այլն և այլն ։ Թէպէտ և ինչ ինչ ձեռագրաց մէջ այս ճառերէն մի քանիսն Եփրեմի և Ասկերերանի անունը կը կրեն, բայց որովհետեւ նոցագրաւոր գործոց մէջ չեն գտնուիր. ուստի և Յովհանու կ'ընծայուին :

Այս ճառերու պարունակութենէն պարզապէս կը տեսնուի որ միայն գրով գրուած չեն, այլ և կենդանի քարքառով խօսուած են ՚ի լրւր ժողովրդեան : Ա ասն զի մի կողմէն կը տեսնուի սաստիկ յուղմունք, սոսկումն, դողումն և զայրոյթ ժողովրդի մէջ գտնող ւած մողութեանց դէմ, իսկ միւս կողմէն հայրական յորդոր և հրաւեր ՚ի դարձ և յառաքինութիւն : Ո՛էկ կողմէն հօտի անօրէնութիւնքը և միւս կողմէն հովուական պարտաւորութեան և պատախանատուութեան լիովին գդացումն ծանրացած կ'երևին առաքինի հովուին վրայ, որ կը հեծէ, կըզարհուրի, արտասուք կը խնդրէ իր գլուխը լաւ լու և քաղմիցս կը պատկառի և կը կարկամի

մոլութեանց զազրութիւնները թռւել։ Ի՞սկ պէս խօսած են ամեն ընտիր հովիւներ , որոնք կորովի աչքերով թափանցած են ժողովոդի շարժմանց և գործոց խորքը , և պարունակարած են սրբել և մաքրել Աստուծոյ աեպհական հօտը ամեն աղտեղութենէ և մարդը իր առառուածային պատկերով տեսնելը

ԱՌՈՎՍԽԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ . — Տարօնոյ խորնի կամ Խարօնք գիւղէն , կրտսեր թարգման չաց դասէն , Աահակայ եւ Աեսրոպայ հրամանաւ ճանապարհորդեց ՚ի Աիւնիս , Անդեսիա , ՚ի Քիւզանդիսն , յլնստիոք , յլմէնս , ՚ի Հռովմ , ՚ի Պազեստին , յլողէքսանդրիա , և իւր հայկական հանձնարը ճոխացոյց պատմագրական և քանասիրական հմտութեամբ , որով և իրաւամբ Հայ պատմագրաց անուանեցաւ իւր ժամանակակիցներէն և յետագաներէն Աշրբոր վերադարձաւ Առվակութիւններէն և յետագաներէն վախճանած գտաւ իւր երանելի վարդապետները Աահակ և Աեսրոպ և թագաւորն Առամշապուհ և Հայրէնիքը քաղաքական աղէտներու մատնուած , ուստի և ընկալուչ ինամակալութիւն մի չըտեսնելով իշխանաց և մեծամեծաց կողմէն՝ իւր անձը տիսուր և վշտակիք առանձնութեան տուաւ , արտասառելով

Հայրենեաց և եկեղեցւոյ բազմազէտ վիճակը
թէպէտ և կ'աւանդուի, որ երկար տարինե-
րէն յետոյ Ո՛ովսէս անակնկաղ կերպով յայտ-
նուեցաւ, որպէս աղքատիկ մուրացկան, իւր
աշակերտակից Դիւտ կաթողիկոսէն սիրալիքը
ընդունելութիւն գտաւ և Եղնիկի մահ-
ուանէն յետոյ Բագրեւանդայ և Աշարու-
նեաց գաւառներուն վրայ եպիսկոպոս կար-
գուեցաւ . բայց Ղազար Փարպեցւոյ առ
Վահան Ո՛ամիկոնեան գրած Թղթէն յայտ-
նապէս կ'երեւի, որ Ո՛ովսէս ոչ միայն ՚ի
կենդանութեան շարունակ տառապանաց
մէջ անցուցած է իւր կեանքն, սյլ և յետ
մահուան՝ ուսումնատեաց և օտարամոլ ե-
կեղեցականք ոսկեբքը գերեզմանէն հանելով
ջուրը թափած են . այսպէս անարգաբար
հալածելով այն անզուգական անձը, որ Հա-
յոց ազգի անունը անմահացուցած է աշ-
խարհի վրայ :

Ո՛ովսէս նուիրած է իւր գրիչը թարգմա-
նական աշխատութեանց, վասն զի զինքն
կ'անուանէ, « Այր ծեր և անպարապ ՚ի
թարգմանութեանցո. բայց յականէ յանուա-
նէ որոշուած չեն իւր թարգմանական աշ-
խատութիւնքը ինչպէս և այլոցը : Ուստի
և մենք համառօտիւ կը խօսինք միայն Ո՛ով-
սիաի ինքնագիր երկասիրութեան վրայ :

Ո՛ովսիսի ինքնագիր երկասիրութեանց

մէջ գլխաւորն և միանգամայն Աւրոպական գիտնոց գովեատից արժանացածն է նորա Պատմութիւնն (1), որ գրած է Ասհակ Շագրատունի իշխանի խնդրանօք : Այս պատմութիւնը արդէն մանրազնին քննադատութեամբ գնահատուած է արժանապէս քանի մի հայ և օտարազգի բանաատէրներէ, մանաւանդ Վիկտօր Անգլուա արեւելագէտ և հայասէր գաղղիացիէն, ուստի և մենք այս քննադատութեան ամփոփումն գրագիտութեան պատմութեանը թողլով համառօտ գծերը միայն յառաջ կը բերենք :

Խովախսի երկասիրած պատմութիւնը կը սկսի Հայկազնոց նահապետական հարըստութեան սկզբնաւորութենէն և կ'աւարտի Արշ կաւնեաց թագաւորական հարստութեանկումովն, այն է կը պարունակէ մեր ազգի 2780 տարուան պատմութիւնը : Այսպէս որ չափ որ պատմական ժամանակամիջոցը երկար է, այնչափ և պատմութիւնը համառօտ . և այս համառօտախօսութեան պատճառ գլուխաւորապէս պատմագրի ծերութիւնն եղած է (զոր տեղ տեղ ինքնին յառաջ կը բերէ,) և ոչ իւր հմտութեան պակասութիւնը, վասըն զի պատմութեան իւրաքանչիւր գլխէն

(1) Խորենացւոց պատմութիւնը թարգմանուած է Ատմիներէն, Գաղղիարէն, Խալերէն և Ռուսերէն, հետաքննին ծանօթութեամբք հանդերձ :

կոնշմարութի Այսկիսի բազմակողմանի հրմառութիւնը : Արդարեւ՝ Խորենացին իրքեւ ազգային պատմութեան նախահայր՝ բաց ՚ի առանդութիւններէ չէ ունեցած ուրիշ ազգային պատմագրական աղբիւր, բայց հետազոտած է բազմաթիւ օռարազգի պատմիններ և որոց անունները կը լիչուին: իւր պատմութեան մէջ) և զանազան աղբիւրներ, այն է Հոռական, Քաղցեական, Ասորական, Ապահանուկ Պատմութեան և Հրեական :

Խորենացայ Պատմութիւնը երեք գիրք բաժանուած է , որոց առաջինն կը կոչուի Շնորհանուանիւն Հայոց Նեծաց , որ կը պարունակէ պատմագրի Շնորհայիւնն առ Ասհակ Բագրատունի , Ա: Պատմ ծննդաբանութիւնն և ապա (Այրիբասայ հետեւողութեամբ) Հայկազանց տանուտիբական կամ նահապետական սփառմութիւնը , Հայկէն մինչեւ Ա ահէի վախճանն , ամփոփելով մի փոքր յաւելուած եւս Ինիւրասպի Աժդահակայ նը կատմամբ եղած պարսկական առասպելախառն դէպքին վրայ : Երկրորդ Վիրքը կը կոչուի Շնորհայիւն Աստվածանիւնն Աստվածան Ներոց , և կը պարունակէ մեր ազգային պատմութեամենէն Ճոխագոյն մասը մեծին Աղէքսան գրի աշխարհակալութեան ինչ ինչ դէպքերէն և Արշակունեաց հարստութեան սկըզբնաւորութենէն մինչեւ Տրդատայ թագաւոր

առուսթիւնը : Իսկ երրորդ Գիրքը կը կոչուած
Էւարդաբանութիւն մերոց հայրենեաց , որ կը պա-
րունակէ Տրդատայ թագաւորութենէն մին-
չեւ Արշակունեաց հարստութեան անկման
պատմութիւնը : Էյս վերջին գլխոյն մէջ
քաղաքականին հետ խառն է և ազգային ե-
կեղեցական պատմութիւնը , այն է Տրդատայ
Գրիգորի և իւր յաջորդ հայրապետաց ժա-
մանակ կատարուած քրիստոնէական և եկե-
ղեցական եղելութիւնները , որոց վսայ ար-
դէն խօսած լինելով՝ աւելորդ կը համարինք
կրկնել :

Խորենացւոյ պատմութիւնը կ'աւարտի
մի սրտաշարժ Ոիլով հայրենեաց և եկեղեցւոյ
վիճակի վրայ , որուն մէջ արտասուաթոր և
անմիմիթար կը ներկայանայ այն հայրենասէր
ծերունին , որ Հայկայ , Արքամայ , Տիգրան
ներու և այլ ընտիր անձանց պատմութիւնը
աւանդած ժամանակ՝ կարծես մանկանալով
կը խայտայ : Երբոր կը յիշէ Հայրենեաց մե-
ծութիւնը , եկեղեցւոյ պայծառութիւնը և
ներկայ աղջտները , թագաւորութեան բար-
ձումն , արտաքին արհաւելիքները և ներ-
քին զեղծումներն սիրան կը մորմոքի և մի-
անգամսյն ընթերցողը յարտասուս կը շարժէ :

Ծովմա Արծրունին չորրորդ Գիրք մի ևս
կը յիշատակէ Խորենացւոյ պատմութեան ,
բայց այս Գիրքը մեզ չէ հասած , ինչպէս և

“Տաղբն չափու յինքն և ՚ի Աահակ Բագրա-
տունի” :

Պատմութենէն յետոյ Խորենացւոյ ան-
ուամբ եղած երկասիրութիւններն են — 1.
Աշխարհագրութիւն, որ աւելի թարգմանու-
թիւն քան թէ ինքնագիր երկասիրութիւն
դատուած է քանասէրներէն . 2. Պիտոյից
Դիրք . տառն ձառէ բաղկացած, թէոդորա-
անուն աշակերտին համար իգրեւ ձարտա-
սանական ուսման օրինակներ աւանդուած,
որ առաւել գրովի պատանեկան հասակի
խաղալիք կը համարուին քան թէ հիմնաւոր
աշխատասիրութիւն : 3. Պատմութիւն Արքունիոյ
Աստուածածնի, և պատիւրի նորա, որ գրած է,
նոյնպէս Աահակ Բագրատունւոյ խնդրանօք,
այն աւանդութեան հիման վրայ, որով կը
պատմուի թէ Ա. Կուսի պատկերը (Յովհան-
նէս աւետարանիչն փորագրած էր կիպարիս
փայտի վրայ և Բարգուզիմէոս առաքեալն
առնելով միւս առաքեալներէն բերած էր ՚ի
Հայաստան և գրած Հոգեաց վանքի մէջ :
4. Ներբող ՚ի Ա. Հովհաննէ, վառվուն ի-
մաստներով և զգացմունքներով զեղուն, և
5. Շառ Վարդավարի :

Բաց յայսմանէ Առվասիսի անուամբ կը
գտնուին այլ և այլ մեկնական և քերականա-
կան երկասիրութիւններ, բայց Խորենացւոյ
սեպհական լինելուն համար տարակուսու-

Թիւն կայ, որովհետեւ ԱՌՎԱՅՍ անռւնով
շատ հեղինակներ եղած են :

Աւանդութեամբ ԱՌՎԱՅՍ Խորենացւոյ
կ'ընծայուին նմանապէս քանի մի Հարականեր,
ինչպէս են՝ ՃՌաֆալը-յի ուրախացին, Տեառելը-
դառապջ իաննն, Հոգիդալապէան առաջին պար-
փրն, և այլն :

ԱՄՐԻՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ. — Խորենացւոյ կրրու-
սեր եղբայրն, որ իւր եղբօր նման ճանա-
պարհորդած է զանազան քաղաքներ ուսու-
մնասիրութեան փափաքով : ԱՄԲՐԵՒ ան-
ուամբ գտնուած երկասիրութիւնք միայն
երկու ՃՌԱՓ են — ի Յարութիւնն Դաղրու և ի
Գալուստի Քիշխառսի յլըրուսողիմ : Կաւանդէ
Ծառվան Արծրունին, որպէս թէ Ա ահան Ար-
ծրունւոյ հրամանաւ պատմութիւն ևս եր-
կասիրած է Ա ամբրէ, քայլ այսպիսի փափա-
քելի աշխատութիւնը գուցէ ի կորուստ
մատնօւած է : Ա ամբրէի յիշեալ ճառերէն
ի Յարութիւնն Դաղրու գրածն պերճախօսէ
և միանգամայն քրիստոնէական իմաստու-
թեամբ զեղուն : Ա ետարանական վսեմ ըս-
քանչելիքը արձագանգ գտած է Ա ամբրէի
սրտին մէջ, որով և նուագած է աստուածա-
յին սիրոյ մեծութիւնը և մահու թագա-
ւորութեան կործաննումն, հռչակելով յա-
րութիւն և անմահութիւն . « Այլասցէ մահ

զկործանումն իւրոյ թագառարութեան (կ'աշ-
ղաղակէ Ա'ամբըէ), կածեսցեն և դժոխք ըդ-
քակտումն իւրոյ զօրութեանն : . . . (Օ'ափս
հարցեն հաւատացեալք 'ի նորոգմանն Դա-
զարու . սուգ առցեն դեւք զինքեանց տե-
սանելով զկործանումն : Աւետարանեսցին՝
որոց 'ի գերեզմանս բնակին յոյս յարութեա-
նըն . մի այսուհետեւ զարհուրեցուսցէ ըզ-
մեզ մահ . . .

9.

Երկասիրութիւնք Եղիշէ վարդապետի և Ղաղարայ-
ֆարպեցոց . — Ներքին յատկական նկարագիր պարու-
նակութեան իւրաքանչիւրոց :

ԵՎԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ . — Կրտսեր թարգ-
մանչաց կամ երկրորդ աշակերտաց դասէն ,
Վարդան Ա'ամիկոնեանի ատենադպիրն , որ
թէպէտ իւր գրուածոց խորագիրներուն
մէջ սովորաբար Վարդապետ կը կռչուի , բայց
Ա'ամիկոնեան նախարարական տան եպիսկո-
պոսն էր , որ և Արտաշատու ժողովի եպիս-
կոպոսաց կարգին մէջ կ'անուանի Եղիշէ Եպիս-
կոպոս Ա'ամիկոնեանի Հայաստանի հարտահա-
րութեան . և հալածանաց օրերուն ականա-
տես եզաւ Եղիշէ , տեսաւ Ա . Վարդանայ
և նորա քաջ ընկերաց նահատակութիւնը ,
տեսաւ ընտիր ընտիր նախարարաց բանտար-

կոթիւնն և գերութիւնը , հայ տիկնանց քրիստոնէական արիութիւնն և գեղեցիկ աստուածամիրութիւնը . տեսաւ հայրենեաց աւերումը պարտկական բռնութենէն , և սրտին ցաւէն առանձնացաւ Առկաց լեռները և այն տեղէն Խշոււնեաց դաւառը , ուր և կնքեց իւր կեանքը :

Եղիշէ Թողած է ինքնագիր ընտիր եր կասիրութիւններ , որոց մէջ կը փայլին իւր ազնիւ զգացմունքներն և քրիստոնէական իմաստութիւնը : Այս երկասիրութեանց մէջ ամենէն նշանաւորն է Պատմովիան Հան կի որդանոյ և Հայոց պարելալին , զոր գրած է Այս միկոնեան Պատիթ երիցու հայցմամբ . Այս պատմութիւնը կը բաղկանայ մէկ Ռնծայս կանէ առ Պատիթ երէցն և ուսթնյեղանակներէ կամ գլուխներէ , պատմական անցից յաջորդութեան կարգաւ , որոց վերջինը առաւել սուրբ քահանայից չարչարանքները և հայ կանանց քրիստոնէական բարեպաշտութիւնները կը պարունակէ , ուստի և կը կոչուի Եղիշոց Եօնն յեղանակին : Եղիշէի պատմութեան մէջ նոյնակէս կը գտնուին 1. Յար կերտի շրջաբերական Հոռվարդակը որով իւր տէրութեան հպատակ ազգերը կը հրաւիթէ ՚ի պատերազմ ընդդէմ Պատշաճացւ 2. Այս հրոներսէհ հրամանատարի Նամակը զոր մռ գերու խորհրդով կը գրէ Հայոց ազգին նախ

պարսկական դէնը բացատրելով և ՚Իրիստունէութիւնը պահարակելով և ապա ստիպելով Հայոց ազգը ՚ի մոդութիւն և յարեւակաշտութիւն։ 3. Հայոց մերժողական Պռ պահանը, զոր կը գրեն Արտաշատու ժողովին մէջ գումարուած եպիսկոպոսները նախարարաց և բոլոր բազմութեան հաւանաւթեամբ և քրիստոնէական անզմէհեր ազգատութեամբ։ 4. Հրավարտակ կամ ՚ի՞ր պարագանաց Հայոց աշխարհին, զոր կը գրեն Յաւնաց թէոդոս կայսեր և օգնութիւն կը խնդրեն. բայց թէոդոսոս կը մեռանի և Այրիխանսոսը թագաւորելով փոխանակ Հայոց օգնելոյ, ընդ հաւկառակն կը բարեկամանաց Պարսից թագաւորի հետ և դաշնակցութեան ուխտ կը հաստատէ։ 5. Ա տրդան Այամիկոնեանի և ՚ի եւոնդ երիցու քաջաշերսական վաեմ Արենաբանութիւնները, որով Հայ ազգը կը խրախուսէն ՚ի պատերազմ վասն պաշտպանութեան հայրենի օրինաց և ազգատութեան Եկեղեցւոյ։

Եղիշէի երկասիրութիւնը չը նմանիր աւմենեւին այն պատմագրութեանց, որոնք լոկ թագաւորաց կամ իշխանաց յաջորդութիւններ և գործքեր կը թուարկեն, ոյլ կը պատկերացնէ ամբողջ ազգի կամ ժողովոդի պատմութիւնը, մանուկէն մինչեւ զառամեալ ծերունին, փափկասուն տիկնոջէն մին։

շեւ զբահապատ զօրականը և անարդէն մին
չեւ պատուականը, միով բանիւ, Եղիշէի
երկասիրութիւնը Հայոց բոլոր ազգի նա
հատակութեան կամք քրիստոնէական զին
առաջնութեան պատմութիւնն է ընդդէմ զրա-
դաշտական մոլեւանդն մագակրօնութեան,
և մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրն կը տես-
նենք այս խռովերու կատարումն . “ Ոչ երե-
ւէր այնուհետեւ տռաւել տէր քան զնա-
ռայ, և ոչ աղատ փափկացեալ քան զգեղ-
ջուկ վշտացեալ, և ոչ ոք քան զգք նուազեալ
՚ի յարութենէ . Ո՞ի սիրտ յօժարսութեան
էր ամենեցուն՝ արանց և կանանց, ծերոց և
տղայոց և ամենայն միաբանեց ՚ի ՚Վրիստոս
Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն
զինուորեցան և զմի առան զրահս հաւատոց
պատուիրանին ՚Վրիստոսի . միով գոտեան
ճշմորտութեան պնդեցին զմէջս արք և կա-
նայք : . . . Տեսանէին զանձինս իւրեանց
իբրեւ զմէռեալ դիսկունս և զիւրացանչիւր
դերեզմանս ինքեանք փորէին . և կեանք իւ-
րեանց ՚ի մահ համարեալ էին և մահք իւ-
րեանց անշաւը կեանք ո (1) .

Եղիշէի երկասիրութիւնը այն ընտիր
պատմագրութիւններէն է, որոնք պատմե-
լէն աւելի կ'աւասացանեն —դորձքէն շարժա-
ռիթը բացատրելով և հետեւանդքէն պատ-

(1) Եղիշէ . Զ . մշանակ :

ճառը, և կամ անդրադարձօրէն : Ա ասն զի՞
 լողիշէն Եկեղեցւոյ ուխտի նահատակու-
 թեան պատմութեանը հետ՝ կ'ուսուցանէ
 միանդամայն և Քրիստոնէական Եկեղեցւոյ
 նշանակութիւնը և էական պաշտօնը աշխար-
 հիս վրայ, աստուածահը առաքինեաց անձ
 նազոհութեանը հետ՝ աստուածային սիրոց
 մեծութիւնը, ուրացողաց և անմիաբանից
 արարմանց հետ՝ թերահաւատութեան և
 անզուգութեան դմնդակութիւնը, և նա
 և մոդական պաշտօնէից չարագործութեան
 հետ՝ մոդական դենի կամ կրօնի խուարագիտ
 վարդապետութիւնը « Եւ այս պատմական
 ընտիր յատկութիւնը զգալի է մանաւանդ-
 այն ներհական պատկերներուն մէջ, որոց
 մանրանկար ցատկանիշները կը պատկերացնէ
 լողիշէ : Ինքնակալ թագաւոր մի (Քափկերտ)՝
 իւր արքայական աթոռէն կ'որոտայ և միան-
 գամայն կը դողդողայ, վասն զի մոդապաշտ
 է և անհաստատ խորհրդներով կը շարժի .
 իսկ ընդհակառակն՝ հպատակ ազգի զօրա-
 վար մի, նախարար մի (Ա արդան և այլք)՝
 կը խրախուսի և կը խրախուսէ . վասն զի ըզ-
 միրիստոս զօրավար և զօրագլուխ կը տեսնէ
 ճշմարտութեան պատերազմին, և երկիւղը՝
 թերահաւատութիւն . կը ճանաչէ : Խագաւ-
 որաց խորհրդական և պատգամատու մա-
 գները կը յուզին և կը տագնապին, վասն զի

թանձրամած խաւայի՛ մէջ են և ոգիները
մարմնոյ մէջ արդիլուած, ինչպէս կենդանի
գերեզմանի մէջ։ Իսկ ընդհակառակն՝ Յով
սէփ, «Վեւոնդ և այլք, Խաչն ՚ի ձեռին ան
վեհեր՝ պատերազմի դաշտը կ'իջնեն, վասն
զի ճշմարիտ Աստուծոյ քահանայ են և ճըշ-
մարտութեան համար մեռնիլը՝ կեանք կը
խստովանին և կը քարոզեն։ Ընդարձակ նա-
հանդի իշխան մի (Ա ասակ՝ տէր Ախւնեաց)՝
բարձրանալու ձգտման հետ՝ կը քծնի և կը
շոյէ, վասն զի ուրացող է և հաւատը մարմ
նաւորին մէջէ. իսկ ընդհակառակն՝ մատաղ
մանուկ մի, տկար կին մի՝ վայելքը և փափէ
կութիւնը կ'արհամարհեն, վասն զի ճշմարիտ
վայելքութիւնը և մեծութիւնը աստուածա-
յին սիրոյ մէջ կը դաւանին։

Առհասարակ. Եթէ մի կողմէն նկարա-
գրուած է մոգակրօնութիւնը իւր աղիտա-
բեր չարիքներով, միւս կողմէն եւս կենդա-
նի պատկերացած է Քրիստոնէութեան ճըշ-
մարիտ ոգին մի ամբողջ ժողովրդի ուրախա-
կան զինուորութեամբ, որով և ակներեւ կը
տեսնուի Աշխեչի երկասիրութեան մէջ, որ
Հայ ազգը սիրած է իւր երկրաւոր հայրենիք-
քէն բարձր հայրենիք, այն է իւր ՔՐԻՍՏՈ-
ՆԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ, պաշտած է իւր մար-
մաւոր աղատութենէն բարձրագոյն ազա-
տութիւն, այն է ԱԶԱՅՈՒԹԻՒՆ ԽՂ.Ճ. և

Հպատակած է մարդկային օրենքներէն բարձրագոյն օրինաց, այն է օՐԻՆԱՑ ԱԹՏՈՒԺՈՅ և Վասն զի այս է եղած նորա նահատակութեան նշանաբանը. “Հայր մեր զի՝ Ետարցանն գիտեմք և մայր առաքելական Լիկեղեցի կաթողիկէ (Օրէնք Աստուածային կացցեն թագաւոր ՚ի վերայ ամենայնի ո) ⁽¹⁾ :

Լողիչէ ոչ միայն ականատեսեղած է իւր նկարագրած պատմական անցքերուն, այլ և լիովին զգացած է իւր սրտին մէջ, ինչպէս քաջութեան ուրախական հանդէաները, նոյն պէս և հայրենեաց աւերման տիստը տեսարանները, ուստի և ճառագրած է իւր պատմութիւնը սրտի լեզուով — արտասունքով. Վասն զի ինքնին կ'ասէ. “Ահա ոչ ըստ կամաց արտասրւալից ողբովք ճառագրեմք զբազում հարուածս, յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով ո. որով կ'ազդէ ոչ միայն Հայու՝ այլ և օտարականի սրտին, ինչպէս և ճշմարտիւ խոստովանած է օտարազգի բանասէրներէն մին, ասելով. “Երբ Լողիչէ կը կարդամ, կը հայանամ” ո. ⁽²⁾ :

Պատմութենէն զատ՝ Լողիչէ երկատիրած. Է այլ և այլ Շառեր. և Անկնութիւններ, որք.

(1) Եղիչ. Գ. յեղանակ :

(2) Եղիչն թարգմանուած է Անդրեաբէն, Խոանըբէն, Գաղըբէն և Ռուսըբէն և

Են . 1 . Բառ իրապու գրանցնելու , որ պատմութեան յետոց ամենէն ընտիր , սրտաշարժ և միւ անդամայն վսեմ գրաւածքն է , որով նախ մենաւորական կենաց գեղեցիկ նկարագիրը կը պատկերացնէ , ապա զեղծութիւրը , և ապա կը յորդորէ յուղղութիւն և ՚ի զգաստութիւն = Այսանց ճառը այն գեղեցիկ յատկութիւնն եւս աւնի , որ հեղինակը միշտ խօսած է առաջին գեմքով և ուրիշները յան զիմաննած . Ժամանակ՝ երբէք բացառութիւն տրած չէ իւրանձին , թէպէտ և իւր գործ քերէն կ'երեւի որ անբասփր է իւր կեանքը : Այս ձեւ բանախօսութիւնը այն փափիւս սիրու հեղինակներու յատկութիւնն է , որոնք իւրեանց եղարց թերութիւնը իւր եանց սեպհականը կը համարեն = 2 . ԱՌԵՆՈՒ Այս (Յետայ) և Դապտարաց . 3 . ԱՌԵՆՈՒ Այս (Յետայ) առջիւց . 4 . Լանոնք . և 5 . Ճ'առք ՚ի մերտութիւնն Քրիստոսի , ՚ի Ատնութիւնն . ՚ի Զարչարանն , ՚ի Խաչելութիւնն եւ այլն , որոնք մեկնական և յորդորական պարզ գրուածքներ են հաւատացելոց հոգ գեւոր շինութեան համար և պատմութեանէն ժամանակաւ կանխագայն կ'երեւին :

ԴԱՅԱՐ ՓԱՐՊԵՑԻ . — Աքագածուն գաւառի Փարպի գիւղէն , իւր մանկութեան հասակին մէջ նախնական կրթութիւն կ'առ-

նու Վլաց Աշուշայ բդեշխի տանը . (որ ա-
մուսնացած էր Վահան Ամիկոնեանի Ա-
նոյշ—Վահամ հօրաքրոջ հետ ,) որով եւ
զինքն Վահանայ աննդակից և խաղակից կը
կոչէ : Յետոյ կ'աշակերտի Վասակ Աքճրու-
նայ Աղան որդւոյն , որ տեսնելով իւր հօք
բարեկամութիւնը ԱՌհրուժանայ հետ և
ուրացութեան կասկածը , զինուորութեան
պաշտոնը թողած՝ Գողթն գաւառի մէջ մե-
նաւորական կեանք կը վարէր : Դազար այս
նուիրական կրթութենէն յետոյ , Ավակաց
և ԱՌեսրուպայ հրամանաւ Յունաստան կ'Ներ-
թայ և աւելի հռետորական արուեստի հե-
տամուտ կը լինի , և այս պատճառաւ է որ
Ճարտասան կը կոչուի : Յունաստանէն գառ-
նալով Ամիկոնեանց ազգական կամսարա-
կանաց մօտ կը մնայ և հայրէնեաց հարուած-
ներուն ըստ կարենալով հանդուրժել , վշտակիր
սրտիւ կ'անցնի Ախնեաց աշխարհը : Երբոր
Վահան Ամիկոնեան մարզպանութեան
իշխանութիւն կ'ընդունի Վաղտրշ Թագա-
ւորէն և կը ջանայ հայրենիքը բարեկարդել
և վանքերը նորոգել , կը կոչէ իւր սննդակից
բարեկամն՝ Դազար և հաւանութեամբ (Յավ-
հան Անդակունեայ (որ այն ժամանակ կա-
թողիկոս էր) , Աշմիածնի կաթուղիկէի շի-
նութիւնը նորա տեսչութեանը կը յանձնէ
մի քանի անձանց հետ : Դազար վանքի նիւ-

Թական շինութիւնը լրացնելէն զինի , բարոյ
յական բարեկարգութեամբ կը զբաղի , և
Հայաստանի զանազան կողմերէն պատանի
ներ կը ժողովին այնտեղ , ուսմամբ զարգա-
նալու , որուն օժանդակ կը լինին Վ ահանայ
եղարքն , Ներսէհ և Հրատ Կամսարական-
ները , Ո ամիկնեան Համազասպն և Եքե-
ղենից Դաղրիկ իշխանը :

Եյս ուսումնասիրական բարեկարգու-
թեան վրայ վանքի միաբանից ոմանց նախան-
ձը կը շարժի , կրակսին պախարակեց ոչ միայն
Վ աղարտւ գիտութիւնը , այլ և հաւատոյ
վարդապետութիւնը , և ամբաստանութիւնը
մինչեւ Վ ահանայ ականջը կը հասցնեն , որ
կըսպառնայ թէ՛ Ա ազարք և թէ բոլոր մի-
աբանները արտաքսել : Վ աղար չը կարենա-
լով ուսումնատեաց զրախօսաց բերանը
կողինէլ օվնութիւն կը խնդրէ Ո անդակու-
նի կաթողիկոսէն և իւր խնդրանաց կատա-
րումն չըստանալով , ինքնին կը դիմէ առ կա-
թողիկոսն որ արդէն վրդովուած լինելով
չարսխօսներէ՝ տեսութեան անգամ չարժա-
նացներ զ՛ ազար : Ո չնամիները կաթողիկո-
սի սառնութիւնը պատեհ առիթ համարե-
լով Վ ազարը վանքէն կ'արտաքսեն և իւր
ունեցած յունարէն և այլ գրքերն անգամ
ձեռքէն կը յափշտակեն , որուն համար Վ ա-
զար ցաւելով կ'ասէ . Ա յանի թէ գոնէ իւ-

բենք կարդան և լուսաւորին և ուրիշները
լուսաւորեն, և ոչ թէ ընկեցեալ մնան ՚ի կե-
րակուր ցեցոյ ո : ՚ ազար տքառանքէն սիր-
աը խոռոված, ՚ միթ քաղաքը կ'երթայ և
այն տեղէն Համազասպ Ո ամիկոնեանի ձեռ-
քով կ'ուղարկէ առ Վ ահան իւր նշանաւոր
թաղվը, որով թշնամեաց ամբաստանաւ-
թիւնները կը մերժէ, նոցա անկարգ վարքը
և ագիտութիւնը կը նշաւակէ և իւր անմե-
զութիւնը կը պաշտպանէ հաստատ ապա-
ցցցներով : Ուստի և Վ ահան համոզուելով
իւր մօտ կը կոչէ զ՞ ազար և կ'առաջարկէ
իւր ժամանակակից անցից պատմութիւնը
գրել, որուն պարունակութեան վրայ այժմ
պիտի խօսինք, իբրեւ ՚ ազարու ինքնագիր-
երկասիրութեան վրայ :

Թէպէտ և ՚ ազարու բուն նպատակն
եղած է գլխաւորապէս Վ ահան Ո ամիկո-
նեանի Ո արզպանութեան ժամանակ պատա-
հած անցքերը արձանագրել, բայց իւր պատ-
մական երկասիրութիւնը կը սկսի Հայոց
թագաւորութեան երկու բաժնուելէն, ՚ի
ներքոյ յունական և պարսկական գերիշխա-
նութեան : ՚ ազար Փարապեցին իրմէն առաջ
եղած պատմագիրները յիշելով, ինչպէս են
Ռդաթանգեղոս և ՚ Կիւզանդ, (վերջնոյն
գրուածքը այլոց ձեռքով խարդախած կը
կարծէ), և իւր երկասիրութիւնն համարելով

որպէս շարացարմւթիւն նոցա պառոմածնեւ-
քուն , կը պատմէ Հայաստանի բաժանեալ
իշխանութեան աղէտները , կը նկարագրէ
Արարատեան գաւառի բարեբերութիւնը ,
և Աահակայ ու Անեսրոպայ ուսումնասիրա-
կան և Հայրենասիրական արարքները և մահը
կը պատմէ Արշակունեաց թագաւորութեան
քարձումն և Վարդանանց ու Կեւոնդեանց
ժամանակի քրիստոնէական զինուորութեան
հանդէսը , զոր իրմէն յառաջ Լողիշէ գրան
էր առաւել ընդարձակ , բայց աւարտած էր
Յազկերտի մահովն և նախարարաց դարձովն
՚ի Պարսկաստանէ : Վազար յառաջ կը տա-
նի իւր պատմութիւնը և կ'աւանդէ Գիւտ
կաթողիկոսի ամբաստանուին Պարսից դրան
առջեւ , արդարանալն և երկար ժամանակ
Պարսկաստանի մէջ մնալն հրամանաւ թա-
գաւորին : Կը պատմէ թէ՝ Բնչպէս անուանի
եղաւ Վահան Ամիկոնեան և Գաղիշոյ
Աաղքազի և այլ ուրացեալ նախարարաց
ձեռքով մատնուեցաւ Պարսից թագաւորին ,
և Բնչպէս առ երես ուրացաւ իւր հաւատ-
քը , մեծարանօք դարձաւ ՚ի Հայաստան ,
կրկին զղուց իւր ուրացութեան վրայ , միա-
բանեց իւր հետ հաւատացեալ նախարար
ները և արիական պատերազմներ մղելով
խորտակեց պարսկական զէնքն ու զօրութիւ-
նը , թագաւորի հետ հաշուութեան դաշինք

կապեց, կրօնքը և հայրենիքը ապահովեց և ինքը կարգուեցաւ Ապարապետ և միան գամայն Վարզպան Հայաստանի: Կը նկարադրէ Դաղար՝ բովանդակ ազգի զգացած ու բախութիւնը (Վահանայ նոր և լիազօր իշխանութեան վրայ), Դունայ եկեղեցւոյն մէջ կատարուած գոհութեան սրտաշարժ հանդէսը, Յուլիան Վանդակունւոյ ատենաբանութիւնը, որով և կը կ'իքէ իւր Պատմութեան:

Դաղար այս ամեն պատմական անցքերուն հետ կ'աւանդէ նոյնպէս այն նշանաւոր դաշինքը, զոր վաւերացուց Պարսից թագաւորը և զոր Վահան, ազգի հաւանութեամբ, սպահանջած էր այսպէս. - Եախ պէտք է որ մեր կրօնին բոլորովին ազատութիւն տաք և կռապաշտութեան կամ մոգութեան նշանները իսպառ վերցնէք Հայաստանէն. պէտք է որ ամեննեւին ըստի պէք Հայերը իւրեանց հաւատքը փոխելու և հաւատափոխին իշխանութիւն պէտք չ'որ տաք: Երկրորդ՝ չար և անպիտան մարդիկը իշխանութեան պէտք չ'որ հասցնէք. այլ արժանաւորները և մանաւանդ այնպիսիները, որոնք երկրի պայծառութեան համար փոյթ և ջանք ունին: Երրորդ՝ թագաւորը ամենեւին պէտք չ'որ շուտ հաւատայ ամբատաշնութեանց, այլ անձամբ անձին պարտական:



ԵՐԲԱՐԴ ՑՐՁԱՆ

Քրիստոնեաւթեան դիմամարտութեանն մոգակրօնաւթեան դեմ մինչեւ Մահմետականութեան և յաւնական անհերթամատութեան հաջածանքները :

450—640

Ա.

Ըստ հանուր գծադիր այս շրջանին . — խորհուրդ Պարսկաց քրիստոնէութիւնը բառնալու համար . — Վասակ Սվենի և համամիտք իւր . — Քրիստոնէութիւն և ախուժանք իւր . — Պարսից պատերազմը Հռնաց հեա և քրիստոնէից օգնութիւնը . — Տառապանք քրիստոնեայ զօրականաց . — Նահատակութիւն Արտօվիւնաց . — Դենշապուհի հարստահարիչ արարքները . — Պարսից հաղարապետի հրաժարտակը . — Արտաշատու ժողովը և պարսկական հրավարտակի պատասխանը . — Պարսից թագաւորի դպրոյթն Հայոց պատասխանոյն վրայ . — Նախարարաց կողուկին և երթալն ՚ի դուռն Պարսից . — Թագաւորի ուրախութիւնն Նախարարաց առ երեսս ուրացութեան վրայ . — Նախարարաց և պարսկական մոգախումբ բանակի ուղեւորութիւնն ՚ի Հայաստան . — Պարսից թագաւորի պատուերները :

Ասկէնթաց շրջանին մէջ տեսանք , որ Արշակունեաց թագաւորական հարստութեան երկու բաժնուելովն՝ Հայաստանի քաղաքային ոյժը տկարացաւ , և սակաւ ժամանակէն զկնի , բոլորովին բարձաւ արքայական

անունն ու իշխանութիւնը, նախ յունական և ապա պարսկական բաժնին մէջ։ Այս բարձման պատճառը այնքան ներքին երկպառակութիւնները չելին, որքան յունական եւ պարսկական տէրութիւնները, որոնք առ իմ տալով ներքին խո ովութեանց՝ Հայաստանը իրարու ձեռքէ յափշտակել կը ջանային ։ Ի՞այց որովհետեւ Յունաստան արդէն տկարանալու վրայ էր, հետեւապէս Հայաստան առաւել հզօրագունին պիտի մնար, որպէս եղեւ իսկ ։ Յունաստան տկարանալու վրայ էր, ասացինք, վասն զի Արշակունի թագաւորութեան բարձման միջոցին Ալանք և Հոնք Աւրոպա արշաւելով և ուրիշ բարբարոս ազգաց հետ միանալով սկսած էին սասանեցնել Արեւմտեան և Արեւելեան (հոռվմէական և յունական) կայսերութիւնները, որոնք արդէն, կրօնական վէճերով, հերետիկոսական յուղմունքներով, և մանաւանդ բարուց ապականութեամբ ու ներքին զեղծմամբ, կործանման անդունդը հասած էին ։ Այս աշխարհասասան վըդովմանց եւ աւերանաց ժամանակին էր, որ Պարսիկները Յազկերտ Բի օրով պատերազմի Ելան Յունաց դէմ (Ծակոդոս Բի թագաւորութեան ժամանակ) և յաղթող գտան, այնպէս որ, Յոնք ստիպուեցան իրենց երկիրը փախած քրիստոնեայքը (զորս կը պահպանէր Ատակ

կրս Պատրիարքը, յշետ դարձնել և Ենատու
լիս արեւելեան սպարապետի ձեռամբ մեծ
գանձ տալ Պարսից և խաղաղութիւն հաս-
տատել :

Պարտիկները, այս յաղթութեան պար-
ճանքով, Արեւմուտքէն Արեւելք դառնա-
լով՝ Քրիստոնէութիւնը բառնալու խոր-
հուրդներ կը յղանան, և աներիկող գոր-
ծադրել կը ջանան, վասն զի յունական ազ-
գեցութենէն եւս ապահովացած էին, յոր-
մէ առաջ կը կատկածէին : Ո՞գերը և Քրիս-
տոնէութեան ոմերիմ թշնամի Ո՞իհքներսէն
հազարապետը խորհուրդ կրտան թագաւո-
րին պարակական տէրութեան բոլոր քրիստո-
նեայ ազգերը մոգութեան դենին դարձնելը
կը համոզեն մանաւանդ՝ թէ Հայաստան մեծ
և պիտանի աշխարհ է և յունական կայսե-
րութեան սահմանակից և ըստ քրիստոնէու-
թեան կրօնակից, ուստի եթէ Հայք մոգա-
կան կրօնին ընտանենան, այնուհետեւ կը
միրեն Արեւաց աշխարհը և թագաւորները,
և խսպառ կը հեռանան (Յունաց ազգէն, և
երբ այս ընթացքը յաջողիւ, անշուշտ Արա-
գիք, Ազուանք և այլք նոցա օրինակն կը
հետեւին :

Պարտկական այս խորհրդին մասամբ կը
նպաստէը Հայաստանի մէջէն Ախոնեաց նու-
խարարական հռչակաւոր Տունը, վասն զի այս

միջոցին Հայոց աշխարհի Ա'արզպան (Գառաւ-
ռակալ) էր Վասակ Այս նին (Վեհ-Ա) հինգաւ-
պուհ պարսկի մարզպանութենէն յետոյ, որ
թէպէտ ՚ի սկզբան Ա'եսրուպի առաքելութերը
օժանդակած էր Այսական աշխարհին մէջ,
գպրոցներ հաստատելով մանկանց համար և
Ա'ատենադարան Գեղարքունուոյ մէջ, և ա-
կանաւոր էր իւր իմաստութեամբ և վար-
չական խոհեմութեամբ, բայց մարզպանու-
թեան միջոցին պատրուած էր իշխանական
փառասիրութեան տենչանքով, յուսալով
յինքն գրաւել ուրացութեամբ Հայոց աշ-
խարհի թագաւորութիւնը. որ թէ և բար-
ձուած էր, բայց յիշատակը տակաւին կեն-
դանի էր շատերու սրտին մէջ: Վասակայ
տենչանքին և ուրացութեանը գրգիռ տը-
ւած էր մանաւանդ նորա փեսան, Վարագ-
վաղան Այս նին, որ, աներոջ ձեռամբ իւր
աշխարհէն մերժուելով (կնոջ հետ գժտու-
թեամբ վարուելուն պատճառաւ) ընդունած
էր Ա'ազդեզանց կրօնքը և Ա'իհրներսեհին
խորհրդակից դառնալով՝ կը ջանար մարզպա-
նութենէ ձգել զլասակ, և սա իշխանու-
թեան մէջ հաստատ մնալուն նպատակաւ
ուրացութիւնը միայն գտած էր դիւրին մի-
ջոց: Վասակայ կողմը շահուած էին, ՚ի միջի
սյուց, Բագրատունեաց տոհմէն Տիրոց առ-
պետ՝ իշխան պարսկացին Բագրատունեաց

Տարօնոց, և լի ասակ Ումիկանեան՝ կու սակազ
 Ատորին Հայոց ՚ի Յունաց բամնի: Եւ յս նը
 պատառոր երեւոյթները բաւականին ոյժ
 կը տային մոդական հոլեռանդութեան եւ
 Պարսիկները Հայաստան արդէն մոդակրօն
 դարձած կ'երազէին: Բայց Դրիգորի, Ներ-
 ահին, Ուհակայ և Ութորոպայ առաքելական
 քրտունքը ՚ի զուր հոսած չէին: Կային Հայ-
 աստանի մէջ, ոչ միայն Ուարդան, Հմայեակ
 և Համազասպեան, որոնք իրենց հաւուն՝ Ու.
 Ուհակայ մօտ քրիստոնէական ուսմամբ դաս-
 տիարակուած էին և տոհմային տանուտէրա-
 կան իշխանութիւն կը վարէին: Կային ոչ մի-
 այն ընտիր ընտիր նախարարներ և իշխաններ
 —Ու ահան Ամատունի հազարապետ, որ հայր
 համարուած էր բոլոր աշխարհին, Արշաւիր
 կամսարական, Ներշատպուհ Արծրունի և այլք,
 —որոնք վառուած էին ՚ի սէր քրիստոնէական
 կրօնի: Կային ոչ միայն արթուն և անձնադիր
 հովիւներ —Յովաչփ, որ ՚ի քահանայութենէ
 ՚ի կաթողիկոսութիւն կոչուած էր, Ուհակ
 եպիսկոպոս Ուշտունեաց, Դեւոնդ երեց
 և այլ բազումք —որոնք քրիստոնէական աղ
 և լոյս էին Հայոց աշխարհի համար: Կային
 ոչ միայն իշխանութեամբ և աստիճանաւ-
 ականաւոր մարդիկ, այլ և միլիօնաւոր զա-
 ւակունք Լիլեզեցւոյ, արք և կանայք, ա-
 զատք և շինականք, ծեղք և մանկունք, որոց

հոգիներուն մէջ եռացող քրիստոնէական
հուրը, հալածանքները սաստկանալուն պէտ,
պիտի գուրս բռնկէր և սքանչելի երեւու-
թով մոգութիւնը շուարեցնէր:

Այսպէս ահա, թէպէտ մի կողմէն մռ-
դակրօն Պարակաստանը սպառազինած էր տիւ-
րապետական ուժով և աշխարհային խոս-
տումներով սակաւաթիւ տկարամիաներ իւր
կողմը որսացած էր. սակայն միւս կողմէն
եւս քրիստոնեայ Հայաստանը կ'եռար հա-
ւատոյ աննկուն ոգեւորութեամբ: Պարա-
կաստան սպառազինած էր բանտով, տան-
ջանքով, գերութեամբ, մահուամբ և ա-
րեամբ՝ Քրիստոնէութիւնը բառնալ. իսկ
Հայաստան պատրաստուած էր նոյն արհա-
ւիրքներուն դիմադրել և իւր երկնային կը-
րօնքը պաշտպանել: Վաղուց արդէն Պար-
սից խորհուրդները յայտնի էին Հայոց. բայց
Պարսիկները ՚ի սկզբան կը ջանային ծածկել,
ուստի և հալածանքն այլ կերպարանքով ըս-
կաւ:

• Յազկերտ Բ. Ա'իհրներսեհ հազարապե-
տի և մոգերու խորհրդով պատերազմի պատ-
րաստուեցաւ Քուշանաց կամ Շանաց դէմ,
և քրիստոնէից զօրութիւնը տկարացնելու և
դիւրաւ ՚ի մոգութիւն փոխելու համար՝ կը-
րովարտակներ ուղարկեց Արեաց և Անա-
րեաց (Այրան և Տաներան) տէրութեան հը-

պատակ բոլոր քրիստոնեայ ազգերուն և մա-
 նաւանդ Հայոց, որպէս զի իւրաքանչիւրն
 իւր այրուձիով, նախարարներով և իշխան-
 ներով Ապար աշխարհը դիմեն : Հայք
 Վիրք, Աղուանք և այլք հպատակեցան ժա-
 գաւորի հրամանին և իւրաքանչիւրն իւր այ-
 րուձիով ժամադիր եղած տեղին հասան և
 միանալով պարսկական զօրաց հետ՝ արշաւե-
 ցին Քուշանաց վրայ : Երկու տարի պատե-
 րազմեցան, բայց չը կարացին յաղթել, ուռ
 աի և Յագփերտ մարզիկ զօրքերը մրձակելով
 և ուրիշերը նոցա տեղ փոխանակելով, եռ
 թըն տարի պատերազմեցաւ և յաղթութեան.
 յուսով իւր համար արդէն բնակութեան
 քաղաք շինած էր այն տեղ : Ի վերջոյ Հոնք
 յաղթուեցան, Պարսից ասպատակները տակ
 նուիրայ արին Հոնաց գաւառները, գերե-
 լով և աւերելով, ուրախութեան աւետիք-
 ներ ուղարկուեցան ամեն ատրուշաններուն,
 սպիտակ ցուլեր և գիսաւոր նոխազներ զոհ-
 ուեցան կրակին և մոգերն ու մոգպետները
 պատկուեցան : Ոյնչդեռ պատերազմները կը
 շարունակուէին Հոնաց դէմ՝ թագաւորին՝ ի
 մոգութիւն կը հրապուրէր քրիստոնեայքը
 զանազան միջոցներով . մերթ պատիւներ
 տալով նախարարաց, մերթ քրիստոնէու-
 թիւնը պախարակելով և մոգութիւնն ու
 քաւդէութիւնը ջատագովելով, և մերթ

կրտսերները և անարգները նախամեծաբնլով,
 քան աւագները և պատուականները : Այ-
 լայն Քրիստոնէութիւնը տակաւին ազատ
 էր և քրիստոնեայ զօրաց հետ պատերազմի
 մէջ գտնուած եկեղեցականները հրապարա-
 կաւ պաշտօն կը կատարէին բանակին մէջ
 և ՚ի Պարսկաստան եւս Քրիստոնէութիւնը
 տակաւին կը տարածուէր առանց դիմահա-
 րութեան : Իսկ Քուշանացնուածմանէն ըզ-
 կընի մոգերը և քաւդեանները հրապուրեցին
 թագաւորն ասելով այն ասոուածները, ո-
 րոնք յաղթուի տուին քեզ, միայն մի հատու-
 ցումն կը պահանջեն քեզմէն, այն է ՚Քրիս-
 տոնէութիւնը բառնազ և բոլոր ազգերը ՚ի
 մոգութիւն դարձնել : Ուստի և վաղվաղակի
 պատգամատարներ ուղարկուեցան պարսկային
 տէրութեան բոլոր ազգերուն, որ մի միայն
 արեգակը պաշտեն, կրակին սպաս տանեն
 և մոգութիւնը ընդունեն : Հայոց, Արա-
 և Աղուանից այրուձին արգիլուեցաւ ՚իներ
 քըս պահ դրան Կդուռն Շորայ, ուստի
 արշաւած էին դէպ ՚ի Քուշանք, և սաստիկ
 հրաման տրուեցաւ դռնապանաց, որ նոյն
 գոնէն Աքեւելք դիմողները թողնեն, իսկ
 Աքեւմուտք դիմողները արգիլեն : Եղբ այս-
 պէս փակուեցաւ Քրիստոնէից այրուձին
 տար աշխարհի մէջ, այնուհետեւ ձեռն արկին
 տագնապել տանջելանարգէլով, թռչակը սրակ.

սեցնելով, ձմերոցաց դժնեայ վայրերուն
մէջ խոշտանգելով. երբեմն ստիպելով որ
յազեալ միս ուտեն և երբեմն գունդա
գունդ պատերազմի տանելով դէպ ՚ի հիւսի-
սային անապատները և սրոյ ճարակ տալով,
Արայն Ատոմ Գնունի և Անամփհր Ուրշ
տունի իւրեանց զօրքով՝ աճապարեցին Հա-
յասաան փախչիլ, սակայն Պարսից զօրքերը
հանելով ամենքը նահատակեցին, և այս նա-
հատակաց յիշատակն է, զոր Ակեղեցին կը
տանէ Առավելաց զօրակարաց անունով:

Աինչդեռ հալածանքները այսպէս կը
շարունակուէին, Յազկերտ իւր ՚Նենշա-
պուհ (Ա Եհ դենշապուհ) պաշտօնատարը
Հայատան ուղարկեց, որ առաջ կեղծաւո-
րեցաւ, իրը թէ ողջոյն բերած է թագաւո-
րեն և եկած է աշխարհագիր առնելու, հար-
կը թեթեւցնելու և այրումին նուազեցնե-
լու համար, բայց յետոյ ընդհակառակն այս
աղետները հասոյց Հայոց աշխարհին:

1. Ակեղեցին, որ ազատ էր, ծառա-
յութեան տակ գրաւ:

2. Աենակեաց քրիստոնեայք, որ ապա-
հարկ էին, վանօրէիւք հանդերձ, աշխար-
հագրի և հարկաց ենթարկեց:

3. Աշխարհի հարկը ծանրացրյց կրկնա-
պատկելով, և մուտք, սակք, բաժք և հասք
նշանակեց ոչ միայն շինից, լերանց, դաշտաց

և մայրեաց , այլ և աւերակաց :

4. Բանսարկութեամբ նախարարները իւրաքու դէմ յարոյց և ամեն տան մէջ խռով վութիւն ձգեց :

5. Ամբաստանութիւն յարոյց կ ահան Ամատունի հայրաբարոյ հազարապետին դէմ պաշտօնէ ձգեց և նորա փոխանակ պարսիկ դրաւ (Աշխան անուն) :

6. Դատաւորութեան համար մոգպետ կարգեց , որպէս զի եպիսկոպոսաց ատենի մէջ եղած դատաստանները խափանուին :

Ենք այս ամեն հնարքները ՚ի գործ դրսուեցան աշխարհի միագրանութիւնը քայլաւ յելու , վանաբնակները փախցնելու . Եկեղեցւոյ ռախոր քակտելու և շինականները յրուելու համար , որպէս զի աղքատութեան վտանգէն ստիպեալ մոգութիւնն ընդունին , այնուհետեւ Արեաց և Անարեաց հազարապետը հրովարտակ գրեց Հայոց , որոյ մէջ կ'աւանդէր զրադաշտական ուսումն և գենիմազդէզն , — այն է միութիւն (Օքուան կամ Ճամանակ ,) այս միութենէն արմատական երկուորականութիւն կամ ճընունդ երկու արարիչներու (Քրմզգդի և Աքհմենի) և այս արարիչներէն ճնունդ և ստեղծագործութիւն բարի և չար արարածոց և կը յանդիմանէր Քրիստոնէութիւնը իրբեւ մարդկային մոտաց և զգացմանց հակառակ

Վարդապետութիւն :

Ո՞իհրներսեհի նամակը Հայաստան հաս-
նելով գրաւեց համայն ազգի մտադրու-
թիւնը, վասն զի բացարձակ վճռուած էր
— կամ պատասխանել նամակին քան առ-
քան, և կամ՝ Պարսից դուռն գնալ և յան-
դիման լինել մեծ հրապարակին (թագաւո-
քական ատենին) : Ուստի և ժողովատեղի
որոշելով Աքտաշատ թագաւորանիստ քա-
ղաքը, գումարեցան այնտեղ ամեն գաւառ-
ներէն մեծամեծ Ապիսկոպոսունք, (Յովսէփ
եպիսկոպոս Աքարատայ կամ կաթողիկոսն,
Անդեւ Անազկերտայ, Ասհակ Աշտու-
նեաց, Եզնիկ Բագրեւանդայ, Առշէ Աքծ-
րունեաց, Եղիշէ Ամատունեաց և այլն).
բազմաթիւ Քորեպիսկոպոսունք, նշանաւոր
Երիցունք (Դեւոնդ, Դաւիթ, Գորէն ՚ի
Արենայ և այլք), աւագ Վանականք (Եղան
Աքծրունի և այլք). մեծառոհմ Նախա-
րարք և Տանուտեարք (Տէրն Աիւնեաց Վա-
սակ Արքապան, Տէրն Աքծրունեաց Ներշա-
պուհ, Ալիսազն Վրիւ, Ապարապետն Հա-
յոց Վարդան Մամիկոնեան, և երբեմն Հա-
գարապետ աշխարհին Վահան Ամատունի և
այլք). աւագ Աեպուհք իւրաքանչիւր Տոհմի
և մեծագումար բազմութիւն մարդկան :

Այս աշխարհաժողովի բոլոր բազմու-
թիւնը, մեծամեծք և փոքրունք, միաբան հա-

ւանութեամբ աշխարհին՝ուխտեցին հաստա-
 տուն մնալ . Քիստոնէ ութեան մէջ կենք և
 մահուամբ , և միաբանական վկայութեամբ
 պատասխանեցին ԱՌՆԵՐՍԵԿԻ նամակին ,
 բան առ բան ջրելով զրադաշտական վար-
 դապետութիւնը երկու որականութե՞ դէմ
 հաստատելով Լատուածութեան միութիւ-
 նը , արարչութիւնն յուղնչ , անձնիշխանու-
 թիւն մարդոյ , սկիզբն չարեաց , անկումն
 մարդկութեան և փրկութիւնն ՚ի ձեռն Յի-
 սուսի Քրիստոսի — և աւպա կնքեցին իւրեանց
 քրիստոնէական ճշմարտութեանց խոստո-
 վանութիւնը այժ նշանաւոր խօսքերով . “Յայ-
 սըմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել ,
 ոչ հրեշտակը և ոչ մարդիկ , ոչ սուր և ոչ
 հուր , ոչ ջուր ոչ ամենայն զինչ և են դառն
 հարուածք : . . . Լապա եթէ յետ այսր մե-
 ծի վկայութեան այլ ինչ հարցանես , աւա-
 սիկ կամք , զբոլոր մարմին տուեսլ ՚ի ձեռս
 քո , վաղվաղակի արա զինչ և կամիս : Իքէն
 տանջանք և ՚ի մէնջ յանձնառութիւնք , սուր
 քո և պարանոցք մեր : . . . Ոյ ի եթէ ան-
 մահք իսկ էաք և մարթ էր մեզ մեռանել
 վասն սիրոյն Քրիստոսի , արժան էր , քանզի
 և նա անմահ էր և այնչափ սիրեաց զմեզ ,
 մինչեւ մահ ՚ի յանձն էառ , զի և մեք նորա
 մսհուամբն յաւիտենական մահուանէն ապ-
 րեսցուք : Լյու եթէ նա իւր անմահութիւնն ոչ

խնայեաց , մեք զի կամօք եղաք մահկանացուք , կամօք մեռցուք վասն սիրոյ նորա : Օի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց , եթէ պատրիցիմք իբրեւ ըզտղայս , այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ , որում չիք հնար քակտել և ՚ի բաց ելանել , ոչ այժմ , և ոչ յապա , և ոչ յաւիտեանս , և ոչ յաւիտենից յաւիտեանս ՞ :

Այսպէս սկսաւ ահա՞Քրիստոնէութեան աներկիւղ դիմագարձութիւնը զբագաշտական ուսման և պարսկական բռնութեան դէմ Այսպէս յացտնեց ամբողջ ազգ մի իւր ազատ համոզումը , Քրիստոնէական կրօնի մէջ խոռտովանելով իւր երինաւոր և երկրաւոր երջանկութիւնը , իւր միութիւնը և ազատութիւնը , և այսպէս , 450ին գումարուած , Արտաշատու ժողովն սկիզբն եղեւ փառաւոր նահատակութեան վասն քրիստոնէական ճըշմարիտ հաւատոց :

Հայոց համարձակ պատասխանւոյն վրայ սաստիկ սրտմանեցաւ թագաւորն և մանաւանդ աւելի զայրացաւ հազարապետի և մոգերու դրդմամբ . ուստի և նոցա խրատով սպառնալից հրովարտակ գրեց Հայոց , Աղուանից և Վ բաց , որով Պարսից դուռը կը կոչէր Արզպանն , Ապարապետն , երբեմն Հաղարապետն և այլ երեւելի նախարարներ յականէ յանուանէ : Ծնէպէտ և

այս կոչուածներու երթալովն սակառամբիւ
Տանուտէրներ միայն պիտի մնացին Հայաս-
տանի մէջ , ըստ որում նախարարաց կէսն
արդէն թագաւորի մօտ արքունի ձմերոցին
մէջ էին և կէսն հիւսիսային կողմը Հօնաց
պահակին մէջ , այնու ամենայնիւ վատահաւ
թար խորհեցան և որոշեցին երթալ ՚ի Դու-
ռըն : Ուստի և երեք ազգերը (Հայք , Վրա-
ցիք և Էղուանք) պատգամաւորութեամբ
իրարու հետ ուխտ դրին . հաստատուն դաշ-
նաւորութեան մէջ մնալ : Ա . Յովաէփի ինքնին
ուղեւորեց գնացականները , օրհնելով և
քաջալերելով :

Նախարարները Պարսկաստան հասան ,
բայց Դուռու նոյն պատուով և մեծարանքով
զնդունեց , ինչպէս առաջ սովորաբար կ'ըն-
դունէր ո զօրագլուխ և այրուձի ընդառաջ
ուղարկելով , զօրական հանդէսներ կատա-
րելով և իւրաքանչիւրոց նախնեաց վաստակ-
ները յիշելով և քաջութիւնները գովելով :
Նախարարները ՚ի զուր յիշեցուցին թագաւ-
որին նորա հաւուն - Շապուհ թիւ և յաջոր-
դաց շնորհած ազատութիւնները . ՚ի զուր
յիշեցուցին նախնեաց և իւրեանց ցուցած
հաւատաբմութիւնը և զինուորական վաս-
տակները ՚ի փառս պարսկական տէրութեան .
՚ի զուր յիշեցուցին այս ամենը . վասն զի
թագաւորն ամենեւին չը զիջաւ իւր կատա-

զբաժենէն, այլ անարդանօք մերժեց նախաւ
քարները իւր երեսէն, սպառնացաւ վագաս,
տան աքսորել, անթիւ զօրք ուղարկել յիւ-
բաքանչիւր աշխարհ՝ նոցա կանայքը և որք
գեքը Խուժաստան տարագրել, եկեղեցինեւ-
րը և վկայարանները քակել, քանդել և ա-
ւեր դարձնել: Այս կատաղութեան աշխարհ
հաւեր սպառնալիքը շատերու հաստատա-
մութիւնը քայքայեց, վասն որոյ և ժամա-
նակ խնդրեցին պատասխան տալու համար.
և 'ի վերջոյ, ոչ թէ անձանց ազատութեան
այլ մանաւանդ աշխարհի աւերանաց առաջն
առնելու և առաւել ուժգին դիմադրելու
խորհրդով, աղօթեցին ։ իւրեանց սիրտն
ծածկագէտ: Աստուծոյն յանձնեցին և ար-
տասուօք խոնարհեցան գէթ առ երեսս և
առ ժամն պաշտօն մատուցանել ստու-
թեան, ուստի և ազդ արարին թագաւորին
իւրեանց այս հաճութիւնը :

Ու ուարձացաւ թագաւորն, բերկրեցաւ
աղքունիքն, պատուեցան Կախարարք, տօ-
նեցաւ օրն, և աւետիք ցնծութեան առա-
քեցաւ մոգաց և մոգպետաց, ատրուշանաց
և ամեն մեծամեծաց, որպէս թէ դիք օդ-
նութիւն հասան և որոշուեցաւ նախարար-
ները իւրեանց հայրենիքը դարձնել: Իայց
օրովհետեւ տակաւին խպառ անկասկած
չէր թագաւորն, ուստի և պատանդ պահեց

իւր մօտ Վ լրաց Վ ազգէն և Եղուանից Վ ա-
 չէ թագաւորները , Գուգարաց Եշուայ
 բդեշխն և Վ ասակայ երկու որդիքը՝ Բարիկ
 և Եմիրներսէհ . իսկ միւսներու հետ դնեւ-
 լով . բազմաթիւ այրուձի և 700 մոգեր ու-
 զեւորեց , ինքնին բաւական տեղ ուղեկից լի-
 նելով և պատռւիրելով , որպէս զի վաղվազա-
 կի հասնին և աշակերտեն մոգութեան Հայք ,
 Վ իրք , Եղուանք և այլ Քրիստոնեայ ազգե-
 րը : Եսգերը խնդութեամբ կը վազվաղէին ,
 վիճակ կը ձգէին ճանապարհին և փայտ կ'ըն-
 կենուին , թէ զի լեզու կամ ո՞ր ազգ որո՞ւ-
 վարդապետութեանը պիտի աշակերտէ : Ու-
 նէին իւրեանց հետ արքունի հրովարտակ
 եւս , որով հրամայուած էր , մինչեւ Նա-
 ւասարդ ամիսը , ամեն բան ՚ի կատար հա-
 նել , այն է եկեղեցեաց դռները փակել և
 կնքել , սպաները գրով և համարով յար-
 գունիս գրաւել , եկեղեցական պաշտա-
 մունքները և լ . Գրոց ընթերցմունքները
 գաղարեցնել , քահանայից արգելուլ , որ ժո-
 զովուրդը չուսուցանեն . հաւատաւոր մե-
 նակեցաց արանց և կանանց հանդերձները
 փոխել ըստ աշխարհական կարգի . Նախա-
 րարաց կանանցը և ազատաց ու շինականաց
 գտտերացը ուսուցանել ուսումն մոգու-
 թեան , (վասն զի կանանց քրիստոնէական
 բարեպաշտութիւնը առաւել արգելք էր

մոդապաշտութեան)։ ըստ քրիստոնէական օբինաց ամուսնութիւնն կարձել և բազմակնութիւն հաստատել աղքապղծութեամբ հանդերձ, (որպէս թէ Հայոց աղքի բառմանալու համար)։ պատրուճակներն անյազը զբնութել, հայոք առանց փանդամի չը զանգել, ծիւզք և քակորք ՚ի կրակ չընկենութ, և ձեռքերը չը լուանալ առանց կովմիզոյ, որուն զբաղաշտական մատեանը սրբիչ զարութիւն կ'ընծայէ։

Եյսպէս էր ահա Յազկերտի հրամանը, որով կը ձգտէր ՚Քրիստոնէութիւնը բառնալ և պարսկական սովորութիւնները ՚Քրիստոնէից մէջ մուծանել։ Եյսպէս է գոգցես և ամեն տիրապետ բռնտկալաց ընթացքն, որոնք իւրեանց իշխանութեան հետ կը ջանան իւրեանց սովորութիւնները, ծէսերն և մոլութիւններն ես մուծանել որ և իցէ հպատակ երկրի կամ աղքի մէջ։

Մուտ մոգախումբ բանակին հանգերձ Կախարարաց
՚ի Հայաստան, և դիմադիր յուղում ժողովրդեան . —
Ըստարումն մոգակետին . — Նենդութիւն Վասակայ . —
Ուխտ սուրբ քահանայից և Կախարարաց ՚ի Հահապի-
վան . — Ուրացութիւն և դարձ Վասակայ . — Յաղթա-
նակ Քրիստոնէութեան . — Գոյք հալածանաց յերկիցն
Ազուանից . — Մերժումն Յունաց զինդիր օգնութեան
Հայոց . — Բաժանումն Հայկական զօրուն յերիս մեծ
դորաբանակս . — Յաղթութիւն Ազուանից աշխարհնե
մէջ . — Փախուառ Վասակայ յերեսաց Վարդանայ . —
Գատգամաւորութիւն Վարդանանց և Վասակեանց ՚ի
Տիգրուն . — Նէնդ թողութիւն պարսկական արքունկաց
և ահեղ պատրաստութիւն պատերազմի :

ԿյԱԽԱՐԱՐԱՑ յանձնառութեան վրայ ո՛չ
միայն դառնացած էին բանակի մէջ գըտ
նորւած ուխտապահ երեցները, այլ և Պարս
սիկներէն շատերն ևս ՚ի ծածուկ կը ցաւակ-
ցէին : Կը յն ուխտապահ երեցները դառնա-
պէս լալէն և նախարարները սաստիկ կշտամ-
բելէն զինի (ըստ որում անտեղեակ էին նո-
ցա ծածուկ խորհրդին), արդէն նոցա չար
յանձնառութեան և պարսկական պատրաս-
տութեան գոյքը պատգամաւորի ձեռքով
վաղադոյն հասուցած էին հայրենի աշխար-
հը : Տակաւին մոգական բանակն և նախա-
րարք Հայաստան հասած չէին, որ բովան-
դակ աշխարհն սկսաւ խռովիլ և յուղիւ:

Եղափիսկոպոսները շուտով սփռեցան իւրաքանչիւր գաւառառաց մէջ, քորեպիսկոպոսները տարածուեցան գիւղերու և ագարակներու մէջ, քարոզեցին և դրդեցին բոլոր ժողովրդը — արք և կոնսյոք, ազատք և շինուկանք, քահանայք և մենակեացք — և քաջալիբրեցին, որ ամենքը ընդդիմանան և չը թողուն ամենեւին, որ Պարտկաստանէն դիմողիումը նույաստան մտնէ : Այս պատճառաւ երդուեցան և ուխտեցին ամենքը, որ մի միոյն աստուածային օրինաց հագատակինն և չը խնայեն բնաւ, .. ոչ ազգականը՝ ազգականին, ոչ ծառայն՝ տիրոջը, ոչ կինը՝ առն, ոչ որդին՝ հօրը, և ոչ եղայրը՝ եղօրը, եթէ ուրացած են քրիստոնէական կրօնքը . և այս ուխտով ամենքը զէնք առին, արք և կոնսյոք, զրահ հագան և պատրաստուեցան :

Սինէցեռ այսպէս կազմ և պատրաստ էր բոլոր Նայաստան աշխարհն իւր հաւատոց և հայրենի օրինաց պաշտպանութեան համար, նախորդարները պարսկական գորաց և մոգուց հետ Նայաստան հասան և բանակեցան (Կաղկոտն գաւառովի Անդրդիւղաքառ դաքի մէջ : Դադար առին այն տեղ 25 օր, և ապա Առողջետը մոգերովի հանդերձ փորձ փորձեց (Սիաշաբաթի օրը եկեղեցին մտնել և գրաւել : Ա. Դէւոնդ, որ ուրիշ երիցանց հետ միասին, պաշտօն կը մատուցանէր նոյն

Եկեղեցւոյն մէջ , ընդդիմացաւ մոգական
խումբին և իսկոյն ժողովուրդը յուրքցաւ և
մեծ բազմութեամբ յարձակեցաւ մոգերուն
վրայ և Ռածեծ և գլխապատառ վանեց ա-
մենքը և սարսափ ձգեց մոգակրօններուն սիր-
տը : Ոսդպետը զարմացաւ Հայոց հաւատոց
հաստատութեան վրայ և միանգումայն յու-
սահատեցաւ ասելով մարզպանին (Ա ասա-
կայ) և աղոց . “ Թա՞ղ գրեմ և ցուցանեմ մեծ
թագաւորին , զի ՚ի բաց թողացուցանէ զայս
պիսի իրաց առաջարկութիւն . զի եթէ ին-
քեանք աստուածքն եկեցեն յօդնութիւն ,
չէ հնար օրինացս մոգութեան ՚ի Հայս առ-
նուլ զհաստատութիւն , որպէս զիորձ առի
միաբանութեան ուխուին Եկեղեցւոյ : Օ ի
եթէ էին զօրք աշխարհիս մոգք , ոչինչ խը-
նայէին սոքա ՚ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն
զարտաքինսն , այլ և յեղբարս և յորդիս և
յամենացն մերձաւորս իւրեանց , նա և ոչ
յանձինս իւրեանց : Ուարդք՝ որք ոչ ՚ի կա-
պանաց զանգիտեն և ոչ ՚ի տանջանաց եր-
կրնչին , և ոչ ՚ի ստացուածոց պատկառին .
և որ յեւոխն չար է քան զամենայն չարիս ,
մահ քան զիեանս ընտրեն . ովէ որ կարէ
նոցա դիմակաց լինիլու⁽¹⁾ : Յիշեց նմանապէս
մոգպետը Ը ապուհ թագաւորի ժամանակ

(1) Եղէք : Գ . յեղանակ :

Նայոց ցուցած քրիստոնէական անվեհերութիւնը և արիութիւնը (զօր լած էր իւր նախնիքներէն) և յանդիմանեց մարզպանը, որ ՚ի մանկութենէ տեղբակ էր իւր ազգի հաստատամութեանը և յառաջագոյն իմաց տուած չէր, որ նոյն օրինակ առաջարկութիւն չառնեն Նայոց :

Եխակայն նենդամիտն Վ ասակ քաջալերեց մոդպետն երկայնամիտ լիներու և սկսա իւր հեարագիտութիւնները գործ դնել : Ո՞ի կողմէն զօրք հանեց Այրւնեաց աշխարհէն և իւր գունդը ստուաբացոց . միւս կողմէն սկսաւ նենդել և պատրել, ոմանց սիրութ շահել պատիւներով և յարքունուատ բեր ուած կարապիներով, ոմանց միտքը ողոքել պարգեւներով և ոռձիկներով, շինականները վախցնել սպառնալիքով, իսկ ազատաց համար խնջոյքներ կազմել և բոլոր գիշերը պարուց, մկառութեան և արքեցութեան մէջ մաշել և քրիստոնէական եռանդը զեղիսութեամբ թռւլացնել : Ո՞գեր բաժնեց նախարարաց տներու մէջ, ոռձիկները առատացոց, պատրուժակներ զոհել տուաւ, յազածոյ միս կերցնելով և յերկրպագութիւն արեգական հրապուրելով : Հայածանքը կարող չէ քրիստոնէութիւնը թռւլացնելքայդ հեշտութիւնը և աշխարհասիրութիւնը կարող էն քրիստոնէական հուրը մարել, և այսպէս

իսկ եղաւ . որովհետեւ վ ասակայ հնարքնեւ-
 րով շատերը մոլորեցան և շուտով բանի մի
 ատրուշաններ շինուեցան , և նոյն իսկ քրիս-
 տոնէից մէջէն քրմապետ կարդուեցոն Ը ա-
 ւասպ Արծրունի և Ը երոյ , որդի Ա նտոյիւ-
 Ռ յա ամեն չարագործութեանց մէջ վ ասակ
 տակաւին կը կեղծաւորէր և զինքն կը ծան-
 կէր և անհամամիտ կը ցուցնէր : Քայց ե-
 պիսկոպոնները շուտով յաջողեցան ուխա-
 պահ և ուրացող մախարարները իրարմէ բա-
 ժանմել և մանաւանդ վ արդանայ մոտաց հաս-
 տութեանը հասու լինելով՝ մեծ վստահու-
 թիւն ստացան : Վ արդան տեսնելով վ ասա-
 կայ և նորա գործակցաց պատրուակեալ առ-
 գամատնութիւնը և չը ժուժալով՝ ծածկա-
 բար ուղեւորեցաւ իւր տունով Յունաց
 բաժինը անցնելու . սակայն շուտով պատ-
 գամաւորներ ուղարկուեցան վ ասակայ թըլ-
 թով և Քասենոյ սահմանէն յետս կոչուե-
 ցաւ : Վ ամսարարները խորհրդի ժողովեցան
 Ը ահապիվանի զօրանմխուին մէջ, Ապարապետի
 (Վ արդանայ) մստ , և Եպիսկոպոսներն եւս
 իւրեանց սրտի նեղութենէն յանգետոտ նոյն
 տեղը դիմեցին աղաղակելով . Ա ղաչեմք ըզ-
 ձեզ զամենեսեան սուրբ Աւետարանաւս ,
 եթէ ձերով խորհրդով գործեն զայն անօրէ-
 թեան չարիս մարզպանն և մոլպետոն . նախ
 զմեր պարանոցս հատէք , և ապա յեկեղեցին

ձեռնարկեցէք : Այսա թէ առանց ձեր կամաց նորա զայն չարն գործեն , այսօր խընդրեսցի վրէժգ այդ ՚ի նոցանէ ո (1) : Նախարարները միաբերան յայտնեցին , որ անքակ են հաւատոց սուրբ ուխտին վրայ և նախանձախնդիր են փառաց Եկեղեցւոյն : Ուստի ամենքը գլուխը գետին հարկանելով և Եւետարանն ու եպիսկոպոաները ողջունելով՝ ուխտեցին տանուտեաբք և սեպուհք , և բաշեցին Քունիս ամայն մէջ պարզել խաչանիշ դրօշը ՚ի պաշտպանութիւն քրիստոնէական կրօնիւ Այս խորհրդին անհաւան գըտաւ Օաղանդան անուն սեպուհմի , կամակից մարզպանին , և առժամայն քարկանեցաւ , որով և սարսափի տիրեց ամեն տեսողաց :

Այնուհետեւ բողոր բազմութիւնը սուրբ նախանձով բորբոքուած՝ վառեցան ՚ի զէն և ՚ի զրահ , և գունդը երեք բաժնելով շրջապատեցին Ա ասակայ զօրքը , կամակորները կոտորեցին և զնոյն ինքն Ա ասակն ձերբակալ արարին . սակայն նա եպիսկոպոսաց տուքը ընկնելով թողութիւն ինդրեց երդումն կնքեց և կապեց Եւետարանէն , և որոնք տակաւին Եւետարանը մատանեաւ չէին կրնքած , կնքեցին և եպիսկոպոսաց տուին :

(1) Եղէչ . Գ . մէշման :

Առգպետը արդէն իւր զօրութիւնը կեղ-
 րոնացուցած էր Բագրեւանդի մէջ, Հայք
 յարձակեցան Օարեհաւանի (Երեգաւանի)
 կրակատան վրայ, ուր էր մոգերու բազմու-
 թիւնը, ատրուշանը քանդեցին, կրակը
 խափուցին, մոգերը բռնեցին և միւս օրը
 շատեր սպանին, Աշկան հազարապետն,
 Շաւասպն և Շերոյ ձերբակալ արարին Դըւ-
 նայ մէջ և ահ ու սարսափ տարածեցին.
 Վաղվաղակի դիմեցին Պարսից գրաւած թեր-
 գերուն և աւաններուն վրայ, առին Երտառ
 շատ, Գառնի, Խնի, Երտագեղք, Խորանիստ,
 Ծախանիստ, Վասակաշատ և այլք, ագա-
 րակներով և ամրոցներով հանդերձ: Լըներ-
 լի Պարսիկները թերդերու մէջ կալանաւո-
 րեցին իւրեանց պատանդներու փախարէն,
 զօրս թողած էին Պարսկաստանի մէջ: Բողոք-
 ատրուշանները կործաննեցին, Քրիստոսի խա-
 չը վերստին ամեն տեղ կանգնեցին, սեղան
 ուղղեցին, կենարար Խորհուրդը մատուցին.
 և երկնաւոր ուրախութեամբ զմայլելով ցըն-
 ծացաւ ամենայն երկիրն առհասարակ: Եր-
 քա, որ եկած էին Հայաստանը աւերելու
 և եկեղեցիները կողըպտելու՝ իւրեանց գան-
 ձերը և աւարները թողլով փախան, և ո-
 մանք եւս մոգաւթեան կրօնքն ուրանալով
 Եւետարանը խոստովանեցան: Եյսպէս սրբ-
 թեցին հայրենիքը կռապաշտութեան պըլ

ծութենէն, և ոմանք մինչեւ Ծարպատական արշաւեցին և մոգութեան փօրութիւնը խոր տակեցին . « Ա ասն զի ամենայն տղայք առ իրարհին իբրեւ զարս պատերազմողս խիզու խէին . վասն զի , այս բարբառ ստեայ ստեայ ընթանայր — քաջութեամբ միայն մեռցուք զանուն և զոգիս և եթ ժառանգեսուք . զի կենդանի իցէ ՚ի մեզ . Քրիստոս ո (1) :

Ո՞ինչդեռ այս յազմութեամբ կը ցնծաք Հայաստան աշխարհ , Ծղուանից հազարա պետը մի և պիտկոպսի հետ գոյժ բերաւ , որ Հոնաց աշխարհի պարսիկ գունդը Աերուխա զօրավարի առաջնորդութեամբ և երեք հարիւր մոգելով դարձած և մատած են Ծղուանք . աշխարհը կը պառակտեն , կը տիպեն մոգութիւնն ընդունիլ և ընդունելու համար կը խոստանան հարկը թեթեւ ցընել , իսկ եթէ զբնդունին , կը ապառնան բռնի ամեն գեղերու և աւաններու մէջ ատրուշաններ չինել . Վասամական կրակն ՚ի ներքս մուծանել , մոգպետներէն օրէնսդիրներ կարգել , և ստահակները՝ որդւով և կանամբ տարաշխարհիկ առնել :

Հայք ամեննեւին ըլքան այս հարստաշ հարութեան գուժէն , այլ քաջալերեցին Ծղուանից հազարապետն ու եպիսկոպոսը և

(1) Եպիք , Գ . մեղմակ .

հետ դարձուցին, որ առժամանակ մի առեւ-
 րանաց առաջն առնուն և մանաւանդ եկե-
 զեցիները պահպանեն։ Իսկ իրենք Առողմ
 Գնունին և Վարդանայ եղբայր Հմայեակն
 շտափաւ Արեւմուտք առաքեցին, իւրեանց
 կատարած քաջութիւնը իմացնելու թէ ա-
 գոս կայսեր և օգնութիւն խնդրելու, որոց
 մասին Յովսէփի կաթողիկոսը Արզպանի,
 Ապարապետի և մեծամեծ նախարարաց հա-
 ւանութեամբ նախակ եւս գրեց։ Ասկայն
 թէոդոս յանկարծամահ լինելով և տեղը
 Արկիանոս թագաւորելով, չար խրատտը
 ուաց թելազրութեամբ, ոչ միայն անտես
 արար Հայոց խնդիրը, այլ և դաշն հաստա-
 տեց Պարսից հետ։ Իւայց Յունաց և Պար-
 սից այս դաշնաւորութիւնն անգամ չը կա-
 րաց խախտել Հայոց քրիստոնէական ուխ-
 տը և արիական ոգին։ Իւրաքանչիւր նախա-
 րարական և ոստանիկ (արքունի) տանէ ժո-
 ղովիցաւ բազմաթիւ այրուձի և հասարա-
 կաց հաւանութեամբ զօրքը երեք մեծ գունդ
 բաժնուեցաւ։ Առաջին գունդը յանձնուե-
 ցաւ Ներշապուհ Ամբոսեան Արծրունի իշ-
 խանին և ուղարկուեցաւ ՚ի Հեր և ՚ի Օա-
 րեւանդ, որ Ատրպատականի սահմանին
 վրայ Հայոց աշխարհը պարսկային արշաւան-
 քէ պաշտպանէ։ Երկրորդ գունդը յանձնը
 ուեցաւ Վարդան սպարապետին և առա-

քեցաւ Պարաց սահմանը, Շորայի մարզպան
 նին (Աերուխտի) դէմ, որ Հռնաց երկրէն
 արշաւած էր Աղուանից վայ- Խսկ երրորդը
 յանձնուեցաւ Վասակին, որ մնաց աշխար-
 հի մէջ՝ ժողովրդի անդորրութեանը հսկե-
 լու : Վասակ գումարած էր իւր շուրջ իւր
 գաղտնի համակամները, ուստի և պատրա-
 սւակաւ Աիւնեաց աշխարհը քաշուեցաւ,
 որպէս թէ գարանամուտ լճելու և ըստ
 հարկին յանկարծուստ պարսկային գնդի վը-
 րայ յարձակելու և Վարդանին օգնելու :
 Խակայն, ընդհակառակն սկսաւ ծածկաբար
 տեղեկութիւն տալ Աերուխտին Հայոց աշ-
 խարհի վիճակին և Վարդանայ զօրաց սպ-
 կաւութեան վայ- Աերուխտ, քանի մի թա-
 գաւորազանց հետ, Շորայի կողմէն անցաւ
 կուր գետի այս կողմը և իւտիշացւոց խաղ-
 խաղ քաղաքի հանդէալ ճակատեցաւ Վար-
 դանայ հետ : Պարսկից գնդի աջ թեւն խոր
 տակեցաւ և դիմուստականներէն ոմանք գե-
 տամէժ եղան և ոմանք Պահնաս գետի գա-
 րափառերուն մէջ կոտորուեցան և գոյժը իւ-
 կոյն Նիւշապուհի պարսկային բանակին հա-
 սաւ : Խսկ Հայոց կողմէն ԱՌուշ սեպուհն
 միայն ճախճախուտ մօրերուն մէջ կորաւ :
 Հայոց զօրքերը մտան Աղուանից երկիրը,
 Պարսկից գրաւած ամրոցները պատերազմաւ
 առին, կրակատունները կործանեցին և մո-

գերը կոտորեցին . Աղուանից ազատները և շնականները , որոնք Պարսից երկիւղէն ամբացած էին լեռանց և անտառաց մէջ , դարձան միացան Հայոց զօրաց հետ և յարձաւ կեցան Հոնաց կամ Շորայ պահակին վըրայ , (զօր շնած էր Պարսից թագաւորը Հոնաց արշաւանքը արգիլելու համար) պահակապանները կոտորեցին , և դուռը յանձնեցին Ա ահանայ . որ Աղուանից թագաւորաց ազգէն էր , և որ պատգամաւոր գնաց Հռնաց աշխարհը , և գաշնք հաստատեց նոցահետ Պարսից դիմագրաւելու համար :

Ա ինչդեռ Ա արդան կը շարունակէր իւր յազմութիւնները Աղուանից երկին մէջ , յանկարծ դոյժ հասաւ , որ Ա ասակ քրիստոնէւթեան ուխտէն յեաս կալով , հրձիգ կ'առնէ գիւղերը , կը կործանէ բերդերը , կը գրաւէ զօրաց կայսնքները և ձմերոցները , ուխտապահ նախարարաց կանայքը և ընտանիքը կը կալանաւորէ ամրոցներու մէջ , եկեղեցիները կը կողոպտէ , քահանայքը կը կապէ , և Ներշապուհ Ոմբոսւեանի գունդը հեռու լինելով տակաւին չը կարաց օգնութիւն հասնել աշխարհի նեղութեանը :

Ապարապետն Ա արդան այս դոյժն առնելով՝ ժողովեց իսկոյն իւր զօրքերը և երկու օրուան մէջ (ըստ այլոց մի ամսուան) , շտապաւ Հայաստանի սահմանը հասաւ ,

որոյ յաղթութեան հռչակէն և ահէն սար-
ափելով Վասակ, թողաւ գերին և աւա-
ըլ և աճապարանքը Այրարատեան գաւա-
ռէն փախաւ և ապաստանեցաւ իւր երկրին՝
Այւնեաց աշխարհին մէջ : Ապարապետն
և իւր նիզակակիցները առին միւսանգամ
թագաւորուսնիստ տեղերը և ամրոցները և
երկիրը անդորրացուցին : Ի՞այց որովհետեւ
ձմեռը հասած էր, զօրքը սփռեցին աշխար-
հի մէջ, և սակաւսոթիւ գունդ միայն ա-
ռաքեցին Այւնեաց աշխարհն՝ ուրացեալնե-
րը հարուածելու : Եպիսկոպոսապետն Յակ-
սէփ պատռեիրեց որ բար Քաղոց ամիսը
պահք պահեն և Աստուծոյ օգնութիւնը
խնդրեն երկրի խաղաղութեան և քրիստոնե-
ական յաղթանոկի համար, և ապա 'ի նշան
գոհութեան և 'ի յիշատակ մեծ յաղթու-
թեանն սահմանեց տօնել տօն արեկան
Քրիստոսի Յայտնութեան տօնին հետ :

Իոլոք ձմեռը բովանգակ Հայաստան աշ-
խարհն երկու բամնուած էր . — Այրարա-
տեան կողմն ունէր Ապարապետն Վարդան
իւր ուխտապահ նիզակակիցներով, որք էին
Կերշապուհ Քծրունի, իորիէն Խորիսուունի,
Արտակ Պալունի և սյլ նախարարք և արքու-
նի գործակալք իւրաքանչիւր զօրքով, ու-
րացելոց տեղը ընտրելով նոցա եղարքն ու
եղբօրորդիքը : Այսացած էին սոցա հետ բո-

բոր եկեղեցականք ՚ի մի շունչ և ՚ի մի հոգի։
 Վշաւած ունէին աշխարհի ամուր տեղերը
 և ունէին շատ զէնք, զոր մանաւանդ ձեռք
 բերած էին Ազուանից պատերազմէն զինի։
 — Իսկ Արեւելեան կողմը գրաւած ունէր
 Արզպանն Ա ասակ, որյ հետ միացած էին
 պատրուած նախարարները — Արտակ Որշ
 տունի, Գաղղից, Խորխոռունի, Գիւտ Վաւ
 հեւունի և այլք, որոց կամակից էր նա և
 Ա ասակ Ա ամիկնեան՝ կուսակալ յունական
 բաժնի Հայոց։

Երկու կողմէն եւս պատգամաւոր առաւ
 քեցին Տիգրոն Պարսկաստանի արքայանիստ
 քաղաքն, Նախ Ա ասակեանք և ապա Վարչ
 գանանք : Վարակեանք ուղարկած էին սե-
 պուհ մի, իսկ Վ արդանանք նշանաւոր
 Պարտիկ մի, զոր կալանաւորութենէ արձաւ
 կեցին, յայտնեցին որ թափաւորը ՚ի զուր
 և յանիրաւի կը նեղէ քրիստոնէական կրօնէ
 քը ուրանալ, ցուցին որ այս բռնի հրամանն
 է պատճառ երկրի աւերանացն ու արքունի
 դորաց կոտորածին, պատմեցին Նմանապէս
 Վասակայ սուտակասպասութիւնքը, յայտնե-
 ցին որ Հայք նորա հետ ամենեւսին միաբան
 չեն, և ինդրեցին որ այս ամենը մի առ մի
 պատմէ թափաւորին : Երբ Վ արդանանց
 պատգամաւորը Տիգրոն հասաւ, (ուր կան-
 խած էր արդէն Վ ասակեանցն), և պատմեց

ամեն աղետից պատճառները, թագաւորն
սակաւ ինչ մեղմացաւ և խսկոյն աղքանեաց
խորհրդով թողութեան հրովարտակ հա-
նեց, չարչարանաց մատնուած քրիստոնեայ-
քոն ազատեց, կալանաւոր նախարարազուն-
ներն արձակեց. և ոռօճիկներով ու ստաց-
ուածներով մեծարեց և քահանաներուն հր-
զաման տուաւ, որ աղատաբքար պաշտօն
կատարեն : Ի՞այց այս աքքունի թողութիւնը
կամ աղատութիւնն առ ժամանակեայ, էթ ո-
չայերը հանդարտեցնելու համար, (որուն-
և չայք ըստ հաւատացին). վասն զի շուտով
իւր խորհուրդը փոխեց թագաւորը և հաւ-
տատ որոշեց, որ հնարագիտութեամբ ըս-
յաջողածները, զէնքի զօրութեամբ կատա-
րէ, ուստի և մեծ բանակ կազմելով ԱՌՀՕ-
ՆԵՐՍԵԿԻ հրամանատարութեամբ չայասաան-
ուղարկեց : Պարտկական այս ահագին զօրա-
խումբը փղերու երամակով հանդերձ եկաւ
և բանակեցաւ Փայտակարան քաղաքի մէջ,
Կմօտուատ դիտելու չայսատանի վիճակը
և Վ ասակայ ձեռամբ ստոյգ տեղեկութիւն
ստանալու չայօց զօրութեան և զինուորա-
կան հմտութեան վրայք ԱՌՀՕՆԵՐՏԵԿ մեր
ձակայ տեղեաց, Վ վինաց, Շնչաց, Վ ատաց
և այօց վարձկաններով իւր բանակը ըստ
ուարացսց, յանձնեց ԱՌՈՒՇԿԱՆ Կիւռալա-
ւուրտին, որուն օգնական կարգեց Նորմէն

Ե Այսրորմիզդ, (որ առաջ գործակալ էր Հա-
յոց մէջ) և պատուիրեց որ միշտ Վ ասակայ
խորհրդով շարժին, (վասն զի իւր անձէն աւ-
տելի նորա վրայ էր վստահացած, Հայոց
աշխարհին թագաւորեցնելու յուսով միսի
թարելէն զինի) և հրաման տալով որ ՚ի գար-
նան անշուշո պատերազմն ակսին, ի՞քն փու-
թով գարձաւ Տիզըոն թագաւորին մօտ :
Վ յսպէս էին ահա հանգամանքները, և ձմե-
ռը վերջանալու վրայ էր :

Պ.

Ահեղ դիմամարտութիւն քրիստոնէութեան ընդգէմ
մոդակրօնութեան - Վահատակութիւն Վարդանանց -
Վշտակրութիւն և արիութիւն քրիստոնէից յետ մեծի
նահատակութիւն - Զբնաղ տեսարան քրիստոնէական
կենաց - Լերինք և անտառք՝ իրրեւ ապաստանարան
քրիստոնէից . - Մարդպանութիւն Ատրոմիզդի . -
Կապանք սուրբ քահանացից . - Ժաղով ՚ի Դուին . -
Կաթողիկոսութիւն Մելիտէ Մանազկերտուուց . - Կա-
պետլ քահանաց և նախարարք ՚ի ձմերոցն արքունի .
- Վտեան վասն դատապարտութեան Վասակայ . - Վա-
խարարք և քահանաց ՚ի բանտն Շմւշապուհ քաղաքի .
- Տանջանք կապելոց և գարձ մոդուտաին . - Վահա-
տակութիւն Ս. Ղեւոնդեանց :

ԱՅԻ ԻՆՉ Հայք ուրախութեամբ կը
տօնէին զատկական օրերը՝ յանկարծ լուր

Հասսաւ որ պարակային գունդը Հեր և Օւրեւանդ համնեցով բանակ բոլորած են սահմանին վրայ , փոս հատանելով , պատնէշ կանգնելով , շերտաւոր փակելով , և առպատակներ սփռելով աշխարհի մէջ : Հայաստան խռովեցաւ . Կախարարաց պիրտը թընդաց և ահա վաղվազակի իւրաքանչիւրն իւրեանց զօրքով Արտաշատ գումարեցան , որոց թիւը 66,000 հազարի կը համնէր . Ապարապետն յարդարեց այս գորախումբը , զինուց , երիվարաց և հանդերձից պակասութիւնը լցուցանելով և զօրական հանդէսներ կատարելով : Առանձար սեպուհն առաքեցաւ , որ թշնամեաց զօրութիւնը և դիրքը դիտէ յառաջագոյն , որ յանկարծ 300 (ըստ Փարապ.) 2000 (ըստ Լոդիշ.) հեծելովք յարձակեցաւ թշնամեաց վերջապահ թեւոյն վրայ և կէսը կոտորելով շուտով Հայոց բանակը դարձաւ : Աւրախացան Հայք այս յաջող դէպքին վրայ , և երբ խմացան թէ թըշնամին պատրաստուած է աշխարհի միջոցը մտնել , որոշեցին ընդառաջ ելանել սահմանին վրայ և առպատակութեան ու առերտնաց տեղի չդադալ : Ի՞այց թշնամի բանակը արդէն աշխարհի միջոցը գրաւելով՝ բանակած էր Արտազ գաւառի Աւարայր գաշտի մէջ , Տղմուտ գետի ափանց վրայ : Հայոց զօրախումբը հասաւ և բանակեցաւ դէմ յան-

դիմանու Այն տեղ եկած էին նոյնպէս լ). Յովէ
 աչփ և ՚Եւոնդ երէց, ուրիշ եպիսկոպոս
 ներով հանդերձ պատերազմին գործակից
 լինելու : Ասակը պատգամաւորներ կ'ու
 զարկէր և զօրաց միտքը լքուցանելու համար
 թողութիւն կը հրատարակէր թագաւորէն,
 բայց չայք չը հաւատացին ուրացեալ պտաւ
 խօսին : Ա արդան զօրքը կարգին դրաւ, սրտաւ
 ռուչ ատենաբանութեամբ ոգեւորեց աւ
 մենքն և Ա ակաբայեցւոց Գիրքը կարդալով
 բանակին առջեւ՝ խրախուսեց ՚ի պաշտպաւ
 նութիւն հայրենի օրինաց և ՚ի զբհ վասն
 սիրոյն Աստուծոյ : ՚Եւոնդ երէցն ևս քա
 ջալերական ճառ խօսեցաւ լ). Յովսէփայ և
 այլ ընկերակյաց հրամանաւ պատերազմի
 նախընթաց երեկոյին ։ ՚Թյն գիշերը չը մկրք
 տուածները մկրտուեցան և զինուորեցան
 հաւատաց զինով : Անդան ուղղեցաւ, ամենաւ
 սուրբ Խորհուրդն կատարեցաւ, և Հոգեւ
 գալստեան եօմներորդ աւուր խորհրդաւոր
 առաւօտուն հաղորդեցան ամենքը, զօրք և
 զօրականք, վառեցան հոգւով և երկնաւոր
 նահատակութեան սիրով և ամենայն բազւ
 մութիւնն աղաղակեց միաբարբառ . “ Հաւ
 լասարեսցի մահ մեր ընդ մահ արդարոցն,
 և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ
 մարտիրոսացն, և հաճեսցի Աստուած ՚ի կա
 մաւոր պատարագս, մի՛ տացէ զիշեղեցի

ԲԵՐ ՚Ի ՃԵՌԱ ՀԵՇԱՆՈՍԱՋ Ա (Պ) :

Իսկ Պարսից զօրավարը կը յիշեցնէր իւր զօրականին թագաւորի հրամանը իւղը, պսակը և ռունուստ պիտի տրուեին : Կը յիշեցնէր իւրաքանչիւրի կինը և որդին, անդն ու ագածակն և փախստէից պատուհամները : Կը կարգէր, կը կազմէր (Ա) ուշկան ՚լիւսալաւուրա իւր ճակատն և փղերով հանդերձ կը կացուցնէր ընդ երկայնութիւն դաշտին, իսկ ինքն կ'ամրանար (Ա) ատենիկ գնդին մէջ :

Վ արդան եւս արդէն իւր զօրքը երեք գունդ բաժնած, կարգած և սպառազինած էր ոչ միայն ՚ի զէն նիւթական, այլ մանաւանդ ՚ի զինուորութիւն հոգեւոր : Պայծառառաւուօտը ծագեցաւ, գալարափողները հընչեցան ՚ի նշան պատերազմին, զօրաց աւ դաշտին բարձրացան երկու կողմէն եւ կռիւն սկսաւ նետաձգութեամբ գետի երկու եղերքէն : Հայոց գունդը յառաջեց գետըն անցաւ : (Ա) էկ կողմէն Պարսից զօրքը կը ցրուէր և միւս կողմէն (Ա) ատենիկ գունդը կը քայքայուէր : (Ա) Հագին էր պատերազմն, նիւղակները կը ճօճային, հրաձգութիւնք կ'եռային, աղեղունք կը ճայթէին, վահանք կը կռիւ փէին և ահաւոր ձայնէն և աղաղակներէն

(Ա) Եղէք : Եւ յեղանակ :

գողցես լերինք և անձաւք կը շարժէինս թանձ
ծրամիտքն կը յիմարէին և վատասիրտքն կը
լքանէին , քաջքն կը խիզախէին և նահաւ
տակքն կը դոչէին , և երկու կողմէն շատ վիւ
րաւորներ դիաթաւալ կը խաղայինն էր մինչ
դեռ յաղթութիւնն այոց կ'երեւէր , Պար
սիկները սաստիկ յարձակմամբ վերջին ճիգն
կը թափէին և զլարդանանք աղմկելով շաւր
շանակի կը փակէին : Աստանօր մեծ նախճիր
կը գործէր կորովին Ա արդան իւր քաջ նիզաւ
կակիցներով և կ'առնուր Պյակ ՆԱՀԱՏԱԿԻՌ-
ԹԵԱՆ Պատերազմը կը շարունակուէր , գար
նանային ծաղկալից դաշտը արեան հոսանքով
կը ներկուէր , օրը կը տարածամէր և զօրքը
կը վատնուէր կը ցրուէր լեռնադաշտերուն
և ամուր ձորերուն մէջ : Այսպէս կը կատաւ
րուէր այն ահագին պատերազմը (2 Ծունի-
սի 451) , յորում Պարսիկներէն և Ա ասակեան
գնդէն կ'անկանէին 3544 անձինք , իսկ այոց
գնդէն 1036 (ըստ Փարպ . 1035) ոգէք միա
համուռ նահատակեալք վասն քրիստոնէուն
թեան , որոց երեւելիքն էին քաջն Ա արդան ,
կորովին խորէն , արին Արտակ , զարմանալին
Տաճատ , իմաստունն Ամայեակ , հրաշակեր
տըն Աերսեհ , մանուկն Ա ահան , արդարն
Արսէն , և յառաջադէմն Պարեգին : Այսպէս
զոհեցին իւրեանց անձը աստուածային սի-
րոյ և հայրենի օրինաց համար այն ընտիր

նահատակները, որոց անմահ յիշատակը կը
տօնէ Եփեղեցին անուամբ Վարդանանց զօրա-
վարաց, յանուանէ քաջին Վարդանայ:

Այս նշանաւոր պատերազմէն և նահա-
տակութենէն զկնի՝ Հայք ամրացած զանա-
զան ամուր տեղեցաց մէջ և Վուշկան Նիւ-
տալաւուրտ իսպառ յուսահատեցաւ, տես-
նելով որ անհնարին է մոգութեան օրէնքը
Հայաստան մտցնել. Ասկայն Վասակայ խոր-
հրդով փորձ փարձեց Քրիստոնէութեան
ազատութիւն խոստանալ պատրանօք և ամ-
բոցները պատերազմաւ գրաւել. Պաշարեց
բերդ մի, ուր ամրացած էր Հայոց մի գուն-
դը սուրբ երէցներով հանդերձ, և երդ մամբ
խոստացաւ անվեսոս թողուլ, եթէ կամովին
անձնատուր լինին. Բակ անուն սեպուհը
ստապատիր երդմանը չը հաւատալով 700
զօրականով գիշերը փախաւ և նոյն բերդէն
ազատեցաւ, իսկ մնացեալները անձնատուր
եղան, յորոց 213 անձինք նահատակեցան.
և Ա. Յովսէփ և Դեւոնդ կալանաւորեցան
ուրիշ լնկերներով, զորս գանել տուաւ
Վուշկան Նիւսալաւուրտ և հրամայեց զգու-
շութեամբ պահել, վասն վի բողոքեցին ՚ի
դուռն թագաւորին այս նենդութեանց հա-
մար և զլ ասակ ամբաստանեցին. Թէպէտ
և Ա. Պուշկան Նիւսալաւուրտ ազատեց շատ
քահանայք, որ աշխարհի շինութեանը և

խաղաղութեանը հոգ տանին և արքունուստ
թողութիւն հրատարակեց, բայց չայք այ-
նուհետեւ ամենեւին շրհաւատացին. յիշեցին
իւրեանց քրիստոնէական ուխտը և ընտիր
ընտիր նահատակաց կոտորումն, և մօրմոք-
եալ սրտով սկսան մէկզմէկ քաջալերել. «Օ յի
պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխար-
հիս. և կամ ընդէր տեսանեմք զարեւ յետ
մերոց սիրելեացն. Օ յի եթէ քաջ նահա-
տակքն մեր անկան ՚ի մեծ պատերազմին և
բազում վիրաւորք տապալեցան յարիւն ա-
պաժոյժ ՚ի մէջ դաշտին, և ամենեցուն մար-
մինք եղեն գէշ թռչնոց և կերակուր դազա-
նաց, և պատուական նախարարք մեր հասփն
յանարգութիւն թշուառութեան. լըբին
զիւրագանչիւր իշխանութիւն և են ՚ի հա-
լածանա նեզութեան, և ամենայն փափկու-
թիւն չայոց եհաս ՚ի վիշտա վտանգի և յան-
հնարին ապականութիւն, ոչ անսամք խա-
քերաց հրամանաց թագաւորին և անկանիմք
՚ի ձեռա անօրէն իշխանաց ⁽¹⁾ ո: Յային այ-
նուհետեւ իւրեանց գիւղերը, աւաները
և ագարակները և չարսները ելան առա-
գաստներէն և փեսաները սենեակներէն.
Տերերը անկան աթոռներէն և տղայքը մայ-
րական գրկերէն: Երիտասարդներն ու կու-

(1) Եղբակ: Ե: Ժեղանակ:

տանները և աշխարհի բոլոր բազմութիւնը
ապաստանեցան լեռները և անապատները :
Ի աւ համարեցին աստուածապաշտութեամբ
խօսաբռւտ լինիլ և գետեախշտի , քանիժէ
ուրացութեամբ փափկանալ . Իւրեանց մի
ակ միսիթարութիւնն էր || . Դրոց ընթերց
տաճները և Այաղմոսաց մրժունջները : Այն
պէս որ , “ Ամենայն մարդ յանձն իւր եկե-
ղեցի էր , նցն ինքն քահանայ , մարմինք
իւրաքանչիւր սուրբ սեղան և ոգիք նոցունց
պատարագ ընդունեցի (1) . ո . Ամանք ամրա-
ցած էին Տմորեաց անմատոյց սարաւան-
գակներուն մէջ . ոմանք Արցախոյ թանձրու-
խիւ անտառներուն մէջ . ոմանք Խաղտեաց
և Պարիսարու լեռներուն մէջ , և ոմանք աշ-
խարհի միջավայր ամրացներուն մէջ , որոց ա-
մենեցուն խնդրուածքն այս էր միայն . “ Այ-
սեսաննել զաւեր եկեղեցեաց (2) . ո .

Պարսիկ զօրավարն աւելցնելով իւր այ-
րուձին կը յարձակէր այս ամրոցներուն վրայ ,
և թէպէտ ճակատ առ ճակատ չէին մար-
տընչեր , բայց կստորածները կը շարօւնա-
կէին . Կապուտ լերան մէջ չայք խորտակե-
ցին Պարսից հրօսակը և միայն Արշէն երեցը
կաղանաւորեցաւ , որ իջած էր Ա ասակայ
սիրտը մեղմացնելու : Ամանապէս Տմորա-

(1) Եղէշ : Ե . մատուակ . (2) Եղէշ : Ե . մատուակ :

կան ամրոցէն յարձակեցան և պարտկային գունդը ջարդեցին ։ Տայոց ձորագաւառին մէջ եւս յաղթութիւն գործեցին Հայք ՚ի վրէմիսնդրութիւն երկու այրած եկեղեցիներու , ուր նահատակեցաւ Վարդանաց Հմայեակ եղբայրն ։ Եղնպէս Արցախայ անտառներուն մէջ ապաստանածները ըստ դաշնադրութեան օգնութեան սուանալով Հոնաց կրղմէն՝ պարսկային գնդի վրայ կը յարձակէին և կը խորտակէին ։

Այս մանր պատերազմաց մէջ եղած կոտորածներն եւս առաւել վհատեցուցին ԱՌուշկան Կիւսալաւուրտի սիրտը , սւստի յարձակումները դադարեցոց և թագաւորին տեղեկութիւն տուաւ անօգուտ կոտորածներուն և Հայոց դիմադարձութեան մասին ։ Ի՞ագաւորն շատ արտմեցաւ , ուստի և ԱՌիհրներսեհի խորհրդով հրաման առաքեց , որ ԱՌուշկան Կիւսալաւուրտ բոլոր բանակով Հայաստանէն ելնէ և Հոնաց վրայ երթայ , Վասակ պարտկաստան դառնայ և մարզպանութիւնը Ատրորմիզդին յանձնուի , որուն և պատուիրեցաւ ջանալ առաւել սիրով քան թէ պատերազմաւ երկիրը նուաճել ։ Ատրորմիզդ արքունի թաղութիւն հրատարակեց Հայաստանին մէջ և իւր մօտ կոչելով եպիսկոպոսներն և երեցները , (Ա)ահակ եպիսկոպոս Աշտունեաց ,

Արուշէ երէց Արծրունեաց, Ասմուէլ և Ար-
քահամ քահանայք, Յովսէի կաթողիկոս,
‘Դ եւոնդ երէց, Քաջաջ ստրկաւագ և Ար-
շէն երէց), որոց ոմանք ատրուշաններ աւե-
րած էին և ոմանք երկրի աւերանաց համար
առ թագաւորն բողոքած, և շղթայակապ
առնելով արքունիքն առաքեց իւրեանց ա-
շակերտներով հանդերձ, որոց մէջ երեւելի-
էին խորէն երէց Արարատայ և Աքրահամ
երէց Տայոց : Այս տնձնադիր հովիւներն
և ուրացեալն Վասակ ճանապարհին իրարու-
հանդիպեցան և ողջունեցան, բայց սոքա-
ռշացան ճանապարհորդութեան մէջ, որով
հետեւ կապուած կ'երթային . իսկ Վասակ
մեծ ակնկալութե պատիր յուսով խարուած,
շուտ հասաւ Պարսկաստան, և զինքն արդա-
րացնելու համար՝ ամեն հնարք ՚ի գործ դրաւ,
մեղադրելով մանաւանդ Ապարապետն Վար-
դան : Առկայն թագաւորն յետաձգեց ամ-
բաստանութեան դատը մինչեւ կոչուածնե-
րուն գալուսոր :

Մտրորմիզդն կապեալները արքունիքը
աւղեւորելէն զկնի՝ Հայոց աշխարհի միւս
եպիսկոպոսները ազատ թողուց, որ իւրա-
քանչիւրն հրապարակաւ վարէ իւր տեսչա-
կան պաշտօնը, երկրի հարկը առ վայր մի-
թեթեւացոյց, մենակեացներուն և փախը-
տականներուն հրաման տռաւաւ, որ իւրեանց

աեղերը դառնան և նաև արքունի հրամանաւ
 թողութիւն հրատարակեց, որ բռնի
 մտգութեան կրօնքը ընդունողները՝ վերըս-
 տին իւրեանց քրիստոնէութիւնը համար-
 ձակ պաշտեն : Այսարարները տեսնելով
 այս արքունի շնորհումներն և երկրի շնուր-
 թեան և խաղաղութեան փափաքը, դար-
 ձան ամրոցներէն և հեռաւոր օտարութենէն
 իւրեանց կալուածները : Հատ չանցաւ, նա-
 խարարք արքունի դաւոն կոչուեցան, իբր
 թէ ամեն աղետից պատճառներն քննելու
 և խաղաղութեան դաշն հաստատելու հա-
 մար : Այսարարք հաւանաւթիւն ցուցին,
 մանաւանդ որ ինքեանք եւս կըցանկային
 Ա . Եպիսկոպոսաց և Երիցանց հետ Վա-
 սակայ դատին ներկայ լինիլ : Իւստի և ամե-
 նեցեան ժողովեցան Դուռին քաղաքը, ժողով
 կազմեցին եպիսկոպոսաց և տանուտերանց
 հետ և միաբան հաւանութեամբ Անլիտէ
 Անազկէրտացին ընտրեցին կաթողիկոս
 (Յովսեփայ տեղ, (յորմէ հաւանութիւն ու-
 նէին,) կաթողիկոսական աթոռը Դուռին փո-
 խեցին և տպա ՚ի շնորհս մարզպանին թռ-
 զին բոլոր աշխարհը, իւրեանց կանայքը,
 որդիքը և ստացուածքը և ուզեւորեցան ՚ի
 ձմերոցն արքունի, առաւել չարչարակից լի-
 նելու սուրբ կապելոցն, քանթէ բարիք քա-
 ղելու մոգպաշտ արքունիքէն :

Նախարարներն հասան արքունի ձմերռ
ցըն, ուր կային ոչ միայն սուրբ եպիսկոպոսներն
ու երեցները, այլ և ուրիշ նախարարադուռն
ներ յառաջագոյն արգելուած նոյն տեղը, ու
բաց մէջ էին նու և Արդանայ Հմայեակ եղ
բօր երեք մատաղահաս որդիքը Ա ասակայ
հրապորանօք կալանաւորուած: Ի՞այց Ա բաց
և Ա զուանից Ա ազգէն և Ա աչէ թագաւոր
ները մոգութեան կրօնքը ընդունելով դար
ձած էին արդէն իւրեանց աշխարհը: Ա աչէ
առ երեսս միայն ուրացած էր, որ և յետոյ
պատերազմներ. միշեց Պարսից դէմ և թագաւ
որութենէ հրաժարելով կրօնաւորեցաւ.
իսկ Ա ազգէն ՚ի բալոր սրտէ, որ և իւր բա
րեպաշտ ամուսինը (Ա եծին Ա արդանայ
Շուշանիկ դուստրը) վեց տարի նեղութիւն
ներ տալով հրապուրեց ՚ի մոգութիւն եւ
երբոր շրկարաց տանջանօք նորա հաստատուն
հաւատոքը խախտել, նահասակել տուաւ,
որոյ գերեզմանը կայ մինչեւ ցայսօր Տփիսի
սի Ա նետեխ ամրոցի եկեղեցւոյն մէջ:

Նախարարները փոխանակ ընդունելու
թիւն գտնելու թագաւորէն և Ա իհրներսէն
հազարապետէն, կապանօք մահապարտաց
բանան դրուեցան, ուր էին ուխտապահ ե-
րիցունք և այլք: ՚Ի՞անի մի օրէն դկնի հարցաւ
փորձի ատեան բացուեցաւ, նախ Ա իհրներ-
սէնի և ապա թագաւորին առջեւ հրապա-

բակաւ : Առեւան կոչուեցան ինչպէս Ա ասակ
 և այլ ուրացեալները , նոյնպէս և ուխտա
 պահ կապեալները , նախարարք և երիցունք
 Ա ասակ ամբատանուեցաւ ոչ միայն նախա
 բարներէն և երեցներէն , այլ իւր ազգական
 ներէն , այլ և մոգերէն և Ախւալաւուրտէն ,
 ուստի և թագաւորի առջեւ կողմտուեցաւ
 իւր ամեն պատուանշաններէն և պատուա
 զգեստէն , կատուեցաւ որպէս պատժապարտ ,
 և ՚ի նշան անարդութեան մատակ ձիու վրայ
 հեծած տարուեցաւ մահապարտաց բանտն ,
 և նորա փոխանակ Ախւեաց իշխան կարգուե
 ցաւ Ա արազվաղան . Բայց նախարարներն
 և երեցները ևս չազատեցան , այլ կապանօք
 վերստին բանտը դրուեցան : Ախստապահ
 ները ուրախ էին և զուարժ իւրեանց կալա
 նաւորութեան մէջ անգամ , վասն զի երկնա
 ւոր սիրով վառուած էին . իսկ Ա ասակ կը
 հաշէր և կը մաշէր , վասն զի երկնաւոր սէրն
 աւրացած էր և երկրաւոր փառքէն ևս զըր-
 կուած , ուստի և դառն ցաւերով մահացաւ .
 “ Եւ այն , որ կամէրն թագաւոր լինիլ մեղքը
 Հայոց աշխարհին , ոչ երեւեցաւ տեղի գե-
 րեզմանինորա : Աչ յիշեցաւ անուն նորա ՚ի
 մէջ սրբոց և ոչ մատեաւ յիշատակ նորա ա-
 ռաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն ” :

Յաղիերտ պատրաստուեցաւ խազալ պատերազմաւ ՚Բուշանաց դէմ, հրամայեց կապանօք տանել սուրբ քահանայքն ու նախարարները և կոլանաւորել ։ Կպար աշխարհի ՚Նիւշապուհ քաղաքի ամուր դղեկին մէջ և նոյն երկրի մեծ դենպետին կամ մոգպէտին պատռիրել, որ ողոքանօք կամ տանջանօք մոգութեան դարձնէ: ՚Բահանայից հետ կապուած և բանտի մատնուած նախարարաց դղիաւորներն սոքա էին — Ոիւնեաց տոհմէն Շաբկէն և Շակուր եղբարք, Շմծրունեաց տոհմէն Շաւասպ, Շպրսամ, Ո՛եհրուժան, Պարգեւ և Տաճատ. Ո'տմիկոնեան տոհմէն Համազասպեան (եղբայր Վարդանայ) Համազասպ, Երտաւազդ և Ո՛նուշէ. Կամսարականաց տոհմէն Արշաւիր, Թամթ, Վարձ, ՚Ներսեհ և Շշոտ. Եմատունեաց տոհմէն՝ Վահան, Եռանձար և Եռնակ. Գնունեաց տոհմէն՝ Ետոմ. Գիմնքսեան տոհմէն՝ Թաթուլ և Սատոյ. Ենձեւաձեաց տոհմէն՝ Շմաւոն, Օսւարէն և Շռաւան. Երաւեղեան տոհմէն՝ Փափակ, Վարաղդէն և Դազ. Ո'անդակունեաց տոհմէն՝ Ոահակ և Փարաման. Տաշրացեաց տանէն Վրէն. Ոիսենից տանէն՝ Շաբիկ և Յոհան:

Ո'ոգպետը ամեն տանջանք և տառապանք ՚ի գործ դրաւ ուխտապահ կապելոց հաւատքը խախտելու և մինչեւ անգամքաւ

հանայքը բաժանելով նախադարներէն՝ առաջ
 և ել գիձին. և տարտարոսական բանոփի մատու-
 նեց, բայց անհնարին եղաւ իւր նպատակին
 հասնելու, և ՚ի վերջոյ քանտարկելոց քրիս-
 տոնէական զուարթուն նորանշան կեանքէն
 ինքն ստիպուեցաւ քրիստոնեայ դառնաը
 աստուածային ազդմամբ և թեթեւցնել
 քահանայից տառապանքը : Ո՛խչդեռ ՚իւր
 շապուհի բանաին մէջ այս իրողութիւնը կը
 կատարուէր, թագաւորն յաղթուելով Հօնաց
 պատերազմին մէջ, մոգերու խրատով գաղտ
 սպանել տալով Ամուէլ երեցը և Երա-
 համ սարկաւագը իւր կարաւանին մէջ,
 և Թաթիկ եպիսկոպոսը Ըսորեստանի մէջ,
 ուր աքսորուած էր որպէս վնասակար տէ-
 րութեան, ուղեւորած էր ՚Իենշապուհ ամ
 բարակապետն, որ ՚իւրշապուհի կալանա-
 ւորները կամ մոգացնէ և կամ ծածկաբար
 չարչարել և նահատակել տայ, որ քրիստո-
 նեայք չիմանան : ՚Իենշապուհ իմանալով
 մոգպետի քրիստոնէական դարձն, գաղտնի
 առաքեց հեռաւոր երկիր և խոր վկի մէջ
 ձգել տուաւ . իսկ կապեալ քահանայքն ծա-
 ծուկ հանել տուաւ բանտէն, տարաւ հե-
 ռաւոր անապատ տեղի, երկար հարցախոր
 ձեց Ա՛ովան հանդերձապետի, Զնիկան
 մարզպետի և մոգպետի առջեւ, և երբ
 փոխանակ համոզելու, առաւել աստիկ պա-

տասխաններ ստացաւ, հրամայեց ամենաշ-
գառն տանջանքներով և ապառաժներուն վը-
րայ քարշելով՝ կենազլաւ առնել, որոց նըշ-
խարքը յետոյ ծածկաբար ամփոփուեցան վեց
տապանի մէջ քրիստոնէից ձեռռամբ : Այս
են այն երանելեաց անուանքը, որոնք իւ-
րեանց անձը դրին իւրեանց հօտի և խոստո-
վանած ճշմարտութեանց վրայ — Յովսէփ,
Ասհակ, Աւոնդ, Առողէ, Արշէն, Քա-
ջաջ, Ամունէլ, Աբրահամ, Թաթիկ, (վեր
ջին երեքն առ անձին նահատակուած) որոց
անմահ յիշատակը կը տօնէ (Հեղեցին՝ Աւ-
անդիանց անուամբ) :

Պ .

Դսորէն և Աքրահամ աշակերտք Ղեւռնդեանց . — Կա-
խարարք պարսկական բանտերուն մէջ և կանայք նոցա-
հայաստանի մէջ . — Չքնազ պատկեր քրիստոնեական
կենաց երկոցունց կողմանց . — Ազատութիւն և գարձ
Նախարարաց ՚ի Հայաստան . — Կաթողիկոսութիւն Մով-
սիսի Մանազկերտացաց և Գիւտայ . — Գիւտ մատնու-
թեամբ կ'ամբատանուի Պարսից գուռն և կաթողի-
կոսութենէ կը հրաժարի . — Կաթողիկոսութիւն Քրիս-
տոփորի Արծրունւց . — Բարծումա պարսիկ . — Վա-
հան Մամիկոնեան և Մանդակունի Յովհան Կաթողի-
կոս . — Վեցեքին դիմամարտութիւնք քրիստոնէից և
մոգակընից և յաղթանակ Քրիստոնէութեան . — Թառ-
գաւորութիւն Վաղարշայ և մարզպանութիւն Նէխո-
քի . — Նշանաւոր դաշն Վահանայ . — Սպարապետու-
թիւն և Մարզպանութիւնն Վահանայ . — Հանդէս
քրիստոնէական ուրախութեան յեկեղեցին Դուն յ . —
Աւեր կուտանց և նորոգութիւն եկեղեցեաց . — Կա-
թողիկոսութիւն Բարկէնի և Շուփհաղիչէի Աղուա-
նից կաթողիկոսի . — Գիւտ նշխարաց Գրիգորիսի :

Պետքնդեսանց նահատակութենէն զինի ,
նոցա աշակերտներէն երկուքն , խորէն
և Աքրահամ բանտէ հանուեցան , գանուե-
ցան , ականջնեցը կտրուեցան և Բաբելաստա-
նի Հահուզ գաւառը աքսորեցան աքքունի
մշակութեան համար : Նախարարները մնա-
ցին բանտի մէջ տառապանաց և կապանաց
մատնուած . իսկ Հայաստան մնաց քրիստո-
նէական սուրբ նախանձով վառուած , թէ-

ամէտ և իւր ընտրելագոյն հովիւներէն և արթագոյն նախարարներէն զրկուած։

Խորէն և Աքրահամ Բաբելաստան հասնելով և կապանքէ ազատ լինելով կը շրջէին Առորեստանի և Խուժաստանի մէջ, տեղւոյն քրիստոնեաներէն տուրք կը ժողովէին եւ Խիւշապոհի կապելց (նախարարաց) կը տանէին կամ կ'ուղարկէին։ Այս տեսակ շրջագայութեանց ժամանակ Խորէն տկարացաւ Խուժաստանի խորշակէն և վախճանեցաւ։ Իսկ Աքրահամ երկու տարիէն զկնի նախարարաց խնդրանօք և Առորեստանի քրիստոնէից երաշխաւորութեամբ Հայաստան դարձաւ, երկիրը միխթարեց իւր քաջալերական վարդապետութեամբ, և ապա կարգուեցաւ եպիսկոպոս Աղնունեաց գաւառին։

Նախարարներն և նախարարազանց որդիքն երկար ժամանակ մնացին բանտի մէջ, բայց ամեն գառն տառապանց քաղցրացուցին աստուածային սիրով։ Հայաստանի ծաղկաբեր լերանց փափուկ և ընդարձակատան բնակիչները ընտելացան արեւելից բոցակէզ խորշակներուն և խռուարարգել, անվերակու և գետնափաշտի ապրեցան։ Ո՞նկանկագոյն ներն ուսան հայրենի գայրութիւն և Ո. Պըրոց ընթերցանութեամբ, իբրեւ հոգեւոր կերակրով, զօրացան։ Իսկ ծերունիքը փափ-

կացան, մատաղացան, մանկացան, երդակցեւ-
 լով մատաղերամ նախարարազուններուն և
 Աստուծոյ մարդասիրութիւնը փառաւորե-
 լով։ Որչափ պքանչելի էր այս կապելոց քրիս-
 տոնէական կեանքը պարսկական բանտերուն
 մէջ, նոյնչափ սրտաշարժ էր նոցա ընտան-
 եաց և կանանց կեանքը Հայաստանին մէջ։
 Հայոց փափկառուն ամիկնայքն՝ գիւցազնու-
 հիք և առաքինութեան հարսներ դարձան
 էին։ Կինդանուոյն մահակից էին նահատա-
 կելոց մահուան, և ազատութեան մէջ՝ բան-
 տակից և զղթայակից էին բանտարկեալնե-
 րուն։ Վասն զի մոռացած էին իւրեանց կա-
 նացի փափկութիւնը, իւրեանց վայելքները.
 և բարեկենդանութիւնը, մեւուցած էին
 մարմնասիրութիւնը և պՃնասիրութիւնը։
 Իւրեանց մատներով կ'աշխատէին և կը կե-
 րակուէին, և արքունուուստ նշանակուած ոռ-
 չիկը բանտարկելոց կ'ուղարկէին և կը միսի-
 թարէին։ Թէպէտ և աւերուած էր Հայոց
 աշխարհը մօդական հարստահարութենէն,
 թէպէտ և զըդավլուած էր պարսկական հա-
 րածանքէն, բայց երջանիկ էր միանդամայն.
 վասն զի. քրիստոնէական տէրը կը վառուէր
 իւր կապեալ և ազատ որդւոց որտին մէջ և
 որբութիւնն ու ողջախոհութիւնն կը թա-
 գաւորէին ընտանեկան ծածկութիւն տակ և
 ամուսնական առաջաստին մէջ։ Անհնար էր,

սր Քրիստոնէութիւնը նուաճուէր, ինչտեղ առք բանտերէն և կանայք ընտանեկան յարկերէն իրարտւ քաջալեր կը կարդային և այս միայն կը հայցէին. «Օ, ի որպէս սկսանն քաջութեամբ՝ ՚ի նմին կատարես սցին երկնաւոր սիրով »⁽¹⁾:

Հազկերտ շատ ջանաց ողոքելով և ազատութեան խոստումներով կապելոց հաստատուն հաւատքը քայքայել, բայց չը յաջողեցաւ: Ի վերջո նախարարաց երկարատեւ բանտարկութենէն և քրիստոնէական վառեռանդէն գոգցես պատկառեցաւ մոդավաճառութիւնը: Եշտ.շայ բդեշնը կարաց ազատել Հմայեկի երեք մատաղահաս սրդիքն՝ Ա ահան, Ա ասակ և Երտաշէս (որոց Ա արդեղքայրը Տայոց գաւառին մէջ դայեկաց մօտէր արդէն) և տանել իւր տունը, ուր իւրեանց Շաւիկ մօր և Ենոյշ Վռամ (բդեշնի կինը) մօրաքրոջ մայրական դաստիարակութեամբ և ինամքով դաստիարակուեցան և հաւատոյ ու հայրենեաց ախոյաններ դարձան: Եմաննապէս Հրեւայ Ըղոմշապուհ Պարսիկ իշխանը կարաց Ենազկերտի սիրով ամոքել, նախարարները բանտէ հանել տալ ռոճիկ սահմանել և նաև իւրեանց հայրենիքը դարձնելու խօստումն առնուլ:

Ա) Եղէշէ վան կանանց :

ՅՅազկերտ մեռաւ և խոստումն անկատար
մնաց : Ա ասն զի մի կողմէն ապստամբեցաւ
Աղուանից Ա աշէ թագաւորն Պարսից դէմ,
միւս կողմէն գահակալութեան համար խը-
ռովութիւն ծագեցաւ ՅՅազկերտի երկու
որդւոց մէջ և Պարսկաստան յուզեցաւ ,
ուստի և նախարարաց դարձը յետաձեցաւ :
ՅՅուսկ յետոյ Պերսի թագաւորութեան
ժամանակ Հայաստան դարձան նախարարք
12 ամեայ վորածնդութենէն դինի , որոց
դարձը անպատում ուրախութեամբ լցուց
բոլոր երկիրը :

Ո՞ելիտէ կաթողիկոս արդէն վախճանած
էր և նորա տեղ կ'աթոռակալէր Ո՞ովսէս
Ո՞անազկերտացին : Նախարարք քաջալերե-
ցին հայերը և ջանացին նորոգել , ինչ որ
խախտեալ էր և աւերեալ . բայց իւրեանց
դարձէն յետոյ , հասկիւ մի ատրի անցած էր ,
Ո՞ովսէս կաթողիկոսն վախճանեցաւ և նորա
տեղն ընտրուեցաւ Պիւտ :

ՊԻՒՏՏԻ կաթողիկոսութեան սկզբէն մին-
չեւ ՅՅովհան Ո՞անդակունոյ կաթողիկոսու-
թեան վերջը (465—487) քրիստոնէական դի-
մամարտութիւնը զրադաշտական ուսման
դէմ միօրինակ կը շարունակուի , այն է . հա-
լածանքներ և պատրանքներ մոգակրօնութե՛
և ուրացելոց կողմէն , իսկ անվեհեր դիմա-

դարձութիւն քրիստոնէութեան կամ ուիւ-
տապահ հաւատացելոց կողմէն . Այսարա-
բաց ջանիւք և Դիւռ կաթողիկոսի հայրա-
պետական սրբուն հովուութեամբ շատե-
րը կը միմիթարին և կ'արիանան , իսկ ունինք
կը խախանձին , ուրացութեամբ կը տրկանան
Պարսից և մատութիւններ կ'առնեն . Այ-
ցափ ուխտապահներու քրիստոնէական ե-
ռանդը կը զօրանայ , նոյնչափ և վատասիրա-
ները կը գրգռին . և այս խռովայոյզ միջոցին
ցաւակից հայրենասէրներէն տմանք , ինչպէս
Ո՛վաէս խորենացի և Լողիչէ , կ'առանձնանան
մենաւորութեան մէջ արտասուօք և գրա-
ւոր վատակներով միմիթարութիւն և սփո-
փանք գտներու : Հանաց դաշնաւորութիւնը
կը խախտի նոր թագաւորի աթոռակալու-
թեամբ , և Վրաց ու Եղուանից մէջ նա-
հատակութիւններ կը լինին : Հայք աշխար-
հը ապահովթու համար կը խորհին Դիւռ
կաթողիկոսի հետ և Յունաց Խեւսն կայսե-
րէն օգնութիւն կը խնդրեն , բայց նպաստ
շնն ընդունիր , այլ միացն քանի մի նախարարք
Յունաց բաժինը կը գաղթեն : Դիւռ ուրա-
ցողները յանդիմանելու պատճառաւ Դա-
դիշոյ խոռիսուունի Ո՛վալիսազէն կ'ամբաստա-
նուի և Պարսից դուռը կը կոչուի ու Ուաքինի
ծերունին անվեհեր կ'աճապարէ Տիաբոն .
մեծ յարգանք կը գանէ խուժաստանի եւ

Հրեւի քրիստոնեաներէն, կը մատնուի հարցափորձի ատենին Պերողի հրամանաւ, ատենակալները կը սարսափեցնէ իւր համարձակ պատասխաններով և ՚ի վերջոյ կ'առաջարկուի իրեն կամ կաթողիկոսութիւնն լնդունիղ։ Վիւտ կաթողիկոսութենէ կը հրաժարի, տեղւոյն հաւատացելոց համար ծածուկ եպիսկոպոսներ և քահանաներ կը ձեռնադրէ, կը դառնայ Հայաստան և անձանձրոյթ կը շարունակէ ժողովրդեան հոգեւոր պիտոյքը հոգալ։ Վիւտի հրաժարած լինեցուն պատճառաւ կաթողիկոս կ'ընտրուի Քրիստովոր Արծրունին, որոյ կաթողիկոսութեան երկրորդ տարին Վիւտ կը վախճանի և կը թաղուի Ա անանդայ գաւառի Աթմանու գիւղին մէջ։

Ես միջոցին Բարծումա անուն պարտի կըն, Եղեսիոյ մէջ Աեստորականաց մելորութեան աշակերտելէն զկնի, Հայաստան կը գայ պատրանօք իւր թիւք ուսմունքը տարածելու, զանազան ձեռագիր մատեանները կը ժողովէ, Եղիշէի հետ եւս կը տեսնուի, և երբ կը յանդիմանուի նախարարներէն, մանաւանդ ծերունի Աերջապուհ Արծրունիէն, Պարսկաստան կը դառնայ և կ'ամբաստանէ Պերողի առջեւ Արծրունեաց Տոհմը, և սրտի մախանքէն (ըստ ասելոյ Թովմաց

Արծրունի պատմագրին), կը զեղցէ Եղիշէի պատմութենէն Արծրունի տոհմի պատմական բաժինը:

Առութեան հալածանքներն ու հրապուրանքներն օր աւուր կը նորոգին, Յունաց բաժնի մէջ եւս Հայք կը տառապինեւ տանուտերական իամ նախարարական ազատ իշխանութիւնը կը բռնապարուի Օքնոն կայսերէն, և այսպէս երկու կողմէն եւս Հայաստանի վիճակը կը ծանրանայ: Աակայն այս միգամած ժամանակին, ասադ մի կը ցուցնոց Աամիկունեան տանէն — եղբօրորդին Վարդանայ Վահան: Վահան երկու անգամ կը մատնուի Պարսից դռուոն, առաջն անգստին կը տկարանայ հաւատքին մէջ և իւր Վարդ եղբայրը պատանդ թողլով կը դառնայ Հայաստան: իսկ երկրորդ անգամին մեծամեծ պատիւներու կ'արժանանայ: բայց միշտ կը խղճահարի և կը մտամանջի իւր ուրացութեան համար, և գոգցես պատեհ ժամու կը սպասէ այս վատ անունն սրբել իւր վրայէն: Այս պատեհ ժամն ինքնին կը հասնի: Պարսիկները կը յաղթուին Հօն Հեփթաղներէն: Վախթանգ, ուրացեալ Վագդէնը սպանելով, կը թագաւորէ Վրաց և կ'ապստամբի Պարսից գէմ: Քրիստովոր կը վախճանի և կը յաջորդէ Յավհան Աանգակունին, նախանձաւոյն ժառաց և ազա-

առւթեան Եշեղեցւոյն, մեծ խնամակալն կրթութեան ժողովրդեան և առաքինի դաստիարակն նախարարագուն մանկանց՝ մանաւանդ (Ա) ամիկոնէից և Կամսարականաց։ Այս դէպքերէն կը յղանայ Հայոց մէջ դիմաց արձութեան համակամ խորհուրդ Պարսկական մոլեկրօնութեան դէմ։ Ա ահան կը զղջայ և կը միանայ ուխտապահ նախարարաց հետ, ամենքը կ'երդուին յանուն ազատութեան և կ'ողջունեն ազատութեան պատգամախօս մատեանր (Ա) ետարանն, զոր մէջ կը բերէ Աթիկ քահանան և կը պատրաստին Վահանայ իմաստուն խորհրդով և յաջող առաջնորդութեամբ դիմագրաւել պարսկական խորխատ ուժին դէմ։ Քանի մի պատերազմներ կը մղին Հայք շարունակ, քանի մի պարսիկ մարզպանաց և հազարապետաց դէմ, և մեծ մասամբ յաղթող կը հանդիսամուսան, թէպէտ և իրենք տակաւաթիւ թշնամին զօրաւոր և ուրացելոց նենդութիւնն անպակաս։

Կախ հալածական կ'առնեն Հայաստաց նէն Ատրիվնասպ պարսիկ մարզպանն և Ա եհանատմ հազարասպետն իւրեանց բանակով (ուրէին և բազմաթիւ ուրացեալներ), Դուին մարզպանական քաղաքը կը գրաւեն։ Ա ահան Ապարապիտ կը կացուցանեն և Ա ահակ Բաղրատունին. (Ա) արզպան, որ խորենացւոցն

ԵՐԵԿԵՆԱԾՆ ՀՐ , ԽԱՆԴՐՈՊՂՆ ՀԱՅՈց Պատմութեան :

Երկրորդ՝ կը պատրաստին նոյն Առովոշ նասազին դէմ, որ դարձած էր Առողջատականէն մեծ բազմութօնամբ և Երասխ գետին մօտ բանակ կազմած կ'ողջունեն Աւետարանը և ծերունի Լաթողիթրոսն, ահագին կոտորած կը տան պարսկական բանակին, Առովոշնասոզ կրտսպաննեն ուրիշ գլխաւորաց հետ, և Դունայ եկեղեցւոյն մէջ յաղթութեան գոհութիւն կը մատուցանեն Աստուծոյ. Այս պատերազմին մէջ կ'առաջնորդեն Հայոց բանակին Ախոնին Բարեկէն, Վասակ եղբայր Վահանայ, Ներսէհ և Հրատ կամ սարսկանք, Ատոմ և Իստամ Գնունիք և Գարջոյլ Խորիսուունի, բատ որում Վահան և Ախակ ՚ի Դուին մնացած էին.»

Երրորդ՝ կը դիմեն Հայք պարտկական բանակին վրայ, որ Հեր և Զարեւանց հասած էր իւրեւանց հետ կ'առնուն նաև ծերունի հայրապետն Անդակունի, կը բանակին Արտազ գաւառի Ներսեպատ գիւղի մօտ, կ'օրհնին Երաթողիկոսէն, կը յարձակին թրչնամեաց վրայ, կրտսպաննեն, կը վիրաւորեն, կը ցրուեն և յաղթանակ կը կանգնեն, որուն վրայ կը զուարթանայ ծերունի հոգնւապետն. «Ոչ այնչափ ընդ յաղթութիւնն ուրախ լինելով, որչափ ընդ այն, զի հաշտ զի՞ստ.

տւած ընդ նոսա տեսանէր. Այս յաղթական ուրախութիւնը կը պահի մանաւանդ. Ա ահանայ և արդ եղբօր գալատեամբն, որ պատանդութեան կայանաւորութենէն ազատելով և Պարսկաստանէն անցնելով անակընկաւ կերպով կ'երեւի Օաղկոտն գաւառի մէջ և կը խառնուի Հայոց քանակին հետառառ անդերով հանդերձ. :

Չարբորդ՝ յօդնութիւն դիմելով Վ բաց Վ ախթանգ թագաւորին, կը պատերազմին Ո իհրան պարսիկ զօրավարին դէմ կուր գետի գաշտավայրին մէջ, արիական մարտէն զկնի՝ կը նահաստակին Ա ահակ ասպետն և մարզպանն, Վ ահանայ Վ ասակ եղբայրն. Բարկէն Ա իւնի կը վիրաւորի կարեվէր և Հ բահատ կը կալանաւորի և յետոյ կ'արձակի. :

Հինգերորդ՝ կը պատերազմին Հայք Դունայ մօտ Օ առմիհր Հազարաւուխտ պարսիկ զօրավարին հետ, որ դիմած էր Հայաստան մեծ քանակաւ, կը ասաւանեցնեն պարսկային զօրախումբը, մեծ հարուած կը տան գոչելով. « Հարցուք զթշնամիսն հաւատոյ եւ մեռցուք աստ ի պարծանս Ակեղեցւոյ ու Հայրապետն Յովհան կը վիրաւորի, դի ականց մէջ կը մնայ և ապա կը զերծանի. Հազարաւուխտ կը դառնանայ կոտորածին վրայ և հետամուտ կը լինի Վ ահանը կալանաւորել, (որ իւր ընկերաց հետ կ'ամրա-

նայ Խոաղտեաց սահմաներուն մէջ և ապա
այլուր), նորա պատճառաւ զանազան տե-
ղեր աւար կը հարկանէ , բայց միանդամայն
և կը յուսահատի Կ ահանէն ամօթահար լի-
նելուն համար . և այսպէս Ը ապուհ մարզ
պանը կը թողու Հայաստանի մէջ զօրա-
խումբով և ինքն Պերողի հրամանաւ կը գի-
մէ ՚ի Վ բաստան :

Եւ վեցեցորդ՝ արիաբար կը պատերազ-
մին Հայք Ը ապուհ մարզպանին դէմ , ո-
րուն օդնական էր ու բացեալն Գագիհոն Այս-
նի , քանի մի ճակատներու մէջ կը հարուա-
ծեն մոգակրօնիկներու և ուխտանենգներու-
զօրութիւնը , թէպէտ և իւրեանց կողմէն
եւս նահատակներ կը թողուն պատերազմի
գաշոին մէջ , Ը ապուհ Պերողի սպանու-
թեան գոյժն առնելով Պարսկաստան կը
դառնայ և Հայք գոհութեան ուխտ և պա-
տարագ կը մատուցանեն Աշմիածնի և կեղեց-
ւոյն մէջ , զոր և կը սկսանին նորոգել խնա-
մակալութեամբ Կ ահանայ և Ա անդակունի
կաթողիկոսին :

Այս պատերազմներէն և Պերողի մահ-
ուանէն յետոյ իրերը կերպարանափոխ կը
լինին , Ա աղարշ կը թագաւորէ Պարսից , և
Ա եխոր կ'ուղարկուի Ա արզպան Հայաստանի-
Ա եխոր պատգամաւորներ կ'առաքէ առ Ա ա-
հան , և Վ ահան հաւանութեամբ Ա ցգին այս

դաշինքը կ'առաջարկե՛ Նեխորին , (զոր առաջ համառօտիւ յիշեցինք) , թագաւորէն հաստատելու պայմանաւ :

1. Վրիստոնէութեան հայրենի օրէնքը ազատ թողուլ , հայ ոք չըդարձուցանել ՚ի մոգութիւն , ուրացութեան համար գահ և պատիւ չըտալ և կրակարանները չը շննել Հայաստանի մէջ :

2. Հայոց ովնօւականներն ու ազատները թողուլըստ հայրենի օրինակին , վաստակաւորներն ու անվաստակաւորները քննելու ճանաչել , և ազգուրացները կամ անարդաները յառաջ չը մատուցանել :

3. Վառններու և սուտակասպաաններու խօսքին միտ դնելով մարդ չը դատել , այլ արքայական ատենին մէջ ամեն դործ և դործող յականէ յանուանէ տեսնել , նկատել և ապս դատաստանը վճռել :

Այս առաջարկութենէն յետոյ՝ Վահան պատանդներկ'առնու Նեխորէնքանիմինշանաւոր պարսիկներ , ապա տեսութե՛ կ'երթաց Նեխորին իւր զօրականներով կը մտնէ Երեաց բանակին մէջ փողեր հնչեցնելով , կը մեծարի ուխտապահներով հանդերձ , ամօթահար կը լինին ուխտանենդները , ընթրիքներ կը կազմուին Վահանեանց համար և Նեխորբանիւ թագաւորին՝ կը խոստանաց անյիշութեան տալ անցեալ անցքերը :

Այս խաղաղստիրական տեսակցութենէն զինի Վահան ինքնին կ'երթայ ՚ի Պարսկաստան, կը տեսնուի Վաղարշ թագաւորին հետ, շքեղ մեծարանք կ'ընդունի և ուխտապահ նախարարաց պատիւը կը վերահաստատէ, իւր առաջարկած ազատական դաշինքը և այլ խնդրոց կատարումն կ'ընդունի, Ապարագետ կը կարգուի հայկական զօրաց և ուրախութեամբ կը դառնայ ՚ի Հայաստան, որուն համար և գոհութեան հանդէս կը կատարուի ՚ի Ա. Դժմիածին:

Ակաւ ժամանակէն զինի Վահան Ամրզպան կը կարգուի Հայաստանին, ջատագովութեամբ Անդեկան պարսիկ Արզպանին և հրովարտակաւ թագաւորին: Կ'ուրախանայ Վահան ատտաւածային յաջողութեան վրայ, բայց միանդամանցն և կը տրտմի, որ ուրացողաց նախանձը պիտի շարժուի: Դունայ Ակեղեցին կը մտնէ, Անդսկունի ծերունի հայրապետին հետ, գոհացողական մազ թանք մասուցանելու Աստուծոյ, կը համախըմբի մեծ բաղմութիւն, ուրախութիւնը կը փայլատակի ամենեցուն երեսներուն վըրայ, հայրապետն կ'ատենաբանէ և կը հրաւիրէ Աղդն Աստուծոյ այցելութիւնը փառաւորելու, որ երկարատև հալածանքէն յետոյ կը միմիթարէ իւր սեպհական ժողովուրդը, ուրախական և տրտմական արտասունքներ

Երար կը խառնուին , — ու բախտկան՝ ճշմար-
տութեան գեղեցիկ յաղթութեան համար ,
և տրտմական՝ ու խտանենք եղբարց համար :
« Ձեռն տուք գթալով , կը գոչէ գթոտ հայ-
բապետն . չէ աստ 'իքարեղէն սալս գրեալ
անմողութիւնք օրինացն : ՚Քրիստոս է աստ՝
որ ասէ՝ ոչ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւ-
որս յապաշտարութիւնն (1) « , որով և հաշ-
առութիւնք և գրկախառնութիւնք կը լինին :

Երբ այսպես սակաւ ինչ շունչ կ'առնու-
Հայաստան , կը սկսի այնուհետեւ Վահան ,
Վանդակունի հայրապետի հետ , կու ասուն-
ները կործանելու խախտուած վանքերն ու
տաճարները նորոգել և ամեն կերպով աշ-
խարհի շինութեան հոգ տանիլ :

Ո՞նդակունի հայրապետը կը վախճանի
խորին ծերութեան մէջ վեցամեայ կաթողիկ-
է կոսութենէն զինի և կը յաջորդէ իւր աշա-
կերտն Բաբկէն , Վանանդայ գաւառէն ,
Աթմասյ գեղջէն : Իսկ Հայրապետի մի աշա-
կերտն Շուփհաղիշէ : Ազուանից կաթողիկոս
կընտրուի , որ և Վաչէի որդի Վաչական
հայկազուն թագաւորի հետ եկեղեցական
ժողով կը կազմեն և ինչ ինչ բարեկարգու-
թիւններ կ'առնեն և դպրոցներ կը բանան :
Ոյցա ժամանակ կը գտնուին նաև նշխարք

Պէրիգորիսի, առաջին կաթողիկոսին Եղուանից
և Ծոռան (1). | ուստաւորչի, ինչպէս կը պատ-
մեն Առվաշէս կաղանկանտուացի և Ատեփան-
նոս (2)բէցեան :

Ե.

Անարկ Քաղկեդոնի ժողովին վրայ . — Բարկէն կա-
թողիկոս . — Ժողով Վաղարշապատու . — Մելքոնունի
Ժողովին Քաղկեդոնի . — Հարժառիթ յունական և
հռովմէական մատուաց . և հեռուանց . — Կաթողիկոս
սութիւն Սամօւելի , Մուշէի , Սահակայ Բի . Քրիս-
տոփորի Բի . Ղեւոնդի . Ներսիսի Բի . — Ժողով 'ի
Դուռին և կահոնական սահմանադրութիւնք . — Կաթո-
ղիկոսունք՝ Յովիաննոս Բ . և Մովսէս Եղիվարդեցի . —
Ժողով 'ի Դուռին և կարգաւորութիւն հայկական Տօ-
մարի . — Հալսծանք 'ի Գարօից և Թուղթ Մովսիսի
առ Խոսրով արքայ Գարսից . Գատերազմ՝ յունական
և պարսկական . — Քաջութիւնք Հայկազուն իշխանաց .
— Ամբառ՝ մարդուան Հայոց . — Ուսումն Հայերէն լե-
զուի յաշխաբհն Արկանաց :

ՄԻՆՉԴԵՌ Հայոց , Վրաց և Եղուա-
նից աշխարհներն , երկար տարիներ մոգակր-
քօնութեան դէմ արիաքար դիմագրաւելէն
և արեամբ ողողուելէն զինի , առ վայր մի
կը խաղաղին և եկեղեցական քարեկարգու-
թեանց կը ձեռնարկեն . փութով սկիզբն
կ'առնու պարսկական հալածանքէն առա-
ւել վնասակար յուղմունք քաղկեդոնական

ժողովին : «Քաղկեդոնական ժողովի աշխարհ
հայոց խնդիրները քառասաւն տարի (451—
491) յանական և հռովմէական և կեղեցեաց
մէջ Քրիստոնէութիւնը խռովելէն զինի ,
կ'անցնին Հայաստան . Հայաստան որ իւր
նահատակները հազարներով պարսկական
սրբյն ճարակ կը տար իւր առաքելահրմն
հաւատոյ պաշտպանութեան համար և ա-
մենեւին նոր վարդապետութեան կարօտ
չէր և ոչ որ և իցէ ժողովին նոր վճռոյ , մա-
նաւանդ քաղկեդոնականին , որ նոյն խեկ յու-
նական և հռովմէական քրիստոնէից մէջ շա-
տերէն ընդունուած չէր , և որոյ ապօրինաւո-
րութեան դէմ Օ ենոն կացսրն , քազմաթիւ-
եպիսկոպոսաց տառրագրութեամբ շղաքե-
րական հրովարտակ հանած էր , միայն Ամիկիոց
է . Պօլոյ և Ավետոսի տիեզերական ժողով
ներն օրինաւոր խռատօվանելով . խեկ Անա-
տաս կայսրն այնչափ զգուած էր քաղկեդո-
նեան յուզմունքներէն , քառական քանտ-
կուութեանց խազերէն և մեծամեծ երկ-
պառակութիւններէն , որ հրաման հանած էր
ամենեւին չը խօսիլ . «Քաղկեդոնի ժողովին վը-
քայ : Ա առն զի այս ժողովի վիճաքանութեց
և կռասակցութեանց բորբոքմանէն ոչ միայն
անհաշտ ատելութիւնք մուած էին քրիստո-
նէից մէջ , այլ և աքսորանք և սպանութիւնք
անգամ եղած էին , ինչպէս արդէն խօսած

Ենք երեք ամենաբական ժողովոց պատմական տեսաւթեան մէջ :

Աւստի, երբ Քաղկեդոնական ժողովի դաժան խնդիրները կը սկսին Հայաստանի մէջ սպրդիլ, Բարեկէն աչալուրջ կաթողիկոսը կ'առ ճապարէ առաջն առնուլ խորհրդով և հաւանութեամբ Հայոց, Արաց և Աղուանից աշխարհաց, որոնք Քաղկեդոնի ժողովի երկարամեայ և տարօրինակ անցքերը մասամբ լինելով՝ կը գագրէուրէին իրբեւ Քրիստոնէութեան նախատինք բերող իրողութիւններէ : Բարեկէն ժողովը կը գումարէ Ալարշապատին կամ Ղջմիածնին մէջ, ուրբաց ՚ի հայ, աղուան, վրացի և հոռոմ բազմաթիւ ժողովականներէն, յատկապէս կը գտնուին Աղուանից կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով, Արաց Քարբիէլ կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով, Աղուշէ եպիսկոպոս Աիւնեաց՝ յաջորդ Ատեփաննոսի, և այլ ականաւոր անձինք : Երկար բանախօսութենէ զինի՝ կը կարդացուի այս ժողովին մէջ նմանապէս և Օ ենանի հրավարատին, և ապա բոլոր ժողովականաց հաւանութեամբ կը մերժուի Քաղկեդոնի ժողովն և կը սահմանաւի, ՚ի մասին հաւատաց վարդապետութեան և եկեղեցական օրինապահութեան, շատանալ Առաքելոց քարոզածներով և երեք Տիեզերական Ժողովոց առաքելաւանդ որու-

շրամներով։ Աւկայն սայն այս մերժումէն (որի խիստ օրինաւոր էր Քաղկեդոնեան ժաղովին վայրապար վէճերուն և խռովայոյզ անցքերուն նայելով), կը սկսի յօւնական և հռովար մէտական ոխերիմ ատելութիւնը Հայոց դէմք և դժբաղդաբար կը տեսէ մինչեւ ցայսօր + Այս ատելութեանը զոհ գնացին, եթէ չենք սխալիր, Հայոց Քագրատունի և Արտքենեան թագաւորական հարստութիւններն ու ազգային արքայական իշխանութեան թագնու գաւազանը + Այս ատելութեան մախանքէն բազմիցս նախատակոծ եղաւ և կը լինի Հայաստանեայց առաքելական Եկեղեցին — Քրիստոնէութեան նախակին և բազմաչարչար Ակայուհին ասիսական ազգայց հալածանաց մէջ + Այս ատելութեան բորբոքումէն տարռութերեցան շատ հայրապետաներ և վարդապետներ և գումարեցան զանազան ժողովներ, որոց վրայ պիտի խօսինք կարդաւ ըստ Ժամանակին + Այս ատելութիւնը տեղի տրւաւ գարաւոր վէճերու և խռովութիւններու և գրաւեցան շատ մատենագիրներու միտք ու մատեաններու էջեր + Այս ատելութեան հրապուրանքէն շատ զաւակներ թողին Հայաստանեայց եկեղեցւոյ մայրենի գիրկը և օտարներուն հետ խառնուելով անյայտացան և կամ խորթացան, և մինչեւ ցայսօր կը թռուն նոյն մայրենի ծոցը և կը խորթանան +

Վերջապէս ՚Բաղկեդանի ժողովի մերժուածն
և ՚այստանեաց եկեղեցւոյ բռնած ան-
կախ և ազատական դիրքը՝ դայթակղութեան
քար դարձաւ յունական եւ հռովմէական
եկեղեցեաց համար, որոնք ամենայն զօրու-
թեամբ զինեցան և կը զինին սասանել, ՚այց
քանի որ ՚այստանեաց եկեղեցին բազէ¹
մադարեան փորձերով համոզուած է, որ իւր
տեւականութիւնն իւր անկախութեան կամ
ինքնուարոյն գոյութեան մէջ է, յուսով ենք,
որ կը յարատեւէ իւր ընթացքին մէջ, վասն
զի հակառ ակարգաց յարձակումներն ուղղա-
կի նորա ինքնօրէնութեան դէմ են և ոչ թէ
նորա քարոզած վարդապէտութեան և հա-
ւատալի աց, զորս ունէին համօրէն քրիստո-
նէական եկեղեցիք մինչ ՚ի ժողովն ՚Բաղկե-
դանի, ՚այց մենք թողունք առ այժմ քազէ
կեգոնեան ժողովի տիստար հետեւ անքները,
որոց շատ անդամ պիտի հանդիպինք դըժ-
քաղդաբար, պատմութեան յետագայ շրջան
ներուն մէջ, և շարունակենք մեր պատմու-
թեան թելը :

՚Արքիէն կաթողիկոսը, հնդամեայ հայ
բապէտութենէն զինի, կը մեռանի և տեղը
կը յաջորդէ ՚Ամուել, ՚զնունեաց գաւա-
ռէն ՚Արծկէոյ գեղջէն :

՚Ամուելի կաթողիկոսութեան ժամանակ
պաքսական հալածանքները վերստին կ'ար-

ծարծին Հայաստանի մէջ։ Պարսից կաւատ թագաւորը զօրք և մոգեր կը հանէ Հայոց աշխարհը, որ կրակատուններ շինեն զանազան տեղ և ժողովուրդը հրապաշտութեան ստիպեն, բայց Վահան մարզպան աստուածապաշտ նախարարները ժողովելով կը յարձակի Պարսից զօրքերուն և մոգերուն վըայ, կը հարուածէ և կրակատունները կը կործանէ . իսկ կաւատ մինչդեռ Հայոց աշխարհը աւերելու կը պատրաստուի, իւր իշխանաց ձեռքով ամոռուէն կը զբկուի :

Ամօւէլտասնամեայ կաթողիկոսութենէն զինի կը վախճանի և կը յաջորդէ Առուշէ, կոտէից գաւառէն, Այլաբերից գեղէն։ Առուշէն կը յաջորդէ Աահակ Բ. Հաք գաւառէն, Աւզիայ գեղէն։ Արա հայրապետութեան ժամանակ կը մեռանի Վահան Ամիկոննեան, 25 տարի Հայաստան կառավարելէն զինի, և մարզպան կը կարգուի նորա Վարդ Եղբայրն, որ մի տարիէն զինի կը հանուի :

Աահակ Բ. կաթողիկոսին կը յաջորդեն Քրիստափոր Բ. Տագրեւանդ գաւառի Տիրառիձ գիւղէն, Դեւոնդ Առաբերանի գաւառի Լոռատայ գիւղէն, և Ներսէս Բ. Առտարակեցի։ Ներսէս Եկեղեցական ինչ ինչ ներքին բարեկարգութեանց համար ժողով կը գումարէ Դունայ մէջ, ուր ՚ի միջի բազմա-

թիւ ժողովականաց կը գտնուին Ներշապուհ եալիսկոպոս Ամիկոնեան և Պետրոս եպիսկոպոս Այրնեաց, քերթող, յաջորդ Առաջեկի: Այս ժողովին մէջ վերստին կը մերժեն Քաղկեդոնի ժողովն և կը սահմանեն երեսունէն աւելի կանոններ, մեծ մասը Ա. Աստիակայ կանոններէն առնլով, մանաւանդ որոնք կը վերաբերին եպիսկոպոսաց, քահանայից, վանեականաց և տարկաւագաց ուղղութեանն և առ միմեանս և առ ժողովուրդն ունեցած պարտաւորութեանց: Այս ժողովի մէջ կը սահմաննեն նոյնպէս շաբաթական պահճ իւրաքանչիւր ամսուան համար, որ և մինչեւ ցայսօր կան, ոմանք շարժականապէս և ոմանք անշարժ, այն է Ա. պահճ Եղիական. թ. պահճ Ամարայնոյ կամ Լուսաւորչի. Գ. պահճ Կարդավիսորի. Դ. պահճ Աստուածածնի. Ե. պահճ Խաչի. Զ. Պահճ Վարագայ խաչի. Է. պահճ Յիսնակաց. Ը. պահճ Ջմերայնոյ կամ Ա. Յակոբայ. Թ. պահճ Յայտնութեան. Ժ. պահճ Առաջաւորաց (Ուսաւորչի ժամանակէն սահմանւած, որ անգիտութիւն կը կոչուի նաև Ա). Այրգսի պահճ), իսկ երկու ամսոց շաբաթական պահճը քառամսօրդական պահոց հետ կը հաշուին: Ներսէս իննամեաց կաթողիկոսութենէն յետոյ կը վախճանի և տեղը կ'ընարուի Յովհաննէս թ. Պաբեղենից գա-

ւառէն Այս ճեղուան գիւղէն, որոյ հայրա-
 պետութեան ժամանակ կը բորբոքին պարզ
 կական հալածանքները ։ Դենշապուհ մարզ
 պանը Դունայ մէջ կրակատուններ կը բա-
 նայ, պարսկաստանէն բազմաթիւ մոդեր բե-
 րել կը տայ և Հայերը կրակապաշտութեան
 կրստիպէ ։ Հայք կ'ընդդիմանան և յուզմուն-
 քը կը սաստկանայ երկու կողմէն ։ Այս խոռո-
 վութեան միջոցին կը վախճանի Յովհաննէս,
 17 ամեայ կաթողիկոսութենէն զկուի և տեղը
 կ'ընտրուի մեծիմաստն Առվես, Արագածո-
 տըն գաւառի Աղիվարդ գիւղէն ։ Այս ա-
 ռաջին գործը կը լինի հայկական Տոմարը կար-
 գաւորել, որոյ համար արդէն իւր նախորդի
 օրով աշխատանքներ եղած էին Գլակայ վա-
 նուց Աթանաս առաջնորդի ձեռամբ և ան-
 կատար մնացած ։ Առվես ժողով գումա-
 րելով Դունոյ մէջ հմուտ եկեղեցականներէ
 և աշխարհականներէ՝ կը կարգաւորէ հայ-
 կական Տոմարը, և ապա առանձին թուական
 եւս կը սահմանեն, որ կը կասի փրկչական 551
 թուականէն և կը կոչուի Խռական Հայոց, որ
 և գործ կը դրուի մաստենագրութեանց և
 արձանագրութեանց մէջ, միշտ փրկչական
 թուականէն 551 տարի պակաս հաշուելով ։

Առվես կը ջանայ նմանապէս կրակա-
 պաշտական բռնաբարութեանց առաջն առ-
 նուլ, որ կը շարունակուէր իւր նախորդի

ժամանակէն ՚ի վեր և նահատակութիւններ
եղած էին, որոց մէջ նա և մոդպետի որդին
որ հաւատալով մկրուած էր և ՅԵղիս
բուզը (Աստուածատուար) անուանուած։
Պատգամաւորներ կ'առաքէ առ Խոսրով և
ընդ նմին աղաջանաց թուղթ քրիստոնէաւ
կան կրօնքն ազատ թողելու և մոգութեան
հրապուրանքները դադրեցնելու ։ Այս թող
թի մէջ կը յիշեցնէ Ո՞վսէս Խոսրովին։ Աս-
զարշի շնորհած ազատութիւնները և դաշն
խաղաղութեան, որով և իւր խնդրանաց կա-
տարումն կրստանաց, ըստ որում իսկոյն
մարդպանութենէ կրփոխուի Դենշապուհ և
առժամանակ մի հալածանքները կ'ընդհատին։
Ասկայն շատ չանցնիր, Հայաստան անհնարին
աղէտից տեսարան կը դառնայ . որովհետեւ
սարսափելի պատերազմներ կը բացուին Յու-
նաց և Պարսից մէջ և Հայաստան իրարու-
ծեռքէ յափշտակել կը ջանան։ Հայերը Յու-
նաց յարելով ՚ի Պարսից կը տառապին, և
Պարսից յարելով ՚ի Յունաց ։ Ա արդան Բ.
Ո՞մմիկոննեան քանի մի պատերազմներու մէջ
Պարսից գորքը կը ջարդէ, և Խոսրով զայրա-
նալով կրսպառնայ բոլոր Հայաստան աւե-
րել և Յունաց բաժինն եւս գրաւել, որով
և ահագին աւերմունքներ կը լինին Տարոնոյ
գաւառին մէջ, մինչեւ որ Պարսկաստանի
մէջ նեղքին խոռովութիւններ կը ծագին և

սակառ ինչ կ'անդորրանայ Հայոց աշխարհն ։
 Եւյա պարսկական խռովութեանց մէջ արիւ
 ական պատերազմներ կը մղեն. Հայկազուն
 իշխանքը՝ Երսէս յունական զօրքով և Ո՛ու-
 շեղ Ամմիկոնեան և Ամբատ Բագրատու-
 նին իւրեանց զօրքերով, Խոարով Բ. Թագաւ
 ռորեցնելու համար, (որուն հայկազուն կայս-
 րըն Յունաց Աօրիկ եւս օգնական էր,) ու-
 ղով և Ամբատ մարզպան կը կարգուի և կը
 դառնայ ի Հայաստան ։ Երբ Վրկանաց աշ-
 խարհը կը հասնի Ամբատ, կը տեսնէ որ տեղու-
 ոյն Հայ բնակիչք՝ իսպառ մոռացած են
 իւրեանց մայրենիք լեզուն, ուստի և կ'աճա-
 պարէ ուսուցիչներ բերել տալ հայերէն
 գլուխութեան համար, և Արէլ անուն երէց
 մի կ'ուղարկէ առ Առվակէս կաթողիկոսն և
 Վրկանաց վրայ եպիսկոպոս ձեռնադրել կը
 այս, սրով և նոյն երկիրը Հայոց կաթողիկո-
 սութեան վիճակ կը դառնայ։

Զ.

Նախնի քրիստոնէական ընտանութիւն Հայոց, Վրաց
և Աղուանից. — Կիւրիոն ջաւախացի. — Քաղկեդո-
նական յուղում 'ի Վրաստան. — Հակոռակութիւն-
կիւրիոնի և Ցարքառակ Մազմես եպիսկոպոսի. — Ծըռ
թակցութիւնք Ալբահամ կաթողիկոսի Հայոց և Կիւ-
րիոնի. — Բաժանուամբ. Վրաց 'ի գաւանակցութենէ Հա-
յոց. — Ժաշով 'ի կ. Գօլիս հրամանաւ Մօրիկ կայսեր,
— Յովիաննես հակածուա. կաթողիկոս Յունաց բաժնի
Հայոց վրայ. — Պատերազմ Յունաց և Պարսից. — Կա-
հասակութիւնք 'ի Տարբն Կոմիտաս կաթողիկոս և
բարեկարգութիւնք իւր. — Քրիստոնուր Գ. — Եղբ
կամ Եղբա Փառամենակերտացի. — Գաւառամենով
'ի Կարին բուռն հրամանաւ Հերակլ Հայուեր. — Եղբ
կընդունի Քաղկեդոնի ժողովն, և հաւանութեամբ Աղ-
քին իսկոյն կը մերժուի կաթողիկոսութենէ. — Յով-
հաննէս վարդապետ՝ ախոյեան հայրենի առանդութեանց,
— Յունական մօքերնեւ թիւնք Յունաց բաժնի Հայոց,
մեջ. — Յարձակուան Պարսից 'ի Տարբն. — Վեցնանիւ:
Երրորդ Ըլանին:

ԱՐԻԵՆ պատմած ենք, որ Վ ըստան ըն-
դունեց Հայաստանէն, ինչպէս քրիստոնէա-
կան լոյսը լ ուսաւորչի ժամանակ, նոյնպէս
և իւր ազգային դպրութեան տարերքը մը-
շանագիրքը. մերերանելի Թարգմանչաց Ա.
Ասհակայ և Անսրոպայ ժամանակ: Վ ըստ-
անի դրացիութիւնք Հայաստանին և Վ ը-
րաց գաւանակցութիւն Հայոց հետ՝ այնպիսի
սերտ մտերմութիւն հաստատած էր երկու

ազգաց մէջ, որ Հայք ոչ միայն իւրեանց
հայրենեաց՝ այլ և Վշաստանի մէջ Քրիս-
տոնէութիւնը պաշտպանելու համար նա-
հատակութեան արիւններ կը թափէին, ինչ-
պէս տեսանք մանաւանդ Վարդանանց պա-
տերազմին ժամանակ : Երկու ազգաց այս
քաղաքական Ն կրօնական ընտանութենէն
ցնծութեամբ կը կատարուէին սէր և խնաւ-
մութիւն մարմնաւորական և հաղորդու-
թիւն հռոգեորական Հայք կը դիմէին ուխտ
ԱՌծիթայի խաչին և Վրացիք կը դիմէին
՚ի Ա Յմիածին : Չը կար ամենեւին կրօնա-
կան խորութիւն եւ բռնաբարութիւն :
Վշաց կաթողիկոսը կընտրուէր իւր ազգէն
և կ'օծուէր Հայոց կաթողիկոսէն, ինչպէս
և Աղուանիցն : Աակայն իւրաքանչիւր ազգ
իւր լեզուաւ կը կատարէր իւր եկեղեցական
պաշտամունքն ազատօրէն : Հայոց կրօնական
ազատութիւնը միշտ Յունաց ազգէն կը
բռնաբարուէր, բայց Հայք երբէք Արաց
և Աղուանից նկատմամբ սիրոյ և միաբանու-
թեան ճանապարհէն չէին հեռանար : Այն
պէս որ Վրաց և Աղուանից կաթողիկոսաւ-
թիւնները Հայոց հայրապետութեան երկու-
մեծ թեմեր համարուած էին և կաթողիկոս
ներն յամենայնի աջակից և գործակից Հայոց
հայրապետին :

Հայոց գործադրաբար քաղկեդոնեան յուղ

մաւնքները Ա բաց ազգը պառակտեցին ։ այս ազգէն և ատելութիւն սերմանեցին երկու եկեղեցեաց մէջ։ Ա բացիք ։ այս տառապակիր ազգի դաւանակցութենէն բաժանուեցան և Յաւնաց յարեցան պաշտպանութիւն գտնելու նպատակաւ, բայց նոյն պաշտպանութիւնը իւթեանց ազգայնութեղ շատ սուղնատաւ, և ովլ գիտէ թէ ՚ի ժամանակին բոլորովին չը պիտի զոհուի նոյն ազգ գայնութիւնը։ Ա բաց բաժանման դժբաղդանցից դէպքէրը այսպէս կը սկսին, ինչպէս կ'աւանդեն ամենայն պատմիչք։

Ա ովմէս Աշղիվարդեցւոյ կաթողիկոսութեան ժամանակ շփոթութիւն կը ծագ մէջ կաթողիկոսի ընտրութեան համար. առաջի ազգովին կ'առաջարկեն Ա ովմէս Հայոց կաթողիկոսին, որ ինքնին Ա բաց համար կախողիկոս ընտրէ, ձեռնադրէ. և առաջէ ՚ի Ա բառան, և ինքեանք կը խոստանան առանց հակառակութեան ընդունիլ։ Ա ովմէս կ'ընտրէ և կը ձեռնադրէ Ավուրիոն անուն մէկը, Զաւախաց գաւառէն, ազգաւ վրացի, հմուտ հայերէն, յունարէն, պարմկերէն և վրացերէն լեզուաց։ Ավուրիոն երբ Ա բաստան կը գառնայ, գուցէ Յաւնաց ազգէն ստիպուելով և պաշտպանութեան խօստմունքներէ խարուելով, կը քարոզէ իւր ազգին՝ Քաղկեդոնի ժողովն ընդունել և կայսեր

Հպատակիւ : Յուրտաւ քաղաքի Առվաէս եւ
 պիսկուպոսն , (ձեռնադրուած Վիւրիոնէն ,)
 անհամամիտ կը գոնուի իւր ձեռնադրողի
 ընթացքին և գրով կ'իմացնէ Հայոց Ա ըր-
 թանէս վարդապետին . որ նշանաւոր էր
 Հայաստանի մէջ , օգնական էր Առվաէս կա-
 թողիկոսին կենդանութեան ժամանակ , և նո-
 րա վախճանէն զկնի կաթողիկոսական գործ-
 քերը կը տնօրինէր , որպէս տեղապահ . Ա ըր-
 թանէս կ'աճապարէ և թուղթ կը գրէ Վիւ-
 րիոնին յետս կալ քաղկեդոննեան հաղոր-
 դակութենէն , բայց Լիւրիոն կը յամառի
 և աւելի ճանապարհ կը բանայ ատելութեան :
 Այս միջոցին Աշտունեաց Աքրահամ եպիս-
 կոպոսը (Աղքաթան գիւղէն) Ամբատ մարզ-
 պանի և այլ նախարարաց խորհրդով և ազգի
 հաւանութեամբ կաթողիկոս կ'ընարուի Հա-
 յոց . և մինչդեռ Լիւրիոն Յուրտաւայ Առվ-
 աէս եպիմկոպոսն առ ինքնկոչէ , որ դատէ ամ-
 բաստանութեան համար , նա կը փախչի և
 կ'ապաւինի Աքրահամ կաթողիկոսին և մի
 առ մի կը յայտնէ Լիւրիոնի արարքները :
 Աքրահամու և Լիւրիոնի մէջ երկար գրա-
 գրութիւններ կը բացուին , որոց հաւաքա-
 ծոյն աւանդած է Աւիտանէս պատմագիրը :
 Աքրահամ կը յորդորէ զԼիւրիոն քաղկե-
 դոնական բաժանմամբ ըստ վրդովել Հայոց և
 Արաց գաղաւոր սէրը և խաղաղութիւնը ,

իսկ նա դիմանակ զիջանելու՝ անարդական պատամխաններ կը գրէ . ուստի և Աբրահամ կաթողիկոսն կը ստիպուի ժողով գումարել և ինպառ մերժել զիվերիոն և նորահետեւոյները ՚ի հաղորդութենէ Հայառտանեայց եկեղեցւոյ : Կիւրիոն սաստիկ կը վիրաւորի և կը բողոքէ Յունաց Ո՞րիկ կայսեր , և սա Հայոց և Յունաց եպիսկոպոններէն ժողով կը գումարէ Ա . Պօլսոյ մէջ ուր ՚ի միջի այլոց կը գտնուին Ո թթանէս աթոռակալն և Գրիգոր եպիսկոպոն : Եպիսկոպոսներէն ոմանիք կայսեր ահէն հաւանութիւն կը ցուցնեն Քաղկեդոնի ժողովին և շատերը ընդդիմանալով կը դառնան ՚ի Հայառտան : Ո՞րիկ զայրանալով Յունաց բաժնի Հայոց համար Յովհաննէս անուն մէ կը , Բագարան գիւղէն , կաթողիկոս կը կացուցանէ , որպէս հակաթոռ Աբրահամու կաթողիկոսին Հայոց : Երբ հայրապետութիւնը այսպէս կը բաժանուի յունական նենգութեամբ , մեծ յուզմունքներ կը մնին Հայոց մէջ ՚ի վիաս հանրութեան ազգին : Այս միջոցին սաստիկ դատերազման կան կոտորածներ կը լինին Յունաց և Պարսից մէջ , որով և Երուսաղէմը կ'առնուի , Խաչափայտը կը գերուի ՚ի Պարսկաստան, ընդնմին և Օսմանական Պատրիարքն և 30,000 անձինք : Այս պատերազմաց ժամանակ Հայոց

Տարսնոյզ առ առն եւս ահագին կոտօրածնեւ
ըռւ ասպարէզ կը դ.առնայ , ուր Ո՞ւշեղ և
Գայլ—Ա ահան Ո՞ամիկոնեանք հարուածներ
կը տան պարսկական հրտակներուն : Այս
պարսկական ասպատակութեան մէջ կը նա
հատակուին եօթն խոտաճարակներն , որ
Յունաստանէն Գյակայ վանքն եկած էին և
Ճգնողական կեանք կը վարէին խոտարուա
կենօք :

Յունաց բաժնի մէջ Յովհաննիս հակած
թոռն կը վախճանի և իրեն չը յաջորդեր ոք :
Սակաւ ժամանակէն զինի կը մեռանի նոյն
պէս և Ո՞բրահամ կաթողիկոսն , որ իւր կենա
դանութեան ժամանակ ամեն կերպով աշխ
խատեցաւ Հայոց , Ա յաց և Յունանից կրօ-
նական ամբողջ թեան համար և նամակներ
գրեց ինչպէս Ա յաց՝ նոյնպէս և Ո՞ղուանից ,
բայց դժբաղդ աբար Ա յացիք չը կարացին
նոյն վաղեմնի . մուրմութիւնը պահպանել ,
զոր պահպանեցին Յունանք :

Ո՞բրահամուա տեղ կընտրուի կաթողիկոս
Տարսնոյ Ո՞ամիկոնեանց եպիսկոպոսն և Գյա-
կայ վանից առաջնորդն՝ Կոմիտաս , Այսպա-
ծոտն գաւառուի Ո՞ց գիւղէն : Աա կը ձեռ-
նարկէ Հոխիսիմեանց վիայարանի և Խջմիւ
ածնի գմբէթի նորոգութեանը : Առաջնոյն
մէջ կը գտնուին Հոխիսիմեանց նշխարքը՝ Ա-
կուսաւորչի և Սահակայ մատանիներով :

Էնքուած տապանի մէջ՝ զոր առանց բանա-
լու վերատին կ'ամփոփի կրօմիտատ, շքեզ
հանդէս կատարելով և [Այս նոտիվով գե-
ղեցիկ Հարականը երգել տալով, զոր ինքն շա-
րագրած և նուիրած էր լ]. կրուսանաց գա-
ռացն ու յիշատակին, որպես վայելուչ և
սրտաշարժ ներբռող։ կրօմիտատ այլ և այլ ե-
կեղեցական բարեկարգութիւններ կ'առնե,
և եօմնամեայ կաթողիկոսութենէն զկնի կը
վախճանի և իւրա տեղը կ'ընտրուի Քրիստովոր
գ.. [Ապահունեաց գաւառէն, ազատ տանէ,
խորհրդով կ արագտիրոց մարզպանին, թէ
սղորոս Ուշտունի իշխանին և այլ նախարա-
բաց և հաւանութեամբ ազգին։ Ուկայն ե-
րեք տարիէն յետոյ՝ իւրովի կը հրաժարի կա-
թողիկոսութենէ և առանձնանալով՝ կրօնա-
ւորական կեանք կը վարէ։

Քրիստովորին կը յաջորդէ լողը կամ
Եղբաս, կիդ գաւառի Փառամբնակերտ ա-
ւանէն, որ սնուած էր կաթողիկոսարանի
մէջ և փակակալ էր լ. Գրիգոր եկեղեցւոյն։
Որա կաթողիկոսութեան ժամանակ Հա-
յաստանեաց եկեղեցին շարժար կը տագ-
նապի քաղկեդոնական մողեկրօնութենէն։
Հերակլ Յունաց կայսրը Պարսից հետ հաշ-
տուելէն և խոռեմ թագաւորէն Խաչափայ
ար ստանելէն զկնի (որ գերուած էր Խոռ-
ըսված ժամանակ), կը դիմէ ՚ի կրօնին (որ և

(Ձէսդուպօլիս), և կը հրամայէ գաւառաւական ժողով գումարել (Յունաց և Հայոց եւ պիսկոպոսներէն, առանց մասնակցութեան բոլոր ազգին Հայոց, ուր կը կոչէ նոյնպէտ և Աշու կաթողիկոսն՝ Վ'ժեժ գնունի նախարարի պատգամաւորութեամբ, ազդ առնելով միանգամայն, որ եթէ չը հաճի երթալ, Յունաց բաժնի մէջ այլ կաթողիկոս պիտի նատուցանէ և չը թողու որ Ազգ կաթողիկոսական իշխանութիւն վարէ : Ազգ այս բապառնական ազգաբարութենէն ստիպուած, կ'ուղեւորի դէպ ՚ի Լարին և կը ցանկայ իւր հետ տանել Վ'աթուսաղա մեծիմաստ վարդապէտը նախարարաց խորհրդով, սակայն նա Աշրասխածորի վարդապէտարանին մէջ զբաղած լինելով դատարիարակութեամբ՝ կը հրաժարի և միայն գաւանութեան գիր կ'ուղարկէ և կը պատուիրէ որ կայսեր առջեւ կարդան ժողովի մէջ : (Օ)րբելեան իւր պատմութեան մէջ կ'առանդէ այս դաւանութեան գիրը ամբողջապէս, որ ընտիր և ողջախոհ Խմաստներ կը պարունակէ հաւատոց էական մասանց վրայ) : Ազգ Լարին կը հասնի քանի մի Եպիսկոպոսներով և վարդապէտներով : Ճաղովս կը գումարուի (629ին), ուր մէջ կը բերուին Հայոց դաւանութեան թուղթն (Վ'աթուսաղայի գրած) և Յունաց դաւանագիրը ստորագրութեամբ Հե-

բակը կայսեր և քանի մի եպիսկոպոսաց : Եր
կար վիճաբանութիւններ կը լինին առանց
համաձայնութեան : Եզր առանձինն կը խոր-
հի հայ եպիսկոպոսաց ու նախարարաց հետ
և քանի մի առաջարկութիւններ կ'առնէ
կայսեր : Կայսրը կը մերժէ և միայն կը սովոր-
ալէ որ բազկեդոննեան ժողովը ընդունուի,
սպառնալեաց հետ պատուամիրական պար-
գեւներ եւս խոստանալով Եզրին : Եզր,
կայսեր հրապուրանքներէն ստիպուելով, կ'ըն-
դունի Քաղկեդոնի ժողովն և ընդ նմին կողը
գիւղաքաղաքը՝ որպէս պարգեւ : Բայց սոյն
այս փառատիրութիւնը առիթ կը լինի, որ
յետ ժամանակաց իւր իսկական փառքէն կը
զբկուի և կաթողիկոսաց շարքին մէջ իւր ա-
նուան գլխագիրն գլխիվայր և ներհակ կը
գրուի, ըստ որում փոխանակ իւր ընդհա-
նուր ազգի համոզմանը հետեւելու՝ հարա-
տակ եղաւ յունական հրապուրանքներուն (1) :

Եզր Դուին կը գառնայ մեծամեծ պար-
գեւներով և փառքով, բայց, ըստ պատմելոց
(Օրբելեանի), Կապուա իողարուա ՚ի հայրենի ժա-
ռաց և ՚ի Ճշնարիտ հատաքոյ, և կ'աշխատի նոր
ժողովով հաստատել իւր ընդունած դաւա-

(1) Մեր ամեն պատմագիրներն միորան կը կտտամբեն
Եզրի թուլամութիւնն ու ազահութիւնը : Աերեսու Գլ-
իթ . Ասոզիկ . Բ . Գիրք Գլ . Բ . Սամաւել . — Վարդան
— Վրակաս . — Օքրել :

Կութիւնը, սակայն սատրիկ շշուկ կը տարա-
ծուի ազգին մէջ, կաթողիկոսարանի նշանաւ-
տօր վարդապետն և լ). Դրիգոր եկեղեցւոյն
փակակալն՝ (Յօվհաննէս՝ յայտնապէս կ'ընդ-
դիմանայ Եղբին, կ'անարգուի և այս խօսքե-
րը կ'ասէ. «Յիրաւի կոչեցաւ անունդ Եղբ,
վասն զի յեզր տարեալ հաներ զայաստա-
նեայս, քակեալ զահման հաւատոյ հարցն
մերոց ուղղափառաց և խրամատեալ զցանկն
առաքելական և 'ի մարդադաւան տու մարն
լ եւնի (Հռամվայ Պապին) կործանեալ ո).
Եղբ կը հրամայէ գան հարկանել զվարդա-
պետն, բայց նա ելնելով կ'ազազակէ. «Ե-
հաւասիկ գնացի խնդարով յերեսաց ատե-
նին, զի վասն անուան Տեառն. արժանի եղէ
անարգելց ո) (2), որ և այս աքսորանքէն յե-
տց կ'առանձնանայ Այսյր վանքին մէջ, սաւ
կայն այն տեսէն եւս կը հալածուի դէպ 'ի
Ըղուանք, և իբր ՚ինախատինս՝ յիշեալ վանքը
կը կոչուի Գոմ (Այրագոմ) և վարդապե-
տըն՝ Այրագոմեցի :

Ո՞ինչքեռ այնօրինակ ընդդիմութեամբ
կը տագնապի Եղբ Դունայ մէջ, յունական
բամնի Հայոց մէջ ևս սաստիկ խռովութիւն
կը ծագի, որովհետեւ քաղկեդոնիկութեան
միտողներն արդէն սկսած էին ընդդէմ ա-

(1) Յօվհաննէս կաթողիկոս. (2) Կայս:

ռաքելական սովորութեան Հայոց՝ Հաղորդութեան բաժակի մէջ ջուր խառնել, հացը՝ խմորուն առնել, Օննդեան, Յայտնութեան և Ուկրտութեան աօնից նախնական կարգը փոխել, Ուկրբ Աստուածն՝ առանց Խաչյարի երգել, և այն, որոց համար և խրառովութիւնն այնչափ կը զայրանայ, որ ընդունողներն անգամ՝ վերտոին կը մերժեն Քաղկեդոնի ժողովն :

Այս կրօնական շիոթութեանց միջոցին, որ Յունաց շնորհիւ Ճարակուած էր, Պարսիկները կը յարձակին Տարօնոյ գաւառին վրայ, գրգռելով յունական արտօսքին մտերմութեան ցոյցերէն առ Հայս, և հարուած կը կրեն Հայոց կողմէն։ Պարսից յարձակումներն խսպառ կը դադարին Վահան Լիամսարականի (այսպէս կը կոչուի, թէպէտ և Ումիկոնեան ցեղէն), և իւր Տիրան որդւոյն ժամանակ, որոնք պարսկական զօրքին կը դիւմագրաւեն և կը ցրուեն։ Տարօնական վերջին պատերազմին կը մասնակցին, նոյնպէս Գլակայ վանուց 300 կրօնաւորներն՝ խաչադրունշանաւ մոգապաշտութեան դէմ զինելով։

Այսպէս կը վերջանան, ինչպէս պարսկական հալածանքներն, նոյնպէս և եկեղեցական պատմութեան Երրորդ Ըրջանը (450–640), սակայն քրիստոնեայ Հայաստան դար-

Ճեալ հանգստութիւնը ըլ գտներ . վասն զի՞
քաղկեդոնական ատելութիւններն անընդ-
հատ կը շարունակին (Յունաց կողմէն , և մռ-
գակրօնականին կը յաջորդեն հագարական
հալածանքները կամ արաբական արշաւանք-
ները , օրոց վրայ խօսիլն յաջորդ . Ըրջանին
թողլով , այժմ հարեւանցի ակնարկ ձգենք
միայն՝ թէ ի՞նչ վիճակ ունեցաւ . աղդային
մատենագրութիւնը թարգմանչաց ժամա-
նակէն կամ հինգերորդ դարէն զկնի .

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ընդհանուր տեսութիւն Երրորդ Շքանի մատենագրութեան վրայ . — Ուսումնավորք . — Երկասիրութիւնք Մամիկոնեան Արքահամ Եպիսկոպոսի , Աբանաց զետրոս Եպիսկոպոսի , Մավաչեան Արքահամ և կամուսա կաթողիկոսաց , Մաթուռաղայի , Յովհաննու Մայրավանեաց , Յաշիաննու Մամիկոնեան և ջան Բարողի .

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ բարդաւաճանքն կամ նուազութիւնն կախումն ունի ժամանակակից դէպքերէն , որոց ենթարկուած է ազգ մի կամ ժողովուրդ . Այս նկատմամբ եթէ պատկերացնենք մեզ Երրորդ Շքանի բուն նկարագիրը , ակներեւ կը տեսնենք . որ մեր ազգն ամենեւին ժամանակ չունէր ուսման և գրադիտութեան մէջ ծաղկելու . վասն զի մոդակրօնութեան հալածանքէն ամենեւին հանգստութիւն չը կար , ոչ հայրենեաց մէջ , ոչ ընտանեաց մէջ և ոչ անպատճերուն մէջ անգամ : Ամբողջ ազգի վիճակը շարունակ զինուորութիւն էր հաւա

տոյ սլաշտպանութեան համար : Արդարեւ՝
 հալածանքը մի գեղեցիկ դպրոց էր.քրիստո-
 նեայ Հայաստանին համար, ուր զգացմունք-
 ները կ'ազնաւանային, հոգիները կը վառ-
 ուեին երկնաւոր սիրով և միտքերը միշտ ար-
 թուն էին աստօւածպաշտութեան խորհրդա-
 ներով, բայց գրաւորապէս բարդաւաճելու
 ժամանակ չը կար. ուստի նոյն Շքջանի Հա-
 յերը իւրեանց նահատակութեան և ջերմ
 քրիստոնէաւթեան յիշատակը միայն կարա-
 ցին աւանդել յետագայից և ոչ գրաւոր
 հարստութիւն : Թաղունք ասել, որ քաղկե-
 դոնական տարապարտ խնդիրներն եւս ե-
 կան խառնեցան մոգակրօնական հալածա-
 նաց հետ և մկսան վիճարանութեամբ ըզ-
 բաղեցնել մտքերը : Իւստի ինչպէս պիտի
 տեսնենք, նդ և նդ դարերուն մէջ նուազեն
 թէ մատենագիրք և թէ մատենագրական
 ճոխութիւնք :

Գլխաւոր ուստօնմնավայրքն էին նդ դա-
 րուն մէջ Այս նեաց վարդապետարանը . իսկ
 նդ դարուն մէջ Աշխարունեաց Երասխաձորի
 Վարդիկ-Հայր կոչուած վարդապետարանը,
 Շիրակայ Դպրեվանքը և Կարճնոյ Խաչկայ
 վանքը : Իսկ նոյն դարուց մէջ գրաւոր եր-
 կասիրութեամբ յայտնի հեղինակներն են
 սոքա :

Արբաւաշ ԵԳԻՄԿՈՊԱՍ ՄԱՄԻԿՆԵԱՆՑ. — Ա-
**Ռ-
 ուանից Վ աշական թագաւորի խնդրանք**
գրած է քանի մի խրատներ և թարգմանած
է Լիիեսոսի տիեզերական ժողովի պատմու-
թիւնը, զոր երկասիրուծ է Դարովի քաղա-
քի Փիլիքսիանոս և պիսկոպոսն : Ոմանք այս
պատմութիւնը կը համարեն նոյն խոկ Արբա-
համու ինքնագիր երկասիրութիւն, վասն զի
ձեռագրաց վրայ կը գտնուի Վ աշագանայ
անունը, որուն նուիրուած է, առանց յիշ
ուելու, որ թարգմանութիւն է :

ՊԵՏՐՈՍ ԵԳԻՄԿՈՊԱՍ ՍԻՒՆԵԱՆՑ. — Ոսրա վե-
րայ մեծ գովեստով կը խօսի Ո. (Օրբելեան
և Անվես խորենացւց աշակերտ կը համա-
րէ, (Ժամանակագրութեան նայելով աւելի
սուոյդ է աշակերտի աշակերտ համարել,) սա-
կայն խոր երկասիրութիւններէն շատերը մեզ
չեն հասած, ինչպէս են՝ Պատմուիտն մի և ներ-
բոլ Վ ասակայ հայր Բարիկին վրայ, որք
կը յիշատակուին պատմագրութեանց մեջ։
Պետրոսի անուամբ մեզ հասած երկասիրու-
թիւնքն են ։ Անբողեան Աստուածածնի վե-
րայ այսպիսի սկզբնաւորութեամբ « Բազ-
մութիւնք քրիստոսասէր ժողովոդոց ։ Ճա-
մանութել Աստուած մարդացեալո, և Պատա-
խոիք առ հայրմունա Վ աշագանայ իշխանի, որուն

**Աշ կը խօսուի ընդհանրապէս ՚Քրիստոսի
մարդեղութեան վրայ : Պետրոս, իբրեւ
ժամանակակից նշանաւոր գիտնական, մաս-
նակյութիւն անեցաւ Հայոց Տոմարի ուղ-
ղութեանը, որ կատարեցաւ Առվեհս Եղի-
վարդեցի կաթողիկոսի օրով :**

**ԱՌՎՍԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ . — Առ-
րա ուսումնականութիւնը յայտնի է Հայոց
Տոմարի ուղղութեան գիտնական հետազո-
տութենէն, բայց մասնաւոր երկասիրու-
թիւն չունի, բաց ՚ի այն թուղթը, զոր գը-
րեց առ կիւրիսն, նախնի Հարց շաւղին
մէջ մնալու և ոչ թէ քաղկեդոնիկութեան
յարելու :**

**ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ . — ԱՌՎԵհս կաթո-
ղիկոսի մահէն յետոյ՝ Աքրահամին վիճա-
կեցաւ թէ կաթողիկոսութիւնը և թէ Վը-
րաց բաժանման առաջն առնելու պարտա-
ւորութիւնը : Աւստի Աքրահամ զանազան
թղթեր գրեց առ կիւրիսն և նոցնպէս առ
Վըղուանս : Այս թղթերը, զորս ժողոված
է Աւխտանէս պատմագիրը, կը պարունա-
կեն իւրեանց մէջ զգուշացուցիչ յորդորներ
և դաւանաբանական տեղեկութիւններ :**

Կրտսւաս կըթունկոս . — Եօթներորդ
 դարու սկիզբն հայրապետ ընտրուելով Հռ
 ռիփահմետանց վկացարանը նորոգել տուաւ .
 Աղքա մուաց և զգացմանց ծնունդն է Հռիփ
 սիմետանց Շարականը — Անջնչ , ինչպէս և ա
 ռաջ սասացինք : Այս համառատ ներբողին
 մէջ կը նկարագրուի կուսանաց պատմու-
 թեան գլխաւոր մասերը , մանաւանդ Հռ
 ռիփահմէ հրաշագեղ կուսին , որուն գեղեց-
 կութեան վրայ կը յիմարի թագաւորը . հե-
 թանոսները կը բանչանան՝ աշխարհը աղհա-
 մարհելուն համար . իսկ հրեշտակները կը
 առնեն ուրախութեամբ անմեղ կուսի մահը :
 Արեւմուտք և Արեւելք — Դիոկղետիանոս
 և Տրդատ — յայտնապէս իրարու կը խոստա-
 նան և ծածուկ իրարմէ յափշտակել կը ջա-
 նան Հռիփահմէն , բայց նա աշխարհի սէրը
 և մեծութիւնը կը զոհէ երկնաւոր սիրոյն :
 Աշխարհի հզօրներու զէնքերը և բազուկնե-
 րը կը թուլանան և տկար կանայքն աստօւա-
 ծային սիրով կը զօրանան և կուսական ձեռ-
 քերով կը յաղթահարին պերճաշուք թա-
 գաւորները : Ո՛խով բանիւ Աստուծոյ տը-
 կարները կը զօրանան աշխարհի հզօրներէն
 և յիմարները կ'իմաստանան աշխարհի ի-
 մաստուններէն : Լոյսերը իրենց քրիստոնե-
 ութեամբ կը ծնանին շատ ազգեր և մա-
 նուկ մայրեր՝ ծերոց հրապարակներ (բազ-

մաթիւ ծերեր)։ Ի՞աց ՚ի այս գեղեցիկ շարականէն կոմիտաս գրած է նմանապէս քանի մի թղթեր հաւատոյ դաւանութեան վըրայ, և ինչ ինչ քննաբանական կամ աստուածաբանական համառօտ գրուածքներ։

Ո՞սթուսաւ. — Ո՞ինչդեռ Հերակլ Յունաց կայսրը կարնոյ ժողովին մէջ կը յուղեր քաղկեդոնական խնդիրները Եզր կաթողիկոսի հետ, Ո՞ամուսաղա առանձնացած Երասխաձորի վարդապետարանին մէջ գիշեր ցերեկ կ'աշխատէր աշակերտելոց յառաջադիմութեան համար, ուր կարգուած էր կոմիտաս կաթողիկոսէն։ Եզր կամեցաւ Ո՞ամուսալան եւս իւր հետ կարնոյ ժողովը տանել, իբրեւ նոյն ժամանակի բազմահրմանուտ անձն, բայց նա իւր տկարութիւնն պատճառ բռնելսվ՝ առաւել լաւ համարեց իւր վսրժապետութիւնը շարունակել քան թէ տարապարտ վէճերու խառնուիլ, որոց մէջ աւելի տիրապետական բռնութիւն կը նշամարէր քան թէ քրիստոնէական խորհրդածութիւնն և ճշմարտութեան հետազօտութիւն։ Ո՞ամուսաղա բաւական համարեց ՚Իստանունիան գիր միայն ուղարկել կարնոյ ժողովին մէջ կարդալու, որ իբրեւ միակ երկասիրութիւն Ո՞ամուսաղայի հասած է մեզ։ Թէպէտ և կը կարծուի որ ուրիշ գրուածք

Ներ եւս ունեցած լինի , որոնք 'ի կողուստ
մատնուած են . վասն զի իւր համբաւը շատ
մեծ եղած է ժամանակակցաց մէջ , ինչպէս և
կը տեսնենք լ]. () րբելքանի խօսքերէն . Կ] են
քերթող և անյաղթ փիլիսոփայ , զարդացեալ
ամենայն առաքինութեամբ . ուսեալ զքեր-
թողութիւն և վարժեալ ճարտարանականա-
ւըն , հմտացեուլ փիլիսոփայական արուեստ
տից , լի ամենայն իմաստութեամբ և կտ-
արեալ գիտութեամբ կացուցանեն
(զ] աթուսաղա) յատիճան վարդապետու-
թեան եկեղեցւոյ և նստուցանեն գլուխ ա-
մենայն վարդապետացն 'ի վերայ բարձր ա-
հարկու ամբիոնի բարունարանին , յորմէ-
բղինէր գետօրէն աստուածային իմաստու-
թիւնն և փարթամացուցանէր զամենայն ա-
շակերտեալն ո (1) : Ա] աթուսաղա իւր ար-
ժանաւորութեամբ եպիսկոպոս զարձաւ
Աիւնեաց , որ Հայոց կաթողիկոսութեան
մեծ թեմն էր :

ՅՈՎԱՆ ՄԱՅՐԱՎԱՆԵՑԻ . — Ա Եղի կտ-
թողիկոսին ընդդիմացաւ Քաղկեդոնի ժո-
ղովն ընդունելու համար և աքսորուեցաւ :
Եյս առանձնութեան մէջ երեք գիրք շա-
րագրեց , (ինչպէս կ'աւանդեն Եսողիկ եւ

(1) Ա . ՕՐԵԿԼ . ԳԼ . ԻԸ :

Վարդան պատմիչք) Յունաց և քաղկեդոնական վարդապետութեան դէմ այս պիսի անուններով — Խըստ Վարդաց, Հաստ գարմատ և Կոյթմակ, և թէպէտ վախնալով, իբրեւ իւր հեղինակութիւն չէր հրապարակ հանած, առաջն իւր հակառակորդները (քաղկեդոնականք) անհետացուցին : Յովհան այնչափ նշանաւոր էր, որ նախարարք, ինչպէս Ութուսազայի, նոյնպէս և սպա համար, խորհուրդ տուին Լոգին որ հետը տանի կարնոյ ժողովն, սակայն նա չը կամեցաւ տանել : Այս մասին կը խօսին Յովհաննէս կաթողիկոս, կազմանկայտուացի, (Կրթելեան և այլք :

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . — Այս մամիկոնէսից եպիսկոպոսն էր և Կերսէս Շինող կաթողիկոսի օրով գրած է Տարոնոյ պատմութիւնը իբրեւ Շարայրութիւն Օւենոբայ երկասիրութեան, որուն վրայ արդէն խօսած ենք : Յովհաննու պատմական գրուածքի յիշատակարանին մէջ կը յիշուի, որ ինքն Տարանոյ պատմութեան հաւաքածոյն աւանդան է երեսուն գլուխներով : Ասկայն այժմեան գտնուածն ու տպագրուածը միայն ութ գլուխներէ կամ պատճէններէ քաղկացած է, որոց հինգն յանուն Օւենոբայ, և երեքն միայն յանուն Յովհաննու, իսկ մնացածներն

կամ կորուսուած են, կամ մեղ չեն հասած :

Յովհաննու երկասիրութեան գլխաւոր նիւթն է այն անցքերուն կամ պատերազմ ներուն պատմութիւնը, որոնք պատահեցան Առշեղ Ամիկոնեանի և նորա որդւոյն Դայլ Ահանայ ժամանակ : Պատմութիւնը գրուած է աշխոյժ գրչով, բայց տեղտեղ ժամանակի և անձանց շփոթութիւններ կան, որոնք պատմական ստուգութիւնը կ'աղաւաղեն : Կը կարծուի որ յետին ժամանակաց գրիչներ պատճառ եղած լինին այս անտեղութեանը, որովհետեւ նոյն պատմութեան յիշատակարանին մէջ ազատութիւն տրուած է, որ կամեցողն իւր ժամանակի պատմութիւնը աւելցնէ :

Ի՞ԱՐՄԵՂ ՃՈՒ . — Այս Դարեվանից առաջ նորդն էր և իւր ժամանակին նշանաւոր : Լըր կասիրած է մեկնութիւն Արկոսի աւետարանին և այլ գրուածքներ, նմանապէս մասնակից եղած է Դունայ ժողովին, որ գումարեցաւ Ներսէս Շինողի օրով, և ի միջի այլ խնդրոց, ընտրութիւն եղաւ Շարականաց :



Բ .

Երկասիրութիւնք Աերէոս եպիսկոպոսի . Մովսիսի կողանկայտուացւոյ , Դաւթի բազրւանդացւոյ , Անանիայի Ըիրակացւոյ . Թէսդորոսի Քոթենաւորի . Մովսիսի Սիւնեցւոյ . Գրիգորի Արշարուանւոյ . Փիլոնի Ըիրակացւոյ . Սահակ կաթողիկոսի Զորափորեցւոյ . — Համառօտագրութիւն պարունակութեան իւրագանձիւ բոց .

ՍԵՐԵՇՈՍ ԵՊԻՄԿՈՊՈՍ . — Բագրատունեաց ցեղի եպիսկոպոսն , ինչպէս և յիշուած է Ներսէս Շինողի ժամանակ գումարուած Դունայ ժողովի եպիսկոպոսաց կոտրին մէջ : Երկասիրած է Պատրուիխան Ներակիլ , որուն մէջ խառն են և Հայոց ականաւոր իշխանաց արարքներն : Աերէոսի պատմագրութեան գլխաւոր նիւթն են Խոսրով թի , Կաւատի , Վօրիկի և Ներակիլի ժամանակ կատարուած պարտկական և յունական պատերազմները . բայց համառօտ կերպիւ աւանդուած է մինչ մեւ նոցա օրերը Հայոց պատմութիւնը՝ ի Հայկաց սկսեալ : Աերէոս կը պատմէ նմանապէս Պարսից Աստանեան տէրութեան տկարանալն և Ահամետականաց զօրանալն : Բաց ՚ի քաղաքական անցքերէն Աերէոս կը պատմէ Յունաց և Հայոց մէջ պատահած եկեղեցական խնդիրները , նոցա ստիպմունքները՝ Քաղկեդոնի ժողովն ընդունելու համար և Հայոց մերժումն : Կը յիշէ նմա-

նապէս կոմիտաս և ուրիշ քանի մի կաթո-
զիկոսաց գործքերը : Ե՛աւանդէ Երուսաղէմի
պատրիարքական տեղապահ Առգեստափի գը-
րած թուղթն առ կոմիտաս և սորա պա-
տախտանն : Աերէսի երկասիրութիւնը քա-
նի մասամբ արժանի է մտագրութեան,
մանաւանդ այն անցքերով, որոնք ուրիշ
պատմագրաց մէջ չեն յիշուիր :

ԱՌՍԽՍ ԿԱՂԱՆԿԱՑՏՈՒԱՑԻ .— Ուտի գա-
ւառի կաղանկայտուց քաղաքաւանէն, մօտ
Պարտաւ վաղեմնի մայրաքաղաքին և Տրոտո-
կամ թարթառ գետոյն : ԱՌՍԽՍ մատենա-
գրական յիշատակարանաց մէջ կոչուած է,
նոյնպէս Լալոնիանպուացի, Լողիանպուացի և եր-
բեմն Աշուանեցի : Խշանաւոր է սա եօթնե-
րորդ դարու մատենագրաց մէջ իւր երկա-
սիրութեամբ, որ է Պատրոնիւն Աշուանեցի :

Եյտ պատմւթիւնը բաղկացած է երեք
Գրքէ, բայց ժամանակագրական հաշուառը՝
երկու Գիրքը միայն ԱՌՍԽՍ կը պատկա-
նին, իսկ երրորդը անանուն հեղինակի շա-
րայարութիւն է . վասն զի ԱՌՍԽՍ ապրան
է Աշուանեցի Գեւանշէր թագաւորի և Այս-
րոյ կաթողիկոսի ժամանակ, եդ դարուն մէջ,
որոց գործքերը իրեւ ականատես կը պատ-
մէ . իսկ երրորդ Գրոց պատմական անցքե-
րը մինչեւ ժդ դարուն վերջերը կը համնին .

Առվակի երկասիրութիւնը պատմագրաւ կան մեծ արժէք ունի . վասն զի Աղուանից ծագման , վարուց , բարուց և երկրի բերքերուն վրայ այնպիսի ծանօթութիւններ կը տայ , զորս ուրիշ պատմագրաց մէջ անօդուտ է սրոնել : Կը պարունակէ Աղուանից աւանդութիւնները և նոյն աշխարհին մէջ պատահած պատերազմները Պարսից , Հայոց , Հոնաց , Արաբացւոց , Խազրաց , Խուրքաց և այլոց . Աակայն Առվակիսի պատմութեան քաղաքային , ցեղային և երկրային ծանօթութեանց հետազոտութիւնը մեր նպատակէն արտաքոյ լինելով՝ կը թողունք բանասիրական և գրագիտական պատմութեան (1) , և միայն կը համառ օտագրեմք Եկեղեցական պատմութեան վերաբերեալ ծանօթութիւնները :

Առվակս կը խօսի Աղուանից (կամ աւելի լաւ ասել Հայ - Աղուանից) քրիստոնէական գարձի վրայ , առաքելութեամբ Աղիչի , հաւատոյ վերանորոգութեան և կամողիկոսական սկզբնաւորութեան վրայ քարոզութեամբ (2) . Լուսաւորչին և իւր թոռն Պըդիգրիսի , որ նահատակեցաւ Աաքթաց ազգէն . նոյնագէս կը խօսի Աեսրուպայ և իւր

(1) Մովսիսի պատմութեան ֆարիզի տպագրութիւնը . Շահնազարեան կ . պատմագէտ վարդապետի ձեռամբ , ունի ընդարձակ յառաջաբան , յորմէ ընթերցողք մեծ լոյս կարեն ստանալ Աղուանից ազգի , երկրի . պատմագրի և նուև հին ժամանակակից աղդաց վրայ .

աշակերտաց գրադիտական, զարդապետական և դաստիարակական վաստակոց վրայ ՚ի շինութիւն Աղուանից աշխարհին։ Ո՛ովմէս կը խօսի Աղուանից երկրին մէջ կատարուած քրիստոնէական նահատակութեանց, եկեղեցական ժողովոց և բարեկարգութեանց, վանօրէից և եկեղեցեաց շինութեան, քրիստոնէական վկայից մարտիրոսութեան, անապատականաց կրօնաւորութեան, կաթողիկոսական աթոռոյ վիճակի և փախադրութեան և սրբազնն նշխարաց յայտնութեանց վրայ։ Ո՛ովմէս կը խօսի տեղանդ գտնուած հեթանոսական սովորութեանց, գիւթական ազանդոց և մանաւանդ մատնահատութեան չար աղանդոյն բարձման վրայ ձեռամբ Ա աշագանայ։ Կը խօսի Աղուանից կաթողիկոսաց, բարեպաշտ իշխանաց և եպիսկոպոսաց վարուց, գործոց և Հայոց հայրապետութեան հետ ունեցած յարաբերաւթեանց վրայ, որոյ մասին և կ'աւանդէ զանազան թղթեր, ինչպէս են ֆմուղմք Դիւտ կաթողիկոսի, Աքրահամ Ամմիկոնէից եպիսկոպոսի, Ամաթէ երիցու առ Ա աշագան, Յովհաննէս կաթողիկոսի Հայոց առ Աքաս կաթողիկոս Աղուանից, Աքրահամ կաթողիկոսի Հայոց վասն զգուշացուցանելը ՚ի քաղկեդոնականութենէ, թուղթ Գեւանշէրի առ կայսրն Յունաց կոստանդին և նորին պատասխանի,

Թուղթ 'Դաւիթ և Եղիշել երիցանց և պատասխանի Ուխտանէս կաթողիկոսէն և Զեւանչերէն, գրուած ինչ Ո՞յցրավանեցւոյն, Այլ 'Դաւթակայ 'ի Զեւանչէր մեծագործ թագաւոր, որ Կաղանիցայտուացւոյ պատմական դիւցազն է, և այլն :

Ո՞վսէս կը խօսի առաւել ընդարձակօրէնքանի մի եկեղեցական հովուաց քրիստոնէաւ կան և ուսումնասիրական ջանից վրայ, մանաւանդ Ո՞եծկունեաց գաւառի Խորայէլ եպիսկոպոսի, որ Հոնաց ազգը ծառապաշտութենէ և թանգրի-Խան հօկայ չառտուածոց պաշտամունքէն Քրիստոնէութեան կը դարձընէ և եկեղեցիներ անգամ կը շինէ նոցահամար, բայց յետագայ ժամանակաց հովիւներու անհոգութենէն վերստին կուտապշտութեան կը դիմեն : Կը խօսի վերջապէտ Եղրուսաղեմի եկեղեցեաց և 'ի յիշատակ Աղուանից եղած վանօրէից վրայ :

Իսկ Ո՞վսիսի երկասիրութեան անանուն Ըարացարիչն (ըստ ոմանց Ո՞վսէս 'Դասիուրանեցին) կը պատմէ զանազան կրօնական դէպքեր Քաղկեդոնի ժողովոյն նկատմամբ, և Հայոց Լզիս կաթողիկոսի երթալն յլուզուանս, միաբանութեան համար եղած ժողովներու գումարումներն և Աքարացւոց արշաւանքները : Ա երջապէս համառօտիւ կը թռաւէ Աղուանից կաթողիկոսաց անուն-

ներն և գործքերը, Եղիշէ առաքեալէն և
լուսաւորչի թոռն Գրիգորիսէն սկսելով և
հասուցանելով մինչեւ տէր Ո՞վսէս առաջ
նորդ Փառախայ վանաց, որ ժդ դարաւ վեր-
ջերը կաթողիկոս նստաւ Ապուանից :

ԴԱՏԻԹ ԲԱԳՐԵՒԱՆԻՑԻ . — Ի՞ագրեւանդ
գաւառի Ի՞ագաւանն գիւղէն, իմաստասէր և
եթ իիլսուդայ կոչուած Ասողիկէն : Լուսանդին
(Յունաց կայսեր հրավարտակաւ պատգամա-
ւոր եղաւ առ Եերսէս Շինող կաթողիկոս
և առ Ոմբաւ Կիւրապաղաւ Վարազտիրո-
ցեան : Վարագրան է Շառ մի Գրիտոռի
աստուածային և մարդկային բնութեան վը-
րաց, Աշու պատրիի խնդրանօք, որ ցարդ
տպագրուած չէ : Եմանապէս թարդմա-
նած է Ո). Ի՞արսղի քանի մի ճառերը :

ԱՆԱՆԻԾ ՇԻՐԱԿԱՑԻ . — Ո՞անկութեան
ժամանակ կը հմտանայ բարոյական ուսմանց
և Աստուածաշունչ Գրոց, և աղա հետա-
մուտ կը լինի ուստղական (մակմէմատիկական)
գիտութեան : Այս նպատակաւ կ'ուղեւորի
՚ի կարին, ՚ի Չորրորդ Հայաստան առ Գրիս-
տոստուր գիտնական, ՚ի Պօղիս, և աղա ՚ի Տրա-
պիզոն առ Տիւքիկոս : Եթի տարի կը մնայ
Տրապիզոն Տիւքիկոս գիտնաւորի մօտ և հա-
մարողական ուսմանց մէջ վարժելով Հայաս-

աան կը դառնայ և շատ աշակերտներ կ'ու-
նենայ :

Ենանիայի երկասիրութեանց մէջ նշա-
նաւոր են Ապեղալբաշունիւն կամ Ապեղի-
գունիւն, որ սովորաբար Յաղաք երինից կը կո-
չաւի . յամանակադրունիւն ընտիր կարգաբար-
նութեամբ . Յաղաք չափուց և կշռոց . իբրեւ
մեկնաբանութիւն Ա. Դրոց մէջ յիշուած և
գործածուած չափուց և կշռոց : Ենանիայի
երկասիրութեանց հետազոտութիւնը մեր
նպատակէն արտաքոյ համարելով կը թողունք
առանց դիտողութեան : Ո՞իսն այսչափը
կ'ասենք, որ նախնեաց մէջ համարովական
գրուածք ըլլինելուն պատճառաւ, շատ յար-
գի եղած է Ենանիայի երկասիրութիւնը, մա-
նաւանդ աստեղագիտութիւնը, ինչպէս կը
կարդանք Ո՞ագիստրոսի մի թուղթը, որով
կը խնդրէ Պետրոս Դետադարձ կաթողիկո-
սէն Ենանիայի գրուածքն իրեն դրկել ըն-
թերցասիրելու :

Թակութեամբ . — Երագած լե-
րան ստորոտը շինուած Ապուածին վանքին
վանահայրն, որ կը համարուի Ո՞աթուսա-
ղայի աշակերտ և կոմիտաս կաթողիկոսի եղ-
բօրորդին : Երկասիրած է քանի մի ճառեր,
այն է Աերբողեան ՚ի տուրբ խաչ ապուածընկալ,
նմանողաւթեամբ Դաւիթ Ենյաղթի ճառին.

Գովեստ Դ առաջին Արքուածածին և իշխան Անդրիամ ,
և Շահ , ինչ ինչ մոլորութեանց գէմ : Ուն
ողորոսին աշակերտած են Աահակ և Յով
հան (իմաստասէր) կաթողիկոսները , յարաց
վերջինն թէոդորոսի վրայ խօսած ժամանակ
Ալ արժապետ վեհագոյն և յիշտուծոյ պար-
գեւեալ հայր ո կանուանէ և կը դրուատէ
նորա աննախանձ և մեծաջան ուսուցչու-
թիւնը :

ԱՌՎՍԵՍ ՍԻՒՆԵՑԻ . — Հայկականին հետ
աեղեակ և յունական գպրութեան , որ և եր-
բեմն Քէմիող կոչուած է քանի մի մատենա-
գրաց մէջ : Աիւնեցոյն կընծայուին ձեռա-
գրաց մէջ Ճարտասասնուկան և քերականական
գրուածքներ և նա և խորենացւոյ Պիտիյի Գիրքն :

ԳՐԻԳՈՐ ԱՐՃԱՐՈՒՆԻ . — Աահակ կաթողիկ
կոսի ձեռնադրութեամբ եպիսկոպոս կը կար-
գուի Արշարունեաց գաւառին և Ա ահան
Լամսարականի խնդրանօք կը շարագրէ Անկ-
ունիւնիւն ընկերուածոյ , որուն մէջ կը խօսի
ազգային և յունական տօներուն վրայ : Ար-
ցաւինք որ սոյն օրինակ երկասիրութիւնն
տակաւին տպագրուած չէ : Ասողիկ կ'ա-
սէ որ Անդրսեհ Լամսարականի խնդրանօք
գրած է , իսկ Լամրջաձորեցին՝ Յովհան
Իմաստասիրի , սակայն գրուածքին մէջ Ա ա-

Հան կամսարականը գրուատուած է՝ որպէս
Հասկաւ և իմասդութեամբ ծերունի և յիւսպուծոյ
պարգեւեալ թագուար աղջին . և նորան նուիր-
ուած է երկասիրութիւնը : Պրիգոր ներ-
կայ գտնուած է Յովհան (Օձնեցւոյ կամ
իմաստասիրի ՚ի Ուանազկերտ գումարած ժռ
զովին , որուն վրայ պիտի խօսինք իւր ժա-
մանակին :

ՓԻԼՈՒ ՏԻՐԱԿԱՑԻ ԿԱՄ ՇԻՐԱԿԱՑԻ . — Ներ-
սեհ կամսարականի խնդրանօք յունարենէ
հայերէն թարգմանած է յոյն եկեղեցա-
կան պատմիչ Ոոկրատ Ոքուստիկոսի գըր-
ուածքը , որ եօմն գիրք բաժնուած է և
Լշւերիոսի համանուն գրոց շարայարութիւ-
նըն կարէ համսարուիլ , կրստանդիանոսի մա-
հէն մինչեւ Խէոդոսի կայսերութիւնը : Այս
թարգմանական աշխատութեան մէջ իւր
կողմէն խօսած է Փիլոն՝ Փլաքիանոսի , Լշ-
ակիքէսի և Լշիեսոսի ժողովոյն վրայ (1) :

ԱՍՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶՈՒՖՈՐԵՑԻ . — Քրի-
թենաւորի աշակերտ , որոյ անձնադիր հայ-
րապետութեան վրայ պիտի խօսիմք յաջորդ-
Շըշանին մէջ . իսկ նորա երկասիրութիւնքն

(1) Սոկրատոս գրոց հարազատ թարգմանութիւնը կը
դանուի առար Աթուցո գրատան մէջ :

են Հագարացի Այսհմատ ուստիկանին վրայ գրած Խողովն , զոր կ'աւանդէ Դեւոնդ Արքացւոց Արշաւանաց պատմիչն . Ճ'առ Արմաւենեաց կամ Ողոգոմեան (Շ)ազկազարդի) տօնախմբութեան վրայ և Ծարական նաւա կատեաց Ա . Խաչի . Որչափ որ մոտագիր ենց պատեհ առթիւ առանձինն խօսիլ Հայաւ տանեայց Ակեղեցւոյ աստուածպաշտական Նուագարանի կամ Ծարակնոցի և Ջամագրոց պարունակութեան վրայ , այնու ամենայնիւ աւելորդ չենք համարիլ Այսհակաց Երկասիրած Խաչի շարականաց վրայ քանի մի խօսք ասել : Խաչի շարականները մեր Ակեղեցւոյ աստուածպաշտութեան ընտիրնուագները կը կաղմեն , որոց իմաստները վսեմ են և սքանչելի , քրիստոնէական ոգին ողջումիւ և ուղղախտհ , ներբողական գարձուածները վայելուչ և սրտառուչ : Վասն զի , համարեաթէ իւրաքանչիւր տան մէջ կը յիշուի Խաչի և Խաչելութեան մեծ խորհուրդը մարդկութեան համար . իւրաքանչիւր տան մէջ մը խիթարութիւն և քաջալերութիւն փրկութեան :

Խաչը նկարագրուած է որպէս վէմ հիման Ակեղեցւոյ և միանգամացն որպէս զոհարան և սեղան սրբութեան , ուր մատուցաւ ճշմարիտ պատարագ և զենքամն անպատիան :

Խաչը նկարագրուած է որպէս պատակ վաւ-
ռաց Ակեղեցւոյ , որպէս պատակ եղեալ՝ ի
գլուխ մեղուցելոց , վայելուչ երանգօք ներ-
կեալ — արեամբ և ջրով :

Խաչն նկարագրուած է որպէս նշան Ա-
կեղեցւոյ ի հոգեւոր զինուորութեան և որ-
պէս զէն յաղթութեան՝ սրեալ արեամբ
Որդւոյն Յառուծոյ :

Խաչն նկարագրուած է որպէս աթոռ և
բազմոց տէրունի , որպէս կառք անպատում
և ընդունարան անքննելի խորհրդոյն մար-
դասիրութեան Հիսուսի և փրկութեան տի-
եզերաց :

Խաչն նկարագրուած է որպէս փայտ կե-
նաց՝ զի՞րիստոս պտղսրերող , որպէս յոյս
հաստատութեան , որպէս գաւաղան մեղաց
ծովու անդունդը պատառող , որպէս առաջ-
նորդ . և կարապետ քրիստոնէական կենաց և
բանալի արքայութեան :

Խաչն նկարագրուած է որպէս աշխար-
հակեցոց նշան և քօրութիւն աշխարհի մէջ
տնկուած՝ խաչելութեամբ Փրկչին , որ բազ-
կատարած կը կոչէ իւր մարդասէր թեւոց
տակ վաստակեալները և բեռնաւորները—
առհասարակ վշտաչարչար մարդկաւթիւնը :
Այս կոչէ աշխարհակալները , որ գան և մար-
դասիրութիւն սովորին խաչի պատուանդա-
նին տակ : Այս կոչէ աշխարհասէրները և անձ-

նասէրները, որ գան ողպրմանութիւն և անձ
նանուիրութիւն ուսանին խաչի առջեւ։ Կը
կոչէ Ճշմարտութեան և արդարութեան հա-
մար հայլածեալները, որ գան խաչերցն նային
և սփոփուին։ Կը կոչէ մեղաւորները աշ-
խարհի մէջ վշտացածներն ու յուսահա-
տաճները, որ գան թողութիւն և ապաւէն
գոտնեն ներող Փրկչէն և ուսանին, որ սրտի
խաղաղութիւն և հոգւոյ երջանկութիւն չը-
կայ առանց խաչի։

Այս ապաքէն այս փրկչական հրաւերնե-
րու գեղեցիկ պատաժանն է այն միսիթա-
րական և քաջալերական տողերը, որ խաչի
շարականաց իւրաքանչիւր տան մէջ կը կըրկ-
նուին։ — Եկէք ժողովուրդ, երկիրպագենք
Քրիստոսի Աստուծոյ, որ խաչիւ պարզեւ
շնորհեց աշխարհի։ Եկէք, յաղթական և
նոր օրհնութիւն երգենք Քրիստոս թագա-
ւորին, որ իւր խաչիւ յաղթեց աշխարհի
և ճանապարհ բացաւ մեզ յաղթութեան։
Եկէք, ժողովուրդ, սուրբ խաչն օրհնենք,
որ մեր փրկութեան համար կանգնեցաւ։
Այսպիսի իմաստներով զեղուն են խաչի շա-
րականները, որ յայտնապէս կը քարոզեն հե-
ղինակի քրիստոնէական զգացմանց կատա-
րեալ զարգացումն։

Սահակ կաթողիկոսով կը վերջանան Զդ և
Եղ. դարերու մատենագիրները, որոց անուն

ները և գրուաճքները նշանակեցինք . ռակայն
կը ցաւինք որ շատերու վաստակները տը
պագրուած չը լինելուն և ձեռագիրներն առ
ձեռն չունենալուն պատճառաւ՝ չը կարա
ցինք աւելի ընդարձակ ծանօթութիւն տալ :

Ս Ա Ր Բ Ո Ր Դ Շ Ր Ջ Ա Ն

Հայութանեաց Եկեղեցւոյ Յունականութենէ եւ
Մահմետականութենէ կրած հաշտանցիքին միջեւ կա-
թոցիկառիան Աթոռոյ փախակըսւթեան եւ բաժանմա-
ներքին յուջումներն :

640—1080

Ա .

Ընդհանուր ակնարկ ոյն Ըրջանին վրայ . — Արշաւանք
Արքացւոց 'ի Հայութան . — Կաթողիկոսութիւն Դերօֆ-
սի Ընտղի . — Ժողով 'ի Դուքին . — Յարձակումն Արա-
բացւոց 'ի Հայութան . — Կրօնական հալածանք կոստան-
դին Կոյսեր Յունաց . — Ժողով 'ի Դուքին . — Ժողով
'ի Մահապետութիւն տօնի Վարագոյ
Ա . Խաչի . — Կաթողիկոսունք Անաստաս . Իսրայէլ և Աս-
հակ Զորագորեցի . — Տառապանք Եկեղեցւոյն Հայոց
'ի Յունաց և 'ի Հագարացւոց . — Կայսնաւորութիւն
Սահակ համոզիկոսի և թուղթ աղաջանաց առ Մահ-
մատ զրագար . — Կաթողիկոսութիւն Եղիայի Արքի-
շնչեց . — Կաշմ սատիկան և այլումն նախարարաց և
ժողովրդոց Ակեղեցին Ղափիշեւանի . — Կահասակո-
թիւն Վահանայ Գողթնացւոյ . — Երթ Եղիւ Կո-
թողիկոսի Անդուան :

ՀԱՅԱՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՆ պարսկա-
կան մոգակրօնութենէն կրած հալածանք-
ներէն աւելի սաստիկ հալածանքներ կը կրէ
Վրաբացի Խալիֆայից , Ամիրապետաց և Խ-
տիկանաց տիրապետութեան ժամանակ . Հա-
ղարներով և բիւրերով սպանութիւնք , գե-

բեվարութիւնք, և ընդ նմին հրձգութիւնք
 և աւերմունք դարերով կը շարունակին Հա-
 յաստանի մէջ։ Ճա՞ւ է ասել, որ քրիստո-
 նեայ Յունաց ատելութիւնն եւս Ո՞ահմե-
 տական հարստահարութեան հետ անընդհատ
 կը զայրանայ Հայաստանեայց Եկեղեցւոյ զա-
 ւակաց դէմ և մեծամեծ վրուվմանց և ա-
 զէտից պատճառ կը դառնայ ։ Հայոց իշխան-
 ներն ու եկեղեցական հովիւները, ժողովր-
 դեան և Հայրենեաց անդորրութեան համար
 կը ստիպուին երբեմն Յունաց կայսերնե-
 րուն դիմել և երբեմն արաքացի Ամիրապե-
 տաց, բայց երբէք երկիրը տեւական խա-
 զազութիւն ըստանար։ Թէ Յոյնք և թէ
 Արաքացիք միշտ կը չանան Հայոց ազգն ու
 Եկեղեցին ստրկաբար հպատակեցնել և քա-
 զաքական ազատութեան հետ հոգեւոր ա-
 զատութիւնն եւս բառնալ։ Այս ժամանա-
 կաց մանրամասն դէպքերը, որոնք սոսկումն
 կը պատճառեն, Ազգային Պատմութեան
 կը թողունք, և միայն Եկեղեցւոյն հասած
 հարսւածները կը պատմենք։ Թէ եւ գի-
 տենք, որ անհնարին է բաժանել Ազգային
 և Եկեղեցական Պատմութիւնը, ըստ որում
 երկուքն շարունակ մի հոգի և մի մարմին
 կազմած են և Հայոց դիմադրութիւնն ու
 կրած կոտորածներն առաւել խղճի և կը
 բօնի ազատութեան համար եղած նահատա-

կութիւններ են, քան թէ աշխարհային իշխանութեան համար եղած պատերազմներ։

Այնչդեռ քաղկեդոնական հրապուրանքները կը յուղին Եզրի կաթողիկոսութեան ժամանակ՝ Արաբացիք Տարօն կ'արշաւեն և բազմաթիւ Հայք կը կոտորեն, որոնք, հաւատոյ պաշտպանութեան համար, Վահան Կամարականի առաջնորդութեամբ դէմելած էին, որով և կոտորածի տեղին Առ-բիթ բանակ կը կոչուի։ Տարօնէն կ'արշաւեն ՚ի Դիբեին, ուր էր կաթողիկոսական աթոռն, և Եզր վախճանած՝ տակաւին կաթողիկոս չէր ընտրուած։ Ի՞ստին աւերմունքներ և կոտորածներ կը հասցնեն, 12,000 հոգի կրսպաննեն և 35,000 հոգի գերելով՝ կը դառնան յԱրաբիա։ Տակաւին անկելոց դիակները անթազ՝ կը ժողովին Հայք՝ Տայոց Կերսէս եպիսկոպոսը կաթողիկոս ընտրելու, բայց նա, Եկեղեցւոյ և Պատի դառնաղէտ վիճակէն զարհուրելով, կը հրաժարի։ Ի վերջոյ թէ ոգորոս Ուշտունւոյ և այլ նախարարաց աղաւանքէն ստիպուելով՝ կ'ընդունի Պատի առաջարկութիւնը և կաթողիկոս կը ձեռնադրուի։ Աղրընտիր հայրապետը լալով կը թաղէտնեալ դիակները, և ապա կրսկոի քանդած տաճարները նորոգել և եկեղեցիներ շինել ՚ի Վաղարշապատ և յԱրտաշատ, որոց համար և Շնոր կը կոչուի։

Ներտէս, (645 ին) իւր կաթողիկոսուն
թեան ջդ տարին, եկեղեցական ինչ ինչ
ինդրոց համար, ժողով կը գումարէ Դուռնայ
մէջ, ուր կը հաւաքուին 70 եպիսկոպոսունք
բազմամիւ եկեղեցականք և իշխանք։ Եյս
ժողովին մէջ նախ կը մերժուի քաղկեդոնա-
կան ժողովը, որոյ յուղած երկպառակու-
թիւնքը տակաւին կը շարունակուէին, ե-
կեղեցական ժառանգաւորաց պարագուց հա-
մար կանոններ կը խմբագրուին և ապա ընտ-
րութիւն կը լինի Յարականաց, որոց թիւը
խիստ բազմանալով տեղի տուած էր ժա-
մերգութեան խանգարման և երկարաձգու-
թեան։

Հագարացիք վերստին կը յարձակին ՚ի
Հայաստան և Հայք հպատակիլ կը խոստա-
նան, եթէ ազատ թողուն իրենց Արօնը և
Եկեղեցին։ Առաջան Յոյնք կը կատադին Հա-
յոց հպատակութեան վրայ, և Կոստանդին
կայսրն բազմաթիւ զօրքով Հայաստան կը դիմէ
սպառսպուռ ջնջել ազգը։ Հայք յերկիւզէ
մտերմութիւն կը խոստանան Յունաց (և այս
մտերմութեան լուրն յետ ժամանակաց Մա-
քիա հասնելով Միհրապետը Հայոց 1775
պատանդները կոտորել կը տայ), սակայն
կայսրն այս խոստումով չը բաւականալով
և Հայոց նեղ վիճակը յարմար տորիթ հա-
րելով իւր հետ բերած քահանայից կը հրա-

մայէ պատարագել և զՆերսէ կաթողիկոսն
կըստիպէ հաղորդիլ ըստ յունական արարո
ղութեան , որուն ակամայ կը հնագանդի
խեղճ հայրապետն . բայց եպիսկոպոսներէ
մին Հաղորդութեան համար կ'ընդդիմանաց
կայսեր և պատճառ կը բերէ , որ կաթողի
կոսի հաճութիւնն եւս ակամայ է , վասն
զի ինքն յատուկ ժողովով մերժած է քաղիե-
դոնիկութիւնն :

Կացսրը բազմաթիւ զօրք կը թողու Հա-
յատանի մէջ , որպէս զի զինու զօրութեամբ
առդը յունական ծիսից վարժեցնեն : Հայք
այնչափ կը զզուին այս զօրականաց անարդա-
կան և լիտի վարմունքէն , որ կըստիպուին
քաղկեդոնիկութիւնն և անհաւատութիւն
համանուն ճանաշել : Ոօրական վերակա-
ցուները կը բողոքեն կայսեր , և նա սպառ-
նալից հրովարտակ կը դրէ Հայոց հայրապե-
տին և նախարարաց : Այս հրովարտակին
համար վերստին ժողով կը գումարուի Դու-
նայ մէջ , ուր բոլոր ժողովական բազմու-
թիւնը միաբարբառ կ'աղաղակէ . « Ո՛եք նոր
աւանդութիւն ոչ ընդունիմք , զոր ինչ ըն-
կալեալ եմք վարդապետութիւն հաւատոց
յառաքելոց մերոց ՚ի թագէոսէ և ՚ի թա-
գուղիմէոսէ և ՚ի սրբոց Լուսաւորչէն և յե-
րից ժողովոց և ՚ի սուրբ թագմանչաց մե-
րոց , զայն միայն ունիմք հաստատուն , զայը

ինչ ոչ կարեմք յանձն առնուլո . և կայսեր վրայ թուղթ կը դրեն և կ'ազաշեն , որ թոյլ տայ իրենց հաւատոյ մէջ մնալու , ինչպէս Պարսից թագաւորներն կաւատ և խոսրով թոյլ տուին :

Այս թղթէն յետոյ Յունաց վերակաւ ցուքն . եւս առաւել կը նեղեն Հայերն և Ներսէս իւր հայրապետութենէն կը հրաժարի և Յովհաննէս Վանագիերտացին կը աեղապահէ : Յովհաննէս , մայրենի եկեղեցւոյ նախնականութեան նախանձով վառաւած , տեսնելով թէ յունական սովորութիւններ կը սպրդին տեղ տեղ և ինքն չէ կարող յայտնի ժողով գումարել Դունայ մէջ , ուր կը բանակէր Յունաց զօքն , կը հեռանայ Վանագիերտ և ժողովով կը պատուիրէ իւր հօտին պնդոփոխ պահպանել նախնական առանդութիւնքն , ինչպէս են Հաղորդութեան Խորհուրդն (անջրախառն և անխմոր) , Ծննդեան և Յայտնութեան տօնի կատարման ժամանակն (Յունուարի) , և պահոց հայկական առանձին սովորութիւններն :

Ներսէս վեցամեռայ հրաժարմանէն զինի վերսաին կը շարունակէ իւր հայրապետութիւնն և կը հաստատէ տօնախմբութիւն Վարագայ Ա . Խաչի , որ Վարագայ լերան վրայ լուսեղէն նմանութեամբ երեւեցած էր

Թաղթիկ ճգնաւորին (1)։ Կերաէս (661) կը վախ
ճանի և ընտրութեամբ Ազգին տեղը կը յա-
ջորդէ նորա սենեկապետն Ենաստաս Երկու-
սի գեղջէն։ Այս հիւրանոցներ և մենաստան-
ներ կը հաստատէ քանի մի տեղ, (որուն ա-
ջակից կը լինի Դրիգոր Ամմեկոնեան, Երա-
գածուն լերան ստորոտն Երուած աւանի մէջ
նոյն օրինակ չէնքեր կառուցանելով) և Ենա-
նիա Հիրակացւոյն կը յանձնէ Հայոց Տոմարը
կատարելագործել, որոյ ինչ ինչ խանդար-
մունքներն զգալի էին, բայց տակաւին գոր-
ծոյն վախճան չեղած՝ ինքն կը վախճանի և
տեղը կը յաջորդէ Խարայէլ Վանանդեցի, Ա-
թըմսոյ գեղջէն, որ ներկայ եղած էր Դա-
նայ ժողովին, Եերսէս Հինողի հայրապետու-
թեան ժամանակ։ Խարայէլ տասնամետայ կա-
թողիկոսւթենէն զինի կը վախճանի և կը
յաջորդէ Ահակաք Զորափորեցի, (677)։

Այսակայ հայրապետութեան ժամանակ
աղէտները կը ասստկանան։ Այս կողմէն կը
յարձակին Խազիդք, մի կողմէն Յուստինի-

(1) Ազգային աւանդութիւնը կը պատմէ, որ այս խաչը
պահուած էր Վարագայ մերան մէջ, Հռիփոփմեանց կու-
սանաց հալածանաց ժամանակէն. բայց որովհետեւ Գիւտ խա-
չին Սկեծին կոստանդիանոսի օրով եղած է, Հռիփոփմեանց
նահատակութենէն զինի. ուստի կ'աւանդուի որ յԱռաքելոց
ժամանակէն մասն ինչ խաչափայտին ձեռքէ ձեռք անցնելով
հառած է Հռիփոփմեանց, որոնք իրենց վախճանան ժամա-
նակ ծածկած են Վարագայ մերան մէջ։

անոս. թ. կայսրն. Յօւնաց բազմաթիւ գորք կ'ուղարկէ Հայաստան, որք հրով և գերութեամբ կը քանդեն Հայաստանի 25 դաւառներն և 8,000 առւն գերելով կը վտճառեն յօտար երկիր, և միւս կողմէն Հագարացիք, ԱՌԱմատ զօրավարի առաջնորդութեամբ, կ'ասպատակեն մեր երկիրն, և ժողովուրդը դառն հարուածներէն ստիրպուած հապատակութիւնն կը խոստանայ: Աակայն Յօւստինիանոս առաւել զայրանալով այս հապատակութեան վրայ՝ ինքնին զօրօք Հայաստան կ'արշաւէ, Աահակ կաթողիկոսը հինգ եպիսկոպոսաց հետ կը կալանաւորէ, և ապա արձակելով խոտիւ հրամաններ կը տայ և կը դառնայ ՚ի Պօլիս պատանդերով հանդերձ:

Հայաստանեայց Եկեղեցին այսպէս կը տառապի յունական և հագարական երկու սուրբին մէջ, թշնանք և կաթողիկոսունք կը շուարին և կը տատամնին: Յուստինիանոսի գործած անգեթութիւններէն մի քանի տարի յետոյ արաբացի Ամիրապետն՝ Աբդը անուն զօրավար մի կը զրկէ, որ նախ քաղցրութեամբ կը վարի, ապա շատերը կը գերէ, Աահակ կաթողիկոսը շղթայակապ Դամատւ կոս կ'առաքէ և Արարատեան գաւառի բոլոր Եկեղեցեաց սպասները կը կողոպտէ: Կը նահատակէ Դաւիթ Դուռնեցի, որ պարսիկ

զարմէ էր և ՚ի հայ մօրէ , և Անաստաս կա-
թողիկոսի ժամանակ , Դրիգոր Անմիկոնեանի
կնքահայրութեամբ քրիստոնեայ դարձած էր
և ՚ի ՚լուին նահատակուելուն պատճառաւ՝
՚լունեցի կը կոչուի :

Երդլսայէն զկնի՝ կը դիմէ ՚ի Հայաստան
Անհմատ Ոգբայ , Ամիրապետէն հրաման ու-
նենալով , եթէ հնար է Հայ ազգը իսպառ
ջնջել : Աահակ կալթողիկոսն , Դամասկոսի
մէջ կալանաւորուած , այս աղէտալի գոյժն
լսելով , կը ցանկայ Անհմատին հետ տեսմեր
ուիլ և հրաման ստանալով , շղթայակապ
ընդառաջ կ'ենէ զօրավարին . սակայն ճա-
նապարհին հիւանդանալսվ՝ կը վախճանի +
իշրանելի հայրապետը հիւանդ ժամանակ
աղաւանաց գիր կը գրէ և կը պատուիրէ մե-
ռած ժամանակը իւր ձեռքը դնել : Անհմատ
հայրապետի վախճանը լսելով , ինքն տեսու-
թեան կը գայ . ողջունելով՝ աղաւանաց գիրը
ձեռքէն կ'առնու իբրեւ ՚ի կենդանւոյ + Ան-
գլութիւնը կը խոնարհի կարեկցութեան
առջեւ , հագարացի զօրքերով երանելոյն
մարմինը Հայաստան կ'ուղարկէ Անհմատ
և կը խոստանայ գրած աղանջանքը կատարել .
որով և Ամիրապետի հրամանը , Հայ ազգը
ջնջելու համար , ՚ի բաց կը թողու .

Աահակին կը յաջորդէ Եղիա Երժիշեցի ,
Բզնունեաց գաւառէն (704) : Աորա կա-

Թողիկոսութեան ժամանակ , անլուր չարիք
 կը գործէ Հայաստանի մէջ Լաշմ ոստիկանը ,
 որ բոլոր նախարարները Նախիջեւանի եկե-
 ղեցին կը գումարէ , որպէս թէ խաղաղու-
 թեան դաշն կապելու համար , սակայն յե-
 տոյ անգթաբար եկեղեցին կը հրդեհէ և
 բոլոր բազմութիւնը հրոյ ճարակ կը տայ ։
 Անմեղ զոհերը կը ճենճերին լափիզող բո-
 ցերու մէջ , ճիշն ու աղաղակը մինչեւ երկինք
 կը բարձրանան և ՚ի վերջոյ եկեղեցւոյ փլա-
 տակներուն տակ կը փոշիանան , եկեղեցւոյ
 ազատութիւնն ստրկութեան չը մատնելու
 համար ։ Անգութ բռնաւորներն այս տեղէն
 կը դիմեն՝ ՚իունայ վրայ , կ'աւերեն և կ'աս-
 պատակեն , շատ այր և կին կը գերեն և շա-
 տերը կը նահատակեն չուրանալու համար ,
 ինչպէս էր Վահան Լամարականի Շուշան
 գուստըն ։

Այս դառնաղէտ հալածանքներէն յետոյ
 Հագարացիք բոլորովին կը տիրեն Հայաս-
 տանին , Օմարի Միրապետութեան ժամա-
 նակ , և աշխարհի կառավարութիւնը Աստի-
 կանաց ապաստան կը լինի ։ Արաբիայէն կը
 դառնան Հայոց կենդանի մնացած գերինե-
 րը , ընդ որս և Վահան Գողթնացի , ՚իող-
 թանայ տեառն խօսրովի որդին , որ ՚ի տը-
 ղայութեան բռնի տաճկացած լինելով կը ը-
 կին իւր քրիստոնէութիւնը կը շարունակէ ,

սակայն յետ ժամանակաց կը կոչուի Ամիրաւ
պետէն և Որուծափ քաղաքի մէջ կը գլխատ-
ուի հաւատոյ մէջ հաստատուն մնալուն
համար :

Եղիա կաթողիկոս , որչափ ժամանակը և
գէպքերը կը ներեն , հայրապետական ծանր
պարտքերը կատարելու կը ջանայ , կը ճանա-
պարհորդէ Եղուանք՝ ինչ ինչ խռովութեան
պատճառաւ , տեղւոյն Արմէօն նորընտիր
կաթողիկոսի հետ ժողով կը գումարէ եկե-
ղեցական բարեկարգութեան համար և մօտ
15 ամեայ կաթողիկոսութենէն զինի՝ կրվախ-
ճանի և իրեն կը յաջորդէ (718) Յովհան-
նէս Դ. (Օձնեցի , Տաշրաց գաւառէն , Ինո-
գասելի մականուանեալ :

Բ.

Կաթողիկոսութիւն Յովհաննու Իմաստասիրի . — Պառ-
լիկեանք . Արեւորդիք և Եղիսոք . — Ժողով՝ ՚ի Դուին .
— Յովհան Իմաստակը առաջի Ամիրապետին . — Կա-
թողիկոսունք՝ Դաւիթ Ա . և Տրդատ Ա . — Տառապանք
՚ի Հագարացւոց . — Կաթողիկոսունք՝ Տրդատ Բ . և Սիօն .
— Ժողով՝ ՚ի Պարտաւ Աղուանից . — Եսայի կաթողիկոս .
— Նահատակութիւն Արծրունի իշխանացն Համազաս-
պայ և Սահակայ . — Բողոք առ Ամիրապետն . — Կաթո-
ղիկոսունք՝ Մտեփաննու Ա . Յովհաբ . Սողոմն . Գէպք
Հոյլորբուկ . Յովսէֆ Բ . և տառապանք իւր . — Կաթո-
ղիկոսունք՝ Դաւիթ Բ . Յովհաննէս Ովայեցի . — Տառա-
պանք Եկեղեցւոյն և Ազգի ՚ի Բռուխաց Ոստիկանէ . —
Նահատակութիւնք . — Մտեփաննու Այսն . Ամրատ Խոս-
տովանող . — Կաթողիկոսութիւն Զաքարիայի կոտայե-
ցւոյ :

ՅԱՌԱՋՔԱՆ ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ
Հայրապետութեան ժամանակի դէպքերու-
և Եկեղեցական վիճակի վրայ խօսիլը՝ կարե-
ւոր կը համարինք ասել, որ Ներսէս Ծինողի
ժամանակէն ՚ի մեր Հայաստանի հարստա-
հարութեան միջոցին քանի մի տեսակ նո-
րամուտ աղանդներ յղացած էին, քաղկեդո-
նականաց յուզած տարրապարտ վիճմանց և
Անիքեցի Պաւլիկեանց դարանամուտ որում
նացանութեանց չնորհիւ , որոց հակած էին
և ոմանք պարզամիտ հայերէն : Այս մոլո-
րութեանց հետախուզութիւնը և նկարա-
գրութիւնը մեր նպատակէն արտաքոյ է ,

վասն զի ժամանակակից պատմութեանց
նայեցով խիստ այլանդակ խոտորմունքներ
կը պարունակեն : Այս այսչափ հարկ կը
համարինք ասել, որ սոցա խումբը զանա-
զան ազգերէ կազմուած էր և հետեւապէս
տհաս մտաց զանազան քմանին խառնուր-
գէ , որոնք մեր ազգի բազմատագնապ վիճա-
կը ապահով միջոց համարելով՝ զանազան
երկիրներէ ժողոված դարանակալած էին
Զբկայ լճակին մօտ : Այս մէկ մասն Արեւ-
ոդիւ կը կոչուէին , գուցէ արեգակն և լու-
սին յօգնութիւն կոչելու համար . ոմանք
Եղիպատր , Հագարացոց կրօնքէն քանի մի բան
ընդունելուն համար . և այսպէս բազմանալով
սկսած էին Ասորոց , Արաբացոց և Հայոց աշ-
խարհին մէջ տեղ տեղ յուզել պարզամիտ-
ներու սիրութ : Թողունք ասել քաղկեդոնա-
կանաց բորբռքած խռովութիւնքը , որ եր-
կար ժամանակէն 'ի վեր կը շարունակուէր :

Յովհան Խմաստասէր երբ հայրապե-
տութեան աթոռը կը բարձրանայ , առա-
ջին մտածութիւնն կը լինի այս ներքին շա-
րեաց առաջն առնուլ , որ արտաքին հալա-
ծանքներէն առաւել կարստական էր : Իւր
հայրապետութեան երկրորդ տարին ժողով
կը գումարէ Դուին մայրաքաղաքին մէջ , և
հանգիստականաց առջեւ ընդարձակ ատե-
նաբանութեամբ կը սկսի պատկերացնել

Եկեղեցւոյ վիճակը, կ'առաջարկէ երեսուն
Երկու կանոններ, որոնք կ'ընդունուին ժողովականներէն. կը մերժուի նաև սոյն ժողովին
մէջ քաղեդոնիկութիւնն, որ տեղ տեղ ըստ
պրոդած էր Յունաց բաժնի Հայոց մէջ (1),
և ապա կ'արձակուի ժողովը.

Ինչպէս Յովհան Իմաստասիրի, նոյնպէս
և այլ ազգային ժողովական կանոնաց վրայ
չենք ուզեր խորհրդածել. վասն զի չունինք
առ ձեռն նախնական ձեռագիրներ և Վե-
նետիկեան տպագրութեանց եւս չենք կա-
րող անկասկած հառատ ընծայել: Քրեմն
կանոնական քննութիւնը զանց առնելով՝
պատմութեան թելը շարունակենք:

Վ լիմթ ոստիկան կը դառնայ առ Ամիրա-
պետն և կը ջատադովէ զՅովհան իմաստա-
մէր, այնպէս որ Ամիրապետն կը փափաքի իր
աչքով տեսնել և առ ինքն կը կոչէ զՀայրա-
պետն: Յովհան Իմաստասէր կ'երթայ Ամի-
րապետին և իր պատկառելի կերպարանքով,
շքեղ հագուստովէ և վայելուչ վարմունքով
ազդեցութիւն կ'առնէ Համգարացի տիրաւ-
պետին վրայ և մեծ ընդունելութեամբ կը
մեծարուի: Աակայն Ամիրապետն արտաքոյ
կարգի շքեղութիւն նշմարելով հայրապետի
վրայ և քրիստոնէական կրօնի քարոզած պար-
զութեան և աշխարհային անփառասիրու-

(1) Ատեփան Ասոցէկ: Ահեայէլ Ասոցէ:

Թեան վրայ մատնաւոր ծանօթութիւն ունենալով՝ կը հարցնէ Իմաստասիրին. « Ի՞նչ է պատճառն, որ ձեր կրօնքը պարզութիւն և անձնուրացութիւն կը քարողէ, և սակայն դուք շքեղութեամբ կը փայլիք ո» : « Պատճառն այն է, կը պատասխանէ հայրապետն, որ առաջին դարուց քրիստոնէական սրան չելիքները չեն կատարուիր մեր ձեռքով, և ժողովուրդն եւս մեր արտաքին կերպարանքէն և հանդերձէն միայն կ'ակնածէ . ուստի այսպէս կը զգեստաւորիմք, որ գոնէ այտունուածեմք ժողովուրդն ՚ի բարին ո» . և ապա մեկուսանալով՝ կը ցուցնէ Ամիրապետին ՚ի ներքուստ զգեցած խարազն, որով և կը համոզէ թէ ՚ի ներքուստ դարձեալ կը պահպանեն կրօնի պատուերը, առանց անձնատուր լինելու փափկասիրութեան : Ամիրապետը կը զարմանայ, մեծ պարգեւներով կ'արձակէ, և ՚ի պատիւ այս սրտաշարժ տեսակցութեան անդորրութիւն կը խոստանայ Հայաստանին :

(Յովհան Իմաստասէր 11ամեայ կաթողիկոսութենէն զինի կը վախճանի և (729) տեղը կ'ընտրուի Դաւիթ Ա. Կոտէից գաւառէն Արամոնս գիւղէն :

Դաւիթ կաթողիկոս սաստիկ կը նեղի Ո՞հմատ խռովարար ոստիկանէն և ստիպուան կ'առանձնանայ իւր գեղն, կը կառաւ-

ցանէ հոյաշէն եկեղեցի գեղեցիկ բնակտը բանօք և յետ քանի մի ժամանակաց վերստին Գուշին կը դառնայ և 12ամեայ կաթողիկոսութեան պաշտօն վարելէն գինի՝ կը վախճանին

Դաւթին կը յաջորդէ Տրդատ Ա. Վանանդ գաւառի Ուժմաոյ գիւղէն, որոյ պար կեշտատէր վարուց վրայ գովեստիւ կը խօսին պատմիչք։ Տրդատայ կաթողիկոսութեան ժամանակ Հագարացիներէն սաստիկ տառապանքներ կը հասնին Հայաստանին։ Կը հըրամացուի եկեղեցեաց խաչերը վերցնել, գանձատունները կնքել, սուրբ ապասները վաճառել, գիշերային պաշտամունքներն արգելուլ, ուստամ գրոց խափանել, մորուաները գերծուլ, երկար գլխարկներ ծածկել արտաքոյ հայրենի սովորութեան, և կապարեայ կնիք կախել իւրաքանչիւր պարանոցէ ինշան ստրկութեան։ Այս չարիքները կը գործուին ինչպէս Երդլազիզի, նոյնպէս և Ազիտի ստիկանութեան ժամանակ։ Ոյնօրինակ հարստահարութենէ ստիպուած՝ կաթողիկոսն և նախարարները բողոք կը բառնան առ Ամիրապետն, բայց շահ չեն ստանար։ Ուստի և ողորմելի կաթողիկոսն այս աղէտներէն և սրտացաւութենէն հիւանդանալով կը վախճանի անմիսիթար։

Տրդատ Վանանդեցւոյն կը յաջորդէ Տըրդատ Բ. Դամնաւորեցի, Տուրուբերան գաւ-

ւառէն , ունենալով իւր կաթողիկոսարանի մէջ մի անուանի եպիսկոպոս Ախօն անունով։

Ախօն , որ արդէն յայտնի էր իւր հմտութեամբ եւ առաքինութեամբ , Տրդատի մահէն զինի (767) կաթողիկոս կը ձեռնադրուի Դուին քաղաքի մէջ փառաշուր հանդիսիւ , որուն ներկայ էր Ախուլէյման ոստիկանը :

Ախօն Աղուանից Պարտաւ քաղաքի մէջ ժողով կը գումարէ , ուրցականէ յանուանէ ներկայ էին Գ.է.որդ՝ Աստան եպիսկոպոս , Աստովիկ՝ Ախունեաց եպիսկոպոս , Եսայի Գողթան եպիսկոպոս . այլովք հանդերձ . և քանի մի իշխաննք – Աահակ պատրիկ Բագրատունի , Ատրիներսէն Ախունեաց տէր . Ամբատ Բագրատունի , Աներուժան Արծրունի , Վահրամ Խորիսոռունեաց տէր , Արտաւ ազդ Աշոցայ տէր , Վահան Վանանդայ տէր . Աահակ Գողթան աէր և այլք . – որոց հաւանութեամբ կը խմբագրուին 24 կանանք + (որոց մեծ մասն առաջաց կային) գլխաւորապէս հովուաց և առաջնորդաց պարտուց վրայ , և ապա Ա . Գրոց ընթերցանելի Գրքերը կ'որոշաւին :

Հայք դարձեալ կը նեղուին Հագարացիներէն , 700 հոգի կը կոտորուին և 12,000 կը գերուին : Կաթողիկոսը կը վախճանի և կը յաջորդէ Եսայի , Ամբ դաւառի Եղիպատ-

բուշ գիւղէն։ Եսայիի համար կը պատմուի՝
որ մայրն մանուկ հասակէն կը սնուցանէր
Դունայ կաթողիկոսարանի դրանը, և երբ կը
հարցնէին՝ թէ ինչու այդպէս բացօդեայ կը
սնուցանես և տուն չես մտներ, կը պատաս-
խանէր թէ, «կաթողիկոսութեան համար կը
սնուցանեմ, և արդէն իսկ տառապանաց կը
վարժեցնեմ»։ Եւ արդարեւ ազգի և եկե-
ղեցւոյ տառապակիր օրերուն մէջ՝ անձնա-
գիր հայրապետներն ամենէն աւելի տան-
ջանքներ կրած են։

Եսայիի կաթողիկոսութեան ժամանակ հա-
գարական անգթութիւնքը կը զայրանուն՝
Հարոն (Միրապետի հրամանաւ և Եզիտ
ոստիկանի (1) ձեռքով Արծրունեաց երեք իշ-
խաններն՝ Համազասպ, Ասհակ և Անրու-
ժան տանջանաց կը մատնուին և չարաչար
կը խոշտանգուին՝ հաւատը ուրանալու. վեր-
ջինը կ'ուրանայ, իսկ առաջին երկուքն ըս-
քանչելի արիութեամբ միմեանց խրախոյա-
կարգալով՝ կը գլխատուին Յայտնութեան
տօնին։ Ամանապէս քառասունէն աւելի
քահանայք և կրօնաւորք կը խողխողուին
Բագուան գիւղի մէջ, և տեղւոյն Ա. Պ. Պ.իւ-
գոր անուամբ եկեղեցին կը կողոպտուի։
Այսքան տառապանաց և հարկաց ծանրու-

(1) Ըստ Ղեւանդ պատմաբրի՝ հրամանաւ Մուսէի և
Առամբ խողիմոյ։

Թեան համար նախարարք Աշայի կաթողիկ կոսին հետ միասին կը բողոքեն Ամիրապետին, բայց անօգուտ : Հայրապետն կը վախ ճանփ, եկեղեցւց ստացուածքն ու սպառները քննութեան կ'առնուին ագարացի հրդամանատարի ձեռքով, եկեղեցականներն ատեան կը կոչուին, որ բան չը ծածկեն : Մսկեղէն ու արծաթեղէն անօթներն, ականակուռ զգեստներն և թագաւորաց հանդերձները, որոնք պահուած էին գանձարանի մէջ, հրամանատարի արիւնարբու ագահութեանը զոհ կը լինին, որ կ'իւրացուցանէ պատուականները և ընտիրները, իսկ մնացեալներն ՚ի պահեստի կը դնէ :

Աշայիին կը յաջորդէ (788) Ատեփանոս Ա. Դունեցի . որ ըստ պատմութեան 'Ղեւոնդի կաշառքով կաթողիկոսանալով՝ կը ստիպուի ՚ի վերջոյ բողոր ստացուածքները ծախել և գրաւ դրած գիւղերն ու ծառաներն ազատել :

Ատեփանոս երկու տարի հազիւ կը մնայ կաթողիկոսական աթոռոյ վրայ՝ կը վախճանի և տեղը կը յաջորդէ (Յովաք կամ (Յոր Դունեցի, որ 16 ամիս միայն կ'աթոռակալէ :

(Յովաքին կը յաջորդէ Աղոմնն Գառնեցի Գեղարքունի գաւառուէն, որ մենաւորական կեանք վարած էր ցծերութիւն Ապքինոցաց (1) կամ Ապքենեաց մենաստանի մէջ :

(1) Այս անունը եւած էր միաբանից հագուստէն, որ

Եղբ կ'ասէին ծերունւցն ընտրութեան ժառ
մանակ՝ թէ դու ծեր ես, ինչպէս պիտի եր-
թաս Դուին և աթոռակալես . պատասխա-
նեց . « Խրթամ , զի գեղապահոյձ գեղով
նկարողաց սեւել զիս ընդ ոյլ հայրապետան
տամ յորմն եկեղեցւոյ ո (1) . Այսինքն կ'եր-
թամ , ոչ թէ հայրապետութեան համար , այլ
իրեւ ստուեր հայրապետաց , և կ'երթամ
մեռնելու համար , որով միայն պատկերս պի-
տի մնայ եկեղեցւոյ որմին վթայ (2) . և արդարեւ
մի տարիէն յետոյ վախճանեցաւ :

Ոսղոմնի տեղը կ'ընտրուի տէր Գէորգ
(որ և Հոյլորբուկ) Աշտարակ կամ ()շական
գիւղէն , որ երեք տարիէն զինի կը վախ-
ճանի :

Գէորգին կը յաջորդէ Յավակ փ գ . Արա-
գածոտն գաւառէն : Սորա հայրապետու-
թեան ժամանակ Խուզիմայ ոսաիկանը կը
ջանայ կաթողիկոսարանի կալուածները գրա-
ւել , և երբ կաթողիկոսը սաստիկ կ'ընդդի-
մանայ , կը ցանկայ ծախու առնել , բայց կա-
թողիկոսը կը պնդէ . որ եկեղեցական կալ-
ուածները ծախսելու իրաւունք չըկայ . վասն

ժամաներու բուբդէ կամ առուէ եր սովորաբար :

(1) Յով . կաթողիկոս :

(2) Գուցէ սովորութիւն կար նոյն ժամանակ՝ եկեղեցւոյ
պատին վթայ նկարել կաթողիկոսաց պատկերներն իրեւ
պատմական յիշտակարան :

զի մեծ մասը կոռացրւած են յարատեւ պահ, պանութեան յիշատակագրերով։ Աստիքանը կարեվէր խոցուելսվեղեռական չարութեան կը դիմէ, իւր ծառայն ծածուկ կը սպանանէ և յետ քանի մի աւուրց յանցանքը ՚Իունեցւոց վրայ կը ձգէ, կաթողիկոսն և այլ մարդիկ շղթայակապ կ'առնէ և կը նեղէ, և ՚ի գին արեան կալուածները կը պահանջէ, բայց հայրապետը դարձեալ չը զիջանիր։ ՚ Վերջոյ բանստէ հանել կը տայ, ՚ միրապետի առջեւ ամբաստանութեան ենթարկուելու երկիւղէն, և կաթողիկոսական կալուածներէն բռնի իրեն կը գրաւէ ՚ Յատաշատ աւանը, ՚ անազան չարիքներ կը հասցնէ աւանդապահ հայրապետին, եղբայրը սպանել և ծովակը ձըգել կը տայ, և ոլորմելի կաթողիկոսը վշտահարութենէն կը հիւանդանայ և կը վախճանի 11ամեայ հայրապետութենէն զինի։

Յովսէփին կը յաջորդէ (806) ՚ Դաւիթ թ. կակաղեցի, ՚ աղապայ գաւառէն, որոյ կաթողիկոսութեան ժամանակ կը նահատակուին ՚ Ահակ և Յովսէփ ՚ի հայ մօրէ և ՚ի պարսիկ հօրէ։

՚ Դաւիթ 27 ամեայ կաթողիկոսութենէն զինի կը վախճանի և տեղը կը նորուի Յովսէաննէս Ե. Ովայեցի, կոտայից գաւառէն, Բագարատ ՚ ագրատունւոյ ովատրկութեան կամ վերակացութեան ժամանակ։ Յովհանն

Նիսի վրայ ասպիրատ մարդիկ պարանութիւն
կը յարուցանեն, որուն կ'անսայ և Ի՞ազա-
քատ, ուստի և կաթողիկոսն ինքնին կը հրա-
ժարի աթոռէն: Ի՞այց երբ զբարտողաց մե-
զադրանքները քննութեամբ սուտ կ'ելնեն,
կրկին կը վերակոչուի ինդրանօք ազգին և
կը շարունակէ իւր պաշտօնը:

Յովհաննիսի կաթողիկոսութեան ժամա-
նակ Ամիրապետի հրամանաւ Ի՞ուխայ արիւն-
արբու և անգութ բռնաւորը մեծաթիւ զօր-
քով Հայաստան կ'արշաւէ այն պայմանաւ,
որ հայ իշխանները կալանաւորէ և Ամիրա-
պետին զրկէ, երիտասարդները (մանաւանդ
վայելչահասակները եւ քաջարազուկները)
մահմետականութեան դարձնէ, իսկ միւս-
ները սրամահ առնէ: Ի՞ուխայ (850) Հա-
յաստան մոննելով արտաքսյ կարգի անգթու-
թեամբ կը կատարէ Ամիրապետի հրամանը,
ասպատակ կը սփռէ Ասունի և Տարօնի գա-
ւառներուն մէջ ուրիշնախարարազանց հետ,
Ի՞ազարատի Աշոտ և Դաւիթիթ որդիքն ու-
գերդաստանը և Աքճրունեաց Աշոտ իշխանի
կինն ու որդիքն Ամիրապետին կը զրկէ, Վ առ-
պուրական նահանգի մէջ եւս, ինչպէս և ՚ի
Տարօն, շատերը տանջանքով յուրացութիւն
կ'ըստիպէ և անինայ կը կոտորէ: Այսնօրինակ
և առաւել գմնդակ աղէտներու կը հանդի-
պին նմանապէս Աքարատեան աշխարհն, Ու-

տի, Աղուանք և Դուին կաթողիկոսական ռ
թուանիստն, ուր անլուր արհաւիրքներէն
սոսկալով սմանք կը տկարանան հաւատոյ մէջ.
բայց բազմաթիւ վայելչահատակ իշխանք և
շինականք, երիտասարդք և կուսանք հաւա-
տոյ հատտատութեան համար զիրար կը քա-
ջալերեն, Ո՞ւցաք վասն Քրիստոն, կը գոչեն և
կը նահատակուին ուրախութեամք : Ե՞ւ-
պէս արիւնով կը ներկուի Հայաստանեաց
Եկեղեցին — քրիստոնէական հաւատոյ բազ-
մադարեան և բազմաչարչար Վ կայուհին, —
որոյ գլխին հալածանաց շանթեր և կար-
կուտներ կը տեղան. սակայն քրիստոնէական
սիրով ամենուն կը գիմագրաւէ և արիւնա-
թաթաւ վէրքերով աննկուն կը մնայ իր կոչ-
ման մէջ :

Ի՞ուխա, անպատում կոտորածներէն զինի
բազմաթիւ կալանաւորներ Ամիրապետին կը
զրկէ, որոնք գարձեալ բանտից և տանջանաց
կը մատնուին և շատերը կը մարտիրոսանան,
որոց մէջ յայտնի են մանաւանդ Այտեփաննոս
կըն և Ամբատ, որ հաւատոը չուրանալու հա-
մար՝ երկար ժամանակ բանտի մէջ կը մնայ և
այն տեղ կը վախճանի, որ և այս մասին կը
կօչուի Խոսքովանող, որոյ ողոդի Աշոտէն, յետ
սակաւ ժամանակի, կը սկսի Իագորատունեաց
թագաւորական հարստութիւնը :

Ի՞ուխայի արիւնահոս ասպատակութեան

և աւերանաց ժամանակ Յովհաննէս կաթու-
զիկոսն աթոռանիստը թողլով և գաւառնե-
րու մէջ տառապեալ ժողովրդին այցելու-
թեան և միսիթարութեան ենելով կը հի-
ւանդանայ Կեղարքունաց Աքբինոցաց մե-
նաստանի մէջ և 22 ամեայ կաթողիկոսու-
թենէն զինի կը վախճանի : Իսկ Ամբատ, որ
տակաւին Բուխային չէր ներկացացած, կ'ա-
ճապարէ և նոր կաթողիկոսի ընտրութեան
համար ժողով կը գումարէ Երազգաւորս
կամ Շիրակաւան գիւղի մէջ (որ միայն էր
ապահով նոյն գառնաղէտ միջոցին) տար բար-
մաթիւ ժողովոյ հաւանութեամբ կ'ընտրու-
սի Օաքարիա Կրտայեցին, և մի աւուր
մէջ (854ին) կը ձեռնադրուի սարկաւագ,
քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս : Ա ան-
դի կաթողիկոսութեան ընտրական իրաւունքն
ամենեւին խորութիւն չը դնէր եկեղեցա-
կանի և աշխարհականի մէջ, ըստ առաքելա-
կան սովորութեան Հայաստանեաց Եկեղե-
ցւոյ, ինչպէս յայտնի է նոյն իսկ Առւաւորւ-
չի և Անծին Կերսիսի ընարութեան պատ-
ճութենէն :

Դարձ գերեալ նախարարաց . — Թղթակցութիւնք Զա-
քարիա կաթողիկոսի Հայոց և Փոստ պատրիարքի Յու-
նաց . — Ժողով՝ ի Եփակաւան . — Կաթողիկոսութիւն
Գեորգայ Գառնեցւոյ և Թագաւորութիւն Աշուայ . —
Ակնարկ Բագրատունի Թագաւորութեան վրայ . — Գե-
որգ կաթողիկոս իբրև հաշտարար . — Կալանաւորութիւն
Նորա . — Մաշտոց Բ . Եղիշվարդեցի . — Յովհաննէս Դրաս-
խանակերտայի . — Կալանաւորութիւն Նորա Յուսուփ
ոստիկաննէն . — Հալած անք և տառապահը՝ ի Յուսուփայ .
— Նահատակութիւն Սմբատաց Խոստվանողի . — Պա-
շտումն Երնթակայ և կալանաւորութիւն Հայ տիկնանց .
— Բարբարոսութիւնք Յուսուփայ . և քրիստոնէական
մկանութիւն բաղմաց . — Տօն նահատակաց :

Օւակսորտաթ Կաթողիկոսութեան եօթնե-
րարդ տարին (862) գերուած և առ ահի հա-
ւատոյ մէջ տկարացած նախարարները Հա-
յաստան կը դառնան և Սմբատ Խոստովա-
նողի Աշոտ որդւոյ Իշխանաց Իշխան կարգուած
ժամանակ՝ կըսկսին համարձակապէս իրենց
քրիստոնէական կրօնքը պաշտել , որով . և
ըստ ասելոյ Յովհաննէս պատմաբան կաթո-
ղիկոսի՝ Եկեղեցին կըսկովիի իւր զաւակաց
գարձին և բարեպաշտութեան վրայ : “ Ձայն
հարսի և փեսայի լսելի լինէք . ծնան որդիս
և արարին պտուղ ” :

Սակայն այս միջոցին կ . Պօլսոյ Յունաց
Փոտ Պատրիարքը կըսկսի իւր առաջնորդաց

ձեռքով նեղել յունական բաժնի Հայերն ,
որուն համար և Օ աքարիա կըստիպուի
թուղթ գրել առ Փոտ , մերժելով նորա կար
ծիքները Հայոց դաւանութեան մասին և
կը հետեւցնէ , որ Հայք հետեւողք են ե-
րեք նախկին տիեզերական ժողովոց և Ա . Գը-
րիգորի | ռւսաւորչին :

Փոտ երկու պատասխանական թուղթ
կը գրէ Օ աքարիային և Եշոտին , որով Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ առաքելական անա-
րատ աւանդապահութիւնը գովելէն զկնի՝
կը յորդորէ 'ի միութիւն ընդ Յունաց : Եյս
թղթոց պատճառաւ Օ աքարիա ժողով կը
գումարէ Եիրակաւանի մէջ (862) , ուր
կը գտնուի 'ի միջի այլոց և Նանա սարկա-
ւագ Եսորին , որ ժամանակակցաց մէջ հը-
մուտ համարուած էր : Եյս ժողովը ստի-
պողական կերպարանք կ'առնու Յունաց կող-
մէն , որովհետեւ Փոտի թղթերը բերող
'Եփիոյ Ա ահան յոյն եպիսկոպոսն ինքնին եր-
կար ատենաբանութիւնն կ'առնէ , Քրիստոսի
մարդեղութեան խորհրդոյն վրայ և կանոն
ներ կ'առաջարկէ , և յետ ժողովոյն կարծե-
լով թէ արդէն Հայք միաբանեցան ընդ
Յունաց , կը դառնայ 'ի Պօլիս : Ի այց այս
ժողովի լուրը մեծ ալենկոծութիւն կը պատ-
ճառէ Հայաստանի մէջ և Տայոց Աահակ Ե-
պիտկոպոսն (Առուտ կուեցեալ) 'ի դիմաց Ե-

շռտոյ Իշխանաց Իշխանին սաստիկ թռւղթ
կը գրէ Փոտին, նոյնպէս կը գրէ և Օ աքա-
րիա առ Վ ահան եպիսկոպոս,՝ Օննդեան տա-
նի կատարման ժամանակի համար։ Եւ այս
պէս յունական կարծեցեալ միութիւնը մեծ
ընդդիմութեան կը հանդիպի Հայոց կողմէն
և ապարդիւն կը մնան հետամտաղաց նենք
ջանքերը։

Օ աքարիա իւր 21 ամեայ կաթողիկոսու-
թեան մէջ ազգի խաղաղութեանը խնամ կը
տանէ, Ամիրապետէն անգամ կը պատուի
գրաւոր երկասիրութիւններ եւս կը թողու-
ե ապա վախճաննելով իրեն կը յաջորդէ ընա-
րութեամբ ազգին Պէորդ Պառնեցի, որ
մնուած էր կաթողիկոսարանի մէջ։

Պէորդ Պառնեցւոյ կաթողիկոսութեան
ժամանակ Աշոտ հանդիսիւ թագաւոր կ'օծ-
ուի, Անի քաղաքին մէջ, (885) թագ ըս-
տանալով Ամիրապետէն և Յունաց Վ ասիլ
(Արշակունի) կսյսերէն, և օծադիրն կը լինի
նոյն ինքն կաթողիկոսն, և այսպէս Արշակու-
նեաց թագաւորական հարատութեան վեր-
ջանալէն 452 տարիէն զինի կը կանգնի թա-
գաւորական նոր հարատութիւն Բագրատու-
նի ցեղէն, այսինքն այն ցեղէն, որ Քրիս-
տոսի թուականէն շատ առաջ, Հրաչէի թա-
գաւորութեան կամնահապետութեան ժա-
մանակ Հրէաստանէն դաղթելով և առան-

Ճին նախարարական ցեղ կազմելով թագա-
գիր ասպետութեան պատիւն ունէր Հայաս-
տանի մէջ, ինչպէս յայտնի է ազգային պատ-
մութենէն . Ո՞քացած էր այս ցեղը թէ
հարստութեամբ և թէ իւր նշանաւոր նա-
խարարաց և արի զօրավարաց մեծագործու-
թեամբ : Այսկայն այս Բագրատունի թա-
գաւորական հարստութեան ժամանակ ոչ
ասկաւ կը տառապի Հայաստանեայց Եկեղե-
ցին որպէս և ՚ի ժամանակս Արդպանաց և
խտիկանաց : Արտաքին խռովութեանց հետ
կը յաճախեն և ներքին խռովութիւնք և այն
թագր , որ օտարաց ձեռքով տրուած էր
Հայաստանին , երկու հարիւր տարի ան-
գամ ըստեւեր , գարձեալ օտարաց ձեռքով
կը բարձուի :

Ա՞եր նպատակէն արտաքոյ լինելով Բագ-
րատունի թագաւորութեան կարճատեւու-
թեան վրայ երկարօրէն և հիմնովին խորհր-
դածել , միայն այսքանը կ'ասենք , որ օտար-
ները թագ տալով Հայաստանին՝ հետամուտ
էին տեսակ մի թագաւորական ապրիորիտեան մէջ
պահել Հայոց ազգը , ուստի եթէ կը գըտ-
նուէին ազգաշէն և եկեղեցաշէն թագաւոր-
ներ , և կամ ազգի ինքնուրոյն և անկախ
իշխանութեան ջանադիրներ , շուտով նոյն
օտարները ուրիշ ստրկասէր իշխանի կամ նա-
խարարի մի թագ խոստանալով և նաեւ ու-

Մանդակելով՝ կը յարուցանէին ներքին իր սովութիւններ և կոտորածներ։ Այս էր պատճառն որ երբեմն քանի մի իշխանք իրարու հակառակ թագ կը կապէին և իրարու դէմ կը զինէին։ Ողորմելի հայրապետ ներն եւս, ինչպէս պիտի տեսնենք, ստիպ ուած էին երբեմն ներքին խռովութեանց հաշտութեան համար ջանալ, և երբեմն առ գարացւոց, Պարսից և Յունաց տիրապետաց անգթութիւնները մեղմելու աշխատիլ Վասն զի Ազգը և Ակեղեցին մի մարմին կազմելով՝ վեան և հարուածները կրողը գարձեալ նոյն մարմինն էր։

Այսպէս ահա Ամբատ Ա թագաւորի, Աքաս սպարապետի (որ կ'ուզէր թագաւորական իշխանութիւնը յափշտակել) և կուսակցութեան բաժնուած նախարարաց մէջ սաստիկ գժուութիւն կը ծագի, և Գէորգ կաթողիկոսն իբրեւ հաշտարար մէջ կը մրտնէ։ Ամայն Աքաս զրպարտութեան կը մատնէ զհայրապետն, եպիսկոպոսները նորա դէմ կը գրգռէ, կաթողիկոսութիւնը Եղիվար գեցի Աշտոց վարդապետին կը խոստանայ, եթէ իրեն համակցի, բայց արդարասէր վարդապետէն յանդիմանական և յորդորական պատասխան ընդունելով՝ հազիւ հազ կը հաշտուի հայրապետի հետ։

Նոյն Գէորգ կաթողիկոսն կը ջանայ Արմ

բատ թագաւորի և Ատրպատականի Եղիշենի ոստիկանի մէջ ճագած գժտութիւնը վերցընել և այս մասին շղթայի կը զարնուի Ուտիկանէն և երկու ամիս տառապանաց կը մատնուի : Ոյնչդեռ ոստիկանը կ'ուղէ ըգհ հայրապետն շղթայակապ Ատրպատական տանիլ, չայ նախարարներն ու իշխաններն ու կի և արծաթ տալով՝ կալանաւորութենէ կ'ազատեն և իւր կաթողիկոսական աթոռը կը դարձնեն :

Հայաստանի մէջ ներքին խռովութիւններ կը յուղին և Եղիշեն ոստիկան պատեհ միջոց գտնելով բազմաթիւ զօրքով վերստին կ'արշաւէ զանազան գաւառներու վրայ և ահագին կոտորածներ կ'առնէ, որուն վրայ և հայրապետն իւր սրտի ցաւէն առանձնանալով ՚ի վասպուրական կը վախճանի (897) 21 ամեայ կաթողիկոսութենէն զինի : Վէորդ կը թաղուի Զորոյ վանքին մէջ, ուր Յովհաննէս կաթողիկոս կը պատմէ, թէ ամփոփուած էր | ուսաւորչի գաւազանն և տէրունական խորհրդոյ սեզանն, զոր տակաւին եկեղեցիներ չը չկնուած ժամանակ՝ իւր հետ կը շրջեցուցանէր :

Վէորդին կը յաջորդէ Աշտոց Բ Եղիշարդեցի, Արագածոտն գաւառէն, 60 տարեկան հասակին մէջ, և 7 ամսէն յետոյ կը վախճանի : Աս. կաթողիկոսութենէն առաջ

վարժելով ԱՌԵՆՈԳԱԾ մենաստանի մէջ և
սուրբ Դրոց ուսմամբ ճոխանալով՝ նորոգած
էր Աթւանայ մենաստանն և հոգեւոր ուս-
մանց և բարեպաշտական վարուց վարժարան
դարձուցած, աշակերտելով շատերը։ Աշ-
տոց կը թաղուի Դառնի գիւղաքաղաքին մէջ
ուր էր Տրդատոյ հոյակապ հովանոցն, որոյ
արտասուաշարժ փլատակները և գեղաքան-
դակ սիւներն ու խոյակները տակաւին կը
տեսնուին և հնասէրները կը զարմացնեն։

Աշտոցի տեղ կաթողիկոս կ'ընարուի.
(897) Նորա աշակերտն (ըստ ոմանց քեռոր
դին) Յովհաննէս Զ Դրասխանակերտացի
կամ Դասհոնակերտացի, պատմաբան։ Աա
սրպէս ականատես, մանրամասնաբար գրած
է իւր ժամանակի բոլոր անցքերն ու այն տա-
ռապանքները, զորս կրած է Հայաստանեայց
Լէկեղեցին։ Յովհաննու երկասիրութեան
մէջ պարունակուած անցից ընդարձակ հե-
տազօտութիւնն ընթերցողաց թողլով, մենք
միայն գլխաւոր կէտերը կը քաղուածենք։

Յովհաննէս կաթողիկոս ըստ ամենայնի
ներհակ է քաղկեդոնականութեան, որոյ յու-
զած երկառակութիւններն այնչափ խոր աղ-
դած են սրտին, որ միշտ պախարակելով կը
խօսի իւր պատմութեան մէջ, որոյ պարու-
նակութեան մասին ՚ի ժամանակին պիտի քա-
նի մի խօսք ասենք ։

(Յովհաննէս իբրևեւ հաշտարար հօյք կը
հանդիմանայ ազգին մէջ և թագաւորի ու
նախարարաց գժտութիւնները վերցնելու
կը ջանայ սրդարամէր միջ սմոռութեամբ։
Կ'երծայ նմանապէս մեծամեծ ընծաներով
առ Յուսուփի ոստիկանն Ատրպատականի և
աղերսական բանիւ կը խնդրէ խաղաղու-
թեան դաշն հաստատել Ամբատ թագաւորին,
նախարարաց և բովանդակ Հայոց աշխարհի
հետ։ Եաւս սիրով կ'ընդունուի ոստիկանէն
և ապա կը կալանաւորուի և կը բանտարկ-
ուի։ Յուսուփի քաղմաթիւ զօրքով Հայա-
տան կ'արշաւէ և զկաթողիկան շղթայակապ
իրեն հետ կը բերէ, կը յարձակի նախ Այս-
նեաց աշխարհի վրայ և Օ ատկի տօնին (909)
շատ մարդիկ կը կոտորէ, և ապա դիմելով
ի Դուխն, Երասխոյ ափանց վրայ բանակ կը
կազմէ։ Կը յարձակի Ամբատոյ վրայ և չը կա-
րենալով բռնել, բովանդակ ամառն կ'աւե-
րէ Հայաստան։ Իսկ ձմեռն Դուխն կը մնայ.,
տառապեցնելով շղթայակապ հայրապէտն։
որ ինքնին այսպէս կը գրէ իւր համար. «Կը
քեցի այնուհետեւ ՚ի դահճաց անտի մահա-
հոտ իմն լուտանօք գանս և բանտա և գե-
զարանս և արգելարանս ՚ի խաւարչտին տեղ-
ւոջ և յանձուկ վայրս, այլ և ՚ի վիրապս և
՚ի վիհա խորոց ընկեցայ տաստիկ և դառն
կտտանօք։ Եւ պահապանացն սաստիկ արա-

զակն և ճիշն դատափետ ոչ հեռացեալ հա-
տաներ՝ ՚ի լսելուաց իմոց յերեկորեայ մինչեւ
ցառաւուսն, և սակա այսորիկ բարձեալ էր
յինէն նինջ արտեւանաց և հանգիստ իրա-
նաց իմոց ո:

Ոստիկանն ոսկի և արծաթ կը խնդրէ կա-
թողիկսէն, և սապատեհ առիթ համարելով
ազատութիւն կը խնդրէ, որ երթայ ժողովէ
և հատուցանէ: Հանտէ կ'արձակուի, այլ
ոչ կապանքէ, և ընդ հսկողութեամբ պահա-
պանաց շղթայակապ կը շրջի ազգին մէջ և
արծաթ ու սոկի կը ժողովէ անգութ քոնա-
ւորին համար: Հաջող միջոց գտնելով կը
փախչի Ազատանից երկիրը. Ասհակ իշխանի
և Ատրներսեհ թագաւորի մօտ, և ապա
դառնալով անտի կը բնակի Գուգարաց աշ-
խարհի մէջ:

Յուսուփի միանալով Վասպուրականի
բնենակոչ թագաւոր Գագիկ Արծրունաց
հետ, կը հետամտի Ամբատը կալանաւորել
կամ սարաննել: Նուր և սուր կը շողան ամեն
ուրեք. Եկեղեցիները կը կողուպտուին, Եկե-
ղեցականք և աշխարհականք կը գերուին, և
հանգոյն Ապրդանանց դարուն, աշխարհի բը-
նակիշները կըստիպուին թողուլ իրենց բը-
նակարաններն և լեռներն ու անտառներն
ապաւինիլ: Շատ իշխանք ձերբակալ կը լի-
նին. Ամբատ թագաւորի ԱՌԱՋ որդին

և Ամբատ Եղբօրորդին հաւատը չուրանալու համար կը թիւնաւորուին անագորոյն բըռնաւորներէն :

Ամբատ կ'ապաստանի կապոյտ ամրոցն իւր թիկնապահ զօրքով և Յուսուփի պաշարելով, քրիստոնեայ զօրականները յառաջ կը վարէ որ նետաձիգ լինին : Երկու կողմէն նետահարութիւնը կը շարունակի, և Ամբատ, խնայելով քրիստոնէից արիւնն ու կոտորածն որոնք իր պատճառաւ կը նետահարէին զմիւմնանս, անձնատուր կը լինի, ոստիկանէն խաղաղութեան երդումն խնդրելով: Խակայն յետոյ ընդդէմ երդման կը կալանաւորուի Յուսուփիէն, շղթայակապ խաւարչտին բանտի կը մատնուի և տանջանքներու կ'ենթարկուի հաւատն ուրանալու: Կապա կը տարուի Գողթան գաւառն և Երնջակ բերդի հանդէպ, ուր զօդուած էին նախարարազուն կանայք և որդիք, Յուսուփի կամելովքերդի մէջ ամբացածներուն ահ և սոտկումն պատճառել և հնարքով կալանաւորել, սաստիկ տանջանաց կը մատնէ զԱմբատ : Ամբատ հաստատուն կը մնայ իւր քրիստոնէական հաւատքին վրայ և կը հաղորդուի մի ծըպտեալ քահանայէ: Ենտանելի տանջանքներէն յետոյ գլուխը կը կտրեն և մարմինը կը տանին 'ի Դուին, կը բեւեռեն խաչափայտի վրայ, իբր ՚ի նախատինս իւր քրիս-

տոնէութեան, և այսպէս կը կատարի թագաւոր նահատակն Ամբատ (914), որոյ արիական մարտիրոսութիւնը, ըստ Յովհանն նու կաթողիկոսի, պատճառ կը դառնայ շատ այլազգիներու քրիստոնէական դարձին :

Յուսուփ, սոյն անգթութենէն զկնի, Երևանցակի պաշարումն առաւել սաստկացնելով վերջապէս կը գրաւէ նենգութեամբ, և այն չափ կոտորած կ'առնէ գիշերը քաղաքին մէջ, որ առաւօտուն արիւնաներկ կը գտնուի քաղաքն : Լյու տեղէն շատ մեծամեծաց կանայք կալանաւորուելով Դուին կը տարուին և այնպիսի դժնդակ բանտարկութեան կը մատնուին, որ փափկասուն տիկնայք, սակաւ ժամանակն զկնի, կըմեռնին բանտերու մէջ :

Աշոտ, որդին Ամբատայ, կը թագաւորէ, բայց սակաւ ժամանակէն զկնի Յուսուփ՝ հագարացի աստապակներ կը սփռէ Հայաստանի մէջ և այնքան կոտորածներ և աղէտներ կը հասուցանէ և այնպիսի բարբարոսական տանջանքներով կը տանջէ հաւատացեաները, որ ընթերցողը կը սոսկայ և կը քստմնի, Երբ կը կարդայ Յովհաննէս կաթողիկոսի պատմութեան մէջ, այս աղէտից դառն նկարագիրը : Հօթն տարի անընդհատ կար շարունակին այս անգթութիւններն և հարցափորձական ատեաններու և տանջանարանաց խստութեան առջեւ աներկիւղ

կը խոստովանին Հայաստանեայց Եկեղեցւոյ-
քաւակները իրենց քրիստոնէութեան սրբ-
քութիւնն ու ծշմարտութիւնը և ամենայն
խոստմունք ուրացութեան առ ոտն կը հար-
կանեն . Ի ապմամիւ արք և կանայք , ծերք և
մանկունք . կը մարտիրոսանան , որոց մէջ կը
յիշուին քանի մի պատանի նահատակներ , —
Ոյքայէլ Գուգարացի և Գնունեաց ազգէն
երկու եղբարք՝ Դաւիթ և Գուգգէն—որոնք
ամենայն դահճական արհաւիր և իշխանա-
կան խոստումն կը քամահրեն և ուրախու-
թեամբ մահ . կը ճաշակեն 'ի սէր Ծատուծոյ :

Այս ամեն նահատակներու յիշատակն ,
որոնք Յուսուփի ժամանակ . կը մարտիրոսա-
նան , կը պատուի Եկեղեցւոյ մէջ , որուն հա-
մար այսպէս կը գրէ ինքն Յովհաննէս . կա-
թողիկոս . « Ամենեքեան սոքա սուրբք , յի-
րաւի տարեւորական տօնախմբութեամբ
պատուին միշտ յեկեղեցիս սրբոց՝ օր յիշա-
տակի սոցա սահմանեալ Արերի ամույ՝ որ
օր 27 ։ և ապա կամելով ցուցանել թէ առ-
տուածային սիրով վառռաւածներն երկիւզ
և ցաւ չեն զգար արհաւիրքէ և տանջանքէ ,
կը յաւելու . « Չիք ինչ ահաւոր , ուր սէր
Նօրէ , և ոչ այն ինչ որ ցաւեցուցանէ , ուր-
փառքն Քրիստոսի են » :

Սակ ՚ի Հայաստան . — Թուղթ միմթարանաց ՚ի Նիկո-
ղյառս պատրիարքէն Յունաց . — Թուղթ Յովհաննէս .
Կաթողիկոսին առ կայսց . Յունաց . — Ներքին Խռովու-
թիւնք և Երեք Թագաւորք ՚ի Հայաստան . — Նըսդ
սստիկան և կաթողիկոսն Յովհաննէս . — Նահատակու-
թիւնք և գերութիւնք . — Գրաւումն կաթողիկոսարանին .
Դռնաց . — Կաթողիկոսունք՝ Սաեփանոս Բ և Թեոդո-
րոս Ա . — Թագաւորութիւն Աբասոյ և շնութիւն-
վանօրէից . — Կենցաղ վանականաց . — Եղիշէ կամ Եղի-
սէ Ա և Անանիա Մոկացի . — Աբաս և Թագաւորն
Աժիազաց՝ Բեր . — Հրդեհ մալեկութեան Յունաց .
— Թագաւորութիւն Աշոտ Աղոյանձի . — Գծագիր կե-
նաց նորա . — Ընութիւն Հաղբատու և Սանահնի վանաց

ՅՈՒՍՈՒՓԻ զարքերէն , Պարսից կուսաւ-
կալներէն , Յոյներէն և Լովկասեան հիւսին
սարնակ ազգերէն հասած հարստահարու-
թեանց և վրդութմանց պատճառաւ երկրա-
գործութիւնը կը դադարի Հայաստանի մէջ
ուստի և սաստիկ սովոր կը տիրէ բողոր աշխարհ
հին , որոյ աղէտալի պատկերը , զոր կը նկա-
րագրէ Յովհաննէս պատմաբան կաթողիկո-
սըն , սարսուռ կը պատճառէ ընթերցողին :
Եյս աւերանաց և աղէտից համբաւներն
ամեն տեղ կը տարածուին և Յունաց կոս-
տանդին Պերփեռումէն կայսրը . կը յանձնէ-
կ . Պօլսոյ յունական Նիկողյառս պատրիար-
քին միմթարանաց և ցաւակցութեան գեր

գրել առ Յովհաննէս կաթողիկոս, որ Վ բաց
աշխարհի մէջ էր, Կյորներսեհ թագաւորի
մօտ: Այս թղթէն կը նշմարուի, որ Վ բացիք,
ըսնայելով Կիւրոնի ժամանակ պատահած բա-
ժանման, տակաւին Հայաստանեայց կաթո-
ղիկոսական իշխանութեանը կը հպատակէին,
վասն զի Նիկողայոս այս խօսքերը կը գրէ առ
Յովհաննէս կաթողիկոս: “Յոյժ տրամու-
թիւն և անպակաս ցաւք են սրտից մերոց
յաղագս Հայոց, Վ բաց և Աղուանից միա-
համուռ քոյդ հաւատացեալ հօտիցդ”:

Այս թուղթը ստանալէն զինի Յովհան-
նէս կաթողիկոս Վ բաստնէն կը գառնայ ՚ի
Տարսն և տեսնելով երկիրը տակաւին թրշ-
նամիներէ պաշարուած, ցաւք և հեծու-
թեամբ սրտի (920), երկար թուղթ մի կը
գրէ Յունաց կայսեր և Հայաստանի բոլոր
աղէտները պատմելով օգնութիւն կը խնդ-
րէ: Կայսրը կաթողիկոսի թուղթը կարդա-
լով՝ պատգամաւոր կը զրկէ՝ Հայոց Աշո-
թագաւորն և կաթողիկոսն ՚ի Պօլիս հրա-
ւիրելու: Թագաւորը կայսեր հրաւերին հա-
մեմատ Պօլիս կ'երթայ և մեծ պատուով ու-
թագով կը պատկռի: իսկ կաթողիկոսը ըս-
հաճիր երթալու, որպէս զի իւր անձը իւր
հօտին առջեւ կասկածանաց չենթարկէ և
քաղկեդոնիկութեան համախոհ չհամարուի.
ուստի և Տարսնէն կ'ուղեւորի ՚ի Դերջան

իւր հօտին այցելութեան։ Տառապակիր Հայ-
րապետը Հայաստանի գաւառներուն մէջ
շրջելէն և աղէտներուն ականատես լինելէն
դինի՝ չը կարենալով տոկալ կ'առանձնանայ։
Երտաքին արհաւրաց հետ ներքին խռովա-
թիւնք եւս կը յաճախիւն Հայաստանի մէջ։
Երեք թագաւորներ միմեանց ներհակ վթագ
կը կապեն, այն է Եշոտ երկաթ Ամբատեան,
որ արդէն Պօլսէն դարձած էր և կը թագա-
ւորէր ՚ի Ծիրակ, Եշոտ Ծապուհեան, որ
Յուսուփիւն թագ ստանալով՝ կը բռնակալէր
՚ի Դուին, և Գագիկ Արծրունի, որ կ'իշխէր
Վասպուրական աշխարհին։ Խաղաղասէր
հայրապետն իւր առանձնութեան մենարա-
նէն դառնալով շատ անդամ կը ջանայ այս
ազգաւեր անիշխանութեան առաջն առնուր
քայլ տեւական հաշտութեան չարժանանար
աշխարհ։ ուստի և արտաքին թշնամիները
ներքին խռովաթիւններէն աւելի օգուտ
քաղելով, որ արդէն իրենց բորբոքածն էր,
աւերմունքները կը շարունակին։ Հայրապե-
տի հաշտարարական միջամտութեանց ժա-
մանակ Նքոր ռատիկանը կը հետամուէ հայ-
րապետն կալանաւորել, ինչպէս կալանաւո-
րած էր Հայոց երկու մեծ իշխանները՝ Աս-
հակ և Բագիկին և ուրիշները։ Հայրապետ
Գեղարքունի գաւառի Այրեվանից մէջ լի-
նելով այն տեղէն կ'անցնի Աեւան կղզին և

կարդապետաց։ խորհրդով զանազան ընծաւ։
 ներ կը զբկէ Աստիկանին զայրցթը զիջուցու-
 նելու համար և երդման թուղթ ստանալով։
 կը յօժարի երթալ ՚ի ՚Դուին կաթողիկոսա-
 րանն ։ Ակայն Աստիկանը կը ստե իւր երդ-
 մանը, զօրք կը զբկէ Նյուրեվանքը կողապտե-
 լու, ուր պահուած էին կաթողիկոսական
 գանձերը և եկեղեցական սպասներ և զոր-
 դեր։ Կրօնաւորները կը դիմակալեն և բալորը
 զանազան տանջանքներով կեանքէ կը զրկուին։
 Ապա զօրք կը զրկէ ՚Դիւրական բերդը, ուր
 էր կաթողիկոսն, որպէս զի կալանաւորեն
 և իւր մօտ բերեն։ Կաթողիկոսը մօտահաս
 վտանգէն կ'ազատի փախչելով, կարծերով
 թէ միայն իւր անձին համար է զօրականաց
 հետամոռութիւնը. սակայն թշնամիք բերդը
 կը պաշարեն, ուր բաւականին բազմութիւն,
 քահանաներով և եպիսկոպոսով հանդերձ
 ամրացած էին։ Նմրոցը կը մասոնուի թշնա-
 մաց ձեռոքը, 200 հոգի սրով կը խովազողին
 հաւատոյ մէջ հաստատուն մնալու համար,
 և սպաննելոց գլուխները արանց և կանանց
 հետ գերի կը տարուին Աստիկանին։ Նյու-
 րոյժը կաթողիկոսի ականջը կը հասնի և յեւ-
 տոյ տեղեկանալով, որ գերիներուն ազա-
 տութիւն. եղած է, իսկ տասն մանուկներ
 թշնամիքն իրենց տներուն մէջ պահած են,
 արծաթով կը գնէ և կ'ազատէ։

Նշոր կը գրաւէ ՚Իունայ կաթողիկոսարանը և բնակարան կը դարձնէ իւր ծառայից համար, իսկ Յովհաննէս կաթողիկոս տեսնելով թէ՝ վերստին ժառանգելոյ յոյս չըկայ, կ'ուղեւորի ՚ի Վասպուրական առ ՚Վագիկ Էրծրունի և անդադար կը տառապի այն տեղ Երկեղեցւոյ և Շագիկ վիճակին վրայ : Լ. յս Թախծութեան մէջ, արտասուօք և հեծութեամբ կ'աւարտէ իւր պատմական երկարիութիւնը, որ վաղսւց սկսած էր և որոյ համար յատկապէս խնդրած էին ՚Վագիկ և Շագիտ, և կը կնքէ մի յորդորական սրտաշարժ վերջաբանով : Խնքն եւս բազմաշարչար հայրապետն ասկաւ ժամանակէն զկնի կը վախճանի, 27 տարի կաթողիկոսական պաշտօն վարելէն զկնի, և կը թաղուի Վասպարականի մէջ (924) . . .

Յովհաննիսին տեղ կաթողիկոս կ'ընտրուի Ասեփաննոս Բ. առ կը նստի Շղթամար կղզւոյ մէջ, վասն զի ՚Իունայ կաթողիկոսարանն արդէն գրաւուած էր Հագարացի ոստիկանէն : Ատեփաննոս մի տարիէն յետոյ կը վախճանի և իրեն կը յաջորդէ թէ էոդորոս Ա. և Այրա կաթողիկոսութեան երկրորդ տարին, երբ Աքաս կը թագաւորէ իւր Եղբայր Շագիտի տեղ ՚Իունայ կաթողիկոսարանը կ'առնուի, բայց թէ ոգորոս Շղթամար կը նստի :

Աքասի թագաւորութեան ժամանակ Հա-

յաստան աշխարհը սակաւ ինչ խաղաղութիւն կը գտնէ , լեռնական պատսպարեալները կը գառնան , եկեղեցեաց և վանօրէից շինութեան ձեռնաբկութիւնք կը լինին , որք արդէն շատ տեղ աւերուած և այրուած էին Այս վանօրէից շինութեանը պատճառ կը գառնան մանաւանց այն վարդապետներն , որոնք Հայաստանէն ցրուած էին Եղերացւոց և Հռոմոց երկիրներուն մէջ և հալածուելով իրենց հայրենիքը գարձան։ Այս ժամանակին մէջ շինուած գլխաւոր վանքերը սոքա են . Լիամբայրոց վանք , Արշապունեաց գաւառի Լըրափսածորի մէջ . Հռոմոնի վանք . Ծիրակ գաւառի մէջ , որ Հռոմոց երկրէն հալածուած կրօնաւորաց ձեռքով շինուեցաւ . Խոլյորի վանք , Դերջան գաւառի մէջ . Նարեկայ վանք . Աշտունեաց գաւառի մէջ . Անվանվանք , Խարբերդի մօս . Հնյուց վանք , Կարնոյ մօս . Յախացար վանք , Վայոյ ձորց մէջ . Լապուտափատր վանք . Արշապունեաց մէջ . Նորոգեցաւ նմանապէս և Ծիրակ գաւառի Դաղեվանք :

Այս վանօրէից շինութեանը կ'օժանդակէ Աքաս թագաւորն , որոց մէջ կը ծաղկին զանազան ուսումնականգիր վարդապետներ և ՞ի ժամանակին զանազան գաւառներու մէջ առաջնորդ կը կարգուին , որոց գրագիւտական արդեանց և քնիթացից վրայ առանձին

պիտի խօսինք : Եւս վանուց միաբանից կենաց գրադին վրայ ծանօթութիւններ կ'աւանդե՛ Ասողիկ , ասելով , որ գլխաւորապէս երեք կանոն խստութեամբ կը պահպանէին , այն է պարապիլ ընթերցման և աղօթից , օրու մի անգամ ճաշել և խսպառ անստացուած մը նար : Եւսէր պատճառն որ բարեպաշտ մարդ կանց կողմէն մեծամեծ նուերներ կը ընծայուէին , ոչ թէ կրօնաւորաց համար , որոնք ուխտած էին չիւրացուցանել բնաւ , այլ իբրեւ պահետափ տրուած հաբստութիւն Եկեղեցւոյ , ՚ի ժամանակին ազգային հոգեւոր պիտոյից համար գործադրել :

Ըէոդորոս 10^oամեայ (ըստ Ասողիկայ 11) կաթողիկոսութենէն յետոյ կը վախճանի (935) Աղթամարայ մէջ , և կ'ընտրուի նորա եղբայրը Եղիշէ կամ Եղիսէ Ա . որ եօթը տարի միայն կաթողիկոսական պաշտօն կը վարէ (թէ և երկու տարին իբրեւ հրամարեալ) և կը վախճանի (943) : Եղիշէին կը յաջորդէ՛ Անանիա Առկացի , Վարագայ ուխտի առաջնորդը , որ Աղքուանից և Այիւնեաց աշխարհնեւս կը ճանապարհորդէ ինչ ինչ խռովութիւններ անդորրացնելու համար :

Անչպէս արդէն սկզուած էին զանազան վանօրէից շինութիւններ , նոյնպէս Աբաս Թագաւորը հիմնարկել կը տայ Լարսայ կաթուղիկէ . և կեղեցին և 5 տարիէն յետոյ կ'ա-

ւարտի : Ավիսազաց Բեր թագաւորը կը դիմէ Հայաստանի վրայ և խրոխտալով կրապառնայ նորաշէն եկեղեցին Վրացւոց ծիսով օրհնել տալ, իգրեւ արհամարհանք Հայոց կանոնական արարութեանց : Աքաս հայոց եպիսկոպոսներն և վարդապետները կը ժողովէ իմանալու՝ թէ ուստի են Հայոց եկեղեցւոյ օրհնութեան կանոնքն, և երբ պատասխան կըստանայ թէ 'ի Ա . Ո ուսաւորչէն են . և երանելի Ա՛սրոպէն և Ճիշացուցած են վերջին դարուց վարդապետներն, կրզայրանայ և կը պատերազմի Ավիսազաց թագաւորի հետ և կալանաւորելով կը բերէ Խարսայ նորաշէն եկեղեցին և կ'ասէ . «Տես այժմ սորա գեղեցկութիւնը, վասն զի միւսանգտմը ըստիտի տեսնես ո . և յետոյ աչքերը հանել կը տայ :

Ոինչդեռ Աքասի թագաւորութեան ժամանակ սակաւ ինչ խաղաղացած էր Հայաստան աշխարհը հարատահարութենէ և հալածանքէ , յանկարծ բորբոքեցաւ յունական մոլեկրօնութիւնը, որ սավորաբար կը գըռգուտէր միշտ այն ժամանակ , երբ Հայք կըսէին փոքր ինչ ներքին բարեկարգութեամբ դբաղիլ, փոքր ինչ անդորրանալով հագարական և պարսկական տառապանքներէ : Այն չափ կը զայրանայ Յունաց կրօնական ատելութիւնը, որ կըսկին Հայերը նզովել իգրեւ :

Եւտիքական, եկեղեցւոյ խորհուրդները պախարակել, բռնադատել ազգային ծէսերը փռ խելու, իրենց յարազները վերստին մկրտելու դրօմելև եթէքահանայք են՝ վերստին ձեռնադրել և այսպէս առիթ տալ չարաշար խռովութեանց։ Յունաց բամի Հայերէն շատերն այս աններողամտութեան հալածանքէն զզուելով կը տեղափոխին Անծ Հայոց Շիրակ և Վանանդ գաւառները, որոյ համար առելութիւնն աւելի կը զայրանայ և երկար գարեր կը տեսէ։

Աքասա այս յունական հալածանաց և այլ բարբարոս ազգաց ասպատակութեան միջոցին կը վախճանի։ Կախարաքը Անանիա կաթողիկոսին հետ կը խորհին շուտով թագաւոր օծել Աքասի որդի Աշոտն, և այս պատճառաւ պատգամաւորաց ձեռամբ կը հրաւիրեն Աղուանից Փիլիպպոս հայկազուն թագաւորնու Յովհաննէս կաթողիկոսն, և երբ կը ժողովին ամենքն, ուր էին 40 էն աւելի եպիսկոպոսունք, (961) Անի քաղաքի մէջ Աշոտը թագաւոր կ'օծեն, և նոյն քաղաքն արքայական աթոռանիստ կը գառնայ։

Աշոտ մեծ խնամք կը տանի Եկեղեցւոյ պայծառաւթեան և իւր մարդասիրական խընամբներով առաւել հայր կը հանդիսանայ Հայաստանին քան թէ թագաւոր։ Կըսիր վէ Աղդի տառապեալներն ու կարօտեալնե-

ըլ. Աեղանակից կ'առնէ իրեն՝ կաղնըը, կոյքը, բերը, ցաւագարները և շատ անգամ ինքը կըսպասաւորէ, իւր բոլոր արքայական հարստութիւնը ազգի կարօտելոց համար գործադրելով, այնպէս որ մահուան ժամանակ մի դրամ գոնէ չըդանուիր գանձատան մէջ։ Ես մարդասիրութեան խնամոց և գթութեան համար կը կոչուի Ալլա. Ուղբան։ Աշուափ նման ողորմած կը լինի. նմանապէս և խուրավանոյշ թագուհին, որ Ախւորդեաց աշխարհին մէջ կառուցանել կը տայ. Հաղբատու. և Այնահին հոյակապ վանկերն, որոնք մինչեւ ցայսօր կանգուն կան։ Խոսրովանոց գթաճ մայր կը հանդիանայ բոլոր ազգին և արժանաւոր թագուհի Արարատեան թագաւորութեան։

Իսկ Անանիա կաթողիկոսն Աղթամարայ, Վարագայ և ապա Անիի մէջ հայրապետական պաշտօն վարելով կը վախճանի Տն ամեայ. կաթողիկոսութենէն զինի։

Վահան կաթողիկոս . — ՚ Յունաց՝ արծարյեալ բնաւութիւն . — Ժողով յԱնի . — Ժամառաթիւն Ստեփաննոս գի . — Երթ Ստեփաննոսի առ Վահան և աքսորանք իւր յԱղեթանոր . — Խաչիկ Ա . — Կրօնական հաղթանք ՚ Յունաց . — Թղթակութիւնք . — Քարեկարգութիւնք Խաչիկ . — Ժողով յԱնի և ընտրութիւն Սարգսի Ա . — Մողբութիւն Թոնդրակեցւոց . — Ժողով յԱնի . — Գերոս Ա . — Գաղթականութիւն ՚ Սեբաստիա . — Տողրիլ Սկիւթոցի և Վասոկ Պահպատունի . — Հարեւանցի ակնարկ ազգային կրօնական և քաղաքական վիճակի վրայ :

ԱնԱՆԻԱՑԻ տեղ՝ ժողրվճական հաւանութեամբ (ուրէր և Շղուանից Յովհաննէակաթողիկոսն), կաթողիկոս կ'ընտրուի (965) ԱԽԱՆԵԱԾ. Բաղայ գաւառի Գուանշիր իշխանի օրդին Վահան կամ Վահանիկ, որառաջ Եպիսկոպոս ձեռնադրուած էր նոյն գաւառի վրայ Լնանիայի ձեռամբ . Վահան կաթողիկոսանալով կընտրի Արքինայ գիւղաքաղաքի մէջ, վասն զի տակաւին Էնիի կաթողիկոսարանն պատրաստուած չէր . Վահան իւր կաթողիկոսութեան միջոցին, յունական ատելութենէն ստիպուած, որ ամենայն հալածանքով կը շարունակուէր, կամ ինքնին աւելի հակամիտ լինելով նոյն կողմը, առանց հաւանութեան և գիտութեան Վշ-

գին, կը միարանի Յունաց հետ և առանձինն իւր կողմէն գիր գրելով և պատկեր բերել տալով կը դնէ Հայոց Եկեղեցւոյն մէջ, իւր ՚ինչան անխտրութեան։ Վ ահանայ արարտ մունքը սաստիկ խռովութիւն կը յուղէ Աղ գի մէջ, որոնք կը սոսկային յունական միա կերպութենէն և վնասակար կը համարէին ազգային Եկեղեցւոյ գոյութեանը, որ իւր առանձին ծէսերով և սովորութեամբ կը պարծէր։ Այս խռովութեան առթիւ մեծ ժողով կը գումարուի Ենիի մէջ (ուր յականէ յանուանէ կը լինին — Տէր Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս, հայր Պողիկարպոս Կամրջաձորոյ վանական, հայր Սարգիս Հռ ռոմոսի վանուց վանական և այլ եպիսկոպոսունք և բազմաթիւ մարդիկ) Վ ահանայ ինքնահաճ գործը քննելու։ Վ ահան տեսնելով Ազգի յուղմունքը և ժողովի գումարումն, որուն ինքը պատճառ տուած էր, կը փախ չի Վ ասպուրականի Արքուահլ թագաւորի մօտ, որ Գագիկ Արծրունիի որդին էր։ Եկեղեալ ժողովի հաւանութեամբ և Վ ահանայ փախստեան պատճառաւ կաթողիկոս կ'ընտրուի Ստեփաննոս գ. Աեւանայ վանուց վանական։ Արկար գժտութիւններ կը լինին Վ ահանի և Ստեփանի մէջ, մինչեւ որ վեր ջինը կըստիպուի անձամբ Վ ասպուրական կըթալ և Վ ահանն ու իր պաշտպանն Արու-

ոահը յանդիմանել։ Ատեփաննոս իւր ուղեկից վարդապետաց հետ կ'աքսորուի Եղթամար կղզին և անտի կը տարագրուի միայնակ կոտորոց քերդը, ուր և կը վախճանի երկամեայ կաթողիկոսութենէ զինի։

Յունականութենարում ուրիշ արդիւնք չերկարող ունենալ չայոց համար, եթէ ոչ ներքին վրդովմունք և երկպառակութիւնք եկեղեցւոյ զաւակաց մէջ, ինչպէս կը տես ներք Վահանի ։ Ատեփաննոսի պատմութենէն։

Ատեփաննոսի տեղ կաթողիկոս կ'ընտրուի, (972) Խաչիկ Ա. Երշարունեաց եպիսկոպոսն, Ենանիայի քեռորդին, որոյ մասին պատմաբաններէն ոմանք կ'ասեն թէ՛Վահանի կենդանութեան ժամանակն ընտրուեցաւ, իսկ ոմանք կ'ասեն թէ՛Վահան արդէն վախճանած էր. Խաչիկ ևս Երգինայ գիւղաքարուքի մէջ կը նստի, ուր և հոյակապ եկեղեցի կը կառուցանէ և բազմաթիւ մատեաններ ժողովելով՝ հարուստ թանգարան կը պատրաստէ։ Այս զանազան օտար երկիրներու մէջ գտնուած չայոց համար եպիսկոպոսներ կը հաստատէ հայկական հօտի օտարութեան մէջ ցրուած խումբերը հովուելու։

Խաչիկ կաթողիկոսի խորհուրդը շատ օրինաւոր էր, վասն զի ուր հօտն է, այնտեղ պետք է լինի և հովիւն։ Ենչ ժամանակ որ այս

որինաւորութիւնը գործադրուած չէ, միշտ
կորուսա եղած է Վզգին և շատ տեղ և շատ
անգամ անխնամակալութենէ պարզամիտ
ժողովրդէն շատերն օտարաց հետ խառնը
աելով անյաբուացած են:

Խաչիկի կաթողիկոսութեան ժամանակ
Ծցնք ասստիկ. կը տագնապեն Հայերը դա-
ւանաբանական խնդրոց համար: Աերաստի-
ոյ Յոյն մետրապօլիաը բռնաբար կը տանջէ-
՛այ քահանայցը և նոյցա գլխաւորները եր-
կաթի կապանքներովկ կայսեր կը խրկէ ՚ի Պա-
լմս, ուր ոմանքք բանտերու մէջ կը մեռանին
և ոմանք յակամայս կը սովորուին ՚Քաղիեդո-
նի ժողովն. ընդունիլ: Յթւնական մետրա-
պօլիստները զանազան թղթեր կը գրեն Խա-
չիկ կաթողիկոսին՝ մողեկրօնութեան ժան-
տախտով տոգորուած և կը պախտարակին Հա-
յաստանեաց Ղեղեցին, և յունական բաժ-
նի Հայոց մէջ կ'արգելուան ժամհարութիւննե-
ռւ ազօթատեղին ժողովիլու: Հայոց վարդաւ-
պէտները կը ժողովին Խաչիկ կաթողիկոսի հը-
բամանաւ և կը պատասխանեն Յունաց գրած
թղթերուն: Հայոց պատասխաներէն մին,
որ բաւական ընդարձակ է. կ'աւանդէ Վսո-
զիկ ժամանակակից պատմագիրն իւր երկասի-
րութեան մէջ, (Պլուխ Խ.), յորմէ պարզա-
պէս կ'երեւի թէ որչափ այլանդակ եղած են
Յունաց գրած թղթերն առ Խաչիկ կաթո-

ղիկոս : Նոյնպէս թուղթ կը դրէ Թէսդորոս
Յոյն մետրապօլիտն, որուն կը պատասխանէ
Ասմուէլ կամքաձորեցին, Խաչիկ կաթողիկո-
սի հրամանաւ :

Այս ամեն յուզմունքներն և թղթակ-
ցութիւնները պարզապէս կը յայտնեն մեզ
թէ որչափ աղետներ կարող են հասնիլ քր-
դիստոնէ ական Եկեղեցւոյն, եղբ սէրը՝ մո-
գեռանդութեան վոխուած է և քրիստոնէ-
ութեան Ճշմարիտ հոգին՝ ծիսական վիճա-
գանութեան : Այս պատկերով կը ներկայա-
նայ մեզ նցյն ժամանակեայ յաւնական եկե-
ղեցականութիւնը, որ հակառակ Աւետա-
րանի հոգւոյն, օրհնութեան տեղ՝ անէնք-
ներ կը տեղայ Հայոց վկայ և տառապակիր
Ըզդ մի տարասպարտ մէջերով կը պաղեցնէ :

Խաչիկ յունական առելութենէն ըստ
տամանելով ներքին բարեկարգութեանց ևս
խնամք կը տանի և Տրդատ անուն նշանա-
ւոր Ճարտարապետի ձեռամբ կը չինէ Անիի
կաթողիկէ Եկեղեցին, ուր և կը հաստատ-
ուի կաթողիկոսարանն . նմանապէս Գագիկ
Ա. Աշոտ Աղորմածին երեց որդին, կատրա-
միաէ թագուհոյ լճակցութեամբ զանա-
զան Եկեղեցիներ կը շինեն Անիի մէջ, որոց
մէջ նշանաւոր էր մանաւանդ Երամխաձորի
մէջ կառուցածն՝ նմանութեամբ Դմիածնի :
Այս Եկեղեցեաց մէջ Գագիկ Շահնշահինք-

Նին շատ անգամ եկեղեցական պաշտօնէից հետ ժամասացրութեան կ'երգակցէր :

Խաչիկ 19 ամեայ կաթողիկոսութենէն ըզէ ինի՝ իւր արդիւնաւոր կեանքը կը կնքէ և կը թաղուի Արգինայի հանգստարանին մէջ և ապա Դագիկ Շահնշահ մեծ ժողով կրգումարէ Անիի մէջ նոր հայրապետի ընտրութեան համար, ուր և բոլոր ժողովականաց հաւանութեամբ կ'ընտրուի (992) Սարգիս Ա Անեւանայ վանուց առաջնորդն, որոյ համաց կ'ասէ Ասողիկ . “Ոչ ինքն զինի պատուոյն, այլ պատիւն զինի ինքեան ընթացաւոյն Որա հրամանաւ է որ Ասողիկ կը գրէ իւր պատմական երկասիրութիւնն, որոյ վրայ առանձինն պիտի խօսինք :

Իններորդ դարուն մէջ կը յիշատակուին մի քանի մանր բանագէտներ եւս, ինչպէս են - ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԺԻՇԿ, Թարդմանիչ Դիս-նեսիոնի պատմութեան... - ԴԱՒԹՎԱՆԱՀԱՅՐ, որ իբր թէ Հապուհ Բագրատունւոյ պատ-մութեան մէջ քանի մի ճառ յաւելցուցած է . - ԽՏԵՓԱՆՆՈԽ աշակերտ Խաշոսց կաթողի-կոսի, որ Խաղող Դիլբը օրինակած է (893) և իւր վարդապետի վարքը գրած . - ԳՈՒՐԳԻՆ ԱՐԴՐՈՒՆԻ, Խնձեւացեաց Տէրն, որ Աբգլմսե-հի Վկայաբաննութիւնը Թարդմանել տուած է ասորերէնէ ՚ի հայերէն (873), ըստ մա-կագրին « Յօգնականնութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի առտուածափրի և որդւոց իւրոց Տաճառաց և Ատումայ ո»

Սոյն հատուածի իմաստն այս է : Գագիկ կամեցած է նորակերտ Եկեղեցին Փրկչի անուամբ յորթորմէլ . բայց ոչ թէ Կեստորականաց և Քաղկեդոնականաց նման Փրկչի մարմինը Բանէն բաժնելով և նոյն մարմինը Եկեղեցի և տաղաւար հա-մարելով Բանին . ոչի Փրկչի անունն միայն Եկեղեցւոյ վրոյ գնելով : Վասն զի կ'ասէ , նոքա՝ որ մարմինը Բանէն բաժ-նելով Եկեղեցի կամ տաղաւար կը համարին և միանգամայն նոյն մարմինը կը պատարագեն , կը նշանակէ թէ նոյն Եկե-ղեցւոյ քարերը , խայտերը և այլ Երկաթեղին կահքերը կ'ու-տեն , որ շատ և շատ ծագբեցի է : Իբրաւ է կ'ասէ , որ առա-քեալք և ամեն մարդիկ տաճար և Եկեղեցի Աստուծոյ կը կոշուին , բայց ոչ թէ նոյն ինքն Փրկչին և Աստուած . և ոչ մարմին Փրկչին . վասն զի մարմինն Բանէն բաժնելն՝ անմետաց դորն է :

Ուսումնավայրը ժ. դարու . — Երկասիրութիւնք Անա-
նելոց Նաբեկացւոյ . Խոսքով Անձեւացւոյ . Գրիգորի
Նաբեկացւոյ և պարունակութիւնք իւշաբանչիւրցն .
— Քանի մի ուսումնառերք . — Երկասիրութիւն Ասոզ-
կայ . — Արտաւազդ Մազաղունի և Տաճատ Վարդապետ :

ՏԱՅՄՆԵՐԱՐԴ դարու մէջ Հայաստանի
նշանաւոր ուսումնավայրըն էին — Կամբջայորոց
վանք՝ Այշարունեաց դաւառի մէջ . Հնյուց
կամ Կարսիր վանք՝ Կարնաց մօտ . Հոռոնոց վանք՝
Շիրակայ մէջ , որ ապաստանարան եղաւ
Խոհանոս կայսերէն հալածուած միանձանց .
Կարեխայ վանք՝ Խշտունեաց դաւառի մէջ ; Այս
պարանից եպիսկոպոսանիստ ուխտ՝ Առկաց դա-
ւառի մէջ . Ցախոցչար մենաստան՝ զոր Աս-
ղիկ Աբարձրահռչակ և սուրբ առաքինաստանոյ
կը կոչէ . Առմաշն կամ Առմարաշն վանք՝ Շիր-
րակայ մէջ . Խակ սոյն դարու նշանաւոր մա-
տենագիրն են սոքա :

ԼԱԱՆԻՍ ԽԱՐԵԿԱԾԻ . — Ազգային պատմիչնե-
րը մեծապէս կը գովիեն Անանիա , և ծիփիլովո .
Գիտնական , ըստութիւն ; Խեղեցոյ և այլ մակդիրներ
տալով թէ և իւր գրուածներն մեր ձեռքը հա-
սած չեն , որ կարենակը ըստ արժանւոյն գնաւ-
հատել . Անանիա Կարեկացւոյ անուանք մի-
շուած Երկասիրութիւններն են — Հոքուան

մոլորութեան. Յօննթրակեցւոց, զոր կը յի շատակեն Ապիստրոս և Ներսէս Շնորհաւլի. Այսունիւն առաջիւղին լոյնոց, հետեւու զութեամբ Հշիրեմի, Խոկերերանի և Լիւրդի. Եւ ժամանականիւն, և այլն:

Խնչպէս իւրաքանչիւր մատենագրի, նոյն պէս և Ենանիային տրուած գովեստները՝ իրենց կեցած դարերու մտաւորական զարգացման չափով պարտինք ընդունել, ապա թէ ոչ կամ սաստիկ նուազեցուցած և կամ սաստիկ բարձրացուցած կը լինինք որ և իցէ հեղինակի արժանաւորութիւն։ Աւստի, որչափ որ Ենանիայի գրուածները մեր ձեռքն հասած չեն, այնու ամենայնիւ կարեմք գուշակել, որ իւր գարու ուսումնականութեան չափով նշանաւոր տնձն եղած է և Նարեկայ վանքի առաջնորդական պաշտօնի մեջ իւր օրինակով նոյն վանքը ուսումնասիրութեան վայր գարնուցած է։ Եյս նկատմամբ ուրեմն, խնչպէտ ամեն գեղեցիկ և շահաւելու գործոց հիմնադիր, նոյնպէս և Ենանիա Նարեկացի արժանի է մեծ երախտագիտութեան։

Խորու Անձեւօք։ — Իա իւր մանկական հասակեն հետամուտ կը լինի ուսման և գիտութեան և Ենանիա Նարեկացւոց եղբար գտաեր հետ ամուսնալով կ'ունենաց երեք որդի — Յավհաննէս, Ասհակ և Կրի-

գոր — և յետ ժամանակաց . Վաճեւացեաց
գաւառին եպիսկոպոս կ'ընտրուի : Խոսրով
իւր բարեպաշտութեամբ և քրիստոնեական
իմաստութեամբ նշանաւոր եղած է տասնեւ-
րորդ գալուն մէջ և իւր արտուածամեր հռ-
գին պարզապէս կը փայթ իւր գրաւոր եր-
կասիրութեան մէջ , զար շարագրած է իւր
եպիսկոպոսութեան ժամանակ :

Խոսրովու երկասիրութիւնն է՝ Վաճեւացեաց
Ժամագրաց , որպ վրայ առնիոփ և սասց գաւ-
զափար ունենալու համար հարկաւոր է նոյն
իսկ Ժամագրի պարտ նակութեանը կատարե-
լապէս հասու լինիլ : Ժամագրիըըը , որ մեր
քրիստոնեական բարեպաշտութեան և եկե-
ղեցական ժամերգութեան հանապազրեաց
Վաճամատոյցն է , կը պարունակէ իւր մէջ
այնպիսի սբանչելի ազօմքներ , մաղթանքներու-
քարոզներ և երգեր , որոնք բարեպաշտ ըստ
գոցմանց և քրիստոնեական ջերմեռ պնդու-
թեան վճիռ բղկուամիջ են և այնպիսի խըն-
դրուածներ , որոնք ամեն ժամանակ և ամեն
դիսուածի մէջ ամենակարեւոր են քրիստո-
նեի համար , որ կը փափաքի իւր Վարչի և
իւր երկնաւոր Հօր հետ խօսակցիլ : Խոսրով
ինքն զդալով Վաճամատոյցի պարունա-
կութեան վսեմութիւնը՝ իրեն նուիրական
պարուք համարած է զայն մեկնել իւր ազը-
թակեր համար որպէս զի իւրաքանչեւը

ու հասկնաց մեղաձի՛ թէ ի՞նչ զգացմուն՝
քով պարտաւագ է, ոգեհողիք հառարակային
ժամերգութեան ժամանակ, և ի՞նչ է զօր Քը-
րիանոնիական Եկեղեցին կամ հաւատացե-
լոց բազմութիւնը կը հայցէ Երկնաւոր Հո-
րէն, միահամուռ գումարմամբ և միաբար-
բար շրթամբք . Խորդով իւր մեկնական
Երկասիրութիւնը բարեխիզծ կերպով կա-
տարելու համար՝ ընթերցասիրած է իրմէն
առաջ եղած Եկեղեցական Հարց խորհրդա-
ծութիւնքը, որոց շատերու անգւններն ու
հատուածները կը իշատակիէ . Խոսրովի Եր-
կասիրաւթեան մեջ մեկնուած են միայն այն
մաղթանքներն առ քարազները, որոնք իւր
ժամանակ Ժամադրոյի պարսէնակութիւնը կը-
կազմէին, և հետեւապէս այժմեան Ժամա-
դրոյն ամբողջ մեկնութիւնը չէ . Վասն զի
մենք գիտենք, որ Խորդովէն զինի Ժամադրո-
յի պարտանակութիւնը շատ ընդարձակուած
է, մանաւանդ Եկերէս Ընորհալոց ժա-
մանափէ :

Խորդովի Երկասիրութիւնը, բաց ՚ի մեկ-
նական մասերէն . կը պարսւակիէ նոյնպէս
ժողովագին . և Եկեղեցականաց գւղղած հա-
մառատուարդունք, որոնք զեղուն են բա-
րեպաշտապկան զգացմունքով, և որովհետեւ
զինաւոր նպատակն եղած է հաւատացեալ
ներք հրաւիրել ։ Դրաց ընթերցման և ա-

դօթասիրութեան, ուստի աեղ աեղ խիռու
 գեղեցիկ ձեւերով բացատրած է Առքը Գլ-
 րոց ուսման և աղօմից կարեւորութիւնը,
 որուն ապացոյց՝ արժան կը համարիմք հետե-
 ւեալ տողերը առաջ բերել. « Կատամարի-
 րութիւն ՚ի Գրոց ծնանի ՚ի մարդս . . . Եւ
 արդ՝ պատուեցուք զԴիրս Խուրքս վերծա-
 նութեամք, որ են պատճառք մեղ ամենայն
 բարելաւութեան : Փափագեցուք սիրով ՚ի
 վերծանութիւն Գրոց Արքոց և յընթեռ-
 նուլն կրկին հոգ յանձին բերցուք. — Այս, զի
 իմասցուք զընթերցեան և միւս եւս՝ զի ան-
 մոռաց ՚ի մոտի կալցուք, մանաւանդ թէ՝
 գործով կատարեացուք և լիցուք առնազք ո-
 րինացն, զի մի զրկեցուք ՚ի մեծագոյն բա-
 րեացն թեթեւամտութեամք » : Խակ աղօ-
 թից վրայ երկարօրէն խօսելէն զինի այսպէս
 կը պարզաբանէ աղօմելու օգուտը : « Խակ
 զպտուղ աղօմից յամենայն ժամու պահան
 ջիմք ԱՄստեծոյ և յամենայն հատակի և ՚ի
 դիպաւածի : Տղայոց բարւոք մննդակից է ու
 զօմքն և պահապան յելս և ՚ի մուտս : Ե-
 րիտասարդաց գործակից : Եերոց՝ յոյս հառ-
 տատութեան . քահանացից՝ պահկ պաղմա-
 նաց . ժողովրդոց՝ պարինազ ամրութեան : պի-
 նուհրաց՝ վահան վրիկութեան . թնագաւա-
 րաց՝ ցնծսւթիւն . իշխանաց՝ ուղղութիւն .
 գատաւորաց՝ զգաւատութիւն . ճզնաւորաց՝

մարտակից . կռւ սահնաց՝ կառավարութիւն .
սպաւորաց՝ սփռվանք . բերկրեցելոց՝ հըս-
ճուանք . նեղեղաց՝ անդորրութիւն . խաղա-
զացելոց՝ զգուշաւութիւն . արանց՝ գործակից .
կանանց՝ տնակից . ճանապարհօրդաց՝ ուղե-
կից . նաւորդաց՝ առաջարկութիւն . առող-
ջոց՝ խնդութիւն . հիւանդաց՝ մխիթարու-
թիւն . մեղուցելոց՝ քաւութիւն . արդարոց՝
ինդութիւն . ննջեցելոց՝ թոշակ կենաց և
յօս բարեաց . . . :

Արովհետեւ . Ա. Փմագրքի վկայ ուրիշ պա-
տեհ առթիւ գարձեալ պիտի խօսինք , ուս-
տի այսքանը բաւական համարելով այս մի-
այն կը յաւելունք խոսրովի երկասիրութեան
մասին . որ եթէ նորա մեկնած մազթանք-
ներն ու քարոզները նոյնութեամբ թողլով
և ազիսատասիրած մեկնութիւնը ընտրանոք
համառատելով ու աշխարհաբար թափմանե-
լով միտահն տպագրուի , խիստ արդիւնաւոր
կը չինի բարեպաշտ աղօթասիրաց համար . և
այնշափ քրիստոնէական ոդի կարող է ներ-
շնչել . որ երբէք նոյն արգիւնաւորութիւնը
չըստացուիր քանի մի նոր ժամանակիս ՚ի՞ն-
տենտին գիտելեաց չոր ու ցամաք տետ-
րակներէն , որոնք իբրև գասադիզը գործ
կը դրաւին դպրոցաց մեջ . Ա. առն զի խոսրո-
վե գրիստոր նպատակը եղան է իւր երկա-
սիրութեամբ քրիստոնէական ու ամունքներ

ուսուցանել, որուն համար և ինքն յայտնա
պէս ասած է . « Արովհետեւ շատերու մէջ
ամենամեծ տգիուութիւն տեսայ , ուստի
արժան համարեցիր եպիսկոպոսութեանս
պարտուց համեմատ այս գրուածքը յօրի-
նել , որ կարդան և ուստանին , վտան զի առ
կարելի է միայն խօսքով (քարոզով) կարեւոր
դարման մատուցանելո » .

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ . - [Կնձեւացեաց Խոռ
րով եպիսկոպոսի որդին , ծնաւ 951 թեւա-
կանին , և իւր մանկութեան հասակին Ուշ-
տունեաց գաւառի Նարեկայ վանքի առաջ-
նորդ Կնանիա վարդապետի իմաստոյն յանձ-
նուեցաւ : « Գրիգորի վարուց սրբութիւնը ,
մաքուր սիրտը և անզքաղ միտքը առաջնոր-
դեցին զինքը իմաստութեան մէջ զարդանառ-
լու և աստուածախոս հանձարներէն . մին
գառնալու : Քսան և վեց տարեկան հաւա-
կին մէջ արդէն շատ իշխաններ՝ Գրիգորին
կը դիմէին . իրենց ինչ ինչ տարօհիուածնաց
լուծումն ստանալու : Անկայն ինչպէս աղիւ-
գական ջերմութիւնը երբեմն գարշաճառ
գոլորշիներ կը յարուցանէ գետնէն . այն
պէս և սրբասուն մարդկանց կեանքը և բա-
րեպաշտական ջերմութիւնը՝ կրքեր . կը յու-
զէ աշխարհին մէջ : Յահիւ պատահեցաւ
և Գրիգորին , որոյ գէմչարամիտներ՝ ունակ

յուղեցան ատելութեամբ և գնալով Դունայ կաթողիկոսարքանը՝ ամբաստանեցին զիրքոր իբրեւ թերամիտ ՚ի հաւատոց, բայց չը կարացին իբրենց նենգ նպատակին հասնիլ և լինասել. որովհետեւ ՚իրիդոր ոչ միայն արդարացաւ քննութեան մէջ, այլ իւր առաքինական վարուց համբաւն եւս աւելի հոչակեցաւ. վատն զի առաքինութիւնն ու վարուց սրբութիւնը մահ չունի. և մինչդեռ թշնամիք կը կարծեն թե արատաւորելով կը մահացնեն, ընդհակառակն աւելի կը կենդանացնեն : ՚ի յա փորձուած ճշմարտութիւն է ամեն ժամանակ :

՚իրիդոր իւր անձն մենաւորական կենաց և գրաւորական վաստակոց նուիրելով լնութեցախրեց և շարագրեց մինչեւ իւր 60 տարեկան հասակը և վախճանելով թաղուեցաւ. ՚արեկայ վանքի մէջ, ուր մինչեւ ցայսօր առանդութեամբ կը ցուցնեն իւր գերեզմանը. ՚իրիդոր ՚արեկացին գրած է գրիստուորապէս այն տեսակ ՚ոխութերու վրայ, որոնք մարդայ վախճանական նպատակը կը կազմին : ՚իրիդորի երկասիրութեան բուն համառատութիւնն է այս — ՚ի ներբուար նարդիսին որպի խորհը և ՚ի գլուխար ապրաւածային անհոռոն նարդամիրամիւնը : ՚իրիդոր այս եռանդութ վառուած աստուածային բանաստեղծ մի կը ներկայանաց մեղ իւր գրտւածոց մէջ, բա-

նիւ յոդառատ և զգացմամբ զեղան : Այ
ներբողէ ինչ որ աստուածային է , կը պար-
սաւէ ինչ որ մարդկային տիարութենէն է ,
Անդ կը յափշտակուի և կը վերապանաց մեն-
ով աստուածային սիրոյն և մերթ կը խո-
նարհի և կը հեծէ մարդկային վայրաքարշ կը-
րից վրայ : Դրիգոր այն հօգիներէն է . . . որ
աստուածային սիրով կը ձենձերի , արտասո-
ելով կը ժպտի և ժպտելով կ'արտասուե : Հա-
մառօտիւ առենք , Դրիգոր այնպէս կը պատ-
կերացնէ զլուտուած և զմարդ , որ ամեն եր-
կիւ զած պրտերու մէջ խորին տպաւորաւթիւնն
կը թօղու իւր կենգանի երանգներով :

Դրիգոր Ապրեկացւոյ երկասիրութիւն-
ներն սոքա են գրտեթեան ժամանակի կար-
գաւ . . . Պատմութիւն խոցն (Պարանից . ունց
պրարանակութիւնը համառօտիւ այս է :
Առկաց Դաւիթ սրբատուն եպիսկոպոսի
եղուօրորդին , (որ զինուարելու գնացած եր
չի Պալիս Ատիլ և կաստանդին կայսերաց
ժամանակ) ի պատիւ գերեզմանի Դաւիթին
պառողեւ . կ'ընդունի յիշեալ ինքնակալներէն
Կենաց Փայտի մազն և պալ նուիրական ըն-
ծաներ և կը դառնայ Առկաց . գաւառոն
Դաւիթի քեռարդի Ասեփանոսի եպիսկոպո-
սութեան ժամանակ : Այս պարզեւները
կ'ամփոփուին , նախ Դաւիթի հանգստարա-
նի մէջ , յետոյ Յովհաննու կարապերի տա-

Հարդին մէջ, և ապա Աստուածամօք եկեղեցւ
այն մէջ : Այս վերջին փափագրութեան
հանդիսին ներկայ կը գտնուին Արձրունի
թագաղաքը հարազատներն՝ Անեցերիմ :
Գուրզեն և Աշոտ, ինչպէս որ խաչի պատ-
մութեան մէջ փափագրութեան հանգիսի
նկարագրիրն եւս պարունակուած է : Այս
առժիւ գրան է Պրիգոր նոյնպէս Խոչ ներ-
բան և նորա հետ միասին Ապրանքացնի ներ-
բան : «Պուազը խմբից, և այն ո :

Այս երեքն եւս գրուած են Ատեփանոս
եպիսկոպոսի խնդրանօք, ինչպէս կը ցուցնէ
իւր մի Անձոցական առ նոյն Եպիսկոպոսն :
Ասկայն Եարեկացւոյ այն գրուածոց մէջ
գտնուած քանի մի անժամանակակից անց-
քերն և ինչ ինչ իմաստներն տեղի կը տան
կարծել, որ այլոց ձեռքով յետին ժամանա-
կաց յաւելուած են :

Դաս ի գովնոր Առանելոց, որոյ մէջ առա-
քելական կոչման մեջութիւնը բացատրուած
է և Աղմանաբաց Պրեն առաջ յօդինուած է :
ինչպէս և կը յիշուի ԶԲ. 2. «Պահայն մէջ .
«Պորոց (առաքելոց) զգովետն արժանա-
ւարութեան՝ ըստ իմասմ կարի շայլում բա-
նի պաշտեցի ո :

Ա Անոնիւն Եղիերիցոյն : —Այն երկապիրու-
թիւնը գրան է Եարեկացվին իւր երիտա-
սորդութիւն հասակին մէջ, Անձեւացեաց թա-

գաւոր Գուրգէն Արծրունիի խնդրանօք ,
որուն ուղած է և իւր համեստ Ծննդյանին :
Եթե Երդոյ Վիրքը , որիւր վառվռուն խմասո-
ներով և գեղեցիկ նկարագիրներով , Փեսայի
և Հարսի անուամբ , Քրիստոսի խանդակամբ
աշրը կը պատկերացնէ առ Եկեղեցին , եր-
բեմն տկարամիտ մարդկանց գայթակղու-
թեան առիթ եղած է : Այս պատճառառա-
կեղեցւոյ նախնի Հարք հաւատացելոց
ուղղամութիւնը անսայթաք պահպանե-
լու համար՝ մեկնած են նոյն Վիրքը . բարե-
պաշտութեամբ զեղուն զգացմանքներով .
Նախնի մեկնիչներուն մէջ յայտնի է մանա-
ւանդ Գրիգոր Ախոսացին , որ Ալոմզիադա
ազնուական տիկնոջ խնդրանօք բացատրեց
Երդոյն , այն գայթակղութիւնները վեր-
ցնելու նպաստակառ , որով ոմանք Շիւզան-
դիոնի մէջ տկարամութեամբ նոյն Վիրքը
աշխարհական մտօք շարագրուած կը համա-
րէին : Ունի Նարեկացին իւր մեկնութեան
մէջ հետեւած է Գրիգոր Ախոսացւոյն բայց
այնպիսի համառօտախոս և պարզ եղանակ
բռնածէ , որ Եւրոպական բանասէրքներէն
ոմանք Ծննդան Գեվութիւն կ'անուանեն Նարե-
կացւոյ երկասիրութիւնը : Այս պարզու-
թեան դիմաւորք շարժառիքն այն եղած է .
որպէս զի՞ն ոչ միայն համատներն , այլ և հա-
արագի մարդիկ պիտի և կանաչ կարկեան

գիւրութեամբ հասկանալ և երբէք ըստուցանել իրենց սրտերուն մէջ գայթակղական զգացմունքներ։ Եշտ Երդոյի վսեմ հոգին ըստունելիւ համար՝ բաւական է միայն որ նիւթական նկարագիրներն հոգեւորի փոխենք և Քրիստոսի անհուն սէրը պատկերացնենք մեզ, որով սիրած է զիկեղեցին, իւր անձը զոհելավ։ Եթէ աշխարհի մէջ սէր՝ մի չէ կարող հաւասարիլ Քրիստոսի սիրոյն, հետեւապէս և ոչ Պիրք մի կարող է այնպէս յարմարիլ Քրիստոսին և Եկեղեցւոյն, ինչպէս Եշտ Երդոյն, երկնաւոր Փեսայի և Հարսնի սիրանչելի սիրոյն նկարագրութեամբ։ Որուն կարող է վայելչապէս յարմարիլ, և ոլ կարէ լինիլ Եշտ Երդոյի նկարագրած այն Աւան և Պեղչիկի հարսն, Եթէ ոչ մարդկութիւնը, որ Աւան էր պատուիրանականցութեամբ և սակայն այնչափ Պեղչիկի և սիրելի, որ Քրիստոս նորա սիրոյ համար մահ յանձն առաւ և սեւութիւնը իմրեւ ձիւն սպիտակացնելով՝ հարսնացոյց իրեն հետ և յաւիտենական մի ութեան դաշն համատեց։

Եղինակամ՝ Յարեկ, որ կը կոչուի նմանապէս Ալեքութիւնն, և կազմուած է 95 գլուխներէ, որոց վերտառութիւնն է « Ի խոր որդի խօս ընդ Ապուծոյ »։ Կարեկացւոյ այս երկանիրութիւնն այնպիսին հանրական լինդուներութիւն գտնած է՝ այստանեաց Եկեղե-

ցայ զաւակաց մէջ և պընպիսի յարգ՝ հա-
մայն բանասիրաց առջեւ , որ երկարօրէն
գովարանել այս տեղ՝ առելըդոց կը համարինք
Այսափ միայն կ'առենց , որ Կարեկացոց
Եղօթական կամ Ողբերգական երկասիրու-
թեան մէջ ակներեւ կը նշմարուի Առւրբ-
Գրց իւ ու լի հմտութիւն , երկիւ զած սիրու,
վառ եռանդ , կորսօֆի ճանացողութիւն առ-
տուածային կատարելութեանց և մարդկա-
յին վախճանին , և այս ամենքի հետ՝ յոր-
դաւթիւն վսեմ իմաստից և դարձուա-
ծոց : Կարեկի մէջ կը նշմարուին կրկնու-
թիւնը իմաստից : Եւ այս շատ բնական է ,
որավհետեւ Կարեկն պատմական և իմաս-
տասիրական գիրք չէ , այլ աղօթական , և
ջերմեռանդութեամբ վառուած սրտի հա-
մար յարդութիւնը բնական յատկութիւնն
է , կամ այլապէս տանենց . սրտի հոսան-
քը՝ չափոյ և տահմանի տոսկ չ'ամփոփիք ,
միտքն է միայն որ չափով և տահմանով կը
տրամադրէ : Ուստի , եթէ մոտային գրուա-
ծոց մէջ տրամաբանութիւնն է գովելի .
սրտային գրուածոց մէջ՝ գովելին է . աղնիւ-
գդացմանց յորդութիւնը , ճոխութիւնը և
ջերմութիւնը :

Կարեկի պարունակութիւնը աղօթքներ
ընթրամ . անշաւշտ կադրոց է հառկանալին լի-
նիւ պիտիյն ջերմ սիրու ունեցաղներուն : իսկ

անսիրտաներուն ոչ մրցյան անհասկանալի , այդ
եւ գուցէ ձանձրալի թուի : Արտվհետեւ պր-
տային երկասիրութիւն հասկանալու հա-
մար՝ միրտ հարկաւոր է : Եւ յո այնշափ ըզ-
դալի է , որ կարելի է ասել թէ մի և նոյն
ընթերցողի համար մի և նոյն կարեկն եր-
բեմն հասկանալի է և երբեմն անհասկա-
նալի , նայելով ընթերցողի պրտի գափոփա-
կան ջերմութեանն կամ սառնութեանը :
Դուցէ այս է պատճառն , որ ոմանց համար
կարեկն մմին և խրթին գիրք երեւցած է ,
որ և կ . Պօլսոց Պատրիարքն Յակոբ Հաղեան
և Ա Անեաթիկի Ո խրթարեան Ուխտեն ։
Դաբրիէլ Աւետիքեան երկարօրէն մեկնած
են զայն :

Կարեկի միշտակարանին մէջ կ'աւան-
գուի , որ Աղօթամատոյց գրքի յարթնմանը
օժանդական է Կարեկացւոց Յովհաննէս
եղբայրն , սակայն այս օգնութիւնը առա-
ւել եղաւ այլական խորհրդակցութեան պիտի
համարինք , քան թէ գործակցութեամբ եր-
կասիրութիւնն .

Դրիգոր Կարեկացին շարագրած է նմա-
նապէս հնդ երկասիրութիւններ , ինչպէս ևն Պան-
յեր . Ո Խըրիներ և Տաղեր , որոց մէջ կը գնայի-
բանաստեղն ական ոքի , հանձար և ազնաց :
Դանձերն թռուով երեք են . այն է Պա-
լատ Հափազն Ալբոց , Կ. Խաչը և Ա Հինդիկ . ինչ

առջերդն ու մեզեղիքը բանեն առելի են։
Կան նմանապէս և մի քանի այլ երկասիրու-
թիւններ, այն է խառը։ Անհնավիւն, իրդ
և այլն, պրոք Նարեկացւոյն կ'ընծայուին։

Այս դարու մէջ կը յիշատակուին քանի մի
ուսումնասէր անձինք, որք են։ — Խնդիր կը
թքրիան, որ գրադարան հագտատեց Շի-
րակ դաւառի մէջ։ Դաւա ՎԱՆՀԱԱՅՐ,
ԳԵՎՐՈՒ ՄԵԿԵՒՉ ԳՐԱՑ, ԱՌՎԱԵՍ ՏԱՐՈՒԵՑԻ,
ԱԱՐԳԻՆ, ԱՏԵՓԱՆԱՍ ՄՊԱՖ ԵԳԻՍԿՈՊՈՍ, «—
րուն կ'ընծայուի Արքուիւն ոբոյ շարականը,
ԴԱՎԻԹ ՄԱՀԿՈՏՆ, ԴԱՎԻԹ ԵԳԻՍԿՈՊՈՍ ՄԱԿԱՑ
և այլն։ Բայց սոցա երկասիրութիւններն մեզ
հասած չեն, և որոշակի չեն յիշատակուիր
պատմութեանց մէջ։

ԱՏԵՓԱՆԱՍ ԱԱՐԴԱԿ ԿԱՄ ԱՄՊԻԿ ։ ԱՌ
պատմագրաց մէջ նշանաւոր տեղ ունի Ատե-
փանու Տարունեցի, որ և երաժշտական երգոց
հմբութեան պատճառաւ։ Առողի կը կոչուի։
Ատեփանու երկասիրած է իր պատմութիւ-
նը Դադիկ Ա Թագաւորի և Արքիս Ա կա-
թողիկոսի հրամանաւ, որ ատեղծագործու-
թիւննեն սկսելով հասաւցած է մինչեւ Տիրու-
տորի 1004 թուականը։ Եամսնի պատոմնե-
թեան նկատմամբ հետեւած է Խակերիսմին
և Խորենացւոյն։ Երեք Դիմք բաժնուած է
այն պատմական երկասիրութիւնը, որու

Երրորդը միայն իւր ժամանակակից անցքերը
կը պարզենակէ : Իսկ առաջին երկոքի մէջ
կը խօսուի համառօտիւ Խրայէլացւոց ծագ-
ման , Եղիպտոսի Պտղոմեանց թագաւորաց,
Սորոց, Ո'արսոց և Պարսից ինչնակալաց , մեր
Արշակունի և Բագրատունի թագաւորաց ,
Սասանեան ցեղի արքայից և Հայութացւոց
Ամիրապետաց վրայ . Իւր ժամանակակից
անցքերը պատմած ժամանակ բաւական լցու
կը ծագէ Ասողիկ աղդային պատմական կե-
նաց վրայ և այս պատճառաւ իրաւամբ մեծ
յարգանաց արժանացած է հետեւեալ դա-
րուց պատմիչներէն , մինչեւ անդամ Ո'ա-
գիստրոսէն կոչուած է Երջանիկ ծայրադոյն ծեր :
Ասողիկ ականատես լինելով յունական կրօ-
նական հարածանաց , զոր բորբոքած էին
Հայոց դէմ , սուրբ նախանձախնդրութեամբ
վառուած կը խօսի նոյն անցքերուն վրայ :

Ասողիկին կ'ընծայուի նմանապէս՝ Ո'ակո-
թիան ինչ Գրոց Երեմիա հարգարէին , ասկայն
այս երկասիրութիւնը ցարդ երեւցած չէ :

Ոյն դարու մէջ կը յիշատակուին քանի
մի գրաւածքներ եւս , ինչպէս են Բան շնոր-
դէմ Արիոսեանց , Եւտիքեանց , Եւառոպա-
կանաց , զոր գրած է մի անոնուն վաղբար-
պետ , կարսոց թագաւոր Ո'աւ շեղ բարդու-
առնեաց խնդրանօք , այսպիսի սկզբնաւորաւ-
թեամբ . « Ով քաջ բանասիրաց » անը իմ:

Մուշել Բագրատունի , պերճարանդ և
հանձարեղ գունակացեալդ . առ ծայրագոյն
խորոց խոհեմագոյն ըստ գործնականին և
տեսականին գրող ստորոգութեանց ։

Բայց այսուհետեւ պատրափրանց , զոր գրած է
ՄԱՆԱԾՈՒՆԵԱՑ ՏԵՐՆ ԱՐՑԱԿԱԾԴԴ Հրամանաւ-
Լուսմայ Խնձեւացւոյ :

Հայոց պատրափրանի . զոր երկասիրած է ՏԱՆ-
ՃԱՑ անուն վարդապետ մի : Ե՞ս երկասիրու-
թիւններն անուամբ և եթ կը յիշատակուին ,
բայց տակաւին լցա տեսած չեն :

Դ .

Ուստի մասնաւոյք ԺԱՅ գորու . — Երկասիրութիւնը Յակ-
իսնես Կրցեան վարդապետի . Գրիգորի Մագիստրոսի ,
Գերարդի Գետապարժի , Անանիայի Սանահեցւոյ ,
Սարգսի Սեւանեցւոյ , Արիստակիսի Լատիվիբոցւոյ ,
Գրիգորի Վահագանիի և Պարունակութիւնը իւրաքան-
չեացն . — Գերոց . Բնեադորս և Ախտանոս վարդա-
պետք . — Գողոս Տարանեցի .

Առօր ԴԱՐԻ Նշանաւոր ուսումնավայրը
եին՝ Զորագեաց մէջ Հարդար և Այսակին
վանդակերն , որը շինուեցան Աշտակորմածի բա-
րեպաշտ ամուսնն , խորտվանոց թագուհւոց
առատաձեռնութեամբ , և յետոյնորոգեցան
Աշուանից Բագրատունի կրտիկէ թագաւու-

ըմբ ձեռամբ և ապահով եպիսկոպոսներու դաշտաւու, որոյ մագիստրոսարանը յիշատա կարանաց մէջ ամենափարբեամ գանձարան կոչուած է : Անուանի էին նմանապէս Խնադի վանքն, Ամենափրկիչ Թեհապանն Տրապիզոնի մօս և Աք Գինոց վանք՝ Այրարատաց Ծիրակ գառառի մէջ : Խոկ մետաժաներորդ գարու անուանի մատենագիրներն սպա են . —

ՅԱԿԱՍՆԵՍ ՎԱՐԴԱԿԱՑ ԿԱԶԵՒՆ ՏԱՐԱ-
ՆԱՑԻ, որ ծագիեցաւ Խաչիկ և կաթողիկոսի
օրով, և այնշափ մեծ եր իւր համբաւն, որ,
ըստ պատմելոյ Խոհ հայեցւոյն, Պետրոս կա-
թողիկոսն Յովհաննես թագաւորին ղբկեցին
նորա մօս զիյագիստրոս և այլ նշանաւոր ան-
ձինք, որպէս զի նոյն ժամանակ պատահած
արեգակնան խաւարման պատճառներն իմա-
նան : Խուպէտ և իրենց առած պատասխաննն
աստեղագիտական չէր, այլ ընկ խրատական
գուշակութիւն : Ու առն զի նոյն ժամանակ
աստեղագիտութիւնը տակաւին ծաղկած
չէր և բնական երեւոյթներուն այլ տեսակ
մեկնաւթիւններ կը տային :

Ա աստիվերտցին կ'աւանդէ, որ կաղեռն
վարդապէտն շարագրած է Հայոց գիրք մի,
ըստց ցարդ երեւան ելած չէ : Ը արտպրած
է նմանապէս երկասիրութիւն բնշ դասնորդն
պարունակի, և խուսափեաց, ու պահանջ պաց : Այս

կերտացին եպիսկոպոսին խնդրանքը , եւ այն գրուածքէն մի հաստատն միայն հասած է մեզ :

ՊՐԻԳՐԱՐ ՄԱԿԱՏՈՐԻ , Վ առակայ որդին ,
Պահպատասխի ցեղեն : Այս իւր հօր մահէն յետոյ միացաւ նախարարաց հետ , որոնք թագաւորեցուցին Պագիկ բ . Բագրատոնին : Ի այց յետոյ Վեստ Արքսի պատճառաւ ինքն եւս կասկածաւոր համբաւուելով թագաւորի առջեւ՝ թրղու Երարատեան աշխարհն և առանձնացաւ ՚ի Տարոն , ուր սկսաւ վանքեր շինել , ՚ի թիւս որոց և Ա . Լարապետի ժամատունը :

Եթեոյ այն շինութիւնքն իւր Հրահատ գործակալին յանձնելով ինքն գնաց Շիւզանդիսն , ուր շատ մեծարանք գտաւ եւ Անդիսարա ու ՚ի առափառութերն ստացաւ , որով և աւելի կասկածաւոր եղաւ . Պագիկ թագաւորի առջեւ , Յունաց հետ ունեցած սոյն մատերանեթեան պատճառաւ : Պագիկ թուղթ գրեց Անդիսարասին , իբրեւ հայրենի իրաւանց մատնչե վրայ , և պաշտպանողական պատասխան ստացաւ , բայց իւր կարծիքն չը փախեց :

Եղր Յայնք (՚ի քաղաքն յափշտակեցին) . Պրիգրար Անդիսարաս կ . Պօլիս գնաց , ուր էր և Պագիկ , ողպէս զի Բագրատոննի

Թագաւորութիւնը . կողմանման . վտանգէն
աղաւան . բայց անկարող գտնուելով՝ իւր
հայրենի ամրոցներն եւս — իշնի, կայեան և
կայծոն — Հյունաց ձեռքը յանձնեց և Աշխա-
դիտաց մէջ՝ ի փոխարէն քանի մի կարուածներ
առնելով, այն տեղ քաշուեցաւ . իսկ Տարո-
նոյ մէջ ունեցած իշխանութիւնը յանձնեց
Դառնիկ Ամիկոնեանին :

Եյս ժամանակէն յետոյ Ապիստրոս ըս-
կտաւ պարապիլ աւելի մատենագրական եր-
կասիրութեամբ և 1058ին կնքեց իւր կեանքը:

Ապիստրոս ունեցաւ նաև քանի մի նը-
շանաւոր աշակերտներ, ինչպէս են Բարսեղ
և Շղիսէ, որ եպիսկոպոսութեան առտիճա-
նի հասան, և իւր որդին Գրիգոր Պահա-
ռունի կամ Ակայատէր, որ կաթողիկոսու-
թեան աթոռն բարձրացաւ, ինչպէս արդէն
խօսած ենք նախորդ պատմական Ը քջանին
մէջ : Անը մատենագիրներէն ոմանք գովու-
թեամբ կը խօսին Ապիստրոսի հմտութեան
վրայ, որոց գովեստներն մի առ մի յառաջ-
բերել այս տեղ շատ երկար կը լինի : Առաջ
կը մնայ մեղ իւր երկասիրութեանց վրայ
խօսիլ :

Գրիգոր Ապիստրոսի երկասիրութիւն-
ներն սոքա են :

Ա . Խնդիր, որոց թիւն ութառունի կը
հասնի և զորս կարենիք երեք բաժանման վե-

բաճել, այն է վարդապետական, իմաստովորության
և շնորհանդինան։ Այս թղթերուն մեջ նշանա-
ւոր են։ ԱՊատափառի Վարչոց կաթողիկո-
սի թղթոցն, զար Տիգրանակերտին գրած
էր առ ԱՊԳԲԱՊՐՈՍ իրքեւ գանգատու թուն-
գրակեցիքն հալածելու համար, և խիստ
զօրաւոր պատռսխան ընդունեց ԱՊԳԲԱՊ-
ՐՈՍԻՆ։ — Խոտղը առ Աբրեհիմ Վմիրայ Հա-
գարացի, որուն կինը Հայ լինելով, Ախա-
կեան ցեղէն՝ և ՚ի մանկութենե քրիստո-
նեայ, գրաւոր կերպով խնդրած էր ԱՊ-
ԳԲԱՊՐՈՍԻՆ իւր մի քանի կրօնական տարա-
կուսանկըներն գրաբառել, և ԱՊԳԲԱՊՐՈՆ նոյն
առաջարկութիւնը սկրսվ ընդունելով՝ գլ-
րած էր իւր թուղթը։ — Խոտղը դարձեալ
առ նոյն Վմիրայ քրիստոնէական կրօնի մա-
սին։ ԱՊԳԲԱՊՐՈՍ գրած է նմանապէս քա-
նի մի թղթեր, մեծ մասամբ անհասկանալի,
առ Ափրեմ Եպիփակապաս Քջնոյ իրեն զրկած
նոռանց համար, առ ԱՊՄԻԿԱՆԵԱՆ՝ կարմրա-
խայտ ձկանց ընծայից համար, առ որդին
իւր Ա իսու Ա ահրամ և առ ծուրադոցն աջա-
կերտուն։ — Խոտղը մի առ Պետրոս Պետրա-
գարձ կաթողիկոս, և երկու թուղթ առ
առաջնօրդն Անեւանայ Ապրգիս և առ Յով.
Հաննէս Ախոնեաց արքեպիսկոպոս, և այն։
Առ Պետրոս և առ Ապրգիս գրած թղթե-
րով ԱՊԳԲԱՊՐՈՍ կը նկարագրէ իւր վատերը,

զոր Գրագիկ թագաւորէն կը կրէր . իսկ առ
Յովհաննէս գրածով՝ գոհութիւն կը մա-
տուցանէ այն միսիթարական թղթոյն համար,
զոր Արքեպիսկոպոսն գրած էր առ
Առգիտորոս, իւր Ա ասակ հօր մահուան հա-
մար, հոգեւոր սփոփոնք մատուցանելով :

Բ. Ա ադիտորոս, թղթերէն զատ, ունի
ժեղնաղան գրաւածներ, այն է Ներբող ՚ի առ-
ինչն ապուածրնիալ, բարեպաշտական զգաց-
մունքներով զեղուն . Որանուոր ինչ, զոր ըն-
ծայած է Գետրոս Գրտադարձ Հայրապե-
տին, մի խաչոնշան գաւաղանի հետ, յա-
ւելով երկար տեղեկութիւն վիպասանա-
կան քերթութեան վրայ . — Հաղարբովան գո-
րաշխութեան . որով չափու առած է Հին
և Նոր Կոտակարանաց պատմութիւնը, Ա ա-
նուշէ Հակարացւոյ խնդրանօք, որուն հետ
ծանօթացած էր Ինչպանդիոնի մէջ : Ա ա-
նուշէ տեղեակ էր զանազան լեզուաց, նաև
Հայերէնի և բաւական տեղեկութիւն ու-
նենալով քրիստոնէական կրօնի վրայ՝ շատ
անզարդ կը կարծէր Ըստուածաշունչն, ուս-
տի խոտացաւ Ա ադիտորոսին՝ քրիստոնէա-
կան հաւատքն ընդունիլ, եթէ կարող լինի
նա իւր հարցաւիրութիւնը գոհացնել : Այս
առթիւ գրեց Ա ադիտորոս Հաղարբովան Ա-
րանաւորն ; որուն վրայ աքանչանալով Ա անու-
շէ քրիստոնէական կրօնքն ընդունեց : Այս

քերթուածի սկզբնաւորութիւնն է . « Այն
են գործք Կ'սառւծոյ ո :

Ա երոգրեալ ինքնագիր երկասիռւթիւն-
ներէն զատ Ո`ագիսորոս պարապած է քանի
մի յունական և ասորական գրոց թարգմա-
նութեամբ , բայց այս թարգմանութիւն-
ներէն շատ տակաւ հասած են մեզ , և իւր
երկասիրութիւններէն քանի մի թգթեր և
ոտանաւորներ միայն հրատարակուած են ,
իսկ միւսները մնացած են առանց տագաղքու-
թեան : Ո`ագիսորոսի գրաւոր վաստակոց
Եզզուաքննական նկատողութիւնը մեր նպա-
տակէն արտաքոյ համարելով՝ այսչափ միայն
կ'ասենք որ ընդհանրապէս խրթին են եւ
մթին և նաև քանի մի հատն բոլորովին ան-
հասկանալի , միայն վարդապետական գրք
ուածքներն են , որ պարզ են և դիւրըմբո-
նելի :

Պետրոս ԳԵՏԱԴԱՐՁ , որուն հայրապե-
տական կենաց պատմութեան վրայ արդէն
խօսած ենք . իսկ գրաւոր երկասիրութեան
կողմանէ իրեն կ'առանդուին . Ը արտիվնեք
Ո`արդիրուաց և Հանգստիոն և նոյն համառօտ
և գեղեցիկ շարականներն , որ ընդհանուր
անուամբ կը կոչուին Ո`անկունի , որոց շատե-
րըն այնչափ ընտիր են . թէ երգաբանական
շախագրայն և թէ վայելուչ իմաստից . կազ-

մանեւ . որ նշանաւոր տեղ կը բռնեն Ը ա-
րակնացի մէջ :

Եւնահս ՍԱՆԱԿՆԵՑԻ որուն , կ'ընծայուին
հետեւեալ երկասիրութիւններն . — Ո՛ԵՒՆ-
ԱԿԱՆ շորեքտասան թղթոց Պօղոսի , զօր գր-
րած է ՚ի խնդրոց Գետադպրձ Հայրապետին .
— Ի՞նձ Հայութագութիւնը ընդգեւմ երկաքնակաց ,
(Յունաց) զօր գրած է հրամանաւ Գետա-
դպրձին և որուն մէջ կը խօսի Հայոց և (Յու-
նաց մէջ վիճաբանութեան նիւթեղած խընդ-
րաց վրայ , այն է անխարականութեան դէմ ,
Քրիստոսի մարմինն ապականացու համուրող-
ներուն դէմ , ներքինացեալներու դէմ , Քաղ-
իեղոնի ժողովոյն դէմ , Վ յաց բաժանմուն
վրայ , պատկերաց վրայ , միւռոնին , բաղար-
ջին , Քրիստոսի ծննդեան տօնի և երից սրբ-
րասացութեանց վրայ . — Համեմատութիւնն ըս-
տից Աւետարանչաց . — Խերբողեան Ծողակա-
թի , այն է Վ աղարշապատի Խ ջմխածին ա-
թոռանիստ կաթողիկէին . — Խրապէ քահա-
նացից . — (Յողոսի Յողոսաւ նորդարեի և (Յու-
կանու Ո՛ՀՐԴՔ . — ՚ի խալվութիւն Պեղոսի : Վ յա-
վերջին դրուածներէն մի քանիսն ուրիշ հա-
մանաւն վարդապետի կ'ընծայուին և շատ
հաւանական է :

ԱՅՐԴԻ ՍԵՒԾԱՆԵՑԻ , որ Ո՞ւ ագիսարոսի գըշ-
խաւոր թղթակիցն է , գիտնական և լեզուա-
գէտ , ինչպէս և Ո՞ւ ագիսարոս կը վկայէ իւր
թղթաց մէջ ասելով . “ Ո՞ւշտ կարօտեալ եմ
բանի քում և գրի . քանզի հզօր ես ՚ի պատ-
աիկոսական մատենագրութեան , և սիրեցի
ինձ ոչ այլ բնչ՝ եթէ ոչ այնպիսի ինչ ընել
կամ ասելու . Ո՞ւ ակայն Խարդոսի Ո՞ւ անեցւաց
անռաւամբ երկասիրութիւնն կամ թարգմա-
նութիւն տակաւին երեւցած չէ : Ո՞ւ սպէս
են ժամանակակից քանի մի վարդապետներ՝
Ալսուիւր , Գեղրդ , Տեգրըն Պատլանուն , ու
որց ուսումնասիրութիւնը միայն կը յիշա-
տակուի պատմութեանց մէջ :

ԱՐՄԵՆԻԿԵՍ ԼԱՑԻՎԵՐՏՁԻ , որ Հայաստա-
նի արհաւրալից ժամանակի ականատես , ա-
կանջալուր և տառապատռում պատմագիրն
է : Հաստիվերտցաց պատմական երկասիրու-
թեան քննիչներէն ունաճ կը յանդիմանեն զինքն , որ աւելի ողք գրած է քան թէ պատ-
մութիւնն : Խակայն այս դպուողութեան խմա-
սութիւնն ինքնին կը մեղմի , երբ ընմերցո-
ղը պատիերացնէ իւր աշաց առջեւ այն սու-
կալի և արիւնահեղ անսագրանն , այն աւե-
րանաց , գերութեանց և վտականդութեան
արհաւրալից ժամանակամիջոցն , որուն մէջ
Հայաստան՝ յանական վայրագ ատելութեան

և պարսկական մարդախոշոշ բարբարոսութեան ենթարկեցաւ և աղէտից հանգիսարան դարձաւ . Ի սա մեզ, զբայցուն հայրենասէր մի, Բնչպէս էր | աստիվերտցին , այլապէս չէր կարող նկարագրել այն աղէտներն , եթէ ոչ ողբարով և արտասաւելով : Ի ասն զի Հայատանի հոյաշէն քաղաքներն , ամրոցներն ու բերդերը քայլայուած , վանքերն ու եկեղեցիներն աւերանաց մատնուած , զօրականք և ժողովուրդք անհնարին տառապանաց մատնուած , թագաւորն՝ վասարանդի և հայրապետական աթոռն՝ ամսոյի . այս ամենն սրտաճմլիկ տեսարանին հանդիսատես թշուառ պատմագիրն Բնչ կարող էր առնել , եթէ ոչ ողբարիսառն առղերով աւանդել իւր պատմութիւնը , հառաջելով իւր սրահի խորքէն . Այս , թագաւորըն (Դագիկ Բ .) անկեալ ՚ի պատւոյ , իբրև զգերի կալանաւոր նսափ ՚ի հեռաբնակ տեղիս . . . հայրապետական աթոռն ամայացեալ ցուցանի տիտոր դիմք , իբրեւ զկին նորահարսն մնացեալ յայրիութեան . . . յողբար փոխեցաւ մեզ ամենայն ո :

| աստիվերտցւոյ օիրտն առելի կը մորմաքի , երբ Դաւիթ Լիւրապաղատի և Վշտ Բագրանունեւոյ թագաւորութեան ժամանակի իւաղաղաւէտ հայրենիքը կը համեմատէ Յովհաննէս Ամբատի և Դագիկի իշխան


նութեան ժամանակի խռովայոց և ասուապեալ հայրենեաց հետ : Եւյս հակապտտէերէն սաստիկ կը զգածի խեղճ պատմագիրն և այնպէս կը խօսի , կարծես թէ արիւն կը բղնէ սրտէն : Աստիվերտցւոյ պատմնկան երկասիրութիւնը տպագրուած է թէ Հայերէն և թէ Դաղղիարէն :

Աստիվերտցւոյն կ'ընծայուին Ճառամեկնութեան ընթերցուածոց , որ աակաւին տպագրուած չեն :

Դրտգոր ՎԿԱՅԱՍԵՐ , որդի Դրիգորի Վագիստրոսի : Վ կայասիրի կաթովիկոսութեան շրջանի պատմութիւնն արդէն ընդարձակօրէն աւանդած ենք . կը մնայ այժմ նորա գրաւոր երկասիրութիւններն միշտ տակել , Վ կայասիրի երկասիրութեանց գըլ խաւորներն են . — Վ խյաբանութիւնն Ալբոյ , զոր թարգմաննելով կտրգի գրաւ և տօներ հաստատեց , որոց համար և Վ խյասեր կոչուեցաւ . — Ձարգմանութիւնն Յովհան Խակերերանի մըայ յօրինած Պրոկղի ներգրողին . — Պապմութիւն Վ արուց Խակերերանի . — Վ խյաբանութիւնն Ալբոյն Գէորգայ , Լուգոքսեայ և Ումելայ : Վ կայասէր իւր թարգմանական աշխատութեանց մէջ գործակից ունեցաւ Լիւրսկոս գիտնական վարդապետն և Ուսթէլս քահանցն :

Այն ժամանակները ծաղկեցան Գեղրդ
ՎԱՐԴԱՊԵՏ, որ քաղցրուսոյց վարդապետու-
թեան համար Ո՛ՆՅԻ կոչուեցաւ. ԹԿՌԴՈՐՈՍ
ՎԱՐԴԱՊԵՏ, որ քաղցրանուագ ալէլուիա
նուագելուն համար՝ Ըլտիօփի կոչուեցաւ.
ԽԻՍՏԱՆՈՍ կամ ԽԻՍՏԱՆՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ, որ իւր
հայրենեաց մէջ նահատակուած քառասուն
մանկանց վրայ ներբողեան գրեց. ՊՕՆՈՍ
ՏԱՐԱՆԵՑԻ, որ Թիփիստէ յոյն կրօնաւորի
հակառակասիրութենէն ստիպեալ՝ մի սար-
սափելի գրուածք հրատարակեց՝ հարուա-
ծելով այն նենգժոտ մալեկրօնութիւնն, ո-
րով Հյոնք նախատակոծ կ'առնէին Հայաս-
տանեաց Լ՛կեղեցին : Պօղոս երկասիրած է
նոյնպէս եկեղեցւոյ կարգաց Վ ԵՐԱԾՈՒԻՆ,
այսինքն պատճառք Տօնից, Ճամակարգու-
թեանց Ծ ՆՅՁԵՐԾՈՒԱԾՈց, և Ծ Օփիսից :





Հ Ա Յ Ա Պ Ե Բ Ո Ր Դ Դ Ց Բ Ջ Ա Ն

Հայուստանեաց չ այրադեսւթեան՝ ի կիշի կիւ փոխագրուեցէն մինչեւ ջերաւին փօխադրութիւնն յԱրարատեան նախկին աթոռանիստն է շմիածին եւ մինչեւ սկզբնաւորութիւնն է կիշիկիոյ ժամանակը կաթողիկոսութեան:

1080—1441

Ա.

Համառօտ տեսութիւն

Հմետերորդ Շքանին վրայ :

ՍԱԽԸՆԹԱՑ ՇՐՋԱՆԻՆ ՄԵջ տեսանք , որ
Բագրատունի թագաւորական Հարասու-
թեան անկումէն զկնի՝ ազգային գաղթակա-
նութեան հետ Հայաստանեայց հայրապե-
տական Աթոռն եւս փոխադրեցաւ ՚ի Կիլի-
կիա : Ազգային կենաց այս յեղաշրջումէն Կի-
լիկիա պատմական նոր կերպարանք ստացաւ
մեր Ագէն նկատմամբ , այսինքն մի կօզմէն
կտնգնեցաւ այն տեղ Ուութինեան իշխանա-
կան նոր Հարստութիւնն և միւս կողմէն
վրաբանդի և լիոներուն ապաստանած կա-
թողիկոսական Աթոռն օր աւուր աւելի
հաստատութիւն ստացաւ :

Ավելիից հայկական իշխանութեան կամ՝
 թագաւորութեան շրջանին մէջ, որ Դադիկ
 Բի ազգական Ուռբէն իշխանապետէն սկսե-
 լով (1080) Ուռբէնեան կոչուեցաւ, և մօտ 300
 տարի տեւելով՝ Ուռտինեան Եւոն Զ թա-
 գաւորի մահուամբ վերջացաւ, պիտի տես-
 նենք որ Հայաստանեաց Խէկեղեցին յունա-
 կան հարստահարութենէն տարուբերելով՝
 կ'ենթարկի միանգամայն և Պապական ազ-
 դեցութեան և յերկուտոտէք նոր հրապու-
 րանքներու մէջ կը ծփայ : Ուռբինեան Հա-
 րստութիւնն, Խիլիկից գեղեցիկ և վաճա-
 ռաշահութեան նպաստաւոր դրից պատճա-
 ռաւ, սակաւ ժամանակի մէջ բաւական կը
 զօրանայ, բայց տիրապետող Հայ իշխանաց
 և թագաւորաց լատինական ազգի հետ ու-
 նեցած խնամութեանց և ակնածական յարա-
 բերութեանց առթիւ Խէկեղեցւոյ անկախու-
 թիւնը վտանգուելու կը մերձենայ : Հետե-
 ւապէս պիտի տեսնենք ներկայ Ըրջանին մէջ,
 որ յունական հրապոյրներուն վրայ կը յա-
 ւելուն նմանապէս հռովմէական հետամբ-
 առութիւններն, մեր Խէկեղեցւոյ ինքնօրէն գո-
 յութիւնը ստրկացնելու դիտաւորութեամբ ։
 Երկու կողմէն եւս կը յաճախիմն բանագնա-
 ցութիւնք և թղթակցութիւնք և մեր Հայ-
 րապետներէն ոմանք կը ստիպուին քանի մի-
 ժողովներ կազմել և ջանալ պաշտպանել մեր

Եկեղեցւոյ ուղղագաւանսութիւնը յունական և հռովմէական աններողամիտ պահանջումներն ու վիճաբանութիւնները մեղմելու նպատակաւ : Այսպիսի Հայոց հայրապետաց սոյն քրիստոնէական խաղաղասիրութեան միջոցներն ոչ միայն չեն զիջուցաներ յունական և հռովմէական աններողամառութիւնն , որուղղակի միակերպութիւն և ստրկութիւն կը պահանջէր Հայաստանեաց Եկեղեցիէն , այլ ընդհակառակն ներքին խռովութեան տեղի կը տայ մեր Եկեղեցւոյ ղաւակաց մէջ Հայոց արեւելեան վարդապետներն Եկեղեցւոյ անկախութեան կորուստի ու աղաւաղութեան վտանգ նշմարելով Արեւմտեան կամ Ախլիկիոյ Հայ վարդապետաց ունեցած յարաբերութեանց մէջ յունականաց եւ հռովմէականաց հետ՝ ստատիկ կը յուղին և կը զայրանան : Այս պատճառաւ Ամբրոնեանք Ախլիկիայէն և Զորագետացիք Հայրատէն առ ժամանակ մի նախատանաց կարկուտներ կը տեղան իրարու վրայ : Ամբրոնեանք կը նախատուին իրեւ հայկական Եկեղեցւոյ նախնի պարզութեան աղտազիներ և լատինական ու յունական նորաձեւութեանց մուծիչներ . իսկ Զորագետացիք կը նախատուին իրեւ Եկեղեցական բարեզարդարութեան արդելիչներ և վաղեմնի ստիրութեանց կրտօրէն հետեւողներ : Ա-

բեւելեան վարդապետաց կասկածն երթաւ
լով աւելի կը զօրսնաց եւ իրականութիւն
կը ստանաց , քանի որ Կըստերներու և Պապե-
րու յարաբերութիւնները կը յաճախին մեր
հայրապետաց ոմանց հետ , և մանաւանդ
քանի որ լատինական Ոխարարութեան կամ
Ունիթոռութեան չանփերը կ'արծարծին
Հայոստանի մէջ : Ունիթոռութեան երեւ-
ւայթն աւելի պարզ կերպով կը յայտնէ , որ
Պապտկանութիւնը , պատրիարքով մեր Արեւ-
մտեան վարդապետաց քրիստոնէական հո-
գին , և խաղաղասիրութիւնն իւր համար
պատրուակ բռնելով , կը ճգնի Եկեղեցւոյ
անկախութեան հիմունքը փորել և կրօնա-
կան միութեան հետ՝ ազգայնութեան հոգին
ջնջել : Այսկայն Արեւելեան վարդապետք
շուտով առաջն կ'առնուն այս կորստական
երեւութին , ընայելով որ յանիրսահի պիտի
դրոշմուին հակառականը և անիաղաղանը մակ-
դիրներով :

Այս միարարական շփոթութեանց և
Վիլիկիոյ ոմանց կաթողիկոսաց ու Հռովմայ
պապերու յարաբերութեանց բռն ազգիւ-
րըն որոնելու համար՝ Եթէ ընդհանուր պատ-
մութեան սոյն ժամանակեայ անցից վրայ
հարեւանցի ակնարկ դարձնենք , ամեն բան կը
պարզուի : Այս միջնադարեան շքջանին մէջ ,
մինչդեռ Հայք պարակական բռնութեան

և յունակտն հաղածասիրութեան պատճառ ուսու իրենց բնիկ Հայրենիքէն գաղթելով՝ ի Կիլիկիա կ'ապաստանէին, Արեւմուտքն ևս կամ քրիստոնեայ Խւրոպան դէպ ՚ի Արեւելք արշաւելու խորհուրդներ կը յղանար Եշարհն երկու բաժնուած էր, մի մասն Աւատարանին կը հապատակէր, միւսն կուրանին, և թէպէտ երկուան եւս երբեմն իրարու կ'ընդհարէին, բայց յաղթող և յաղթեալ տակաւին որոշուած չէր։ Շուտով խաշակրութեան արշաւանքներն սկսան դէպ ՚ի Արեւելք, Խրուսաղէմը մահմետական իշխանութենէ ազատելու համար, որով և Խւրոպական ու Ասիական յարաբերութիւններն օր աւուր սկսան զօրանալ։ Խիլիկիոց հայ թագաւորք և ժողովուրդք եւս քրիստոնէական սիրով ողջունեցին իրենց Խւրոպացի քրիստոնեայ եղբարքն, օժանդակելով և մոերմական յարաբերութիւններ հաստատելով, այնպէս կարծելով թէ բարոյապէս և նիւթապէս պիտի շահին այս մտերմութենէն։ սակայն յետ ժամանակաց շատ առւղ նստաւ իրենց այս յարաբերութիւննը Վան զի խաշակիր արշաւանաց տակէն առաւել աշխարհակալութեան և Պապական տիրապետութեան տենչանքներ երեւան ելան, քան թէ աղատութիւն Խրուսաղէմի ։ Ժամանակի ողարտաները հաւատեցին, որ Հռովմայ

Պապերը խաչակրութեան արշաւ անցներ (1) հըրատատակելով, ուրիշնպատակ չունեին, եթէ ոչ Եւրոպիոյ տիրապետիներն ու ժողովարքը դը զբաղեցնել և իրենց նիւթական ոյժն ընդարձակել: Լարձ ասենք, պապականութիւնն յարձակողական սուրբ տուաւ Քրիստոնէից ձեռքն, որ Եւետարանի սկզբանց գէմէր, և սակայն Աստվածամութիւնն այնպէս առնօրինեց, որ նոյն սուրբ յետ ժամանակաց

(1) Բնեպէա և խաչակրութեան պատերազմն Սքեմատան կամ Հռովմէական Եկեղեցւոյ պատմութեանը կը վերպարեի: սակայն իրեւ նշանաւոր երեւոյթ մարդկային ազգի պատմագրութեան մէջ, հարկ կը համարինք հետեւեալ համառօտ ծանօթութիւնը տա:

Խաչակրութիւն կ'անուանին այն արշաւ անցներն, որուն մատնակեցան Եւրոպայի զանազան թագաւորներն ու իշխանները (1096—1270) Հռովմայ Պապերու յորդորանոք + Երաւառաշէմը Մահմետականաց ձեռքներն ազտուելու հոմար. և պապ հետեւ ոյց արշաւանց համար զինուորութիւնը ու մատնացազներն իրենց հագուստի վրա չափէր կը կրէին: այս պատմառաւ խաչակրութիւնը կոչուեցան:

Ընդ հանրապէս 8 Արեւելքան խաչակիր արշաւանց կը հաշուին տիեզերական պատմութեան մէջ, որոց առաջինն կատարեցաւ Արքանու Բէյ պապութեան ժամանակ (1086—1100) Պետրոս անապատականի հրաւիրական քարոզութեամբ և Գոդֆրօս Բուլիլնացու Նորմանդիւյ գուգար Անգլիար Բէյ Տարենտի իշխան Բոնհեմնոփի և այլցառավներութեամբ Երերշին կատարեցաւ Եւգենիս Գէյ պապութեան (1174—1180) Ս. Բենարդոսի քարոզութեամբ և Ֆրանսից թագաւոր Լուդովիկոս Էլի: և Գերմանիոյ կայոր կոնքադի առաջնորդութեամբ: Եղբայրն ինձարեցաւ Կիբմէս Գէյ պապութեամբ ժամանակ: Գուգար այլութիւնութեամբ գորոշութեամբ:

ընդդեմ պատրականութեան գարձաւ և քարտ զօրութիւնը քոյքայեց , ինչպէս պիտի տեսնենք յաջորդ Շաջանին մէջ : Պապականութիւնը խաչակրութեան համար դինուուրազներուն երկնից արքայութիւնը խստանալով և մերժողաց վրայ բանադրանք , նը զովք և դժոխոց սպառնալիք տեղալով՝ պատճառ գարձաւ միլիօնաւոր անմեղ ա-

Յրանոփոյ թագաւոր Փիլիպ — Օգոստոսի , Գերմանիոյ կայսր Ֆրեներիկոս Բարբերուսոյ և Անդրիոյ թագաւոր Առինարտի առաջնորդութեամբ : Չորրորդ կատարեցաւ իննովիկնեսիոն Գի պապութեան ժամանակ (1202—1204) Ֆուլք Նէոլայու քարոզութեամբ և Ֆրանդրիոյ դուքս Բագումին թի : Մոնֆերատի Մարքիզ Բանիքաս թի և այլց առաջնորդութեամբ : Հինգրորդն կատարեցաւ Հանորդու Գի պապութեան ժամանակ (1217—1221) Հռոնցարիոյ Անդրէ թագաւորի և Երուսաղէմի ժան Դը Բրիեն ափաղուական թագաւորի առաջնորդութեամբ : Վինչերորդն կատարեցաւ Գրիֆոր թի պապութեան ժամանակ (1228—1239) և Ֆրեներիկոս թի առաջնորդութեամբ : Իսկ Եվնիչերորդն և ովինչերորդն կատարեցան իննովիկնեսիոն Դի և Կղեմէս Դի պապութեան ժամանակ (1248—1270) Ֆրանոփոյ թագաւոր Ս. Լուգովիկոսի առաջնորդութեամբ :

Այսպան արշաւանքներէն զինի : սրաց մէջ միլիօնաւոր դուռը եղան , քրիստոնեայք : աւելի յաղթուելով քան թէ յաղթելով , մի քանի գաղթականութիւններ հասուատեցին Գաղթատինի մէջ , սակայն սոյն գաղթականութիւննը եւս կործանեցան և Երուսաղէմ գարձեալ Մահմէտականաց ձեռքն մնաց : Այս արշաւանքներուն պատճառաւ Եւրոպիոյ թագաւորներն իրայրւ դէմ զինեցան տիրապետութեան հոգւով և մէջ աեղք Պապութիւնն շահեցան , մարմնաւոր իշխանաց առջ կարութեամբ զօրանալով :

րիւններու հոսման և այնքան մարդիկ մեռան սոյն արշաւանաց միջոցին, որ մի նշանաւոր պատմաբանի ասածին պէս . «Ղթէ ամեն կոտորուածները յարութիւն առնէին , մի ընդարձակ երկիր կը բազմամարդէինու Բայց ՚ի հարկ է այս արեանց վրէժը ժամանակն պահանջեց պապականութենէն :

Ե յապէս ուրեմն, պապականութիւնը, խաչակրութեան արշաւանաց շնորհիւ Եսիոյ Երեւմտեան մատներու հետ յարաբերութիւններ ունենալով և հետեւապէս Եկեղեկիոց Հայքիստոնէից մուերմութենէն շահուելով, կը ճգնի Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութիւնը բառնալ քրիստոնէական միութեան պատրուակաւ . սակայն Յախախնամութիւնն, որ պարսկական և հագարական հալածանքներուն մէջ օժանդակած էր Հայոց Եկեղեցւոյն, անակնկալ միջոցներով ազատ կը պահպանէնա և պապական միաբարութեան հետամտութիւններէն : Այսկայն ցաւօք սրտի պիտի խոստովանինք, որ սոյն Ծրջանին մէջ բարոցապէս վէբքեր կը կրէմեր Եկեղեցին հռովմէականութենէն եւ յունականութենէն, այն է ներքին երկարաւակութիւններ աղգային ամբողջութեան մէջ, վիճաբանական պղտորսւմներ Հաւատոյ, անարատ համոզման մէջ և նորաձեւութիւններ վարդապետական ինչ ինչ բացա-

արութեանց մէջ : Եւ այս վէրքերն անհնարին
էր որ չըկրէր . որովհետեւ հալածանքն հե-
թանոառաթենէ չէր , որ աւելի ամրացուցիչ
է , այլ գաւառնաբանական և ծիսաբանական
տարապարտ վիճաբանութենէ , որ առա-
ւել տկարացնել և քրիստոնէական զօրու-
թիւնը մանրել գիտէ , քան թէ կազդուրել :

Ակսինք ներկայ Ը ըջանի պատմութիւնը ,
և ակներեւ պիտի տեսնենք սոյն համառօտ
տեսառթեան ստուգութիւնը :

Բ.

Կաթողիկոսութիւն Գրիգորի Պահլաւունուց և Ներսի-
սի Հնորհալուց :

ԲԱՐՍԵՂ Հայրապետի մահէն գինի՝ կա-
թողիկոս կ'օծուի Գրիգոր Գ . Պահլաւու-
նի , որդի Լապիրատ իշխանի : Գրիգոր Գ .
իւր մանուկ հասակէն , ինչպէս արդէն գի-
տենք . իւր եղբայր Ներախի (Հնորհալուց)
հետ գաստիարակուած էր օրինաւոր կրթու-
թեամբ և Ա կայասիրի խնդրանօք յանձնուած
էր Շաբաթ կամթողիկոսի խնամոց . ուստի և
կաթողիկոսացաւ իւր քսանամեաց հասակին
մէջ , որուն վրայ արդէն վստահ էին , ինչ
պէս թիքն Շաբաթ Հայրապետն , նոյնպէս և

ականատես ժողովութդն : Այսկայն հեռաւոր
ազգայնոց մէջ բաւական շշուկ տարածուե-
ցաւ այս մասին և Աղթամարայ Դաւիթ ար-
քեպիսկոպոսն յաջողեցաւ մեծ կուսակցու-
թիւն շահել իւր կողմն , և կաթողիկոսանա-
լով Զօրոյ վանուց մէջ նստաւ Աղթամար ,
ուր էր (ըստ ոմանց) աջ , քող և գաւազան
Լուսաւորչին , և մանաւանդ Վասպուրա-
կիան աշխարհի համբաւն մեծ էր , և միշա-
տակն տակաւին կենդանի , որ աթոռանիստ
եղած էր Արծրունիթագաւորաց :

Դրիգոր Գ . այս երկպառակութեան լու-
րն առնելով , ժողով կազմեց (1114) Անաւ լե-
րան վրայ և զԴաւիթ անվաւեր հրատարա-
կեց , սակայն Դաւիթ հաստատուն մնաց
իւր վիճակին մէջ և իրմէն յետոյ շարունա-
կեցաւ Աղթամարայ կաթողիկոսութիւնն ,
որոյ յաջորդութիւնը կը տեւէ մինչեւ մեր
օրերը :

Դրիգոր Պահլաւունի , որ միշտ կը մուա-
ծէր Հայաստանի Արեւելեան հօտին վրայ
և հաստատուն աթոռ չունենալով , մերթ
կը նստէր Շուղը անապատի մէջ , մերթ
կարմիր վանուց մէջ և մերթ աղ տեղեր՝ կա-
մեցաւ փոխադրիլ Արարատեան աշխարհն .
և այս առթիւ յատկապէս գիր գրեց Ապրէ-
սուար ամիրային , բայց շփոթութեանց պատ-
ճառաւ անկատադր մնաց իւր իշխն և մտի-

սպուեցաւ կաթողիկոսական աթոռան հաստա-
տել Խարբերդի և Արդնի մօտ՝ Օռվէ դղեկի
մէջ, որ իւր հայրենի իշխանական կալուածն
էր. Պրիգոր հրաւիրեց իւր մօտ իւր կրտսեր
եղբայրն և քահանայական տատիճան տալով
Ներսէս անուանեց, յանուն Ներսիսի պար-
թեւի. ապա եպիսկոպոս ձեռնադրեց և
այցելու. կարգեց Հայաստանեալց ցրուեալ
հօտին. Այս օրէն ՚ի վեր Ներսէս իւր եղ-
բօր ամենամտերիմ գործակիցն եղաւ կաթո-
ղիկոսական գործոց մէջ. թէ բանիւ և թէ
գրով, և իւր քաղցրուառոյ վարդապետու-
թեան համար Ընդհալք գեղեցիկ մականունն
ստացաւ :

Պրիգոր, կաթողիկոսական աթոռոյ վար-
չութիւնն իւր հարազատին յանձնելով, Ե-
րուսաղէմուխտի գնաց, և այն տեղ, ինչպէս
կը պատմէ Ամեւէլ պատմագիր երէցն, լա-
տինական մասնաւոր մի ժողովի մէջ պաշտ-
պանեց Հայաստանեալց Եկեղեցւոյ վար-
դապետութիւնն, որուն վրայ այլատարազ
կարծիքներ կը անուցանէին լատինք, ինչպէս
և Յոյնք :

Սակայն, ինչպէս սոյն Ըրջանի, ընդհա-
նուր տեսութեան մէջ պատման ենք և յա-
ջորդ գլուխներուն մէջ եւս առիթ պիտի
ունենանք պատմելու, արտպքոյ յունական
կրօնամոլութեան, մի նորօրինակ միասա-

բեր երեւացի եւս . | ատինաց կողմէն արդ
գէն ՚ի վեր երեւելու վրայ էր ընդգէմ Հա-
յաստանեայց | Կեզեցւոյ . | Արշափ իսաշակ-
րութեան պատճառաւ | ատինք ծանօթա-
ցան | Երեւելքին և Վիլիկիոյ գաղթա-
կան Հայք և կաթողիկոսունք յարաբերու-
թիւն ունեցան նոցա հետ , այնչափ | ա-
տինաց կողմէն մեր Եկեղեցւոյ անկախու-
թեանը վտանգ սպառնացող երեւոյթներն
աւելի զօրացան : Հայք , իբրեւ գարերով
հարատահարուած ազգ , միշտ օգնութեան
կարօտ էին , իսկ Յունաց և | ատինաց հա-
մար՝ օգնելու սկզբունքն ոչ այլ ինչ էր , եթէ
ոչ տիրապետել Հայ Ազգի հոգւոյն և մարմ-
նոյն , այսինքն քաղաքական սկզբութեան
հետ՝ բռնաբարել կրօնական ազատութիւ-
նըն եւս :

| յա իրողութիւններն Գրիգոր Պատհա-
ւունւոյ ժամանակէն արգէն սկսան յայտնի
լինիլ : Յունական ծիսաբանական վէճերն ար-
դգէն կը յուղէին , շատ անգամ բռնի տտի-
պելով , որ Հայք յունական արարողութիւն-
քըն ընդունին : Հայաստանի Երեւելեան
բաժնի Եկեղեցիները մերթ ընդ մերթ տի-
րապետող Ամիրաներէն կը կողոպատւէին ,
կիբեկից մէջ ներքին և արագին խուվու-
թիւններն կը բորբոքէին անընդհատ պա-
տերազմներով Յունաց հետ , և Գրիգոր

Պահպատկենոյ անձւնն ու համբաւը յայտնի էր Հռովմէական Եկեղեցականաց, շատերօւն, ինչպէս և իննովիթնորիս պապը, արդէն հայրապետական քող և գաւաղան ղրկած էր 'ի ցոյց մտերմութեան և յերախտագիտութիւն այն ընդունելութեանը, զոր Հայք ցուցած էին Խաչակիրներուն Կիլիկիոյ մէջ, և Եւսն հայ իշխանն իւր լատին կնոջ խնդրանօք վանք եւս շնչած էր լատին կրօնաւորաց համար. Հետեւապէս Հայք սկսած էին նոր յարաբերութիւն ունենալ | ատինաց հետ, բայց այս յարաբերութեանց մէջ Հռովմէական պապերը կրօնական հպատակութիւն պիտի երագէին, Ծցնք եւս աւելի պիտի արծարծէին մոլեւանդութեան զայրսյթն, Երեւելեան Հայք պիտի տարակուսանօք պաշարուէին և Հայաստանեայց | Եկեղեցւոյ անկախութեանը սպառնացող արհաւիրներ նշմարելով պիտի զարհուրէին : Բայց 'ի հարկ է, Եւտուած, որ իւր Եկեղեցին ըսմատներ երբէք մոլեւանդութեան և տիրապետութեան անտի-քրիստոնէական տենչին, պիտի պահպանէր Հայաստանեայց | Եկեղեցին ու Հայրապետութիւնն, ինչպէս պահպանած էր նախորնթաց արհաւրաբից գարերուն մէջ, թէպէտ և մեծամեծ զահերով :

Գրիգոր Պահպատաղմէնի, որ Եկուստաղմէն

գառնալու ժամանակին Կի վեր՝ Ծառվէ դղեկի
մէջ կը նստէր և իւր հարազաաին գործակ-
ցութեամբ Հկեղեցւոյ ներքին բարեկար-
գութեանը զբաղած էր և միջագիտական ո-
մանց Հայոց և Խորւոց թոնդրամկեան նոր
վերերեցած յուղմունքներն անդորրացու-
ցած էր, տեսնելով թէ Ակիւթական հա-
րածանքները կը ստատկանան Խրեւելից մէջ,
կաթողիկոսական ուխտիւ փոխադրեցաւ ՚ի
կիրիկիա, և այն տեղ (1147) հայրապետա-
կան Խթոռն հաստատեց Հռոմելայի մէջ.
որ լատինն արիմնոջ իշխանութեան առկ էր
և յետ ժամանակաց գնութելով կաթողիկո-
տական կալուած դարձաւ:

Գրիգոր Պահլաւունի, խորին ծերութեան
հասնելով, ժողով կը գումարէ Հռովմելայի
մէջ և ժողովականաց հաւանութեամբ կա-
թողիկոս կ'օճանէ իւր եղայրն Ներսէս,
որ առաքինական վարուք և իմաստութեամբ
յայտնի էր ոչ միայն Եղին, այլ և օտարնե-
րուն: Ներսէս, իւր ծերունազարդ եղբօր
ձեռամբ օծուելէն և կաթողիկոսական քօղն
առնելլն զկնի, մի գեղեցիկ ատենաբանու-
թեամբ կը յայտնէ, որ ոչ թէ փափաքանօք,
այլ Կի կարօւութենէ Եղին և ՚ի յորդորաւ-
նաց Եղբօրն կըստիպուի յանձն առնուլ Հայ-
րապետական վսեմ և ծանր պաշտօնն. ու-
տի և կ'աղախ որ ամենքն Ետուծց օժան-

դակութիւնը խնդրեն լրեն համար :

Ներսիսի ձեռնադրութենէն երեք ամիս
յետոյ Գրիգոր կը վասիճանի (1166) և Ներ-
սիս իւր զմբմ կոչման համեմատ ասպարեզ
կը մտնէ իւր պարաւորութիւնները կա-
տարելու :

Ներսէս տակաւին եղիսկոպոս էր, որ
Յունաց միութենական խնդիրներն սկսած
էին սաստկապէս յուղուիլ, և նա՝ արդէն
կիո Այնուել կայսեր փեսայ Այէքս իշխա-
նին գրով աւանդած էր Հայաստանեաց Ե-
կեղեցւոյ դաւանութիւնը, ինչպէս վարդա-
պետականն , նոյնպէս և ազգային ծիսակա-
նըն : Նորընուիր Հայրապետը, չը նայելով որ
այսպիսի մեծ խնդիր երսծ է իւր առջեւ,
որով պիտի մաքառի Յունաց մոլեռանդու-
թեան դէմ, գրով և բանիւ , այս երկրոր-
դական գործ համարելով, իւր մեծ ուշա-
դրութիւնը կը դարձնէ Ազգի հոգեւոր շե-
նութեան վրայ :

Այս ժամանակ Ազգը ցրուած էր ոչ մե-
այն Ա'ն և Փօքը Հայաստանի մէջ, այլ և
Յունաստանի , Պարսկաստանի , Աղուանից
աշխարհի, Եգիպտոսի և այլ սահմանաց մէջ.
ուստի և արթուն Հայրապետն , նախ Բ'նդ-
հանրական թռաղթ կամ շրջաբերական կ'ռաջ-
դէ առ համբորէն բրդիս Հայաստանեաց Ե-
կեղեցւոյ , և ապայսկոպէկ թղթեր եւս կը

գրէ կրօնաւորաց, վանորէից առաջնորդաց, եպիսկոպոսաց, քահանայից . իշխանաց, զինուորաց, քաղաքականաց, երկրագործաց և ամենացն ժողովրդականաց և կանանց, յիշեցնելով ամենուն իրենց պարտքն առ Աստուած, առ Ազգն և առ միմեանս, և յորդորելով զամենեսեան ՚ի սէր, ՚ի միութիւն և ՚ի՝ գործունէութիւն :

Եկեղեցւոյ յամակարգութեան մէջ միակերպութիւն և վայերչութիւն պահպանելու նպատակաւ՝ բերել կը տայ Ուաքենոցաց ուխտէն, Յէկեղենեաց անապատէն և. այլ երեւելի վանքերէ հին օրինակներ Գրոց ժամակարգութեան և իրարու հետ համեմատելով և ինքնագիր շարականներով ու երգերով ճախացնելով՝ կը կարգաւորէ լուստ պատշաճի :

Եթէ չենք սխաղիր, այս ժամակարգական բարեկարգութեան և նորոգ ճոխութեամբ, իմաստուն հայրապետն գլխաւոր նպատակ կ'ունենայ եւս աւելի ազգայնութիւն տալ Հայոց եկեղեցական Օվատիատարութեանն և ամուր պատուար քաշել ընդդէմ Յունաց, որք կը ջանային ծխականապէս միակերպել մեր Եկեղեցին յունականին հետ :

Ենքսէս, հովուական աշարջութեամբ և քրիստոնէական տնարեսութեամբ, Արքադրէի կողուած Հայերն եւս, որոնք լուսաւորչի ժամանակէն ՚ի վեր Այսուուտ քաղաքի՝ մէջ

և այլ տեղեր հեթանոտական պաշտամունք
ներով կը վարուեին, ՚ի քրիստոնէութիւն կը
դարձնէ , ինչպէս յայտնի է իւր գրած թղթ
թէն առ Թորոս եպիսկոպոս , որուն յարգոր
կը կարդայ Արեւորդեաց դարձին համար
ամենայն աշխատանք ՚ի գործ դնել . և ար-
դարեւ կը պահպահ այս հետեւողութիւնը:

Ո՞ինչդեռ ՚Ներսէս այսպէս ՚Նկեղեցւոյ
ներքին շինութեամբ կը զբաղէր , յանկարծ
կը հասնին ՚Վիր Ո՞անուել կայսեր պատգա-
մաւորներն ու թուղթը (որ սւզզան էր առ
Գրիգոր Պահլաւունի , բայց չեւ հասած՝ նա
վախճանած էր և ՚Ներսէս կաթողիկոսացած)
միութեան ինդրոյն նկատմամբ , զոր ստա-
նալով Շնորհալի հայրեպետոն՝ կը պատաս-
խանէ արժանապէս , յիշեցնելով միանգա-
մայն , որ Հայք անհաւատներէն այնչափ չեն
նեղուիր , որչափ (Յունաց ազգէն , որոնք
Հայաստանեայց ՚Նկեղեցւոյ պաշտօնեայքը
կը հարածեն , սեղանները կը կործանեն , պաշ-
տամունքները կ՚ացուանեն (ինչպէս և ինքն ՚Վիր
Ո՞անուել , Գրիգորի կաթողիկոսութեան ժա-
մանակ , ՚Նտիոքայ Հայոց եկեղեցւոյն մէջ
բռնի (Յոյն եպիսկոպոս դրած էր , ոք ամօ-
թահար արտաքսուած էր) և այլ չարիքներ
կը հասուցանեն , որոց ուրիշ գարման չփկայ ,
բայց միայն յունական ատեղութիւնն փրփսել
՚ի սէր , և հալածանքն՝ ՚ի գթութիւն :

պետն, կը սպասէր եպիսկոպոսաց գումարման, որոց Թուղթ գրած էր .ի Հայոց, Աղուաննա, .ի.Պարսկաստան, Աղբեւմուտս և. յայլ տեղիս, ինքն կը վախճանի 75ամեայ հասակին մէջ, (1173) եօթնամեայ կաթողիկոսութենէ զկնի, որ ըստ թըւոյ ամաց Հայրապետութեան եօթն եպիսկոպոս միայն ձեռնադրած էր :

Երկար ժամանակ անթաղ կը մնայ Շնորհալի հայրապետի մարմինն, որովհետեւ ղանազան կողմերէ ժողովրդեան խուռան բազմութիւն կը գիմէր երանելոյն աջը համբուրելու և հրաժարական ողջոյն տալու հոգեւոր հօրն Հայրապետանեայց : Հանգուցեալ հայրապետի եղբօրորդին Վրիգոր, որ հեռաւոր երկրի մէջ հիւանդութեան լուրն առնելով աճապարած էր կենդանւոյն տեսնելու, հազիւ թէ յուղարկաւորութեանը կը հասնի : Իսկ երբ կ'աւարտի յուղարկաւորութեան հանդէսն և երանելի հայրապետի մարմինն կ'ամփոփի Հռովմկասյի դամբարանին մէջ, բոլըր բազմութիւնն կը սկսի միաբերան աղաղակել և՝ զ՞րիգոր՝ կաթողիկոս խնդրել : Եերկայ եպիսկոպոսները, բոլըր հանդիսականաց հետ, Վրիգորն եկեղեցին կը տանին և կ'օծեն կաթողիկոս, և նմանապէս նոյն օրը կ'որոշեն ամեն տարի Շնորհալոյն առնը կատարել և լիշտակել .ի

շարս տուրբ Հայրապետաց : Ընդհանի հայրապետի վրայ դարձեալ պիտի խօսինք իւր գրաւոր երկասիրութեանց արժանաւողութիւնը կշամանակ :

Պ.

Եարաւնակութիւն յուզման միութեան բնդրոյն . —
Գրիգոր Դ. Տշայ . — Գրիգոր Ե. Գահավեժ . — Գրիգոր
Զ. Առիքոս :

ԱԵՐՍԽԾ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ մահուան գոյժն
՚ի Պօլիս հասնելով տրտմութեամբ կը համա-
կե կայսրն , պատորիարքն և բոլոր մեծամեծ-
ներն : Կայսրն միսիթարութեան թուղթ կը
գրէ նորընտիր Վրիգոր կաթողիկոսին և թաւ-
որիանէի ձեռքով զղկելով՝ կը յորդորէ մի-
ութեան խնդիրն ՚ի գլուխ հանել : Թաէորի-
անէ Ճանապարհին կ'արգելուի զանազան
գժուարութեանց պատճառաւ և կայսերա-
կան թուղթը կը զղկէ այլոց ձեռամբ : Վրի-
գոր Տշայ ընդունելով կը տատամի , որով
հետեւ ակներեւ կը աեսնէ , որ ին առաջար-
իսթեանց խնդիրը պիտի վրդովէ Ացգի հռդեւ
ւոր անդորրութիւնը , որ վարժած եր ՚ի վա-
զուց անտի յարգել իւր ազգային ծէսերն

ու առաքելական աւանդութիւնն ։ Եւ արդարեւ, այս միջոցին կը հասնի Ներսէս Շնորհալւոյն թղթոյն (զոր գրած էր հեռարձնակեալիսկոպոսաց վրայ) պատասխանն, որով կը յայտներ՝ թէ սէրը մեր երկնաւոր շօր պատուէրն է և մենք պատրաստ ենք յօժարութեամբ սիրել ամենայն մարդիկ, բայց ամենեւին թողջըստիպեն զմեզ Յոյնք մեր նախնի շարց աւանդները փոխել:

Դրիգոր, աւանելով՝ թէ շայք ոչ մի կերպիւ պիտի շըհաճին փոխել իրենց Լկեղեցւոյ վարդապետութիւնն, ու արարողութիւնքը, թուղթ կը գրէ Վանուէլ կայսեր և կը խնդրէ ՚ի բաց թողուլ ինն առաջարկութիւնն և այս թուղթը կ'ուղարկէ մի Հյոյնքահանայի ձեռամբ, յորմէ ինքն յօւնարեն կ'ուսանէր։ Խսկ միւս կողմէն շայ վարդապետաց օգնականութեամբ, մանաւ անդ Ներսէս լ ամբրոնացւոյ, ինն առաջարկութիւնն պատասխանը կը պատրաստէ և լ ամբրոնացւոյն կը յանձնէ ատենաբանութիւն յօրինել սիրոց և խաղաղութեան վրայ, և, եթէ ժողովի գումարման հարկ լինի, հանդիսականաց առջեւ կարդալ։

Լայսրմ Դրիգորի թուղթն ստանապավար վերատին պատասխան կը գրէ, նոյնպէս և պատրիարքն, ամերագրութեամբ Յոյն Նեպիսկոպոսաց, որը և կը ստապեն զԴրիգոր

2. Ճըսու շաղագու տնկուարութեան, պայլ գեղեցկապէս կը նկարացրէ զարհանայն իցընեւ պայտունեց. Այսուծց և մարդկան, և մի պա-

մի կը յիշեցնէ քահանապահութեան բոլոր պարագա-
քերը և նոյն վետ մէկոչման համեստնաւ խրառ
ներ կ'առ անդէ . 3. Ալբանիան , զօրս կը յի-
շատաւելի պարագահութեան պատճենագիր , առկայի ցարք
Երեւացած չեն . 4. Ողբեադիր , պառան մէջ առ
մեն հասանելի և պահանջման մէջ գտնուածզ մնար
դիկ կարտող են իրենց գրացմանց և պարբեն հու-
մեմատ աղօթքներ գտնել . 5. Հ պարագան
Ալբան պահանջմանց - Պայծառապահ , պարզ նոյն
արժանաւուոց քահանապահոց նպահառակութեան
հանդենն անօրբութելով երգած և քահանա-
յական կաշտան վկամութիւնը . 6. Խ լորիան ,
որ մի համառաօտ և գեղեցիկ քերթմառառ և
սարեակ թռունոյն վրայ . 7. Բ անի մի առջիշ
մաներ երկասիրութիւններ վասն շործման ժողով .
Բան իրապար առ ուստանակորս և այդն , որուած մէջ
հասածն չեն . Ունի նաև քանի մի առառա-
նձարանական գրուածներ այն խնդրոց պարու .
որոնք վիճակատառ թեան . Նիւթ է ին Հայոց
և Յառաւաց մէջ .

Յունական որչափ որ Խորիսակ կը կը
չու և ընդ հանրապահն , ընդ նմին կոչուի և վար-
դապիք . Կամ շնորհեան նադրութիւնն և կամ
ըստ աւմուցականն և ուստանական . պաշտօ-
նին : Յովհաննէս Խարիսաւագի աջակիրաննե-
ներուն մէջ նշանաւուոր են Խ Բ Ե Մ Ա Ը Ա Վ Ր Ե Ւ Կ
և Խ Ա Մ Ւ Տ Ա Ը Ա Վ Ր Ե Ւ Կ Ա Խ Ե Խ Ա Վ Ր Ե Ւ Կ
առ և Յովհաննէս . Պ Ե Շ Ե Խ Ա Վ Ր Ե Ւ Կ Ա Խ Ե Խ Ա Վ Ր Ե Ւ Կ

Նը շարադրած է , հետևելով թագուհին առաջ
եղած քայլ և այ նշանակող մասնիշներուն :

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿ : որ ի՞ն մասնիշութեանէ
Ը ու զր անապատի կարմիր վանդառառ ցանձ
նանալով ոքանչեղի վարդ ապետաթեամբ կը
քարողէր արքազան բնեմին պրայեն , և արևն
վրայ ոքանչացաւ ։ Արաելդ հայրապետն և իւր
մասնանին ու գառապանն իրեն առաւաւ , յար
դորելով շարունակ քարապեցա , և և թիգորդ
օրն եւզիսկուստ ձեռնադրեց և կարմիր վան
քի առաջնորդ ու թիւնը իրեն յանձնեց ։ Այս
մասնուս մասնուկ զանազան երկասիրութիւնն
ուր շտրափրած է , որոց մէջ յատկառակես կը
պիշտ ի իւր Պատմանիման կ'ունահ Գրիգոր ։ Ու
կայութիւն , բայց մեզ հաւան չեն ատկայն
խարման համբաւուք ։ Տշնայտապետ կ'արգու
բացնեն իւր ընտիր աշակերտներն ։ Բրիգոդի
Պահաւունի և իւր հայրազատն ։ Այսուհետեւ
Ծնորհալի , և Անդրդիս ու Խթնապիս վար
գաղցեանեցն :

ԴԻՎՈՐ ՊԱՏԵՐԱՐԻՆ : որուն կենաց վե
րաց արդէն յառականին խօսած ենք իւր
հայրապետական պատմանին կ'ետ , կը
մեռյ այժմ քանի մի խօսք ասել իւր ռասում
նամիտութեան . և երկասիրութեան վրայ ։
Գրիգոր մին պիշտ ի տանի գլուխանութեան

ծաղկելուն և նորու հրամանուն Աստվածել եւ-
րեցն կը շարադրի՞ Քրանքի կոնն կամ Վիամանա-
կագրութիւնն , Իգնատիոս վարդապետն՝
Դուկատու Հանտարանի մեկնութիւնն , Կիր-
սէս Ծնորհալին՝ իւր այլ և այլ գրուածնե-
րն . խէ՞ Աստրիխ Ծնորհալին՝ կամ ողբկեացց
թղթերուն մեկնութիւնը : Գրիդաք ինցն
անձանի Երկասիրան՝ Եւետեաց շարա-
կանը՝ Խորհուրդն՝ աճառ . Օսպիազարդի եր-
կրորդման շարականը՝ Անծանդալ այս խորհուրդ .
և մի ընտիր մեղեգի . ՚ի | աւսաւարիչն՝ Ի յելլ
արխուու . արքա :

Ներսէս ՀՆՈՐԴԱՎԱՒ . — Ծնորհալին . թէ
Հայոց հայրապետաց : և թէ մաստենագրաց
շարքին մէջ խիստ նշանաւոր տեղ կը գրաւել :
Այս հայրապետական գործերն արդեն պատ-
մած ենք , նկատենք այժմ իւր գրաւոր Եր-
կատիքութիւններն :

Ծնորհազւոյ Երկասիրաւթիւններն արժաւ-
նապէս գնահատելու համար Երկու գառ խաժ-
նենք — Աքահ և Չափաբերական . Ու աջին կար-
գին կը վերաբերին՝ ատենախոռութիւն ,
թղթեր , վարդապետական գրու ածներ , մէկ
նութիւններ , խրաններ . և աղօմքներ . խէկ
Երկրորդ կարգին՝ ողբքարթաւածներ . մի
պասանութիւնն . և շարականներ և երգեր .

Ծնորհալին . ոյ . ՚ի մասնկան թիւնէ կը գտ

և ածեր Այստիաննեմ Այնուղեց գիտնառութիւն
մօտ և շարժնակ քարծակից եւր իւր երեց
հապալութիւն ։ Երբ այդ Արարատ ունի կամ ազն
կամն, երբ կը ափազուաք հասարակոց ընդունու-
թեանը հնազանցից և իւր եղացար կամ ողի
կամն ձեռքէն ընդունիլ հայրապետական
գործառներն ։ Կամ ազնիական քովն ու մա-
տանին և ամստի միաց բարձրանալ ։ Կը բա-
նաց իւր քաղաքուաչց քերանն և մեծագու-
մար քաղմութեանկամ առաջեւ կը խօսի մի գե-
ղեցիկ ։ Դժուարնութիւնն որպէս կը բացառարէ
հովուական ուսարաւոց ծանրութեանը ։ Իւր
անկարոզւթիւնը և մաղամբեան ձայնին կը
պատճական թիւնն ։ Իւր ցեւ աստուած ային ձայ-
նի ։ Իսկ երբ ցուք եղացարն կը վախճանի ։ Ի՞նը
Լուսական թղթական կը հրապարակէ նորա մահուան
գոյքը ։ Առաջ կը զիտեզէ առաջոց ըրդանտա-
լիքն մի և յետոց գեղեցիկ խզաւաներ ։ Քուու-
զէ բարդ հայստեռ հօտենք ։ Նախ խօսքը կ'աւ-
զէ կրօնապրներուն երիշոց տառեղոց նմանեց-
նելով ։ յետոց վանուաց առաջնորդներուն՝ այս
կայեցացիրենց յանձնուած ած միաբանական եզր
բացրութեան մարմնցն նկատեած ։ ապա ե-
պիսիապաներուաք՝ զօրու մերժ տեր և մերժ
տնտե կը կոչէ և կը յարդուի անմերժ կապու-
թել իրենց վետեմ ապահովեցնուած յետոց բահա-
նացից զօրու քիչապար գողացրդեան և զեր-
գապատանի նոյն և ծնող կ'անուանէ ։ Ազա

ինքը առ սրբանդշի խրամներ կ'առանգտէ իշխանաց , զինու պրաց . քաղաքականուց , երկրագործաց , ժողովրդականուց . և կանանց , և պատրիարքութեանուց հայր ։ Հայութաւանուց էլքեցն կ'առ իշխանութեանուց առ մենան կ'ը միշեցնէ իրենց պրարաքն , իրենց կոչումն և իրենց առաջինական գործակաւ տարրն . թեան վարքն ու պատրիք :

1. յա Շնորհանրաւիրանին յետոց նշանաւոր են Ծնորհապատճեան միւս թղթերն , զար գրած է թէ իր եղբօր հրամանուու . և թէ նոյն առանձինն և պրայր են հետեւ եւայներն . — 1 . Խաղողի առ Գծ իշխան . Խլու , գետայ Ուանուել կոչուեր , յարու մ նախ ։ Հայութաւանութեանուց էլքեցն պատահանութեանուց այն առաջարկուանութեանու . զոյն Ծնորհ անմենն մեր Էլքեղեցնց աւան զութեանց , կոչուաց և տօնից նկատմանը :

2. Բնուազ առ խայր Ուանուել , որ խնդրան եր Վարդու որ կոմիոցիսիսն Շնորհանդիսն . ու զարկեց զ'Աւրենէս : Ծնորհապին , այս թղթով կ'ը ծանուածնէ իւր եղբօր մահն , և իւր ընդունած կամբոցիկուական պատահնի ծանութիւնն . ցայտնելով կ'ը պատափանի . որ չէ կարող Շնորհանդիսն երթալ :

3. Խաղողի առ Ուանուել խայր երկրորդ անգամ , զոր կ'ը դրէ Ծնորհապին թէ զոյնինի խնդրանց յուանիան կամկանները . մոտու

ամերու համար, որ յուղուած էր թերիս, նէի պինարամառեամբ, որ անձամբ եկան էր կայսեր կողմէն առ Շնորհալին:

4. Թուղլ առ նոյն խորե երրորդ անգամ, որով համառօտիւ կը ցուցնէ Շնորհալին թէ Բնշ մաքրով Հայք ՈՒ Շնորհին կը դաւանին ՚ի ՚իշիստոս:

5. Թուղլ առ ՈՒ ինյիւ պատրիարք Յանաց, դարձեալ առաջին ինորոցն նկատմամբ:

6. Թուղլ առ համարէն երբուխորուս և վարդապետ Հայոց աշխարհին: — Ելքովիւտեւ Յոյնք միւս թեան ինորոցն անընդհաւա կը յուղէին և ասստիկ կը ձանձրացնէին զշ Շնորհալին, այս պատճառաւ երանելի հայուսուսն նըշ մարելով որ յունական մոլուանդ ու թիւնը ոչ իւլիք պիտի յագի, ու տիք բնանին չուզելով այլ եւս թղթակցիլ, առանձին թուղթ կը դրէ Հայաստանեաց համարէն եկեղեցու հանաց, Ազուանից աշխարհէն մինչեւ Երսարիա և Աբեւմաեան կողմէրն, և յունական հետամտութիւններն ծանուցանելով՝ կը յարդորէ, որ ամենքն խորհին: և պատրաստ գանուքն, ՚ի պատահի հարկին՝ ազգութիւն պատասխանելու և մերժելու յունական պահանջմունքներն: Յանաց եւս կը ծանուցանէ, որ առանց Հայաստանեաց համարէն եկեղեցականաց և ժողովրդականաց խորհրդին կարող չ' ինչն {Յանաց առաջար-

Կառելի մասնարքն և ոչ մին ընդունելի է. Այսպիսն
Ծնարհալին խար առ պայտ գրան շըջաբերաւ
կան թղթեցն պատապիսանը պակաս ին ըլաւաւ
ցան. կը վարժանանի (1172). որուն մահու ան
գոյժն առնորմ կը հառաւչէ. կայսրն առելով.
“Ո՞ւծ և արթան զգացարն մի բարձաւ
Ասունց Եկեղեցին”:

Դերտես Ծնարհալին խար ի վերտգրեալ
թղթերէն, ունի այլ եւս մասնաւոր թղթ
թեր առ այլ և այլ անձնեն գրուած, որը են.

1. Գիշ շնորհերական ի խոնան Աժանելից ի է
կրոս. — Կրօրս քաջաբք Աքրահամ և պայտեր
պառ վերաճգնած լիներմ. Ծնարհալին առ
զական. մազավայրոց առաջարկութեամբ եւ
հաւաճկա թեատր. նոր և պահպաստ կը նեռ անու
դրէ խաշապաւո. անուն քահանայն և վերա
դարձնելով այն ըրչաբերական գիրը կը գրէ
առ. մազավարդն. յորդարելով՝ որ նորընտիր
առաջնորդին հետ աշխատին. ի շինութիւն
Ադդի և Եկեղեցաց:

2. Ի առ միջինարամին առ վասնինալն նորման.
Այսպիս քաջապարին մէջ ու ըկութեամ առա
սին ամբարը ճնշումներով և ամսաւորներն
անինաւմ մնայթ առ ոզներու կազմէն, հաջոնց
զբուշամարու համար կը կեռ անապին և կը
մահանակին ցու ուղարձներէն) ազաշանաց գիրը
կը գրէն առ Ծնարհալին հրայրագար գիմալ
և գարսն առնիկ իրենց խեցք պիճակին:

իսկ ոթուան հայութեան ավերաւթիւն ուստի
նարով և յարտառու շարժանեցի՝ միբեմա-
րու թե ան նարմանին կ'ու դրէ առ վառանցի ալին:

8. Յաղթու Արքադինացն առաջի ։ — Եղիս
Խանութեա քաղաքի թագավոր Խանակուպարան կը
ծանուցանէ Ծնորհալազն ար ։ Երեսորդ իր ։
որոնց Երես և Երրորդ ծանուց կը պատշտին ։ Աւ-
ասորդի ժամանակին երին ՚ի մեր կը պատիքա-
քին քրիստոնէական կրօնքը բնագաւնիք ։ Այս-
թու Նախրապետութեա պատափանելավ պիտի ալ-
եպիսկոպոսին կը յացանէ իւր սրբի ու քա-
խութիւնը և կ'ուստիցանէ թէ քննչիւս
պարտուու որ էս աշակերտու նորագործներն ։
որոնց աղջու Հայ երին և պահպատան կը
ծանուցանէ ։ որ Երեսորդ բներքէն ըստերին
իրեն մաս եւ ու եկած են և սրբէն միրտո-
նեամբ Եղեղեցոյ եղորդ գարձան ։

4. Ես Պարս տահարց ենցիսն ։ Եղան քառ
հանույթ է կ ։ Կօրոց մեջ հան ամացած վիճակը,
ասստիք կը շարախուածր ։ Վայրոց ազգեն և թուր
ջանցը կը զնիկուածենք թագթափ իւր համա-
պատ Այսմաւել անուն մեջան ։ Հայուսպաննի
մեջ ։ Ես ադմիր յանդիքանական թագթափ
կը գրե կարսէն առ այսն քանձանայն ։

6. Բառ եղբայրի վերաբերության Դիմութիւն և ըստ
համառատ թիգիւթեր ։

7. Առ ծայրին ան ամէց յա պիտիադ բայլ մի քառ
ամի թիւուզիւն կ'առզըն Հայութնամին, որով յաստառ
ամէս կ'նորս և ի մեջ պիտիւն բամբասաղներ կողյին,
յա մասիսն յարարերանեն առեց արաւճառաւա-
և դառց ենածորի յանդիմնամիսն նամակինեց
եւ ա կը գրէին ։ Ու ասի հայութապետն. հերու-
թեամբ կ'ըմբականէ ժորունակիւնը և միան-
գամայն կը յայսէն թէ՝ թիգն պաշտի, հաւա-
տարիմ եւ իւր Ակելքեցւոց անկօխութեակեց
և բարցական շահագուն. ։

Ո երագիւթառ թիգիւթերն զառ Ծնարհապին
ունի արիշ առելի ընդուպաձակ. մեկնուպական
և վարդապետական. գրուանձներ. գրք. են.

-1. Անդու աշխատից որով երկնացին զա-
ռութիւնքը կը գրուատէ. հետեւելլու ։ Առ
ընդուպաձաւոյն որով և յանապանագիսն
խրբնամին, կ'նորս և գրուանձնյն մէջ ։

2. Ո Եմանիսն բարդացոցից որով Դաւիթ
Ենակին. Խաչի ճառը կը մեկնէ. ինչդրանց
աւագաւորու. առաջնուրդ Ա արքան. պարուն
պետի ։ 3. Ա Եմանիսն Ո այսինից որով. ըս-
կասած և մեկնեց Ո աւոնին ասի ուսեւ առաջական
իւր հայութապետութեան պիտիւն որեւուն մէջ.
ուսիցն անձուառոց մեացան է. և շաբացարու-
թիւնը. կը զննացինից ու աս պարագան. և ամենի
նույնին. կը բուռաղինից որ առելք համար առան-

քան թէ Ասրդիս Ընդհանուր մեկնութիւնը : 5 . Հաւագով խոպալված անհման և ըստ քանչելի աղօթքն , որ յաբնուած է պական քամն և շրջ մասնաց համար : 6 . Ասրդն առաջիւն Արկերեցրանի ներբոզմն . առ ի ուստ որիցն Հայուսառանեց : 7 . Խրոն ծափք գոտինան , որուն վրայ արդեն նախընթաց պատմակոն Ը յշանին մէջ խօսած ենք , թէ թօչուէս Անգրենացոց և Խօնդնեաց վանքերէն Յամակարդութեան հին օրինակներ թերել աւազով , մկան շատ աշխամ կիրառութիւնը ընդհանրացնել աղջին մէջ , խրոն կարդալով ; որպէս զի նարածեւ առջորութիւններ շրսպրդին նախնի պահնդութեանց մէջ :

Անցուէս Ը նորհնարաց արձակ գրուածոց վրայ խօսեցնեն պինդ : այսիմ յառաջ քերենք նորս չափարերական կում գերթողական երկասիրութիւններն :

Անրախտի չափարերական երկասիրութիւններն արժանառագութիւն ունին մեզ համար մանաւանդ . այն պատճեռաւու , որ իւր գաղըն առնենելին քերթաղութեան դար չէր չափուց և աշխարհականութեանց , որով արհամարք սումառացութեան գատապարտուած էր բանառանեղական նուպնուն ու աշխարհուց : Անրախտի պեղաթուած թեանց մեջ իւր տես ու աշխան առնելի պարզուած գրաւելու նորս երկասիրութիւնների պահնդութեանց ու երգեցը . զօրը

մինչև յայսօր հոգեւորաց մհրանալանց կ'եւ
դէ շայատանեաց կը եկեցիցն առաջուածայ-
ին պաշտամանց կամ ժամերգամթեան մա-
մանակ որք են ։ Այս յանձն կ'ագ օրինա-
թիւն ։ Խօնանմից ։ Անտառաց ։ Աղակաց ու
Գայց կիրաբեց շարականցն ։ Օաղիւլըրի հոր-
ց ։ Տիւ-ո գուշին ըստ զատիւը ։ Ա որունուտ
երիս պատիւը ։ Խիմու երիս պատիւը ։ Յանմա-
տէ և արդիւ ։ Ա որդորեկ տէ հուց ։ Արեւուկամիւց ։
Ա որդուանց և Ա խանդիւաց շարականներն ։ Ա յա-
սոր ։ Յանման ։ Արդիւն ։ Ա պուռած անեղն ։ Ա յետա-
գայն նուազներն ։ Օ քիմու ընեղն ։ Ա յետաց
պրայն ։ Ա մէն հայցեմն ։ Յիւնուուն ։ Ա պրիմն ։
Ա յարի ամենայն ։ Ա յասու ըստ և այս ։

Ա մրսիսի երփափրու շարականց և եր-
գոյ պարունակութիւնը ընդունեած և առ հասա-
րակ Ա ։ Գրոց վիւրմ իմաստաներով և ասա-
ուածափրութեան ազնիւ և արտաշաբար բզ-
դացմունքներով ։ Մշնուր որ իւրաքանչիւ-
րէն գոգցես աստածածարքեցիկ շունչ մի և
կենդանարար աւտան կը վիստանցի զգացուն
թիթերցովի և երգոյն արտին մէջ ։ Օ յե-
րազի հոգւոյն մէջ յաւզուած ասառ ածոցին
սիրոյ ձայնն արձագանգ կը տաց նայնպէս և ըն-
թերցնզի կամ երգադի որտին մէջ ։ Ա յս եր-
գերան շարականները մի առ մի բացառութեցու-
և կը ադատելու համար առանձին մամանակ
և գիրք հարդաւոր է ։ Խակ այս մ պաշտոնի մին

այն կարող ենք տանը, որ սահմանածային սիրով վառաւած մարդ մի պաշտամի կարող է արտապայտել խարհ պայմանագիր, սրբափ արաւացածն է Ներսէս Հնորհացին իւր հազերուղին նու պահներով . թէ որչափ մարդիկ ըստ գածուած են նոյն նու պահներով ի սկզբանէ, և պիտի զգածուին ոյսու հետեւ . թէ քանի սրտեր . յուզուած են . և պիտի յուզուին բարեպատշաճ Խորհրդներավ, և քանի ջերմ արաւաստնքներ թափուած են և պիտի թափուին ամենն զգայուան աղօթասէրներու . աշքերէն, այս ամենը կարող են իսկակեան յատարար լինիլ նոյն նու ադաց վսեմու թեւանն ու գեղեցիութեանը . իսկ լեզուով ու գրը շուկ որդան խօսինք, գարձեալ լիսվին խօսած չենք լինիր :

Հարակապներէն ու երդերէն յետոյ նը շանաւոր. են Ներսիսի յետագայ քերթութիւններն . 1. Անդ Եղեսիոյ : զյոր երկասիրած, է վասիկասիրած Հոյրուովեան իւր եղբարդի Ըստրատ իշխանի ինոգրանօք Եղես սիաքաղաքի աւերծման վկայ, որ աւերծացաւ ահագին կարորածներով . Ու անդի Ըստրայի անգթութեամբ :

2. Ծխառ. Արքի . — Այս աստվածոք երկասիրութիւնը կարող է հաղործուիլ իբրեւ համառ ու պահմանաթիրան նին և Նաք Եղառ կարանաց, աղօթական ձեւով շպրտուած :

Այսպէս կ'երեւիք . . որ քեզը մազ նպատակ տնեցած է Ա . Իրոց պատմութիւնը ուշ և արձակի և գիւղինց կերպով աւանդել ըն թերցողաց , պահն վրայ եւ բրազացի հայու դէտներէն մին՝ Յակոբ Ա իրուդ զմայելով այսպէս կոչած է՝ Այսիան արդարին առաջաձայն :

3. Բան կասպարագ . . Եցրէ Եմբէս իւր եղա բայր Պրինդ պա կաթողիկոսի հետ Ըստ գլուխին առանձնացաւ . . բնշայէս պատմեցնեց առաջին գլուխներուն մէջ . . նաև մենաւրութեան մէջ երկասիրած է այս շափաթերական գրուանքը , նուիրելով իւր եզրակց ծնազար և համառահմբց յիշատակին :

4. (Յաղագու երինից և զարդոց նոյն . . Եւ երկասիրածինը շարագրած է Ընդհանուն Այսիթ ար Ներացի բժշկապետի և աստեղութիւնի իննուրանուք . . վառն զիտազաշափութեան մի հաստատմածի ակընդնադիրն այսպէս է . . Այսիթ ար բժիշկ , ընկալ չի Եմբէսի զայս քան . . ու :

5. Ա յաղագուամբիոն . . Եւ երկասիրութեան մէջ համառահմբ պատմուած է Այս պատմութիւնն անելունեւան շափառի . . որ Եմբէսի մասեկութեան հապալիքաշնորհուամբութիւն կը համարուի :

Եմբէսի մասն ամառ երկասիրութիւններն այս են . . Այսինչ որից խոյն . . Այսինչ առ ասքի անդշապիք . . չի Այսին . . և այս խոյնութեան հանկերանիներ . .

Կըտադիտական ճառշակի և ունց մասին խո-
սիլ Աերսիսի երկասիրութեանց վրաց մեր
նողատակէն արտաքրոց է, միայն սցագափ կ'ա-
ռենք, որ տաղաջափութեան մէջ հետեւած
է արաբանական նոյնավերջութեան, որոց
յաճախութիւնն ու նոյնաձայն միակերպու-
թիւնը տակառ ինչ նոեմացացած է քեր-
թութեանց ոյժը։ Իսկ այնու ամենայնիւ-
կանօնաւորութիւնն ու փափկութիւնը շա-
րունակ պահպանուած է։

Աերսէս շնորհազի իւր հագեշունչ երգե-
րը ջանացած է մինչեւ անդամ հասարակ ժո-
ղովրդեան և զինուորոց ընտեղացնել, ուսու-
մի և կիրակոս կը պատմէ, որ Աերսէս ձը-
ռ ու սմկլայի քերգապահներուն ուստացած և
պատահրած էր, որովհետ զի, գիշերապա-
հութեան ժամանակ, վիխանակ վայրապար
աղաղաղակներու, երգեն «(Հյուսոց) ՚ի գի-
շերի ո սրաւաշպար նու ապը»։

Այսպէս անու ակներեւ կը տեսնենք որ
Աերսէս, ինչպէս իւր հայրապետական կոչ-
ման, նոյնպէս և գրական ասպարհութիւն մէջ,
անվանչ վաստակաւոր եղած է, որով և իւ-
րաւահի Ընդհանուր գեղեցիկ մակդիրն առա-
ցած։ Այս երբ կը մտածենք, որ Աերսէս
իւր մատենապրական երկասիրութիւններըն
շարուպըսն է արհաւարայից մասնակներու-
և հայրապետական ճանք պարզանին մէջ, իւր

յարդին ու վեռաբը առեղիք կը գտարձրանայ մեզ
հյամաց :

Բ :

Երկասիրամինաց . Ֆրանտիսկ : Սպարտի Ընդհանուց ,
Ներսիսի Լամբրոնացւոց : Մատթէոսի Ուռհացեցւոց .
Սահմէլի Անեցւոց . Միսիթարայ Հերացւոց . Գրիգորի
Տղացւոց . Միսիթարայ Գոշի . Խաչատրայ Տարանցւոց ,
և այսոց քանի մի վարդապետաց և պարանակութիւնը
իւրաքանչիւրացն :

Ի՞՞թաւթեաւ ՎԱՐԴԱՊԵՏ : — Ի՞ս աշակերտաւաւ
կից և Գրիգորի Գանգրուանցւոց , Վերնիսիսի
Ընդհանուց և Ասդրիսի Ընդհանուց , որ
Խարճիք վանքին Անջ իւր ու աման ընթացքը
կատարելով առանձնացնաւ . Հափիր ածակաւ
տղ : Գրիգոր Գանգրուանին առաջարկեցիր
Նատիսանին Պուկուու . Վետասպանի Անկնու
թիւնը դրեց . բայց տա ՚ի ակզրան իւր տկաւ
րութիւնը . խառապին ներալ . հրաժարեցաւ .
ապա Վահճաղիսիսի . առատիկ թափանձանքին
առիսպանելով՝ (1146) սկսաւ մեկնել , հետաւ
ւելավ մանաւանդ . Առինքան բանին : Երմաստիս
սի մեկնական . Եղիշաբերութիւնը . համառօս
տապատռամէ . և պարուինոց : որոց Անջ ըստ
վիճ՝ կը միացիլ : Առ Գրոց տեղեկանիքիւն . և
աստուածագանական . հմտութիւն .

Աւրգիւ ՀՆՈՐԴԱԿԻ ։ աշակերտուակից
թքնատիտոսի և այլօց ընկերաց ։ Կարմիր ա-
նապատի մէջ իւր ուժումը լրացնելէն զկնի՝
առանձնացաւ ։ Անու լիրան Քարաշիմառ
վանքը և ակաւ մեծ եռանդով ընթերցա-
սիրուաթեան տալ իւր անձը ։ Եպա սկաւ
կամքաղիկեաց եռթնառաքելական թղթերն
մեկնել, հետեւ ելով գլանաւարապէս Գրիգոր
Հայուածարաւնին, Ավոգդին, Բարսղին,
Էդիրեմին, և Ասկերութեանին ։ Այսպիս իւր
մեկնական երկասիրութեան մէջ ազդու պեր-
ճախօսութեամբ կը յարձակի, մազութեանց
գեմ և պամիրսիօս զմայլմամբ կը դրուատէ
առաքինութիւնը ։ Այսպիս Շնորհազւոյ մեկ-
նութիւնն երկու տեսակէ, ընդարձակ և
հրանուառ, յորոց վերջննն իւր ծերուաթեան
հասակին մէջ աշխատասիրած է (1166)։

Ապրդիս Շնորհազին ցանկազավ ընթեր-
ցազաց միարը լրւսաւորելէն զատ՝ սրտին
վրաց եւս ազդել և շարժել, մեկնաւթեան
հետ աշխատասիրած և Յորդորակին, որոնք
իսխա գեղեցիկ են. և շնորհական։ Ես յոր-
դորակիներուն մէջ կ'երեւի վայելուչ պեր-
ճախօսութիւն, որոնք թէ դարձուածոց և
թէ իմաստից կողմէն երկասիրութեան նշա-
նաւոր մասը կը կազմեն։

Տակառին քան երեք տարեկան էր. Այլը
սէս, Տարան քաղաքի եղիսկապառ թեառ
և Վեւուայ վանդի. առաջնորդու թեառն պաշ-
տօնն ընկալու. և առելի համբաւն տարա-
ծուեցաւ. Իսկայ արդէն պատմական մասին
մէջ կարգացինք, որ սորու գէմ բառականին
ամբառանու թիւններ եղան և ինչն ստիւզ-
ուեցաւ իւր անձն արդարացնեց. Համբար
զանազան թղթեր գրել, որոց մէջ կ'երեւի,
որ իւր պայ եղան ամբառանու թեառցդըց-
խաւոր շարժառիթն էր այն կապահնն, որով
կը կարծէին. Եթե եղեան վարդապետը՝ թէ
Ներսէս Շահը հռանոնցներւ կամ լուսնու-
ցնելու կը ճգնի. և ազգային ծրաբը մէջ նո-
րութիւններ կը մռածանէ :

Ա,ԵՐԱՀԱԿ ԿՈ ՎԱՀԱՆԱՆԻ ԲԱՐ 46 ՄԱՐՏԻԿԱՆ
ՀԱՍԱԿԻԲՆ ԱԷՋ Շ ԲԱՐՅՈՒՄ ԲԱԼԱԿԱՆԻԲՆ ՊՐԱՎՈՐ

Երկասիրութիւններ . որոց նշանաւորներն են .

1. Առվելաբանութիւն , զոր խօսեցաւ Նը ռառկայի մաղթքին մէջ , Գրիգոր Տղացի կաթողիկոսութիւնն ժամանուկ . Ատենախօսութիւնն գլխուոր նիւթն է քրիստոնէական ընդհանուր սէրն ու միաբանութիւնը հռչակել , և որշափ գովելի է իւր սկզբունքը , դըմքաղդաբար {Յունաց և } ատինաց համար սէրն ու միաբանութիւնն ուրիշ բան չէր , եթէ ոչ Հայուստաննեաց {Հկեղեցւոյ ստրկութիւնը . աւասի և } ամբրոնացւոյ ատենաբանութիւնն ապարդիւննեաց , որովհետեւ աւելի որաւուս աշքեր յունական և լատինական միտութերն իրմէն աւելի հեռատես աշքով նկատոած եին թէ բնոշ բաներու մէջ կը կայունան : Անշորէս և բնոցն {ամբրոնացին յետոց գրաց , յունական մաքուանորութիւնները անեանելով , որուն համար և յատկապէս {Կուզանդիոն գնաց գարսման գտնելու և գդաւաշըսաւ : } ամբրոնացւոյ ատենաբանութիւնը զեղունն է պերճախօս գարձուածներով և իմաստաներով . և այս պատճառուու {Հւրոպացիք գիտնականներէն ումանք զինքն Դիմասինենէ ամին և Կիկերոնին կը նմանեցնէն :

2. ՈՒնաբիւն Գարողագի , զոր Երկասիրեց {ամբրոնացին Տղոս լեբանց առանձնու-

նախ Դրադիուսկան և պատմաց խոսքան եղա.
 կար ու բարսկ քննութեան կը բաց Թաղզալ
 այս միայն կարող ենց համարձակ առեց , որ
 Ա' ապօթեափ երթարամիրութեան մէջ կը վա-
 ռի նուիրական հուր հայրենամիրութեան և
 Արտաշարտ կերպով կը նկարուցիւ անմեղ մո-
 զովոցի մարտիրուսութիւննեական .
 կրօնի սրբաթեան համար . կը նկարագրէ
 Տաւրոսի Հայոց գիմնարութիւնը , որնց
 Խաչակրաց գալուստը կ'ազգունեն : Այս վա-
 ռաւորէ հայրենիցն պատշաճանոց ցածրեն
 ու հօտը խնամող համբեներն : Կը դրաւառն-
 Ա' ազրատունեան ցեզի պեղին . Թազաւորն
 Գ' ագիկ թ . որ գիտութեամբ և ցածրաբառ-
 թեամբ անուանի եղաւ , իւր հայրենի ժա-
 ռանգութենէն զրկուեցու մասնութեամբ
 և պրագանաց , ու Թշուառութեան մէջ իր
 կեակը հնքեց : Ե խորց պատէ կը խոսի Ա' որ
 Թէսս Փատնկաց գէմ . յունական . մայթուան
 գութեան գէմ . որնց մախանոց . գործակից
 եղան անցրիստնեայ բռնակայներուն . այս
 յաստանն պրինով բռնակ . կ'աւանդէ նոր
 այնպիսի պատմական անցքեր (Յաւնաց և
 Հայոց վրայ , զրբս իւր ժամանակակից պատ-
 միչներն ամենեւին միշտակած չեն : կ'աւան-
 դէ նա և իւր պատմութեան մէջ երես աղ-
 նիւ միշտակարաններ . ոյն է Չմշկիկ Թա-
 գաւորի առ Աշուա Թագաւորն Հայոց պրան

Բարդին և Վաղբերի ինստիտուտ տառենարար
նութեանն էի. Պաշտ Առքիա Եկեղեցւոյն մէջ,
Դաւիթա կամ Տառին կոյսեր և յաւնական
կոլեր առջեւ ՚ի պաշտպանաթիւն դառա,
նութեան ապահովանեաց Եկեղեցւոյ :

(1) առթեափ պատմական երկասիրու-
թեան Ըստարդիւն կը դրէ Պարփառ երեցն,
որ կը պատմէ Յունաց կրտմանու կոյսեր առ-
պատմականթիւնըն Ա' տորիա և ՚ի Կիլիկիա .
Եղետիր առանձ Օ' անդի խանի ձեռքով,
Խրոնից Առ լճանց թշնամական և բարե-
կրտմական յարաբերութիւնըն Ա' արքեաց
հետ . խաչակրաց քանի մի դէպքերն և Ա' քաց
թագաւորոց Ա' և ՚ի առ քաջազրոց հա-
ռացան պատմերն , և այլն (1) :

Անտուե Երեւ Անեած : աշակերտ Պ' է որդ
Ա' Նողբեկ վարդ ապեափ , ըստ առանց (Յովհաննէս
Աստիու ապի , ժամանակակից) (1) առթեափ
Ա' առ հոգեցւոյ . Ասրա երկասիրութիւնն է
Ժամանակադրութիւն կամ՝ Պ' առաջնութ զոր դրան և
Պ' անդի Պահլաւոնի կաթու զիկոսի խնդրաւ
նոք , ինչպէս կ' երեւի ընծայականէն . Ասմու-
ելի ժամանակապ քական . երկասիրութիւնը

(1) Մասթեա Ա' առ հոյեցւոյ երկասիրութիւն գաղցնարէն
թարգմանութիւնը տպագրուած է ՚ի Փարփակ ընդարձակ ծա-
նօթաթեամբ : իսկ Հայերէն՝ ՚ի Առքը Աթուա Հայոց
Երաւանակիլ :

կրտման կամաց եւ կը համար մինչեւ Քրիստոսի 1179 թուականը : բայց իրավունքառու ու մանր շարայարութիւնը գրած են մինչեւ Հայոց Աթմէ թուականը : Առաջ էլ իրեն առաջնորդ բռնութէ հին ժամանակաց համար Առաքելուս ժամանակաշրջին և Անվականացն , և որչոք որ համար օտել իւր գրուանքը , այնչափ գեղեցիկ :

Ո՞ւթուր չերօնի , բժշկութեա , հմնւառ պարտկական , արաբական և հնդկանական գորութեան , մոտերիմ Անրիսի Ընորհալւոյ : Դրիգոր Տղայի խնդրանօք երկասիրութէ բժշկական գրուանք մի սոյն վերնադրութ՝ Պետական միլիարդամիան անուան պատճենան այսպէս բաձատրելով « Օ ի սոս միսիթարէ զամբիշկն՝ ուսմամբ . իսկ զհիւանդն՝ առողջութեամբ ո : Դիրքը գրուանք է երեք առապակ ջերմանց զբաց , առողջապահիկ եղանակական , հետեւարութ Պարտիկ , Արարացի : Գոյն և այլ բժիշկներու : »

Գոյդոր ՑՇԱՅ : որդի Ա ասիլ եղիոր . Ըստ առքարությն Դիրիգոր Տղայի երկասիրութիւնը գլխաւորապէս թղթեր են :

1. Թաւզը առ ինս Անուել , որով կը պատասխանէ նորա միսիթարական թղթին . Ըստ նորհալւոյ մահաւան առթիւ գրուանք , յայս-

նեղով ընդ նմին որ յոց գոմուարթնեն այն ծիսական փոփախութիւններն մուծածել Հայաստաննեաց է; ինչեղեցւոյ մէջ զորո Յայնք կը պահանջէին :

2. Երիւ Բոռղը առ նոյն կայսրն և առ ՈՒիքայէլ Պատրիարքն Քունաց որոց մէջ դարձեալ Յայնաց առ աշարժած միութեան ինդրոյն վրոյ կը խօսեժ :

3. Խոռղը առ Հայութացին և առ Տառիկորդի որոց մէջ բուռն կրիւք կը խօսի Գրիգոր Տեղայ Հաղբաւացյաց և մանաւանդ Տառու որդւոյն դէմ՝ որոնք ամբապատճած են լին քըն իրրեւ հոգիաթիւ հուռումայնութեան և մուծիչ նորանոր ծիսից :

4. Խոռղը առ Հորդապիտու Արքայոց որոց կը պատասխանէ այն ամբապատճամանեթեաներուն զորո յարուցած էին հիւսիսացին վարդապետներն իրեն դէմ և յանդիմանած էին որ կը խօսունուի առանց գիւտութեանն է զգին յանախած միութեան խնդրոյն մէջ որ լուս ամենայնի միաւարկար է Ազգի ամբողջութեանն ու Եկեղեցւոյ ազգային անկախութեանն և նախնական ու առնդութեանց Խրիստուղիւն և ու կը յիշաւտակութին Գրիգոր Տեղայի անուամբ գրծած առ Առւախու պատճ Հռափեց և առ կայսրն Անձնւէլ բայց այս թղթեցն առկաթիւն եւ բառացած շենք Այս թղթեցն զատ Գրիգոր

Երկարութ է՝ Այս ելուստին բայց շատ
տար է Հնորհապայ գրան Եղեցիոյ ողբեն,
մէտք աև Կրդկը աշխատան է նորան հեռ
ածելով։

ՈՒԹԵԱՐ ԳՕԸ . — Այս մանկութեանն հաւ
սակէն դաստիարակուելով իւր ընտիր ճնու-
զաց ինամոց տակ Պանձակ քազազի մէջ և
ազա վարդապետականի հետամուռ կը լինի
Ա. Գրաց ուսման ։ Իւր ուսումնադրական
փափառքին օժանդակիք կը գտնեն Տառ ու շեցի
(Յավհան վարդապետան և Ախիթեար անունով
մի այլ վարդապետ) բայց այս շաբաթ գոհ չը
լինելով կ'ուղեւորի դէպ ի՛րեմուց ։ Այսա-
ւերան վրաց բնակոց վարդապետաց մօտ և
բառական մասաւոր ու առ քաղաքան կը գառ-
նաց ի՛ր երգին և անաբ իւր հայութենիքն ։ ուր
շատերը կը գտնեն և իրեն կ'աշխատերանն ։ բէ՛
աշխատիական մարդիք և թէ՛ վարդապետ
ներ ։ Այսա աշխատերաց մէջ անուանի են Քառ-
րոս ի՛ր հօրէ Նայեազն և ի՛ր մօրէ Անորի և Յավ-
հաննեկ ավարդապետ և ի՛ր անձական ։ արաւն վթաց
առ անձին այխու խօսքներ ։

Ախիթեար կրայենոց քամի կրայենական գոհ
առաքե մէջ Ավետիք վանքը լինել կը առաջ և
երբ նոյն վանքը գետնաշաղանին կը կարծրանի
համանան վանք մի շնուր կը առաջ Տառձառա-
աց մարդոց մէջ օդնաբնեանի խամբնոց վապե-

թանձի իշխանին ։ Դրաս քողց և Օ պատրէ ու
Խանէ Ազգասպազոցը ։ Ես աշանցն , որ միք-
թարի ուսումնասիրական գեղեցկավայրն կը
լինի , կանգուն է մինչեւ յայսօր ։ Ո խիմար
կրօնական զանազան խնդրոց պատճառու , որ
յուզուածնին արեւանցան վարդապետաց և
Օ պատրէ Ազգասպազոցի մէջ , ինչպէս խոս-
ցակը արդեն , Ենի բաղադրը կը հրաւիրուի .
իրրեւ համբաւաւոր վարդապետ , մազովին
ներկայ գանուելու . Բայց մոզովն կը լուծ-
ուի խռավացումնան առթիւ . Ո խիմար ,
որոյ հմտութեան վրայ մեծ գովեստով կը
խօսին Ելիրափու և է արդան պատմիներն , կը
վախճանի խորբն ծերութեան մէջ (1213) թողարկ հետեւեալ երկասիրութիւններն ։

1. 'Քարապանագիր' ։ Ա ախիմանի իշխանի
և Եղուանից Ատեփաննուա եպիսկոպոսի խնդ-
րանօք պրուած . Ե յս երկասիրութեան
յառաջարանին մէջ Ո խիմար ընդարձակ կը
բացաւորէ գրքի նայտառն կը և առա կը գնես
գտաւատանական կանոններ , ջանարով առա
ուանային քաղաքական որենքներն իրարու-
հետ միաբանել , ողբաւարապէս առնվոր Ո . Գրքեն , առայնը բարական և ժողովական
սահմանուցը թիւններին և օտար առքաց
քարոզուցին օրենքներին . Ե յս երկասիրու-
թեան համառականութիւնն քարդմանուան
և ապացուացն ե . Ո ասիներին .

2. Եղանք . որ իրենց պիտի բիմոց պարզութեան վայելուաշ և խոսքական դասեր կը համարուին :

3. Անհամ-իւս Երիխո , զոր ամանք Առաջից կ'ընծայեն :

4. Պատեա , որոնք պատագագի մատուցման ժամանակ կարդալու համար երկասիրած է և խիստ սրտաշարժ խնդրուածքներ կը պարունակեն իրենց մէջ :

ԽԱՌԱՏՈՒՐ ՑԱՐԻՆՅԱՑԻ . Ժամանակակից Ա՛յ խիթար Գոշի և առաջնորդ Հազարձնի վանուց Գուգարաց աշխարհին : Այսա անուամբ զանտքան երգեր կան Գաճարանաց և Տաղարանաց մէջ . որոց գլուխադեմքերն իւր անունք կը յօդեն և քանիմբ համախաչատուր կիշչառեցւոյն կ'ընծայուին : Տարոնացւոյն երգաց մէջ նշանաւոր է խորհուրդ խորին , որ պատարա էի ժամանակ կ'երգուի : Է՛աւանդուի նմանապէս , որ երաժշտական խազը Տարոնացին բերած է Արքակելեան կամ Ա Երին Հայրաստանի մէջ : Այս ժամանակաց մէջ կը դրաւին նմանապէս հետեւեալ վարդապետներն . — ԴԱՏԻԹ ՔՋՐԱՄԲԵՑԻ . Հակառակորդ Օպարե . Ապասալարին , որ երկասիրած է Առաջնունք ճառից Գրիգոր Առառածարանին . Ավագուրանին յատեառանի վայրին և Գիշառին Յօհանայ , որոց ամբ ողին չեկոյ . ԱՍՄԱՆԻ . ԱԿԵԼ-

Անձի, որ լամբանացւոց է պրադրութիւնը գրած է : Դաստիարակութեացութիւնը ութիւնը մեկնած է : Երևանեած և իւր աշակեցն Եղբեմ, որ Ընարհապետն յետոյ Ուստի թէուի Եւետարանը մեկնած է : Աչեֆանաս Տերացի վարդապետ, որոյ ուստի մատկանութիւնն կը գովաւի, բայց գրաւոր գործ չունի :

Գ.

Ուստի մավարը ժադ դարու . — Գրիգոր Տարանացի, Գեորգ Սկիւռացի, Միհիմար Անեցի, Վանական վարդապետ Տաւուշեցի, Վարդան Վարդապետ, Կիրակոս Գանձակեցի, Չովհան Երդիկեցի և աշակերտք իւր, Ամբուա պատմիչ, Աստեմանոս Օքսեցիան, Յովիան Արտանեցի, Գրիգոր Տամեւացի, Գրիգոր Խլաթեցի, Առաքել Սիւնեցի, Գեորգ Երզնկեցի, Թովմայ Մեծուցի, և գրաւոր Երկր իւրաքանչիւրոց :

Երեքտասաներորդ դարու ուստի մավայրըն են, բայցի նախագրեալներէն, Ոխունկ վետան կամ Ունեաց այդի Դարձութղիք, Խորպիս շատ՝ Ազգակառ մատ . Ծովիծոր Ուստի բականի մէջ, Ունկը Երադարաց մէջ՝ Առշոր կամ Առանելց վահի Տարոնոյ մէջ :
Իսկ սոյն դարու մասենագիրներն ազգան են . —

Գրութ աւտուստի կամ Անենացի . մը :
աերիմ Ե,երսիսի | ամբանացուոց + || ա շարու-
գրան է Ներանշան ՚ի Ե,երսիս | ամբանացի :
քանի մի Ռառեր , շարական (Յալհաններ կա-
րապետին « Ե,երտունն աղբարտին ո , և ինչ
ինչ Եցություններ :

Գրութ սկենացի կամ | ԱՄԲՐՈՒՍՏԻ .
որ մեկնած է Խայեայ մարդարեռւթիւնը .
Հայոց Նեթում թաղաւորի առաջարկու-
թեամբ . հետեւերզ Արկերերանին . Եփ
ըեմին և Կիւրզի Եղեքանդրացուոցն :

ԱՌԻԹԱՄ ԵՐԵՑ ԱՆԵՑԻ . որոյ անուամբ
կը լիշատակուին Հայուսիան Պարմավիտն աւ-
րաց , և լաց , Պարսից և Երաբացոց , Գիր
արեւու և լուսի խաւարման վրայ , և ծը-
րագիր Եղիսաբետի աստեղաբաշխութեան վր-
այ , բայց այս գրուածներն ցարդ երեւցան
չեն :

Վ ԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱԿԵՑ , Տառուշեցի , ոք
Խորանաշատ վանքը կը չինէ ուսումնավայրը
առներզ և ապա իւր Կիրակոս Գանձակե-
ցի աշակերտին հետ , Թամմարական արհա-
րաց պատճառուաւ , կ'ամբանայ դզեկանեւ մի
արքի մեջ ; ուր կը ժաղովին շատերն իրեն ա-
շակերտելու : Թամմարաց ահեն շատ ընօտա-

Նվազներ եւս ոյս ամբոցը՝ կ'ապաստանին. և
երբ թշնամիներէն՝ կը պաշարուին, Ո անա-
կան վարդապետն իւր հետ կ'առնու իւր
Ապրկոս և Այսթենէս աշակերտներն ու Թա-
թարաց գլխաւորին կ'երթայ, սիրով կ'ըն-
դունուի և հրաման կ'ըստանայ, որ ամրա-
ցածներն աներկիւղ ելնեն ամրոցէն. սակայն
երբ կ'ելնեն, թշնամիք կը յարձակին, ըս-
տացուածներն կը յափշտակեն, շտուերն
կ'աքտորէն և շատերը կը ծախեն, որոց մէջ
կը լինի նոյն ինքն Ո անական վարդապետն,
զոր յիսուն դահեկանով քրիստոնեայք կը
դնեն և այսպէս վերտոին խորանաշատ կը
դառնայ և կը սկսի իւր աշակերտաց հետ
հայրենեաց տղէտներն ողբալ և նկարագրել-
Ո անական վարդապետ Լրատանդին կաֆո-
ղնկոոի օրով յուղուած եկեղեցական խըն-
դիրներուն եւս կը մասնակցի գրով, որուն
վկայ արդէն խոտած ենք + Ո անական կը վախ-
ճանի խորանաշատին մէջ, խոր տրտմութեան
մէջ թողլով իւր բազմաթիւ աշակերտներն,
որոց մէջէն Գրիգորիս վարդապետն կը փո-
խանորդէ ուսուցչական պաշտօնին.

Ո անական վարդապետի երկասիրու-
թիւնքն են. — 1. Անդամական Յովոյ, ճաղ-
կաքաղ Քոբայրեցւոյ համանուն երկասիրու-
թեան. — 2. Տիսունիւն շարականին, « Բարո-
խոյն ղափի խոսից » 3. Շառական Առաջնորդ Առքոյ

բնիւման միայ . լատինական անութեամբ :
 4. Համեմագութիւն ան և Կոր Կրոակարաւ-
 նաց : 5. Հարցունու և Գագագանիք : 6. Գագնու-
 թիւն , որ Ա արդանի և Ելիրակոսի յիշատա-
 կութեան համեմատ Ա անականի ամենէն
 նշանաւոր և կարեւոր երկասիրութիւնն է ,
 սակայն կարաւած է :

Վ ԱՐԴԱՆ ՎԱՐԴԱԳԵՏ , աշակերտ Ա անա-
 կանայ , որ Ա ըրուտաղէմուխագնացութեան
 ժամանակ Ելիրիոյ մէջ մեծ ընդունելու-
 թիւն կրդտնէ Կոստանդիին կաթողիկոսէն ու
 Հեթում թագաւորէն և նոյն կաթողիկոսէն
 շրջաբերական առնելով կը դառնայ Ա ըրեւե-
 լիւան Հայաստան : Ա արդան Ելիրիկոյ մէջ
 գտնուած ժամանակ կը թարգմանէ . Ա սրոց
 Ա յասյէլ Պատրիարքի Ժամանակագրութիւ-
 նին (1) օգնականութեամբ Խշոխ անուն ասարի
 քահանացին , և ՚ի Ա նէն Հայաստան գարձած
 ժամանակ նախ կը նստի Կայենոյ ձորի Ա նդ-
 րէի վանուց մէջ , ուր կը գրէ իւր պատմու-
 թիւնն , յետոյ խոր Ա իրազ առանձնանալով
 աշակերտաներ կ'ուտուցանէ , ինչպէս և Ա ազ-
 մուտագանից և Քանդենեաց վանքի մէջ : Խակ
 իւր կենաց վերջին տարիներն Հաղպատու-

(1) Աշն Ժամանակարգութիւն , որոյ Գաղղիարէն միայն
 շարդ տպագրուած էր . Հայերէնն եւս ՚ի Ըստ ընծանեցաւ
 Ա . Ա մթայու առարկանէն :

վանից մէջ անցուց . ուր շարագրեց Արքոյ
Եղիշը մեկնութիւնն և վախճանեցաւ 1271ին:

Վարդանաց երկասիրութեանց մէջ նշա-
նաւոր են . ԱՌՆԴԿԱԽՈՐ պարզութիւն , Արարչա-
գործութենէն սկսած մինչեւ իւր ժամանա-
կըն , մօտ 6000 տարուան պատմութիւն ,
կարի համառօտ : Այս պատմութեան մէջ
կ'աւանդուի , որ Վարդան Հուլաղու խա-
նին կը ներկայանայ , Հեթում թագաւորի ,
Վասար Դաւիթ արքայի , Անտիոքայ լատին
իշխանի և շատ ազատազգի Պարսիկներու
և քանի մի Հայ վարդապետներու և քահա-
նաներու հետ , մեծ ընդունելութիւն կը
գտնէ Խանէն , հարցասիրական խօսակցու-
թիւն կը բացուի երկուսի մէջ , զօր մի առ
մի կը միշտակէ , սակայն դառնալու ժա-
մանակ իւր գիրքն աւազակները կը յափշտա-
կեն և ինքն յետ ժամանակաց գտնելով ծա-
խու կ'առնէ :

ՈՒԵՒՆՈՒԹԻՒՆ Դանիելը , ՈՒԵՒՆՈՒԹԻՒՆ Աաղմուի ,
Հաղբատու Յովհաննէս եպիսկոպոսի խընդ-
րանոք գրուած , համառօտ քան Ա ամբրոնա-
ցաց համանուն երկասիրութիւնն , ՈՒԵՒՆՈ-
ՒԹԻՒՆ ՀԵՂԱՄԱԹՈՒՆԻՆ Ապսիսի , Հաղբատու
Համազասպ եպիսկոպոսի և Աանահնի Գրի-
գոր Փափակալ վարդապետի խնդրանոք գըր-
ուած (1261) : ՈՒԵՒՆՈՒԹԻՒՆ Արքոյ Եղիշն ,
իւր աշակերտ Ավրակոս վարդապետի խնդ-

բանգը գրուած (1261) : Այս մեկնակրօն գլու-
ռուածոց մէջ հետեւած է Ապրդան յունա-
կան և հայկական նախնի Հարց : Խելքող ՚ի
Լուսաւորիչն, խնդրանք Հաղպատասայ Համա-
զասպ առաջնորդի : Ը արական ՚ի պատիւ Յա-
վակիմնայ և Աննայի, խնդրանք Հեթում Բառ-
գաւորի, որուն վերջը յատուկ մաղթանք
կայ թագաւորի և հայրապետի կենդանու-
թեան համար : Ը արական երկոտասան Ա-
ռաքելոց՝ ՚ի Յանահման ծովն, Թարգմանչաց՝
Որս շարդարեցին : Առական, նմանութեամբ Ախի-
թարայ Գոշի, Աղարհադրութիւնն Հայաստանի,
համառօտ, որ թարգմանուած է Գաղղիա-
րէն, Ախն-Արտէն արեւաբագէտի աշխա-
տութեամբ, Քնիրականի մեջնութիւն : սակայն
այս վերջին երկու երկասիրութիւնքն մի այլ
Ապրդանայ կ'ընծայեն ոմանք, Բարձրերդ-
ցի մականուամբ :

Կիրակոս ԳԱՆՉԱԿԵՑԻ, աշակերտ Ա անա-
կան վարդապետի : Այս երկտպիրած է պատ-
մութիւնն Ա . Գրիգոր Լուսաւորչի ժամա-
նակէն սկսելով մինչեւ իւր ժամանակնեւ-
րըն՝ աւելի Շինդեցւոց վարդապետաց վրայ
խօսելով : Եպա կը պատմէ ընդարձակորեն
թաթարաց աւերմանեւ հարատահարաւթեան
անցքերն, որոց ինքնին ականասես գտնուածն
է շատ տեղ :

Այսին. Ու արդանայ ժամանակակից կը համարուեին. հետեւեալ մատենադիրներն—Վարևմ կամ Արդան և Անտառ Ակեւնանց, որոնք խիստ սաստիկ չարագրածներ յօրինած են. պատրականութեան եւ պապին գէմ, որ կրստանդին կաթողիկոսի ժամանակ կը յորդորէր զշացերն՝ պապական գլխաւորութիւնն ընդունելու : Օ արմանալի չէ սոյն հեղինակաց օաստիացոյզ գրուածներն, որով հետեւ պապականութիւնն այնպիսի գաղափարներ՝ կ'ուզէր տարածել Հայաստանի մէջ, որոնք քուրութիւնն օտարուուի եին, ինչ պէս են. Պետրոսի առաջելաղեգութեան, պատրական յաջորդաց Գլխաւորութեան և անսխալոյնութեան անհեթեթ գաղափարներն : Կիւրակոս Արեւելցի, որ Ախ քաղաքի մէջ, Հեթումի թագաւորութեան ժամանակ Յայնառութիւն հաւաքածէ, 170 ճառեր, ինքնին յաւելցնելով :

Յուշան երջակացի, որ կը կոչուի նաև Պիտոյ կապուտաշեայ, լինելուն պատճառաւ, և Օործորեցի, Երտազու գաւառոի Օործորի վանքի մէջ շատ բնակելոյն պատճառաւ : Յաղնան, Երզնկայ քաղաքի Արդիս արքեպիսկոպոսի որդին, իւր ուսման առաջին ընթացքը կը կատարէ Անպուհ լերան սուրբ Այնա անսպասին մէջ, և ապա Ճանապար-

հորդելով զանաղան հեռաւոր տեղեր՝ և
յատկապէս 'ի ձորն երացենոյ 'ի Հաղպատ և
'ի Ասնահին առ Ա արդան վարդապէտ ։ Եր
զընկացւոյ ժամանակ կը գտնուին Ա'եծին
Ներսիսի նշխարքն թիվն աւանի մէջ և նորա
հայր Աարդիս արքեպիսկոպոսի ձեռքով կը
փոխադրուին յԱրզնկայ ։ Կը կարծուի որ այս
գիւտի և փոխադրութեան պատմութիւնը
Լրզնկացին գրած է, ինչպէս և յօրինած է
շարական մի 'ի պատիւ Ա. Ներսիսի, որ եր
գուած է նոյն եկեղեցւոյ նաւակատեաց և
օծման հանդիսին մէջ, զոր Լեւոն Գ. Հա
յոց թագաւորն հրամայած էր կառուցանել
'ի պատիւ սրբոյն ։ Այս դէպքէն բաւական
ժամանակ յետոյ, (1280), կանոններ կը գը-
րէ Արբոյն Պրիգորի վանուց միաբաններուն
համար այս վերնագրով — կանոնք և ասկճան
միաբանութեան Եղբարյ, որ ասգուտածավն սկզբն մա-
բանեցան յԵղբարյութիւն միեւանց յԱրզնկայ ։

Ապա Յովհանն կը ճանապարհորդէ 'ի Կի-
լիկիա, ուր մեծ ընդունելութիւն կը գտնէ
Յակոբ կաթողիկոսէն և ուսումնարանին վե-
րակացու կը կարգուի ։ Ա'եծարանն կը գտնէ
նաեւ Լեւոն թագաւորէն և երբ նորա որ
դիքն Հեթում և Թորոս ասպետական նորա-
հաստատ կարգին համեմատ Զիաւոր կ'ընա-
րուին, նոյն հանդիսին մէջ կը խօսի Արդըն
կացին մի ճառ, որ այժմ կը գտնուի Աշմե-

ածին, և այսպէս առելի համբաւ կրտքանայ
և կը գրաւէ Նեթուամի մտերմաւթիւնը:

Եւս տեղէն կ'անցնի Յովհան Արտա-
զու Դաւառի Թաղէի վանցը և մեծ սիրով
կ'ընդունուի տեղոյն Օսքարիա եպիսկոպո-
սէն և իւր ծերութեան օրերն այն տեղ կ'ան-
ցընէ: || Հինչդէռ ՀՅովհան Թաղէի վանուց
առանձնութեան մէջ էր, Ենաւարզեցի Դրի-
գոր կաթողիկոսն կամելով ժողով գումարել՝
ի Ախ կը հրաւիրէ զՀյովհան և զՕ աքարիա.
սակայն սոքա չեն երթար, և ժողովը չը գու-
մարաւած՝ կաթողիկոսն կը վախճանի և կը
յաջորդէ կաստանդին, որ կամելով իւր նա-
խորդի ժողովական բաղձանքն ի կատար հա-
նել, կը հրաւիրէ ուրիշ վարդապետաց հետ
Լորդնկացին եւս ի Ախ: Ասկայն սա ամե-
նեւին տեղէն չը շարժիր, որովհետեւ կը
տեանէ որ Արեւելեան վարդապետը, մա-
նաւանդ Ատեփանես (Օքբէլեան, սաստիկ
ընդդէմ են Ասական ժողովի գումարման:

Լորդնկացի տակաւին կենդանի, լատին քա-
րոզիչներն այսատան կը դան սիրոց և միա-
բանութեան պատրուակաւ, յորոց Յովհան
սակաւ ինչ լատիներէն օւսանելով Թովմայ
Ագուինեցւոյն աստուածագանութեան մի
մասն կը թարգմանէ: Եւ այս քարոզիչներու
շնորհիւ Աւնիթուական խմբակն կը կազմը-
ուի: որոց վրայ արդէն խօսած ենք:

Երբնկացուց երկասիրութիւններն են հետեւեալներն . — Ա' Եվուալիան : ԲՆդրիմիք , զարգած է Յակոբ կամուղիկոսի խնդրանք . Բայս յաղախ երիշաշն շարժմանց . զարդած է Տփփիսի Աւմէկ իշխանի որդի Վահաբանկի խնդրանք . նոյն ժամանակեայ ասաեղաքաշխական հասկացողաւթեան համեմատ : Երյն նիւթօյն վրայ գրած է 1000 ոռուն ստանաւոր եւս , Եպլոց իշխանի թափանձաւնք : Ելլբողի սուրբ | ուսաւորին , զարյացինած և կարդացած է Անպուհ լերան Գլորիգորի վանքին մէջ , բազմաբուռն ուխտաւորաց առջեւ , որոնք աարուէ տարի նոյն լերան վրայ կը համախմբէին գեղեցիկ սովորութեամբ | ուսաւորչի անմահ յիշաւոակը պատուելու : Ե' յս ներբռաղին մէջ ճարտասաւանական լեզուով նկարագրուած է Յովհաննու գեղեցիկ հայրենագաւառն , մանաւանդ Անեայ այբբեն և Անպուհ ու Դարձնաղեաց լերինքն : Երբրողն կը սկսի պատմէս — Յարազուարճ ինդութիւնամբ բերիւալ :

Ա' Եվուալիան Ա' աղինէի , որով շարայարած է Երբսիսի Ընորհարւոց անկատար թողած մեկ նութիւնը : Խրափականք , որով զանազան գլուխաւութեան խրատաներ յօրինած է հաւափացելոց համար : Տաղ և Ծարականք , որոց մէջ նշանաւոր են Թքորհնեաց տապերն . Յամենաց ժամ օրհնեամք և Այսօք յայն հայրախան . | ուսաւորչի

շարժականներն ։ Այս ամենից և Այս զուտ ճաղաղ, պահեք ամենայն մատամբ գեղեցիկ են։ Արդոյն Ներխոր շարժականն Ու զլու անձու, և իտուածարտկաց շարժականն Յառ արք վկացին ժամանակի ։ Երզնկացին ունի մասնաւորապէս քանի մի աաղաջափական գրուածքներ, բայց այնքան նշանաւոր չեն ։

Երզնկացւոյն աշակերտակիցէ Ներսան Տերութիւն, որ գրաւոր երկասիրութիւն թողած չէ, բայց ունեցած է աշակերտներ Յարչաւ Երաւեցիւ, Խաթը Նշեցիւ և Ո'Կիթար Աստուածիւ, որոց մէջ համբաւաւոր է Երձիշեցին, որ Ուղեամիր եւս կը կոչուի, (ըստ աւանդութեան 15 տարի միայն թրջած ու պալ կերտակրուելոյն համար) և երկասիրած է համառօտ Ո'Եթուաթիւն պարագագի, որ քանի մի անգամ տպագրուած է ։

ԱՄԲԱՏ ՊԱՏՄԻՉ, Հեթում թագաւորի եղայրն, որ Գոռադապաղ կը կոչուի, որ ըստ պարագետ կամ ախոռապետ կը թարգմանուի։ Այս երկասիրած է համառօտ ժամանակագրական պատմութիւն, որ կը սկսի Քրիստոսի 951 թուականէն և կը հասնի մինչեւ 1331ն։

ԱՏԵՓԱՆՆԱՍ (ՕՐԱԿԱԾԱՆ, որդի Տարած Աճիշխամբին Ախանեաց, եւզիսկողոս հայրե-

նական գուշառքն ։ Այսեփաննաս երկասիրառն
է Վարդութիւնն , որուն մէջ մասնաւորապէտ կը
խօսի Հայասիրանեաց և . Օրբէլիւան իշխաղ
ցեղապետաց վրայ ։ և ընդհանրապէտ Հայոց .
Պարսից և թամբարաց վրայ ։ Ո՞նդոլաց և
թամբարաց արշաւանքներուն ժամանակա-
կից լինելով ճշդիւ կը նկարագրէ այս կատա-
զի ցեղերը՝ թէ ինչպէս Ըրայի ափունքնե-
րէն և Ըրուայի լեռներէն իջնելով աւերեցին
Ծափա և Ծւրոտիա :

Այտեփաննասի պատմական երկասիրու .
թիւնն , բաց ՚ի այն արժանաւորութենէն
որ ունի պատմական անցից նկատմամբ , մաս-
նաւորապէտ հարցասիրական է եկեղեցական
իրողութեանց պարունակութեան կողմէն :
Ա ասն զի , կը պատմէ զանազան կաժողովն-
սաց և վարդապետաց գործքեր , կ'աւանդէ
զանազան թղթեր և դաւանաբանական գը-
րութիւններ , վանքերու պատմութիւններ
և մանաւանդ մի առ մի կը յիշատակէ Այս-
նեաց եպիսկոպոսաւթեան և եպիսկոպոսաց
պատմութիւնը : Այտեփաննաս այն եպիսկո-
պոսներէն մին է , որ սաստիկ ընդդէմ էին
կիլիկիս մէջ եղած տարապարտ ժողովնե-
րուն , ուստի և սաստիկ յուզմամբ կը խօսի
յունական և լատինական միարաբական հր-
բապոցներուն գէմ :

Եթեքտաստաներարդ դադուն մէջ կը միշտ-

տակութին այլ եւս քանի մի մատենագիրներ, որոց ոմանց երկասիրութիւններն երեւցած չեն ցարդ և ոմանց գրուածներն առ ձեռն չունենալով կարող չենք նկատողութեան առնուլ։

Չորեքտասան և հնդեւասաներորդ դարուց մէջ գլխաւոր ու սումմավայրք էին, բացի վերոգրելոցն, Եշմջակայ գաւառին մէջ՝ Ապրակունեաց վանքն, Ոիւնեաց գաւառին մէջ՝ Տամիւռու վանքն, Քաջքերունեաց գաւառին մէջ՝ Ապրուածածնի վանքն (Ոյուխարայ կոչուած) Որմէր շու մօտ, ուր նմանապէս և Ո՛Եծոբայ վանքն։

Եյս գարերուն մէջ, որովհետեւ Ունի թսուական գրուածքներ ևս ՚ի վեր կ'երեւին Հայկական մատենագրութեան մէջ, հակառակութեր և տաղտուկ պարունակութիւններով, ուստի մենք այնպիսիքն զանցառութեան տալով, որոնք ըստ ամենայնի սառն արհամարհանաց արժանի են, կը յիշատակենք մի այն այն մատենագիրներն, որոնք պաշտպան հանդիսացան Հայրաստանեաց Լակեղեցւոյ անկախութեանն, իրենց գրուածքներով, որք և են սորա.

(ՅՈՎՀԱՆ ՈՐՈՏԵԵՑԻ, որ և Լիբիի .— Աս Տաթեւու վանքին մէջ ու սուցչական և վարդապետական պաշտօն վարելով շատ աշուկերութեանն, և կ'երդափրէ զանազան

գորազներ և մեկնուաթիւններ . . որոց մէջ
սաստիկ կը կշտամբէ Անիմռռռռռռռռռռռռռռռռռռ
ռըն ու թերամիտ վարդապետութիւններն և
Արքա աշակերտներէն էր Ա'արքացիա վարդա-
պետ , որ սաստիկ պատուհասակոծ արար
Անիմռռռռռռռռռռռռռռռռռռռ

ՊՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ , աշակերտ Որուանե-
ցւոյն , որ նախ Ապրակունեաց և ապա Տա-
թեւու վանաց մէջ կ'ուսուցանէ ու կ'աշա-
կերտէ շատերն և Անիմռռռռռռռռռռռռռ
յոց վիճաբանութեան ժամանակ հզօր ա-
խոյեան կը հանդիսանոյ ընդդէմ թշնամեաց
Հայաստանեայց Խէկեղեցւոյ , բանիւ և գլ-
րով : Այս երկասիրան է ընդարձակ Վար-
շակիր և առանձինն Պիրս Հարցման : Յազգում
սոյն երկասիրութեանց մանրամասն նկատո-
ղութիւնը , որ մասնաւոր աշխատութեան
կարօս է , այսչափ միայն կ'ասենք , որ Պրի-
գոր Տաթեւացին ձդ դարուն մէջ միակ վար-
դապետն է , որ Անիմռռռռռռռռռռռ
ձաներին դիմադրելով յաջողած է պարան-
ձեցնել հակառակորդներն . իւր ընդարձակ
հմտութեամբ և անձանձրոյթ տքնութեամբ :
Ժամանակակիցքն պատուած են այսպիսի
նշանաւոր անձի յիշատակը փառաւոր այ-
ձանափ , որ մինչեւ ցայտօք կանդաւն կայ Տա-
թեւու վանքին մօտ :

ՊՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԸՆԹԵՑԻ, որ և ծերեւնց .—Պրած է սա զանտգանձ ճառեր և ներբողներ Արբոց վրայ, նոյնպէս երգեր, տաղեր և գանձեր : Երկասիրած է նմանապէս իւր ժամանակի նահատակաց պատմութիւնը, յաւելլով Յայսմաւուբքի մէջ, և ինքն մարտիրոսանալով այլազգիներէն (1425) թաղուած է Արծկէց քաղաքաքի մօտ եղած Ատեփաննոս Կախավիթայի վանքին մէջ :

ԱՌԱԳԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՒՆԵՑԻ, ԵՐԿԱՍԻՐԱծ է զանազան ոտանսաւորներ, Աշամադիլք անունով, նոյնպէս և քանի մի ներբողեաններ :

ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶԱԿԱՑԻ, որոյ երկասիրութիւնքն են — | ուծունք գրոց Պրիգորի Աստուածաբանին . Խրառ վասն կիրառութեան Աշաշոցի և քանի մի քարոզներ : Այրան աշակերտեցան Յակոբ վարդապետ Պրիմեցի, Յովհաննէս վարդապետ Լորոտիկ, Ատմթէոս և Տիրատուր վարդապետք, որոնք աշխատասիրած են զանազան մելիսական և քարոզական գրուածքներ :

ԽՈՎՄԵՅ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵծոԲԵՑԻ, որ գրած է Աանկթամուրի արշաւանաց Պատմութիւննի Հայաստան : Յովլմայի երկասիրութիւնն առաւել արտասունքով գրուած է քան թէ

մեղանտով, վասն զի ոչ միայն ինքնին ականաւ-
տես եղած է արիւնահեղ կոտորածներուն
և աւերմունքներուն, այլ և քանի մի ան-
գամ տանջանքներ և կալանաւորութիւն-
ներ կրած : Ծառվմայ, որ Աղիովիտ գաւառի
Քաջբերունեաց գեղջէն էր, Անծորայ վան-
քին մէջ վարդապետանալով երեւելի հան-
գիտացած էր նմանապէս Աւետարանի մշա-
կութեան մէջ . Այս ինքն գործակից եղաւ-
հայրապետական Աթոռոյ փոխադրութեանն
Ասէն յԱջմիածին, ներկայ գտնուեցաւ Վա-
զարշապատու ժաղովին, ուր կաթողիկոս ըն-
տրուեցաւ Կիրակոս Վիրապեցին (1441), և
արդիւնաւոր կեանքով վախճանեցաւ (1448):
Չորեքտասան և հնդետասան դարուց մէջ
կը յիշատակուին նմանապէս քանի մի ու-
սումնասէրներ և գրագէտներ, բայց ոմանք
գրաւոր երկասիրութիւն թողած չեն և ո-
մանք եթէ թողած են, մասնաւոր բաներ են.
ուստի մատենադրութեան վրայ այսքան
խօսին բաւական համարելով անցնինք այ-
ժըմ շարունակել մեր պատմութիւնն ՚ի
փախագրութենէ կաթողիկոսական Աթոռոյն
՚ի Ասոյ յԱջմիածին :



ՎԵՅՏԵՐՈՐԴ ՅՐԱՋԱՆ

Հայոցինական Աթոռու փախադրաւթենեն ժէշմա-
ծին մինչեւ ՚ի բաժանումն Լատինակացց ՚ի ծոցոյ
Հայուստանիացց Եկեղեցւոյ:

1441-1700

Ա.

Վահակ Հայուստանեաց Եկեղեցւոյ. — Կաթողիկոսունց՝
Կիրակոս Ա. • Վիրապեցի. • Գրիգոր Ժ. • Զաքարիա Բ.
Արիստակես Բ. • Սարգիս Բ. • Արիստակես Գ. • Թա-
դևոս Ա.

ԵՐՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ՀԱՅՐԱՎԵՌՈՎԱԿԱՆ
Ը Թռոն ԵՐԿԻՄՐԱՍՏԵւ աստանդականութե-
նէ զկնի վերատին ԱՂՋՄԻԱԾԲԻՆ փոխադրեցաւ
և Կիրակոս Վիրապեցին կաթողիկոսացաւ .
Գրիգոր Առաքեգեցեացն ևս իրեւ կաթո-
ղիկոս ՚ի Ախա մնաց : Լու այսպէս Աղդն Երեք
կաթողիկոսական ամեռուներ ունեցաւ ԱՂՋ-
միածին , ՚ի Ախա և ԱՂՋՄԻԱԾԱՄԱՐ , (որ մատնա-
ւոր աթոռ Եղած էր 1113 թռւականէն , Դաւ-
թի կաթողիկոսութենէն ՚ի վեր) որոնք կը
առւեն մինչեւ մեր օրերը : Այսպէս այս բա-
ժանումը լոկ աթոռական Եղած է և ոչ Եր-

բէք ժողովրդային կամ տարբեր դաւանութեան : Այս բաժանմամբ երբէք խախտած չէ ժողովրդային միութիւնը՝ և թէպէտ երեք աթոռոց կաթողիկոսներն եթքեմն իրարու դէմ զինած են և հակառակութիւններ յարուցած . բայց բարեբաղդաբար Ազգը միշտ հաւատարիմ մնացած է իւր մայրենի Եկեղեցւոյ վարդապետական , դաւանաբանական և ծիսական միութեանը , Կաթոլիկանի Աթոռը հանուր հայրապետիոն աթոռ համարելով , իսկ Ասոյ և Աղթամարայ աթոռներն՝ հանաւոր իանողիոսական : Այժէ պատմագիտական նուրբ աչքով նայինք , կը տեսնենք որ այս աթոռոց սկզբնաւորութիւնն ու տեւականութիւնը հետեւանք է Ազգի քաղաքական վիճակի տարբերութեան : Ազգային ինքնօրէն քաղաքականութեան բարձումէն եւ տարբեր քաղաքական իշխանութեանց ենթակուելէն յառաջ եկած է այս կաթողիկոսական երեքնութիւնը : Ո՞ի կողմէն քաղաքական տարբեր իշխանութեանց հակառակիր ազգեցութիւններն և միւս կողմէն հայկազն ժողովրդի ցրուածտւթիւնը և միակ կաթողիկոսութեան հետ ունեցած հաղորդութեան դժուարութիւնքն առիթ տուած : Են մանաւանդ Կաթոլիկոսութեան առանձին Ասոյ կաթողիկոսութեանց առանձին գոյսութեանն ու տեւականութեանն , վասն զի արդէն տե-

առնք նախընթաց Ը ոչանին ԱՀՀ, թէ ինչ
գժուարութիւններ կային Որեւելեան Հա-
յոց համար յարաբերութիւն ունենալ Ո-
րեւմտականաց կամ Կիլիկեցւոց հետ։ Եթէ
նուրբ նայինք, նոյն գժուարութիւններն ակ
ներեւ կը տեսնենք մինչեւ ցայսօր։ Իսկ Ու-
թամարաց կաթողիկոսական գոյութեան և
տեւականութեան գլխաւոր պատճառն իւր
կղզիական դիրքն եղած է, քան թէ մի այլ
պարագայ։ Նետեւապէս, եթէ մտածենք որ
կաթողիկոսութիւնը մի վսեմ պարտակատա-
րութիւն է և ոչ լոկ անուանակրութիւն,
եթէ մտածենք որ կաթողիկոսական օրինա-
ւոր, պարտավճար և համամիտ ամոռակալ
ներ կարող են աւելի նպաստել Ոգդի վի-
ճակին և դիւրել զտեազան իրովութիւն-
ներ եկեղեցական վարչութեան, եպիսկո-
պոսական ձեռնոտդրութեան և այլ ժողովր-
դային մօտաւոր յարաբերութեանց մասին,
կը տեսնենք որ կաթողիկոսական երեքնու-
թիւնն ամենեւին վաստակարութիւն կա-
րող չէ ունենալ։ Քանի որ Եկեղեցին ու ժո-
ղովուրդն մի է, քանի որ իշխող աւրութիւնն-
ներն քաղորդականօրէն տարբեր ազդեցու-
թիւն ունեցած են և ունին Ոգդին վկայ։
Կաթողիկոսական երեքնութիւնը կամ եր-
կուութիւնը կարեւար եղած է և է։ Ոյ
երեքնութիւնն ինչնին կը պահանջ, երբ

Այսուհետեւ իւր Լէկեղեցոյ համար այս
բացետութեան նախնի իդուռունքներն պե-
րահատատել և քաղաքական ազդեցութիւն-
ներէ ու վասնգներէ անկախ և ազատ կա-
ցուցանել։ Խողունք այս, և ներկայ Շիր-
ջանի պատմական թելն շարունակենք։

Կիրակս Վ. իրապեցին, Խ ջմիածնի մէջ կա-
թողիկասական օծումն ընդունելին գիտի, շըր-
ջապերական գիր կ'ուղղէ Հայաստամնի վիճակ-
կաւոր եպիսկոպոսներուն և նոյնպէս Ասոյ,
Եղմամարայ և Եղուանից կաթողիկամներուն,
յարդորելով, զամենեսեան ՚ի սէր և ՚ի խա-
ղաղութիւն։ Կը կարգաւորէ Հայրապետած
իան ամեռն, սաստարութեամբ Խովմայ վար-
դապետի Անծգրեցւոյ, կը նորոգէ Ո արար-
շապատի հինորեայ տաճարն և այլ վանօրայք
և եկեղեցիք, և մինչդեռ սպահորինակ բարե-
կարգութեամբ կը պարապատի, յանկարծ քանի
մի եպիսկոպոսաց և վանականաց շնորհիւ-
լիքրակս կը զգապարտուի իբրեւ կաժարդ և
հերձուածող, կը չարախօսուի Երարատեան
գաւառի օտապողդի իշխանին առջեւ և ա-
մինչդեռ շարախօսմները կը յարձակին կաթո-
ղիկուր գահամիսնեղ, ևս կը փափոք և կը
Շաաքը, պայտ հակառակորդներն իսկըն իւս
թաղիկամ, կ'ընտրին, ետքակապասն Այսկուոյ
Գրիգոր, իսկ Կիրովիս, կը վախճանի, կը իս-
մեայ կոտեսնիկառութենին զինիւ։

Գրիգոր Տ. Անդրեակցի. կը շարունակէ Այլ-
բաժնի Կիոահատար թողած նօրոդու թիւն-
ներն ու բարեկարգութիւնները, իրեն գոր-
ծակից երջանորէ Այրիստակէս անուն մի վար-
դապետ և կ'անուանէ Այրիստակազ Անկայն
այս պատուանունը, որ միայն կամ ողիկոսաց
պահուածն էր, մամնեակցաց մեջ սովորական
գառնաղով կաթսողիկոտական փախանորդնե-
րու կամ տեղակայներու համար, և շատե-
րու Խթանսամիրու թեսնը ճարակ տաղով՝
տեղի կը տայ զանագան հակառակութեանց
եւ հայրապետական անուանց շիտթաւ-
թեան :

Դրիգ որի կամ աղմկառութեան ժամանակ
(Օսմանցիք կը տիրեն կ., Պօլսոյ և Առաջա-
նըն Աէհմէտ Աէթիհ արքունի հրովարտա-
կա Յունատառանի և Յունատողից հայկազանց
վրայ առաջնորդ կը կրտպէ (1461) Պսարսայի
Յովոնիմ Եստիսկապան, Փամբիկ, ոյսինցն Պատ-
րիարք տիտղոսով, յօրմէ և կը սկսի կ. Պօլսոյ
Պատրիարքութիւնն և կը տեսէ. մինչեւ
շարդ զանագան արտօնութիւններով ։ Իսկ
բռն Հայուստանի մեջ ներքին և արտօքին
աղմու կնիքն անընդհատ կը տւագնապէն
գլուխն ու կինուցին և թիստակէտ ամժուա-
կադի ։ Ե Դրիգ որ, կամ ողիկոսի մեջ ստատիկ
գմագութիւնն կը ծագի և կամ ողիկոսականի
Սարգիս անուն վարդապետը ։ ուստաւորչի

այլ լումիաննեն գողաճարով Պարսկաստան
կը դրախչի, պրակես զի ՞ Զ ահան Շ ահի օգնու-
թե ամբ մինքն յափշտակէ կաթողիկոսական
իշխանութիւնը : Ասկայն Եղիշամարայ ՞ ա-
քարիա կաթողիկոսն իրազեկ լինելով այս
անցքին կը դիմէ ՚ի ՚իւարեժ նցն Շ ահին
առջեւ, զանազան նուերներով յետ կ'առ-
նու լուսուորչի աջն և իշխանական պա-
տուով դառնալով լումիածին, Գրիգորին
ու Երիստակէսն կը մերժէ և ինքն կ'ամու-
ռակալի իբրեւ ընդհանուր կաթողիկոս,
իւր իշխանութեան ներքեւ ունենալով նը-
մանապէս և Եղիշամարայ աթոռն : Իսկ Ասկ-
գիս վարդապետը կը կարգէ կաթողիկոսա.
կան դուխանորդ, եպիսկոպոս ձեռնադրելով
լումիածին ,

Օ սքարիա կը յաջաղի Զ ահան Շ ահի և
Զ հանգիր Առևլթանի հատկառակութիւններն
խաղաղել և Հայաստանի առերումներն առ-
ժամանակ մի դադարեցնել : Ասկայն ՚իրիգո-
րի և ՚իրիստակիսի ձեռքով կը չարախոսուի իբ-
րեւ բազմագանձ և ճափս ոք Զ ահան Շ ահի որդ-
ւոյն առջեւ և տեսնելով թէ անհնարին պէտք
է լինի կաթողիկոսական իշխանութիւն պա-
րել լումիածնի մէջ, ծանկարար լուսաւոր-
չի աջն առնելով կը դրախչի լումիշամար, շատ
մեծարարնք գտնելով թէ անզական պատրազ-
գի իշխաններէն և թէ մարդուցէն :

Օ աքարիսյի փախտենէն յետոյ Պրի-
դոք կը վախճանի և Ծրիատակէս կ'ամթուա-
հալէ իբրեւ կաթողիկոս և Արքիս կը վարէ-
փոխանորդութիւնն ։ Ակայն Ծրիատակէս Բ
շարս աարիէն յետոյ կը վախճանի առանց նը-
շանաւոր գործոյ և կը յաջորդէ Արքիս
(1466)։

Աարքիս կաթողիկոտանալէն զկնի կը ջա-
նայ Լուսաւորչի աջք դարձուցանել Ծրմա-
մարէն, բայց անհնարին կը լինի ։ Վերջա-
պէտքափառմական աւանդութեան, Վըր-
թանէս եպիսկոպոս ոմն ծպտեալ կերպարա-
նօք Ծրմամար մտնելէն և երկար ժամանակ
մնալէն յետոյ կը յաջողի նոյն սուրբ աջն
Աջմիածին դարձնել, և այս Ճարտարու-
թեան համար Փակակալ կը կարգուի Աջմի-
պէնի ։ Ապրգուի կաթողիկոսութեան ժամա-
նակ Աայս կաթողիկոսն էր Յովհաննէս Թուլլ
կուրանցի, որ թողած ունի քանի մի տա-
ղաւական գրուածքներ ։ Աարքիս 24 տ-
մեաց կաթողիկոսութենէն զինի կը վախճանի
և կը յաջորդէ Ծրիատակէս գ. առանց նշա-
նաւոր ինչ գործողութեան, և սորան կը յա-
ջորդէ իւր գորսանորդն Տէր Թաղէոս Ա։

Եղիշ Բ. Զ պարփառ Գ. Ա սրբիս Գ. Ա յիշութ ԺԱ.
Ստեփանոս և Ալեքսանդրի. Միքայել Ակրաստացի.
Բարսեղ Բ. Գրիգոր ԺԲ. Ստեփանոս Զ. Առնչացի.
Թադէս Բ. Առաքել Վազգրշապատացի. Դարիթ Ե.
Մեղքինէթ.

ԹԱՐԻԵՈՍԻ մահէն յետոյ կը յաջորդեն
մի զինի միւսոյ Եղիշէ, Պաքարիա, Ապր-
գիս, Գրիգոր (1503—1541), որոց կաթողիկոս
սութեան վրայ ազգային պատմական իշխա-
տակարանք մասնաւոր տեղեկութիւններ չեն
աւանդեր. Արիսյն այս յայտնի է, որ այն
ժամանակին մէջ Հայաստանի ժողովութրը
կը տառապէր զանագան բռնակնարաց հնարիտ-
տահարութեան տակ և կաթողիկոսունքը ըս-
տիպուած էին հայրապետական աթոռան ի-
րենց փոխանորդներուն յանձնել և վանարան-
դի շրջել այս ինչ կամ այն ինչ բռնաւորի պիր-
տը շահելու և ժողովութրը ըստ կարեաց
միսիթարելու համար. ինկ Անոնքիաննափ և
Ակայելի վրայ, Չամչեանն, առնլով լատին
գրուածներէ, երկար վեպեր կը պատմէ ՚ի
նպաստ հռովմէական պապութեան, ուա-
